



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

I ՄԱՍ

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2013

ՀՏԴ 809.198.1  
ԳՄԴ 81.23  
Ա 501

*Հրատարակվում է ԵՊՀ հայ բանասիրության  
ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

## ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՈՒՆ ԱՐԺԵՔ

### ԱՃառյան Հրայրյա

Ա 501 Հայոց լեզվի պատմություն/Հ. Աճառյան.-Եր.: ԵՊՀ հրատ.,  
2013. Մաս 1.- 366 էջ:

Մեծանուն լեզվաբանի 1940 թ. տպագիր բնօրինակի վերահրատա-  
րակությունն է:

ՀՏԴ 809.198.1  
ԳՄԴ 81.23

ISBN 978-5-8084-1786-1

© Հ. Աճառյան, 2013  
© ԵՊՀ հրատ., 2013

Անգնահատելի է Հրայրյա Աճառյանի ավանդը հայ լեզվաբանության, հատկապես հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության մեջ: Հայերենի համեմատական քերականությամբ նա սկսել է զբաղվել XX դարի սկզբից, դեռևս արտասահմանում գտնված տարիներին, իսկ 1920 թ. հետո նրա գործունեությունը ամբողջապես կապվել է հայերենի հետ: Հայերենի քերականության, հայոց լեզվի պատմության, հայ բարբառագիտության, հայերենի համեմատական ուսումնասիրության հարցերը, ինչպես նաև ստուգաբանական հետազոտությունները միշտ եղել են նրա գիտական հետաքրքրությունների կենտրոնում իր բազմաբեղուն կյանքի ողջ ընթացքում:

Այդ բնագավառներում իր աշխատանքն սկսելով հայերենի հնչյունական և քերականական կառուցվածքի առանձին հարցերին նվիրված հոդվածներով՝ Աճառյանը հետագայում հրատարակում է հիմնարար աշխատություններ, որտեղ ամփոփում է հայերենի ուսումնասիրության մեջ հայ և արտասահմանցի հայագետների, հատկապես համեմատաբանների նվաճումների արդյունքները, ընդլայնում է հավաքած նյութը և օժտում է սեփական մեկնաբանություններով:

Լինելով Ա. Մեյեի և Հ. Հյուբշմանի աշակերտը՝ Աճառյանը հայ լեզվաբանության մեջ ներկայացնում էր հնդեվրոպաբանության դասական մակարդակը: Լեզուների ծագման ու զարգացման, նրանց ծագումնաբանական առնչությունների, հայերենի կազմավորման, հնդեվրոպական լեզուների շրջանում նրա գրաված դիրքի և այլ հարցերի վերաբերյալ իր հայացքները նա շարադրում է «Հայոց լեզվի պատմություն»<sup>1</sup> աշխատության առաջին հատորում, որն այսօր նոր հրատարակությամբ դրվում է ընթերցողի սեղանին: Այս գրքի վերահրատարակության անհրաժեշտությունը խիստ զգալի էր, քանի որ նրա առաջին հրատարակությունից անցել է ավելի քան յոթ տասնամյակ: Եվ այդ բոլոր տասնամյակների ընթացքում «Հայոց լեզվի պատմությունը» եղել է հայ լեզվաբանների սեղանի գիրքը և հայ ուսանողության ուղեցույցը հայերենի պատմության և համեմատական քերականության բնագավառներում:

<sup>1</sup> Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, I մաս, Երևան, 1940, II մաս, 1951:

Գրքի գիտական արժեքը այնքան բարձր էր և անուրանալի, որ նրա հրատարակության անհրաժեշտությունը չէր կարելի ժխտել նույնիսկ սովետական լեզվաբանության մեջ այդ ժամանակաշրջանում տիրապետող «լեզվի նոր ուսմունքի» պայմաններում, «որի դրույթները,– ինչպես նշում էր գրքի առաջին հրատարակության առաջաբանի հեղինակ Գ. Սևակը,– անհարիր են պրոֆեսոր Աճառյանի որդեգրած պատմահամեմատական, հնդեվրոպական լեզվաբանության դրույթներին, բայց նույնիսկ այդ հանգամանքը չի նսեմացնում ոչ «Արմատական բառարանի»<sup>1</sup>, ոչ էլ «Հայոց լեզվի պատմության» արժեքավոր տեղեկատու ձեռնարկի դերը»:

Պետք է ասել, սակայն, որ Աճառյանի աշխատությունը լեզվաբանության այսօրվա ըմբռնումների և աշխարհայացքի տեսակետից վերագնահատելիս՝ չի կարելի համաձայնել այս ներողամիտ, գուցե և պաշտպանական բնորոշմանը: Այն շատ ավելին է, քան պարզապես «տեղեկատու ձեռնարկը»: Սա մեծարժեք գիտական ուսումնասիրություն է, որտեղ դրվում և լուծվում են հայերենի ծագման և պատմական ընթացքի հետ կապված կարևորագույն հարցերը՝ ժամանակի հնդեվրոպաբանության բարձրագույն մակարդակով:

Աշխատության գիտական արժեքը ոչ միայն նրանում պարունակվող հսկայածավալ նյութն է, այլև այն տեսական դրույթները, որոնք հեղինակը շարադրում է հստակ պարզությամբ և ամեն մի ընթերցողի համար մատչելի եղանակով: Լեզուների պատմական զարգացման և ծագումնաբանական կապերի իր ըմբռնումներով Գ. Աճառյանը հարում է լեզուների զարգացման հարաշրջական (էվոլյուցիոն) տեսակետին: Նա առանձնացնում է լեզուների զարգացման երեք հիմնական գործոն՝ 1) «ներքին բարեշրջություն, բնականոն ներքին զարգացում», 2) արտաքին ազդեցություններ, 3) անհատական նորամուծություններ, որոնք անհամեմատ նվազ դեր են խաղում: Անընդհատ հարաշրջական զարգացման գաղափարի հետ են կապվում նաև լեզվական ցեղակցության և նախալեզվի մասին Գ. Աճառյանի տեսակետները: Անընդմեջ զարգացման գործընթացում պատմական տարբեր հանգամանքների ազդեցությամբ լեզվի մեջ առաջանում են բարբառներ, որոնք աստիճանաբար ավելի ու ավելի հեռանալով միմյանցից՝ առաջացնում են ցեղակից լեզուներ: Բոլոր հնդեվրոպական լեզուները, ըստ Գ. Աճառյանի, նախապես կազմել են մեկ ընդհանուր լեզու, որով խոսել են հնդեվրոպացիները իրենց նախահայրենիքում, գրավելով, սակայն, բավական ընդարձակ մի տարածություն և բաժանված լինելով համեմատաբար

<sup>1</sup> Գ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, I-VII, Երևան, 1926-1935, I-IV<sup>2</sup>, Երևան, 1971-1979:

ինքնուրույն ցեղային միավորումների: Հնդեվրոպական նախալեզվի լրիվ վերականգնումը Գ. Աճառյանն անհնարին էր համարում և գտնում էր, որ կարելի է խոսել միայն նրա ընդհանուր առանձնահատկությունների վերականգնման մասին, իսկ նախալեզվի ամբողջական պատկերը, նույնիսկ նրա բառամթերքը, որը համեմատաբար ավելի հեշտ է վերականգնել, լիովին բացահայտվել չի կարող, քանի որ շատ ընդհանրություններ ժամանակի ընթացքում չեն պահպանվել: Բայց և այնպես ցեղակից լեզուներում պահպանված տվյալները հնարավորություն են տալիս ընդհանուր պատկերացում կազմել ոչ միայն հնդեվրոպական նախալեզվի, այլև նրա կրողների՝ պայմանականորեն ասած՝ հնդեվրոպացիների հասարակական և մշակութային կյանքի զարգացման մակարդակի մասին: Այստեղ նա հետևում է լեզվաբանական հնէաբանության սկզբունքներին ու մեթոդին (թեև այս տերմինը չի գործածում), որ մշակվել է պատմահամեմատական լեզվաբանության ներկայացուցիչների Յ. Գրիմի, Ա. Կունի, Օ. Շոադերի, Գ. Հիրտի և այլոց աշխատություններում: Լեզուների ցեղակցական կապերի հաստատման և նախալեզվի վերականգնման խնդիրների հետ միասին լեզվաբանները փորձում էին նաև լուծել միասնության շրջանում նախալեզվի կրողների պատմության, նրանց կյանքի պայմանների, հասարակական կառուցվածքի, տնտեսության, կենցաղի պատկերի վերականգնման, ինչպես նաև նրանց նախահայրենիքի տեղադրության որոշման հարցերը: Գ. Աճառյանը բերում է հետաքրքրական լեզվական փաստեր, որոնք որոշ չափով լույս են սփռում այդ խնդիրների վրա, սակայն այստեղ ևս նշում է, որ այդ ընդհանրությունները բացարձակ չեն և կարող են վերաբերել ոչ այնքան հնդեվրոպական միասնության, որքան ավելի ուշ մի շրջանի, երբ սկսում են ձևավորվել առանձին լեզվաճյուղերը:

Հայոց լեզվի ծագման հարցում նույնպես Գ. Աճառյանը հարում է Գ. Հյուբշմանի և Ա. Մեյեի տեսակետին՝ համարելով, որ հայերենը հնդեվրոպական լեզուների մի առանձին ինքնուրույն ճյուղ է, և հայերենում պահպանված հնդեվրոպական արմատների ցանկը համեմատելով հնդեվրոպական ցեղակից վեց ճյուղերի հետ, հայերենը զետեղում է արիական լեզուների, հունարենի և սլավոնական լեզուների միջև՝ առաջնորդվելով տարածքային լեզվաբանության սկզբունքներով, թեև դարձյալ այդ տերմինը չի գործածում: Այնուհետև հեղինակը դիտարկում է հայերենի առանձնացման ուղիները, զանազան ցեղակից ու ոչ ցեղակից լեզուներից կրած նրա ազդեցությունները: Գ. Աճառյանն առաջ է քաշում նախահայրենի հասկացությունը՝ դրանով նկատի ունենալով հնդեվրոպական ընդհանրությունից նրա անջատվելուց հետո գոյացած լեզվավիճակը, ինչպես նաև բուն հայերենի լեզվական

Յյուրի հիման վրա փորձում է վերականգնել նախահայերի հասարակական զարգացման աստիճանը:

Լեզվի յուրաքանչյուր վիճակ համարելով բնիկ տարրերի և փոխառությունների գումար՝ 3. Աճառյանը նախ ներկայացնում է հայերենի հնդեվրոպական բառաշերտը, այնուհետև տարբեր լեզուներից նրա կատարած փոխառությունները, որոնք հայերենի մեջ են թափանցել նրա զարգացման տարբեր ժամանակաշրջաններում: Այսպիսով, «Հայոց լեզվի պատմության» առաջին հատորը հայերենի բառապաշարի ծագումնաբանական և ժամանակագրական դասակարգումն է: Երկրորդ հատորում տրվում են հայերենի քերականական կառուցվածքի պատմական փոփոխությունների նկարագրությունը, հայ բարբառների, միջին հայերենի և նոր հայերենի, ինչպես նաև հայ բարբառների ձևավորման ուղիները, սակայն, բառապաշարի մանրամասն նկարագրության համեմատությամբ շարադրանքն այստեղ տրվում է միայն ուրվագծի տեսքով: Հայերենի պատմությանը և պատմահամեմատական քերականությանը նվիրված աշխատություններում մեծ լեզվաբանի ուշադրությունը առանձնապես կենտրոնացած է եղել հայերենի հնդեվրոպական տարրերի հայտնագործման վրա: Ի դեպ, հետաքրքրական է նշել, որ 3. Աճառյանն առաջինն է, որ անդրադառնում է հայերենի փոխհարաբերությանը խեթերենի և թոխարերենի հետ:

«Հայոց լեզվի պատմության» առաջին հրատարակությունից հետո, ինչպես նշեցինք, անցել է ավելի քան յոթանասուն տարի, որի ընթացքում հայագիտությունը հասել է նորանոր նվաճումների, առաջ են քաշվել նոր ստուգաբանություններ, կազմվել են ստուգաբանական նոր բառարաններ, մշակվել են լեզվի պատմության նոր շրջանաբաժանումներ, սակայն Աճառյանի կոթողային գործերը շարունակում են մնալ հայագիտության մնայուն արժեքները, որոնք կարող են ենթակա լինել միայն քանակական որոշ ճշգրտումների, բայց ոչ երբեք որակական բնութագրումների փոփոխության: Ուստի պետք է ողջունել Երևանի պետական համալսարանի հրատարակչության նախաձեռնությունը՝ ժամանակակից տպագրական տեխնիկայի ընձեռած հնարավորություններով և արդիական ուղղագրությամբ նորովի ներկայացնելու սույն մենագրությունը, որը շարունակելու է ծառայել հայագետների նորանոր սերունդների գիտական մտքի հարստացմանը:

Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր,  
ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ

ԳԼՈՒԽ Ա.

## ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԱԽԱՇՐՋԱՆ

Պատմել մի որևէ լեզվի պատմությունը՝ նշանակում է նկարագրել այն բոլոր ձևափոխությունները, որոնց ենթարկվել է այդ լեզուն իր գոյության ընթացքում, սկսած իր նախնական շրջանից մինչև տվյալ րոպեն: Այդ ձևափոխությանց ամենամեծ մասը առաջացած է լինում ներքին, այսինքն բնական ճանապարհով, իբրև արդյունք բարեշրջության (էվոլյուցիայի) և բնական զարգացման. մի ուրիշ սովոր մաս առաջացած է լինում արտաքին ճանապարհով, այսինքն փոխառությամբ, իբրև արդյունք օտար ազդեցությանց, և վերջապես՝ երրորդ, ավելի փոքր մասը առաջացած է լինում անհատական ճանապարհով, այսինքն գրական նորմուծություններով: Այսպիսով ամեն մի ձևափոխություն ունի իր բուն պատճառը՝ ներքին, արտաքին կամ անհատական, որոնց միջոցով էլ լեզվի պատմությունը կապվում է նույն ազգի քաղաքակրթության պատմության, քաղաքական պատմության և գրականության պատմության հետ:

Լեզվաբանությունը հաստատել է, որ հայերենը պատկանում է լեզուների այն մեծ ընտանիքին, որ հայտնի է գիտության մեջ հնդեվրոպական լեզվաբուն անունով, և որին պատկանում են Հնդկաստանի արևելյան ծայրից մինչև Եվրոպայի արևմտյան ծայրը (Իսլանդիա) տարածված լեզուները: Այս բոլորը նախապես կազմում էր մի լեզու, որ խոսվում էր հնդեվրոպացիների կողմից նախահայերենից, հնագույն ժամանակ: Հետևապես՝ տալ հայերենի ամենահին վիճակի նկարագրությունը՝ նշանակում է նկարագրել Հնդեվրոպական նախաշրջանի լեզուն և հնդեվրոպացոց քաղաքակրթությունը:

Համեմատական քերականության է պատկանում մանրամասն խոսել այն բոլոր հարցերի մասին, որոնք վերաբերվում են հնդեվրոպական լեզվաբանի ժամանակագրության, նախահայերենից, զաղթականական շարժումներին, այլ և այդ լեզվաբանի պատկանող մայր լեզուների և նրանց ժառանգների վիճակագրության մասին: Այստեղ ավելորդ չենք

համարում սակայն, այդ բոլորի վերաբերմամբ տալ մի համառոտ տեղեկություն, որից հետո կանցնենք անմիջապես նախաշրջանի լեզվի ու քաղաքակրթության նկարագրության:

Հնդեվրոպացոց նախահայրենիքի տեղը դեռևս ճիշտ չէ որոշված. նա գտնվում էր Եվրոպայի արևելյան մասերից սկսած մինչև Թուրքեստան գտնված տարածության մեջ՝ մի որոշ տեղ (հավանաբար Բալթիկ ծովի արևելյան կողմերը՝ արդի Լիտվայի սահմաններում կամ հարավային Ռուսաստանում): Մի ժամանակ այդ ազգը նախահայրենիքում բնակվելուց հետո, տալիս է իրենից զանազան գաղթականություններ, որոնք փոփոխում են գրեթե ամբողջ Եվրոպայի և Ասիայի մի մասի վրա: Այդ գաղթականություններից հայտնի են մեզ այժմ 11-ը: Սրանք են (արևելքից արևմուտք ընթանալով)

1. Արիական ճյուղ (հնդիկներ և իրանյաններ),
2. Թոխարական ճյուղ,
3. Հայկական ճյուղ,
4. Հաթյան ճյուղ,
5. Թրակո-Փոնուզական ճյուղ,
6. Հունական ճյուղ,
7. Լյուրիկյան ճյուղ,
8. Իտալական ճյուղ,
9. Բալթիկ-սլավական ճյուղ,
10. Գերմանական ճյուղ,
11. Կելտական ճյուղ:

Հնդեվրոպացոց գաղթականության սկիզբը պետք է դնել մ. թ. 3-րդ հազարամյակի կեսին, այն է՝ 2500 թվերին: Ամենաիին գաղթողները Հաթերն են, որ անցել են Փոքր Ասիա, նվաճել տեղացի ժողովուրդներին և նրանց հետ միանալով՝ կազմել մի մեծ պետություն: Շատ ավելի ուշ գաղթում են մյուս ճյուղերը: Յուրաքանչյուրը հաստատվելով իր նոր հայրենիքում, ձևացնում է նոր ազգեր և նոր լեզուներ, որոնք մտնում են քաղաքակրթության ճամբի մեջ, հաճախ շրջակա ազգերից օրինակելով, ստեղծում են գիր ու գրականություն, ոճանք ավելի շուտ, ոճանք ավելի ուշ: Հաթերը առաջինն եղան, որ Ասորեստանցիներից ստացան գիրն ու գրականությունը: Նրանցից հետո գալիս են կարգով՝ արիականը, հունականն ու իտալականը, որոնք գրականություն են սկսում քրիստոնեական թվականից առաջ, մյուսները այդ թվականից հետո և գլխավորապես հունական կամ հռոմեական քաղա-

քակրթության ազդեցության տակ, և հատկապես քրիստոնեական առաքելության նպատակով՝ Ավետարանի թարգմանությամբ: Այսպես են իռլանդերենը, գոթերենը, սլավերենը և հայերենը:

Հնդեվրոպական նախալեզուն վերականգնված է լեզվաբանների ձեռքով՝ համեմատությամբ հին և նոր, մեռյալ և կենդանի բոլոր հնդեվրոպական լեզուների ու բարբառների, որոնք նույն նախալեզվի շարունակությունն են կազմում: Պատրաստ են հնդեվրոպական նախալեզվի բառարանն ու քերականությունը: Լավագույններն են՝ Walde-Pokomy, Vergleichendes Wörterbuch der Indogermanischen Sprachen, Berlin, 1927-1931.

Brugmann, Grundriss der Vergleichenden Grammatik der Indogermanischen Sprachen, Strassburg, 1897.

Ինքնախաբեություն է սակայն կարծել թե ամենայն ինչ վերականգնված է կատարելապես և ամբողջապես: Լեզվաբանական բոլոր քննությունները՝ ձայնաբանական, ձևաբանական ու շարադասական՝ տալիս են մեզ նախալեզվի մասին միայն մի ընդհանուր գաղափար, բայց նրա ամբողջական պատկերը, ինչպես նաև նրա զարգացումը և ընդհանուր միության ժամանակաշրջանից մինչև բաժանման րոպեն եղած զարգացման պատկերը մեծագույն մասամբ մնում են անհայտ: Մինչև անգամ նախալեզվի բառամթերքը, որ լեզվի շատ ավելի հասարակ կողմն է, ամբողջովին երևան հանված չէ: Այսպես, օրինակ, հնդեվրոպական նախալեզվից անհայտ են մեզ «շրթունք, կուրծք, թոք, մազ, սև (գույն), կույս (աղջիկ)» և ուրիշ բազմաթիվ հասարակ բառեր, որոնք չեն կարող չգտնվել որևէ լեզվի մեջ:

Այժմ, երկու խոսք էլ այն մեթոդի մասին, որով լեզվից կամ լեզուների համեմատությունից հանվում է նույն լեզուն խոսող ազգի կուլտուրական պատկերը:

Երբ մի բառ՝ նույն կամ նման ձևով գտնվում է բոլոր կամ գոնե մի քանի իրարից անկախ հնդեվրոպական լեզուների մեջ, նշանակում է, որ նա ուղիղ գծով ժառանգություն է հնդեվրոպական նախալեզվից. ուրիշ խոսքով՝ որ այդ բառը գոյություն ուներ նաև հնդեվրոպական նախալեզվի մեջ: Բառի գոյությունը անհրաժեշտաբար ենթադրում է նաև գաղափարի կամ առարկայի գոյությունը, որից էլ հետևում է ժողովրդի կուլտուրական պատկերը:

Բայց որպեսզի բառը իբրև նախալեզվի բառ արժեք ունենա, պետք է անպայման որ նա ամբողջապես նույն կամ նման լինի համեմատության ամենված բոլոր լեզուների մեջ: Միայն արմատի հնդեվրոպական լինելը

բավական չէ ընդունել տալու մեզ, թե այդ բառն էլ հնդեվրոպական է: «Բարձրախոս» բառի մեջ՝ «բարձր» հնդեվրոպական է, բայց սրանից չի հետևում նաև, թե բարձրախոսը հնդեվրոպական է: Նմանապես աքաղաղ բառի մեջ՝ քաղ «զոչել, կանչել» հնդեվրոպական է, բայց չի հետևում սրանից, թե աքաղաղը հնդեվրոպական ժամանակի բառ է: Նա շինված է բաժանունից հետո, հայոց կամ հայերենի մեջ՝ արդեն ունեցած քաղ արմատից: Այսպես հասկանալ նաև մյուսները:

Նախաշրջանի վերջը, որին պիտի հաջորդեր լեզուների բաժանումը (շուրջ 2500 թվին), ընկնում է նախապատմական այն դարաշրջանին, երբ հղկված Քարե դարը վերջանալով՝ սկսվում էր Պղնձի և Բրոնզի դարը: Եվրոպայում այս շրջանը ընկնում է 2500 թվերին, երբ Քարե դարը վերջանում է և երևան է գալիս պղինձը: 2000 թվին գտնվում է բրոնզը, իսկ 900 թվին՝ երկաթը: Արևելքում սակայն, սրանք ավելի հին էին, ուր 3000 թվին (Եգիպտոսում դեռ 5000 թ.) գտնվել էր պղինձը, իսկ երկաթը Եգիպտոսում 1350 թ. ազատ գործածություն ուներ (Boule, Les hommes fossiles, éléments de paléontologie humaine, Paris 1923, էջ 331): Այս պատճառով էլ «մետաղ» ընդհանուր գաղափարի համար մի ընդհանուր բառ չկա հնդեվրոպական ժառանգ լեզուների մեջ: Կան միայն պղնձի կամ բրոնզի, ոսկու և արծաթի համար զանազան բառեր, որոնք ընդհանուր են միայն մասնավոր շրջանակներում, բայց ոչ թե բոլոր հնդեվրոպական լեզուների մեջ: Այսպես՝ պղնձի կամ բրոնզի համար կա մի ընդհանուր բառ՝ արիական, գերմանական և իտալական ճյուղերի մեջ (սանս. *áyas*, զնդ. *ayō*, լտ. *aes*, գոթ. *aiz*, հիսլ. *eir*, հրգ. *ēr*), որ սակայն մյուս լեզուների մեջ պակասում է: Մի ընդհանուր բառ կա նաև արիական, սլավական, գերմանական և իտալական ճյուղերի մեջ՝ «պղինձ, երկաթ կամ մետաղ» նշանակությամբ (սանս. *lohās*, պրս. *rōi* > հյ. արոյր, հսլ. *ruda*, հիսլ. *raudī*, լտ. *raudus*): Այս բառն էլ պակասում է մյուս ճյուղերի մեջ: Սրանից հետևում է, որ պղինձը կամ բրոնզը՝ բնիկ կամ դրսից փոխառությամբ՝ գործածության էր մտել հնդեվրոպացուց մեջ, երբ դեռ նրանք բաժանված չէին իրարից:

Հնագիտությունը ցույց է տալիս, որ ոսկին էլ պղնձի չափ կամ նույնիսկ ավելի հին է: Հնդեվրոպացիք էլ ունին մի բառ՝ որ «ոսկի» նշանակությամբ ընդհանուր է գերմանական, բալթիկ-սլավական և արիական ճյուղերի մեջ (գոթ. *gulþ*, հրգ. *gold*, լեթթ. *zelts*, հսլ. *zlato*, ռուս. *золото*, լեհ. *zloto* և սանս. *hiranya*, զնդ. *zaranya*, որոնք նշանակում են «ոսկի», կազմված նույն արմատից՝ տարբեր մասնիկներով.

բոլորի հիմնական նշանակությունը՝ «դեղին»): «Ոսկի» նշանակությամբ են դարձյալ լտ. *aurum*, հպրուս. *ausis*, լիթ. *áuksas*, թոխար. *wäs*, որոնց կապակցությունը պարզված չէ:

Արծաթի էլ հին գործածությունը հաստատված է հնագիտությամբ: Կա հնդեվրոպացուց մեջ գրեթե ընդհանուր տարածված մի բառ, որ ծագում է *areg*՝ «փայլիլ» արմատից՝ զանազան մասնիկներով (սանս. *rajata*, զնդ. *əzəzata*, հպրս. *ardata*, թոխար. *ārkyant*, լտ. *argentum*, իռլ. *airget*, կորն. *arganto*, հյ. արծաթ, հուն. *árgyros*). բայց գերմանական և բալթիկ-սլավական լեզուները նույն մետաղի համար ունեն մի ուրիշ ընդհանուր բառ, որ փոխառյալ է մի անծանոթ ոչ-հնդեվրոպական լեզվից (գոթ. *silubr*, գերմ. *silber*, անգլ. *silver*, լիթ. *sidābras*, հպրուս. *siraplis*, հսլ. *srebro*, ռուս. *серебро*):

Երկաթի համար եղած բառերն ավելի քիչ տարածություն ունին. առանձին և իրարից անկախ ձևեր են հյ. երկաթ, հուն. *sidēros* և լտ. *ferrum*. փոքրիկ խմբակներ են կազմում՝

1) գոթ. *eisarn*, հիսլ. *isarn*, հրգ. *īsarn*, հիռլ. *īarn*. գալլ. *haiarn*, գերմ. *eisen*, անգլ. *iron*.

2) հսլ. *želēzo*, լիթ. *geležis*, հպրուս. *gēlso*, ռուս. *железо*.

Այս բոլորը ցույց է տալիս, որ երկաթի գործածությունը դրսից է մտել, և այն ժամանակ, երբ հնդեվրոպացիք արդեն բաժանված, բայց կելտերն ու գերմանացիք դեռ իրար հետ միասին էին, նույնպես բալթյանները և սլավները իրար հետ:

Այս բառական համապատասխանությունները՝ հնագիտության տվյալների հետ համաձայնությամբ՝ հաստատում են, որ հնդեվրոպացիք մետաղներին դեռ ծանոթ չէին և նրանցից գեմքեր, զրահներ և այլ գործիքներ պատրաստել չգիտեին: Երկաթը բոլորովին անծանոթ էր, պղինձը կամ բրոնզը արդեն գտնված էր, բայց դեռ ընդհանուր տարածություն չէր գտած, կամ դեռ նրանով գործել չգիտեին. որովհետև այլ բան է մետաղը ճանաչել և այլ բան է նրանով գործել իմանալ: Այսպես նաև ոսկին ու արծաթը: Երբ հնդեվրոպացիք սկսեցին ցրվել, գաղթավայրերում լայն չափերով ծանոթացան այդ մետաղների գործածության: Գերմանական և բալթիկ-սլավական ժողովուրդները, ինչպես քիչ առաջ ասացինք, արծաթը, փոխ առին մի անծանոթ լեզվից. հույները ոսկին (*chrysó*) ստացան սեմականներից, թերևս Փյունիկեցիներից (հմմտ. ասուր. *xurāṣu* «ոսկի»). երկաթը կելտական ժողովուրդները փոխ առին ոչ-հնդեվրոպական մի ժողովրդից՝ այն ժամանակ, երբ արդեն բաժանված էին իտալական միությունից. կել-

տականից էլ բառը անցավ գերմանականին: Այսպես նաև բալթիկ-սլավական ժողովուրդները: Ավելի ուշ են անագն ու կապարը (արծիճ). այս վերջինը հույները (*mólybdos*) և լատինները (*plumbum*) ստացան Իսպանիայից: Հայերը նախ քան բաժանումը ունեին արծաթը, բայց ոսկին և երկաթը չէին ճանաչում. դրանք հետո փոխ առին ուրիշ ոչ-հնդեվրոպական լեզուներից:

Արհեստների նախնական ձևերին ծանոթություն ունեին հնդեվրոպացիք, թեև նրանց մի մասը Քարե դարի արհեստների շարունակությունն է ներկայացնում: Առհասարակ ձեռքով կամ գործիքներով որևէ բան շինելու համար հնդեվրոպացիք գործածում էին *tek'* արմատը, որ լեզուների մեջ արտահայտվում է զանազան առումներով, բայց հատկապես «կացինով կամ ուրագով տաշելով շինել» (հմմտ. սանս. *tákṣā*, զնդ. *taṣa*>հյ. տաշել, ռուս. *тесля* «տաշելով շինել», հուն. *téchnē* ամեն տեսակ արհեստի համար. իսկ հյ. թեքել՝ ավելի կռելով մի բան շինելու իմաստն ունի): Կռելով շինելու բառը գտնվում է Եվրոպայի հյուսիսային և արևելյան ու արևմտյան լեզուների մեջ (մայր արմատը *qāu*, որից ռուս. *ковать*, լիթ. *káuju*, գերմ. *hauen*, լտ. *cūdō*), բայց ամծանոթ է հույն, հայ և արիական լեզուներին: Ավելի ընդհանուր է *ter* «ծակ բանալ, ծակել» բառը, որ առաջանում է նախավոր *ter* «շփելով մաշեցնել» արմատից, որից հետևում է թե Քարե դարի հետքը դեռ շարունակվում է: (Հայերեն համապատասխան բառն է թուր): Կացինը անշուշտ ծանոթ էր հնդեվրոպացոց, քանի որ տաշելու գործը գիտեին: Բայց այս գործիքի համար չկա մի բառ, որ 2-3 լեզվից անցնի: Այս իմաստով կա շատ հետաքրքրական մի բառ (սանս. *paraśus* = հուն. *pélekys*), որ հնդեվրոպական երևույթ չունի և պետք է լինի մի շատ հին փոխառություն (հմմտ. ասուր. *pilakku* «կացին»):

Այս միջոցներով հնդեվրոպացիք գիտեին պատրաստել իրենց առօրյա պետքերի համար կարևոր բաները. ինչպես՝ արոր, երկանաքար, քաղացք, լուծ, սայլ, անիվ, մավ, թի, սանդ (մեջը բան ծեծելու), վերջապես բնակության համար տուն:

Բրուտի արհեստը նույնպես ծանոթ էր հնդեվրոպացոց. ամանեղենների համար կա ընդհանուր *k<sup>2</sup>er* արմատը. բրուտի անիվը կոչվում է *dhrogos* (որից հյ. դուրգն): Հետաքրքրական համեմատություններ են զնդ. *taṣta* «տաշտ» և լտ. *testa* «հողե աման» (արմատը *texere* «հյուսել»), որից հետևում է, որ բրուտը նախապես ամանները հյուսում էր ուռնու ճյուղերով, հետո հողով ծեփում և հետո չորացնում:

Շինարարական արհեստի համար կարելի է հիշել *dheigh*, որ նշանակում է «հողե պատնեշ, թունք կամ ամբարտակ բարձրացնել, պատ շինելու համար հողը դիզել», (> հյ. դեզ, *g<sup>2</sup>ebhūra*) կամուրջ (որ հետո նախապաշարմունքով զանազան լեզուների մեջ փոխանակվել է տարբեր դարձվածքներով), *dhwer* «դուռ», *ānəā* «դռան սյուները»>հյ. անդ (դրանդի), *k<sup>1</sup>ōn* «սյուն» և վերջապես *dōm* «տուն»:

Ոստայնակության արհեստը ծանոթ էր հնդեվրոպացիներին. նրանք գիտեին թել մանել, մանածը հյուսել, կարել և դրանով հագուստ և կոշիկ պատրաստել: Այս խմբին են պատկանում՝ *snē* «մանել» (որից հուն. *nēō*, լտ. *nerē*, ռուս. *нить* «թել», գերմ. *schnur* «կապ»), *webh* «հյուսել» (որից գերմ. *weben*, սանս. *vābh* «հյուսել»), *syū* «կարել» (որից լտ. *suō*, ռուս. *шить*, սանս. *śīvyati* «կարել»), *au*, *u*, *ves* «հագնվիլ» (որոնց ժառանգներն են հյ. ազանիլ, աւդ «կոշիկ», զգենուլ, զգեստ, սանս. *vaste*, հուն. *féstai*, լտ. *vestis*, թոխար. *wastsi* և այլն): Հնդեվրոպացոց լեզվի մեջ *no<sup>2</sup>* «մերկ» և *bhosós* «ոտաբոբիկ» բառերի գոյությունը ապացույց է արդեն, թե նրանք շորեր էին հագնում և ոտքերին էլ կոշիկ ունեին:

Տեղից տեղ ճամբորդության համար հնդեվրոպացիք ունեին հասարակ սայլեր, իսկ «սայլով ճամբորդել» գաղափարի համար ունինք *wegh* արմատը: «Անիվ» գաղափարի համար ընդհանուր բառ չկա, սակայն ունինք *ak's* «առանցք» (որից սանս. *ákṣas*, հուն. *áxōn*, ռուս. *ось*, լտ. *axis*): Անվի գունդը կոչվում է *ənebh*, *no<sup>2</sup>bh*, որոնք բուն նշանակում են «պորտ»: Գետի վրա ճամբորդության համար արդեն հնարված էր *nāu* «մավ» (որից սանս. *nāus*, հուն. *naūs*, լտ. *navis*, պրս. *nāv*, հյ. մավ). թին կոչվում է *rē*, *erē*:

Առևտրի կամ վաճառականության հետքերն են ցույց տալիս հետևյալ բառերը. *q<sup>2</sup>rei* «զնել», *alg<sup>2</sup>h* «արժեք», *wəsnos* «զին»: Անշուշտ այդ հնագույն շրջանում դրան չկար, որ շատ ուշ Լյուդիացիք հնարեցին: Այդ միջոցին առևտուրը կատարվում էր փոխանակությամբ, որի ժամանակ զնդ. *re* միաժամանակ վաճառող է և վաճառողը միաժամանակ զնող. դրա համար էլ երկու գաղափարները խառնված են և լտ. *venum dare* «վաճառել» նույնն է հյ. զնել բառի հետ. գոթ. *kaupōn* և հիսլ. *manga* նշանակում են թե՛ զնել և թե՛ վաճառել:

Վաճառականության գլխավոր նյութն էին կազմում ամասունների հոտերը և դրա համար էլ *pek'us* «ամասունների հոտ» բառը ստացավ նաև «հարստություն, ինչք, դրամ» նշանակությունը (հմմտ. լտ. *pecus* «հոտ», *pecunia* «ինչք, հարստություն, դրամ»):



Վաճառականության հետ կապված են թիվն ու հաշիվը, չափն ու կշիռը: Առաջինի մեջ բավական զարգացած էին հնդեվրոպացիք, որովհետև գիտեին հաշվել գոնե հարյուրով: Հազարի համար ընդհանուր բառ չկա: Բայց այսքանն էլ մեծ բան է, որովհետև արդի վայրենիները 3-ից այն կողմ հաշվել չգիտեն:

Չափերի համար ունինք նախ *mē* «չափել» արմատը, որ գրեթե ընդհանուր տարածված է: Իսկ չափերի զանազան տեսակների համար անշուշտ գործածվում էին մարմնի զանազան մասերը, ինչպես՝ մատ, ոտք, թիզ, քիլ, գիրկ և այլն:

Ժամանակի զաղափարն ու չափն արտահայտելու համար ունինք *diwós* «որ, տիվ», որի բաժանմունքներն են՝ *aier*, *aion* «առավոտ», *wesperos*, *wēqeros* «երեկո» և *noqt* «գիշեր»: Տարին կոչվում է *yēro*, որ ունի միայն երեք եղանակ. *vesr* կամ *vēr* «զարուն», *sem* «ամառ» և *gʰei*, *gʰi*, *gʰeyem* «ձմեռ». աշուն չկա. և այս վիճակը շարունակում են դեռ Գերմանացիք՝ Տակիտոսի ժամանակ: Ամիսը կոչվում է *mēns*, և որովհետև այս բառը նշանակում է նաև «լուսին», ուստի հետևում է թե հնդեվրոպացոց ամիսը լուսնային էր: Չգիտենք թե շաբաթ ունեի՞ն և թե կարո՞ղ էին լուսնային ամիսներով տարին հաշվել: Ավելորդ է խոսել ամսանունների մասին, որովհետև մինչև անգամ հույները (Աթենացիք և Սպարտացիք) տարբեր ամսանուններ ունեին:

Եթե հնդեվրոպացիք մետաղագործության, արհեստների և վաճառականության մեջ թույլ էին, ընդհակառակը խաշնարածության, անասնապահության և որսորդության մեջ հաջողակ էին: Դրա պայացույցն այն է, որ ավանդված են մեզ տեսակ տեսակ անասունների և թռչունների անուններ: Դրանցից ոմանք ընտանի անասուններ են ներկայացնում, ուրիշներ՝ վայրենի անասուններ. երբեմն էլ կարելի չէ որոշել թե հիշատակված անասունը ընտանի՞ է թե վայրի, կամ թե ի՞նչ սեռի է, արո՞ւ թե էգ: Այսպես հայտնի են մեզ հետևյալ կենդանիները. *gʰōus* «տավար, եզ կամ կով», *tūros* «ցուլ», *uksen* «եզ», *porthus* «հորթ կամ յերինջ», *owis* «վոչխար», *wərén* կամ *agʰhnos* «զառն», *ekʷos* «ծի», *aig-* «այծ», *bhusgʷos* «արու այծ, բուծ», *sūs* «վայրի խոզ», *porḱos* «ընտանի խոզ» (այս վերջինը հատուկ է արևմտյան լեզուներին, իսկ առաջինը ընդհանուր հնդեվրոպական է, որից հետևում է թե հին հնդեվրոպացիք խոզը չէին ընտանեցրել և միայն ավելի ուշ՝ արևմտյանները ընտանեցրին այդ կենդանին), *kʷon* «շուն», *wjḱos* «զայլ», *ḱthos* «արջ», *alōpekʷos* «աղուխ», *éinos* «եղնիկ, եղջերու», *awēis* «հավ, թռչուն», *gʰans* «սագ», *anōtis* «բաղ», *er-*, *or-* «արծիվ», *gerēnos* «կռունկ»,

*trozdos* «տորդիկ թռչունը», *bheis* կամ *mei*? «մեղու»: Սրանցից դուրս ընդհանուր են նաև *kʷmis* «վորդ», *mūs* «մուկ», *angʷhis*, *ogʷhis* «օձ», *morwos* «մրջին», *mus*, *musos* «մուս, ճանճ», *bhlusā* «լու», *gnid-*, *knid-* «անիծ», որոնց նշանակությունը գյուղական կյանքում հայտնի է: Էշը անծանոթ է հնդեվրոպացիներին. նրա ծագումը արևելյան է: Էշը անծանոթ լինելով՝ անծանոթ է նաև ջորին: Ճագարի և նապաստակի համար ընդհանուր բառ չկա հնդեվրոպական լեզուների մեջ: Կատուն էլ անծանոթ է հնդեվրոպացոց. նրա ծագումը Ափրիկեյից է: Շատ հին ժամանակ կատուն ընտանեցրած էր Եթովպիայում, որտեղից շուրջ 2000 թ. բերվեց Եգիպտոս և պաշտամունքի էլ առարկա դարձավ: Այստեղից է դարում անցավ Հունաստան, ուր ստացավ *ailouros* անունը, որ բուն նշանակում է «պոչ շարժող». Հերոդոտոս պատմահայրը գործ է ածում այս բառը: Յ. Զ. առաջին դարի վերջում կատուն մտավ Հռոմ (Feist, Kultur, Ausbreit. der 'Indogermanen, էջ 161): Աբլորն էլ անծանոթ էր հնդեվրոպացոց. առաջին անգամ Հնդկաստանից եկավ. Ն. Զ. 2 դարում երևաց Հունաստանում, և այստեղից էլ տարածվեց Եվրոպայում:

Թե նախկին հնդեվրոպացիք առավելապես խաշնարած ժողովուրդ էին, այդ ցույց է տալիս *pekʷus* «հոտ» բառի գոյությունը և նրա «ստացվածք, գույք, ինչք, հարստություն» նշանակությունը: Հնդեվրոպացի ժողովրդի ամբողջ հարստությունը հոտն էր: Նա գիտեր օգտագործել ոչխարի բուրդը, որ կոչվում էր *pekʷus*, *pokʷus* կամ *velnos* (>իյ. գեղմն): Այծի մորթից պատրաստում էին կաշի, որի համար էլ մի քանի լեզուների մեջ *agʷinos*, «մորթ, կաշի» բառը ծագում է «այծ» բառից: Գիտեին կթել (*mēig*) անասունների կաթը (*gʷalakt*, *gʷlakt*), որից պատրաստում էին իրենց սնունդի կարևոր մեկ մասը: Հնդեվրոպացիք ճանաչում էին նաև մեղրը, որ կոչվում էր *mei-it* կամ *médhus*. բայց այդ մեղրը ստանում էին ո՛չ թե մեղվաբուծությամբ, այլ ծառերի խոռոչներից հավաքելով. սրա համար էլ փեթակի համար մի ընդհանուր բառ գոյություն չունի հնդեվրոպական լեզվաբանի մեջ: Մեղրից գիտեին պատրաստել մի տեսակ խմիչք, որ նույնպես կոչվում էր *médhus*. դա պատրաստվում է այսպես.՝ մեղրը հալեցնում են ջրի մեջ, մի քանի օր դնում են արևի տակ, խմորվում է և դառնում է նուրբ ոգելից ըմպելիք՝ դուրեկան համով: Հնդեվրոպացիք գինի չինել չգիտեին: Ավելի հետո, երբ գինին մտավ հնդեվրոպական ժողովուրդների մեջ, տեղ տեղ հիշյալ *médhus* բառը հատկացվեց նոր ըմպելիքին:

Ձկների գործածությունը անշուշտ հայտնի էր, բայց մեծ տեղ չէր բռնում. դրա ապացույցն այն է, որ ձկների զանազան տեսակների անունները ընդհանուր տարածված չեն. իսկ «ծուկ» գաղափարի համար մի և ընդհանուր բառ չկա. այլ կան արևմուտքում *pisqos*, կենտրոնում *g'hdhū* (>հյ. ծուկն), և երկու առանձին ձևեր արիականում և սլավականում: Սրանց դեմ կա երկու ջրային կենդանի, *udros* «ջրաղվես» և *bhebhirus* «կուղբ», որոնք ծանոթ էին հնդեվրոպացոց:

Խաշնարածության հետ հնդեվրոպացիք գիտեին նաև երկրագործություն. հերկելու համար կա մի ընդհանուր բառ, որ է *ar*. և սրանից էլ կազմվում է *arətros* «արօր»: Հերկելու կամ վարելու համար գործածում էին եզր: Լուծը կոչվում է *yugós*: (Հնդեվրոպացիներից արորը փոխառությամբ անցավ նաև Ուգրո-Ֆիննական լեզվաբնին): Ցանել գաղափարի համար՝ ունիք *sē* արմատը և *g'ernos* նշանակում է «հատիկ»: Սակայն այս երկուսն էլ հատուկ են միայն արևմտյան լեզուներին: Ընդհանուր է *agros*, որ նշանակում է «արտ, ագարակ»: Հիշվում են մի քանի տեսակ հացահատիկներ, բայց հատկապես *yewos* «ցորեն» և *g'herzdā* «գարի»: Այս բառերը այնուհետև խառնվել են լեզուների մեջ՝ մշակության զարգացման համեմատ:

Ջաղացպանության արհեստին ծանոթ էին հնդեվրոպացիք. հացահատիկներն աղում էին երկու ձևով. կամ ջաղացքի մեջ, և ստանում էին բարակ ալյուր, և կամ քարով ծեծում էին սանդի մեջ, կճեպները հանում և ստանում էին մի տեսակ ձավար: Այսպես՝ ջաղացքում աղալու համար ունինք *mel* և *al* արմատները (առաջինից ստացվում է հյ. մլաղաց, երկրորդից աղալ), իսկ սանդի մեջ ծեծելու նշանակությամբ ունինք *peis* արմատը: Երկանը կոչվում է *g²rāwanā*. անասուններին տրվելու հարող՝ *pelus*:

Ծառերի համար շատ բառ չկա. ընդհանրապես «ծառ» և «փայտ» գաղափարների համար ունինք *derewos*. անտառը զարմանալի կերպով անհայտ է: Մասնավոր ծառերից հայտնի են՝ *perk²os* կամ *aig* «կաղնի» (ընդհանուր է սրա պտուղը՝ *g²elə* կամ *g²elenos*>հյ. կաղին), *ask'hios* «հացի», *bhāg'os* «փեկոն», *bherēg'a* «ցարասի», *witā* «ուռի»: Կարևոր էր հատկապես այս ծառի ճյուղը, որ ոլորելով իբրև թել կամ չվան էին գործածում, և այս պատճառով՝ «կապ, չվան» նշանակող բառերը մի քանի լեզուների մեջ ծագում են «ուռի» ծառի անունից:

Բուսական անունների պակասությունը կենդանիների համեմատությամբ՝ ցույց է տալիս, որ հնդեվրոպացիների զխավոր սնունդը որսի կամ ընտանի կենդանիների միսն էր (*mēmsos*): Միսը կամ

կերակուրը գիտեին եփել, քանի որ ունեին կրակը, որ կոչվում է *pewōr* (>հուր) կամ *egnis*. դրա համար էլ կա *ōmos* «հում» բառը: «Եփել» գաղափարի համար կան զանազան բառեր, ինչպես *bhōgō*, *bhergō*, *peq²* «խորովել, եփել», *sephsō* կամ *ephsō* «եփել», *lendh* «եփել, կերակուր պատրաստել» (>հյ. աղանձ): Կերակուրների պատրաստության ժամանակ գիտեին գործածել աղը (*sal-*), որ անհրաժեշտ պահանջ է բուսակերների համար: Հայտնի է մտով եփված մի տեսակ ջրալի կերակուր, որ կոչվում է *yūs-*: Սսի հետ միաժամանակ գործածական էին կաթը (*g²lakt*) և կաթից պատրաստված սերը (*reughmen-*) և կարագը (*selpos*):

Ընտանեկան կազմակերպությունը նահապետական ձևով էր. ամուսինը տան մեծն էր, հրամայողը և կառավարողը. այս պատճառով *potis* «ամուսին» բառը հնդեվրոպական լեզվի մեջ նշանակում է նաև «պետ, տեր»: Բացի *pāter* «հայր», *māter* «մայր», *sunūs* «ուստր», *dhughāter* «դուստր», *bhrātor* կամ *bhrāter* «եղբայր», *swesor* «քույր» բառերից, որոնք ընդհանուր հնդեվրոպական են, կային ազգականություն ցույց տվող հետևյալ բառերը. *snusós* «նու, որդու կինը՝ հարսը», *swēk'rūs* «սկեսուր», *swēk'uros* «սկեսրայր», *daiwēr* «տայգր, ամուսնու եղբայրը», *g'ələw* «տալ, ամուսնու քույրը», *yēnāter* «ամուսնու եղբոր կինը, մեր»: Այս բոլորը պատկանում է արական գծի ազգականներին. իսկ իգական գծի ազգականների համար ընդհանուր բառ չկա լեզուների մեջ. եղածն էլ խառն ու շփոթ է. այսպես՝ կա ամուսնու եղբայրը կամ քույրը, բայց չկան կնոջ եղբայրը կամ քույրը. կա ամուսնու հայրն ու մայրը, բայց չկա կնոջ հայրն ու մայրը. կա որդու կինը (հարսը), բայց չկա աղջկա ամուսինը: Ընդհանուր բառեր չկան նաև կողմնակի գծով ազգականների համար. ինչպես պապ, հանի (հոր կողմից կամ մոր կողմից), հորեղբայր, մորեղբայր, թոռ (արական կամ իգական), քեռորդի կամ քրոջ աղջիկ, եղբորորդի կամ եղբոր դուստր և այլն:

Այս բոլորը ցույց է տալիս ընտանեկան մի այնպիսի դրություն, ուր կինը դրսից էր մտնում ամուսնու ընտանիքի մեջ, բայց ամուսինը կնոջ ընտանիքի հետ անձուկ կապակցություն չունեին: Այսինքն տնափեսա չկար, ինչպես և այժմ մեր կյանքի մեջ: Ամուսնության հանգամանքները ցույց է տալիս, *prek'*, որ բուն նշանակում է «հարցնել, ուզել, խնդրել», բայց մասնավորապես նշանակում է «աղջիկ ուզել», որից և առաջանում է մեր հարսն բառը: Նույնպես *wedh*, որ բուն նշանակում է «վարել, առաջնորդել, տանել», բայց հատկապես նշանակում է «կին կամ հարս բերել տուն, ամուսնանալ»:

Հարս լինելուց հետո՝ կինը նոր տան մեջ դառնում էր potni «տիրուհի» (այս բառը potis «պետ, տեր», այսինքն «փեսա, ամուսին» բառի իզականն է): Ամուսնու մահից հետո կինը դառնում էր widhewos «այրի», որ ընդհանուր հնդեվրոպական բառ է. հակառակը՝ այսինքն այրիացած ամուսնու համար բառ չկա: Սա նշանակում է թե այրիությունը կնոջ համար մի առանձին դրություն էր ստեղծում. նա այլևս մարդու չէր գնում և կառավարում էր մեռած ամուսնու տունը՝ իբրև տեր և տիրուհի: Իսկ ամուսնու համար այրիությունը բոլորովին նշանակություն չուներ, որովհետև կարող էր նորից ամուսնանալ:

Թե ամուսնությունը հնդեվրոպացոց մեջ միակնության՝ մե էր թե բազմակնությամբ, սրա համար ո՛չ մի լեզվական ապացույց չունինք, բայց «հարձ» բառի բացակայությունը ցույց է տալիս, որ հավանաբար հնդեվրոպացիք միակին էին (Feist, էջ 108):

Ընկերական խմբակցությունների ամենափոքր աստիճանը տունն է (dom), որ ընդհանուր հնդեվրոպական բառ է: Տանտերը իշխանության առաջին աստիճանն է, որ կոչվում է demspotis «տանուտեր»: Տների խմբակցությունը կազմում է woik'os «գյուղ» կամ «ցեղ», որ համարվում է մի մեծ տուն կամ մի մեծ ընտանիք: Այս պատճառով այս բառը զանազան լեզուների մեջ ունի տարբեր առումներ. ինչպես հունարենում «տուն, նախապես մեծ տուն, հետո մոտիկ ազգականներ». նույնպես wik'potis, որ է «գյուղապետ», բալթյան լեզուների մեջ դարձել է «տանուտեր, տեր, պարոն»:

Քաղաքը (polis) հնդեվրոպական հասկացողությամբ «ամրացված տեղ կամ բերդ» նշանակությունն ունի: Ըստ այսմ հնդեվրոպացոց ժամանակ ժողովուրդը բնակվում էր դաշտի գյուղերում կամ ագարակներում. քաղաքը՝ որ գտնվում էր ավելի բարձր և ամուր տեղ, սովորաբար անբնակ էր. և միայն վտանգի դեպքում՝ գյուղերի բնակչությունը փախչում էր այնտեղ՝ ապաստան գտնելու համար:

Մի ամբողջ ժողովուրդ նշանակելու համար ընդհանուր բառ չկա հնդեվրոպական լեզուների մեջ. բայց արևմտյան լեզուների մեջ տարածված է teutā «ժողովուրդ»: Թագավորական իշխանությունը ճանաչում էին հնդեվրոպացիք, որի ապացույցն է reg' «կառավարել, իշխել» արմատից՝ reks «թագավոր»: Արևմտյանների մեջ կա նաև wald «տիրել, թագավորել» բառը, բայց ընդհանուր չէ:

Կրոնական գաղափարների համար լեզվաբանությունը շատ բան չի տալիս: Աստուծո գաղափարն ունին հնդեվրոպացիք: Նախալեզվի մեջ deiwos ներկայացնում էր Գերագույն էակը, որ մինևույն ժամանակ լույ-

սի և երկնքի գաղափարն ուներ: Հայերենի մեջ նույն բառի ներկայացուցիչն է տիև «որ», իբրև «յերկինք, արև, լույս»: Այս բառը գրեթե բոլոր հնդեվրոպական լեզուների մեջ էլ պահված է: Ամշուշտ հնդեվրոպացիք ճանաչում էին նաև ուրիշ աստվածություններ, բայց բացի նախորդից ո՛չ մի բառ ընդհանուր տարածված չէ լեզուների մեջ: Սրա պատճառն այն է, որ յուրաքանչյուր ցեղ ուներ իր աստվածները և պահել է միայն նրանց անունները: Հայերի մեջ պաշտված աստվածությունն էր Դից, որ հնդեվրոպական նախալեզվի dhēsoth բառն է և որի հետ կապվում է նաև հունարեն Theós «Աստված»:

Աստվածները համարվում էին «երկնային, լուսավոր և անմահ» էակներ, որոնց հակադրվում էր «հողածին և մահկանացու» մարդը: Այս երկու վերադիրներն այնպես հատկանշական էին, որ մարդու բուն անունը (menus) հետո ջնջվեց և նրա տեղ տարածվեցին ցիmon «հողածին» (լտ. homo) և mytós (>իյ. մարդ) «մահկանացու» բառերը: Աստվածները նաև «հարուստ» և «հարստություն բաշխող» էին. և այս պատճառով աստված կոչվում է նաև dhagos, որ տալիս է հայերեն (իրանյաններից փոխառությամբ) բազ (հմմտ. բազին, Բազարան, Բազավան, Բազարատ, Բազառիճ): Ստուգաբանությունը մատնանշում են դեռ հին սլավոնական bogaty «հարուստ» և ubogъ «աղքատ» բառերը:

Կրոնական արարողությունների, ծեսի, զոհի և տաճարի մասին ո՛չ մի բառ չկա՝ որ ընդհանուր լինի հնդեվրոպական լեզուներին. սրանից պետք չէ հետևցնել, թե ուրեմն հին հնդեվրոպացիք ծեսեր կամ զոհեր չունեին, այլ թե նրանք ցեղե ցեղ տարբեր լինելով՝ փոխել են և իրենց անունը: Ընդհակառակը կան մի քանի կրոնական բառեր, որոնք ընդհանուր լինելով արիական, իտալական և կելտական լեզուներին, հաստատում են նրանց գոյությունը. այսպես են k'reddhe «հավատք, կախարհանք», ewegʰ «պաշտել, ուխտել, օրհնաբանել», yag' «պաշտել, զոհել». համեմատել նաև սանս. brahmān «հնդիկ քահանա» և լտ. flāmen «հռովմայեցի քահանա» բառերը, որոնք զուգորդվում են իրար հետ:

Կրոնի և կրոնական իշխանության հետ կապված էր օրենքը, հակառակ արդի հասկացողության, ուր օրենքը և դատաստանը աշխարհականացած՝ քաղաքական իշխանության ձեռքն են անցել: Այս բանը ցույց են տալիս լտ. lex «օրենք» և jus «իրավունք», որոնց համազորները վեդայական հնդկերենում և զանդկերենում կրոնական անձանոթ բառեր են:

Գեղարվեստական հասկացողության համար երկու բառ միայն կա. առաջինն է  $ong^2 > hj$ . օժանել, որ ցույց է տալիս հնդեվրոպացոց սովորությունը՝ իրենց մարմինը զանազան հոտավետ յուղերով օծելու, ինչպես անում են և արդի վայրենիները: Բացի սրանից՝ արդի վայրենիների նման՝ նրանք իրենց մարմինը ցտում, կտում կամ զանազան գույներով ներկում էին, սրա համար կա հնդեվրոպական  $peik$ ՝ արմատը:

Ահա այն տկար պատկերը՝ որ լեզվաբանության միջոցով կարելի է կազմել հնդեվրոպական նախաշրջանի քաղաքակրթության մասին: Անշուշտ այս պատկերը շատ պակասավոր է. քաղաքակրթության առարկաները այն վատ կողմն ունին, որ նրանց անունը ջնջվում անհետանում է, հենց որ մի նոր ավելի զարգացած առարկա գալիս է փոխարինելու նրանց: Այս պատճառով ահա շատ բան մնում է մեզ անհայտ. տրված պատկերը պետք է համարել միշտ իրականից շատ պակաս, այն է կարելի միմիմունը:

Կան հեղինակներ, որոնք շատ ավելի ընդարձակ, և պետք է ավելացնել, որ ոմանք էլ շատ գեղեցիկ պատկեր են կազմել հնդեվրոպական այն հին «երջանիկ» նախավիճակի մասին: Այսպես են՝

Pictet, *Les Origines indo-européennes ou les Aryas primitifs* (ա տպ. Paris, 1859-63, ք տպ. անթվական, 3 հատոր ընդարձակ և մանրամասն աշխատություն).

Schrader, *Sprachvergleichung und Urgeschichte* (Iena 1906) և *Reallexicon der indogermanischen Altertumskunde* (Strassburg, 1901, 1917):

Hirt, *Die Indogermanen*. Strassburg, 1905-1907.

Feist, *Kultur, Ausbreitung und Herkunft der Indogermanen*, Berlin, 1913.

A. Carnoy, *Les Indo-Européens, préhistoire des langues, des moeurs et des croyances de l'Europe*. Bruxelles-Paris, 1921.

Բայց սրանք, մեծ մասամբ, կան անհաստատ ստուգաբանությանց վրա հիմնված եզրակացություններ են, կան համեմատական ազգագրության, որ մի շատ խախտու և անհաստատ գիտություն է, և կան լավագույն դեպքում ներկայացնում են հնդիկների (վեդայական), հունաց (հոմերական), պարսից ու մարաց (զրադաշտական) և նման հին ժողովուրդների նախավիճակը, ինչ որ հնդեվրոպական նախացեղի նախավիճակ չի նշանակում:

Յների գլխավոր սխալն այն է, որ սանսկրիտը ընդունում էին իբրև լեզուների մայր, և ամեն ինչ նրանով էին բացատրում. չէին ուշադրություն դարձնում այն սկզբունքի վրա, որ մի բան նախալեզվյան լինելու համար՝ պետք է որ ձևով ու նշանակությամբ նույն լինի զանազան լեզուների մեջ. միայն արմատի նույնությունը բավական չէ ածանց բառը իբրև ընդհանուր հնդեվրոպական նախալեզվյան ընդունելու:

ԳԼՈՒԽ Բ.

### ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՐԲԱՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԻՐՔԸ ՆՐԱՆՑ ՄԻՋԵՎ

Ամեն լեզու՝ որ խոսվում է մի բավական ընդարձակ տարածության վրա և քաղաքական ու կուլտուրական զանազան միջոցներով մի ընդհանուր միություն ստեղծելու կարողություն չունի, բաժանված է լինում ավելի կամ նվազ թվով բարբառների: Այսպես պետք է լիներ նաև հնդեվրոպական նախալեզուն:

Ապացուցելու համար բարբառների գոյությունը հնդեվրոպական նախալեզվի մեջ՝ ուրիշ միջոց չունինք, եթե ոչ երևան հանել այլևայլ զուգաձայններ (isoglosse) հնդեվրոպական լեզվաբնի 11 ճյուղերի միջև: Եթե բոլոր լեզվաբանական երևույթներն էլ, առանց բացառության, բացարձակապես նույն ձևով երևան գային հնդեվրոպական լեզվաբնի 11 ճյուղերի մեջ, բնականաբար տեղիք չէր մնա մտածելու բարբառների գոյության մասին: Բայց երբ այդ երևույթներն ընդունում են մեկից ավելի ձևեր, այնպես որ 11 ճյուղերից մի քանիսը հետևում են այս ինչ ձևին, ուրիշներ մի երկրորդի և այլն, սրանով էլ ապացուցվում է բարբառների գոյությունը: Այսպես, օրինակ՝ հոգնակի տրականը զանազան լեզուների մեջ ներկայանում է մեզ հետևյալ վերջավորություններով. սանս. bhyaś, զնդ. byā, լտ. bus, ոսկ. fs, հիռլ. ib, գալլ. bo, հուն. phi(ո), գոթ. m, հլիթ. mus, հայրուս. mans, հսլ. mъ. այս բոլորը վերջ ի վերջո վերածվում է երկու խմբի. մին՝ որ սկսվում է bh ձայնով, մյուսը՝ որ սկսվում է m ձայնով. այս երկուսը անվերածելի են. հետևաբար և իրենց գոյությունը հասնում է մինչև հնդեվրոպական նախաշրջանը: Արդ՝ այն լեզուները, որ հետևում են bh խմբին (արիական, իտալական, կելտական և հունական), ներկայացնում են մի բարբառ, իսկ այն լեզուները, որ հետևում են m խմբին (գերմանական, բալթիկ-սլավական), ներկայացնում են մի ուրիշ բարբառ:

Հնդեվրոպական նախալեզվի բարբառների ուսումնասիրությամբ առանձնապես զբաղվել է A. Meillet, Les dialectes indo-européens,

Paris, 1908՝: Այս աշխատության մեջ երևան հանված և քննված են բազմաթիվ զուգակցություններ, որոնք կարելի է ամփոփել այստեղ հետևյալ ձևով.

1) Մի խումբ բառեր գոյություն ունին միայն բալթիկ-սլավական, գերմանական, կելտական և իտալական լեզուների մեջ, և չկան արիական, հայ և հույն լեզուների մեջ: Այս բառերից շատերը քաղաքակրթական նշանակություն ունին (մեծ մասը երկրագործական են), ուստի և ցույց են տալիս նույն լեզուները խոսող ժողովուրդների առանձին զարգացումը: Այսպես են, օրինակ՝ ցանել (լտ. sererė), սերմ (լտ. semėn), հատիկ (լտ. granum), այլուր (լտ. farina), ակոս (լտ. lira), խնձոր (գերմ. apfel), ընտանի խոզ (լտ. porcus), բակլա (լտ. faba), բորբոս (լտ. muscus), փորել (լտ. fodio), հաճար (հրգ. rokko, ռուս. рожа), վարսակ (ռուս. овец), տորդիկ թռչունը (լտ. turdus), պիծակ (լտ. vespa), ձիաստաց (լտ. crabro), բույն (լտ. nidus), լաստենի (լտ. alnus), կնձնի (լտ. ulmus), կարմրածառ (ֆրանս. if), դարբնել (լտ. cudó), կտրել (լտ. seco), կացին (լտ. securis), հյուսել (լտ. plecto), անիվ (լտ. rota), դեկ (լտ. temo), վահան (լտ. scutum), կանթ (լտ. ansa), ժողովուրդ (գոթ. thiuda), օտար, հյուր (լտ. hostis), պարտք (ռուս. долг), գրավական (լտ. vas, vadis), տիրապետել (ռուս. владеть), մարդ (հրբև հողածին էակ՝ լտ. homo, մյուսներն ունին իբրև մահկանացու՝ մարդ), մորուս (լտ. barba), վողորկ (լտ. glaber), սառույց (լտ. gelu, glacies), խոսք (լտ. verbum), մղել (լտ. trudo), հյուսիսային քամի (լտ. caurus), ճշմարիտ (լտ. verus), առատ (ռուս. много), ծով (լտ. mare):

2) Հնիս. կոկորդային k և k<sup>2</sup> ձայների դեմ՝ իտալական, հույն, կելտական և գերմանական լեզուները, ինչպես նաև հաթերենն ու թոխարերենը դնում են հավասարապես կոկորդային ձայներ. իսկ արիական, բալթիկ-սլավական, հայ, ալբանական, ինչպես նաև փոյուզերենն ու թրակերենն լեզուները երկու ձայները զանազանելով իրարից՝ առաջինի դեմ դնում են շչական ձայներ, երկրորդը պահում են կոկորդական: Օրինակ՝ հնիս. k<sup>1</sup>mtó «հարյուր» բառի դեմ գտնում ենք մի կողմից սանս. çatám, պրս. sad, լիթ. šimtas, ռուս. сто և մյուս կողմից՝ լտ. centum, հուն. hekatón, թոխար. kánt, իռլ. cét, գոթ. hund.- հնիս. k<sup>2</sup>erdi «սիրտ» բառի դեմ ունինք մի կողմից լիթ. širdis, լեթթ. sirds, ռուս. сердце, հյ. սիրտ, և մյուս կողմից՝ հաթ. kardis, հուն. kardía, լտ. cor, cordis, անգլ. heart, գերմ. herz, հիռլ. cride.- հնիս. dek<sup>1</sup>m «տասը» բառի

\* Նույնը համառոտ նաև Introduction, 7<sup>o</sup> տպ., էջ 418-423:

դեմ ունինք մի կողմից սանս. dačan, լեթթ. desmit, ռուս. десять, հյ. տասն, և մյուս կողմից՝ յոն. déka, լտ. decem, գոթ. taihan, գերմ. zehn, հինդ. deich n-: Այս բոլոր օրինակները հնիս. կ' ձայնի համար էին: Իսկ կ<sup>2</sup> ձայնի համար հիշենք հնիս. կ<sup>2</sup>օ «ո՞վ», որի դեմ ունինք սանս. ka, յոն. kós, լտ. quo, հինդ. cate, գոթ. hwas, լիթ. kàs, ռուս. кто, ալբան. ke և այլն. կամ հնիս. leik<sup>2</sup> «լքանել», որի դեմ ունինք լտ. linquo, liqui, գոթ. leihwan, լիթ. lèkù, հսլ. lèkš, հյ. լքանել:

3) Հնիս. a և o ձայնավորները անաղարտ մնում են հույն, հայ, փոյուզական, իտալական և կելտական լեզուների մեջ, իսկ արիական, բալթիկ, ալբաներեն, գերմանական լեզուների մեջ, ինչպես նաև հաթերենում, երկուսն էլ դառնում են հավասարապես a, սլավական լեզուների մեջ o, որ նշանակում է դարձյալ a: Օրինակ՝ հնիս. ag'ō «ածեն» բայի դեմ ունինք հույն. ágō, լտ. ago, սանս. ajāmi, հիյուս. aka, հինդ. -aig, հյ. ածել.- հնիս. ak'sos «առանցք» բառի դեմ ունինք սանս. akšas, հույն. aksōn, լտ. axis, հրգ. ahsa, լիթ. ašis, ռուս. ось.- իսկ հնիս. roth «անիվ» բառի դեմ ունինք սանս. ráthas, լտ. rota, հինդ. roth, հրգ. rad, լիթ. ratas, կամ հնիս. ózdos «ճյուղ» բառի դեմ ունինք հույն. ózos, գոթ. գերմ. ast, հյ. nus:

4) Երբ մի արմատ վերջանում է t ձայնով և հանդիպում է նույն ձայնով սկսվող մի մասնիկի, ստացվում է tt կրկնակը հնդեվրոպական նախալեզվի մեջ, ժառանգ լեզուների մեջ սույն tt ձայնախումբը վերածվում է երկու ձևի. իտալական, կելտական և գերմանական լեզուների մեջ դառնում է ss, իսկ իրանական, հույն, բալթիկ-սլավական լեզուների մեջ st (այսպես նաև ալբաներենը, իլլյուրականը, թրակերենն ու փոյուզերենը): Հայերենը մնում է անհայտ: Օրինակ, հնիս. settos «նստած» ձևի դեմ ունինք գնդ. hastō, լտ. sessus, իռլ. sess, կամ հնիս. wittos «ծանոթ» ձևի դեմ գնդ. vistō, հույն. fistos, հինդ. fess, հրգ. gi-wisso:

5) Բառի միջին վանկերում գտնված ə ձայնը պահվում է սանսկրիտ. հույն, իտալական և կելտական (ինչպես և թոխարերեն) լեզուների մեջ, և ջնջվում է իրանյան, բալթիկ-սլավական, հայ և գերմանական լեզուների մեջ: Օրինակ՝ հնիս. dhughatér «դուստր» բառի դեմ ունինք մի կողմից սանս. duhitā, հույն. thygáter, թոխար. tkācer, իսկ մյուս կողմից գնդ. duγdar, պրս. duxtar, լիթ. duktè, գերմ. tochter, հսլ. dšti, բուլգար. dšter'á, հյ. դուստր:

6) Հնիս. շնչեղ թրթռուն բաղաձայնները (bh, dh, gh, g<sup>2</sup>h) զանազան ժառանգ լեզուների մեջ տալիս են այլևայլ թրթռուն բաղաձայններ,

միայն հույն և իտալական ճյուղերի մեջ դառնում են խուլ, որ հետո վերածվել է շփականի. այսպես bh>հույն. ph, լտ. f, dh>հույն. th, լտ. f, gh>հույն. ch, լտ. h, g<sup>2</sup>h>հույն. ph, լտ. f. օրինակ՝ հնիս. bhērō «բերեմ, կրեմ» բառի դեմ ունինք սանս. bhārāmi, գնդ. barāmi, հսլ. berō, իռլ.-biur գոթ. baira, հյ. բերեմ, իսկ հույն. phérō, լտ. fero:

7) Հնիս. շնչեղ խուլ բաղաձայնները (ph, kh, th) անաղարտ պահված են արիական ճյուղի և հայերենի մեջ. հունարենը միայն մասամբ է պահում այդ ձայնները, իսկ մյուս բոլոր արևմտյան լեզուները շփոթում են պարզ խուլների հետ: Այսպես հնիս. ph, th, kh դառնում են սանս. ph, th, kh, գնդ. f, օ, x, հյ. փ, ք, խ, հույն. ph, t, ch, իսկ մյուս լեզուների մեջ նույնն են ինչ որ p, t, k: Օրինակ՝ հնիս. phu «փչել» բառի դեմ ունինք սանս. phupphu, հույն. phūsa, հյ. փչել, փուք, բայց լտ. pustula, լիթ. pūsti, ռուս. пылать և այլն:

8) Հնիս. s բառասկզբում դառնում է h՝ հայերեն, հունարեն և իրանյան լեզուների մեջ. որոշ պարագաներում բառամիջում s դառնում է š արիական, մասամբ նաև բալթիկ-սլավական և հայերեն լեզուների մեջ, իսկ մյուս արևմտյան լեզուներում այդպիսի ձայնափոխություն չկա. օրինակ հնիս. senos «հին» բառի դեմ ունինք սանս. sana, լիթ. senas, գոթ. sinistra, հինդ. sen, լտ. senex, բայց գնդ. hanō, հույն. hénē, հյ. հին:

9) Բայերի կատարյալի մեջ հնդեվրոպական նախալեզուն ճանաչում էր e նախահավելվածը. այս երևույթը գիտեն միայն արիական, հայ և հույն լեզուները. օրինակ բերեմ բայի կատարյալ եզակի երրորդ դեմքն է հույն. éphere, սանս. ábharat, հյ. եբեր.- հին հայերեն լքանեմ բայի կատարյալ եզակի երրորդ դեմքն է ելիք=հույն. élipē, սանս. aričāt: Մյուս լեզուները չունին այսպիսի հավելված:

10) Բալթիկ-սլավական, գերմանական, կելտական և թերևս իտալական լեզուները ներկայացնում են առանց կրկնության կատարյալի մի ձև, մինչդեռ արիական և հույն լեզուները կրկնավոր են:

11) Ներկայի ye մասնիկը արիական և հույն լեզուները պահում են, բալթիկ-սլավական և հայ լեզուները վերածում են երկու կարգի՝ ye և i, իսկ գերմանական, կելտական և իտալական լեզուները աշխատում են ջնջել:

12) Ածականների բաղաձայնական աստիճանը կազմելու համար արիականը և հունարենը գիտեն գործածել հնիս. tēro մասնիկը. այսպես, օրինակ՝ հնիս. ōmōteros «ավելի հույն, հմազույն» սանս. āmātaras, հույն. ōmōteros: Իսկ իտալական, կելտական, գերմանական և բալթիկ-սլավական լեզուները կազմում են հին yes մասնիկով. օրինակ՝ հսլ.

gorjъъ «ավելի վատ», լտ. sən-ior «ավելի ծեր»: Հայերենը զուրկ է այս երկուսից էլ:

13) Իտալական, հույն և հայ լեզուները ունին գոյականների մեջ օ վերջավորությամբ իգականներ, որ հին հնդեվրոպական է. օրինակ՝ հնիս. snusó>հուն. nous, լտ. nurus, հյ. նու (սեռ. նուոյ) «հարս». մյուս լեզուները կամ ջնջել են իգականի այս օ վերջավորությունը և կամ դարձրել են a:

14) Հոլովական bh մասնիկի դեմ, որ գտնուում ենք արիական, հունական, իտալական և կելտական լեզուների մեջ, ինչպես քիչ առաջ ասացինք, մյուս լեզուները (բալթիկ-սլավական և գերմանական) հանում են համապատասխան ռնգային m ձևը: Հայերենը ունենալով ք կամ ձայնավորից հետո վ, ւ, միանում է արիականին և հունականին:

15) Հոգնակի ներգոյականը կազմելու համար արիական և բալթիկ-սլավական լեզուներն ունին su մասնիկը, հայերենը ունի ս՝ որ կարող է կորցրած լինել ու ձայնավորը, հույնը ունի si, որ ծառայում է նաև ուրիշ հոլովների համար, մյուս լեզուները չունին համապատասխան մի ձև: Օրինակ՝ հնիս. vjagos «գայլ» բառի հոգնակի ներգոյական ձևերն են՝ սանս. vjkošu, լիթ. vilkūsu, հւլ. viščěxъ, հյ. ի գայլս, հուն. lykoisi:

16) Բայի արգելական ձևը կազմելու համար արիական, թոխարական, հայ և հույն լեզուները գործ են ածում հնիս. mē ձևը, որ տալիս է սանս. mā, հյ. մի, հուն. mē, թոխար. mā: Մյուս լեզուներն ունին ոթ, որի դեմ հաթերենը ունի iē:

Այս բոլորից դուրս կան մի խումբ բնորոշ բառեր, որոնք հատուկ են միայն արիական և բալթիկ-սլավական լեզուներին, և ուրիշ մի խումբ բառեր, որոնք հատուկ են միայն իտալական, կելտական և գերմանական լեզուներին: Այս կարգի բառերից հիշենք մի քանիսը.

Արիական և բալթիկ-սլավական բառեր.

հւլ. radi, հպրս. rādiy «պատճառաւ»,

հւլ. slovo, զնդ. sravah «խոսք»,

հւլ. bogъ, հպրս. бага «աստված»,

հւլ. svētъ, լիթ. šven̄tas, հպրուս. swints, զնդ. spəntō «սուրբ»,

հւլ. sujъ, սանս. savyās, զնդ. haoya «ծախս»,

հւլ. vlasъ, զնդ. varəsō «վարս»:

Գերմանական, կելտական և իտալական բառեր.

լտ. piscis, իռլ. iasc, գոթ. fisks «ծուկ»,

լտ. porca, իռլ. rech, գերմ. Furchе «ակոս»,

լտ. mēntum «կզակ», գալլ. mant «ծնոտ» և գերմ. Mund «բերան»:

Այս բոլոր նմանությունները հավաքելով մի պատկերի մեջ՝ կունենանք հետևյալ տախտակը (էջ 28).


Այս տախտակի մեջ մի կենտրոնի շուրջը շարված են արիական, հայ, հույն, իտալական, կելտական, գերմանական և բալթիկ-սլավական ճյուղերը (ալբաներենը, հաթերենը, թոխարերենը, փոյուգերենն ու թրակերենը մեծ մասամբ անհայտ լինելով՝ չենք առած տախտակի մեջ): 1-ից մինչև 16 համարներով նշանակված են վերի նմանությունները. ուր որ այդ լեզուները ձևով միանում են՝ նշանակվում են ուղիղ գծով. նրանից տարբեր ձև ունեցող լեզուները մնում են առանց գծի. եթե կան մի երրորդ ձև ունեցող լեզուներ, դրանք էլ ստանում են զիգզագավոր գիծ, իսկ եթե որևէ հարցի մեջ որևէ լեզվի դիրքը անհայտ է, գիծը նշանակվում է կետերով:

Այս տախտակից կարելի է հեշտությամբ դուրս բերել հետևյալ եզրակացությունները.

ա) Ո՛չ մի դեպքում ո՛չ մի լեզու կատարելապես անկախ ու անջատ չէ մյուսներից. նմանության գծերը անկանոն կերպով տարածվում են զանազան ուղղությամբ. ուրիշ խոսքով որևէ լեզու պարտավոր չէ անպատճառ ամեն հարցում իր աջ կամ ձախ հարևանի հետ զուգակից ընթանալու, այլ մերթ հակվում է աջ և մերթ հակվում է ձախ:

	հայ.	հնդյ.	սամս.	իրան.	հուհ.	լտ.	լիթ.	հւլ.	գերմ.	լեւտ.
606.	<i>սուրբ (սպռիկ)</i>	K'ubhró	çubhṛa	—	—	—	—	—	—	cuanna
607.	<i>սպառնալ</i>	spṛ	sphuráti	sparaiti	spairō	sperno	spiriù	—	h. spurnan	seir
608.	<i>ստանալ</i>	stā+ū	sthāna	hištaiti	histánō	de-stinare	stonas	<i>stamū</i>	h. stān	cono-snaim
609.	<i>ստեղծել</i>	stel+ō	sthálati	—	stéllō	stolidus	հւլ. stallit	stelja	h. stellen	tailc
610.	<i>ստեղծ</i>	stel	sthāṇú	—	stelechōs	stolo	լ. stulms	н. стонб	u. stela	—
611.	<i>ստերջ</i>	ster+ǰ	starí	ս. satarvan	steira	sterilis	—	p. sterica	stairō	—
612.	<i>ստև</i>	steu	stu-pá	—	stýpē	—	—	—	—	—
613.	<i>ստեպ, ստիպել</i>	steib	stibhi	—	steibō	stipo	staiбус	stǎbly	ú. steppen	—
614.	<i>ստիկը</i>	pstēn	stana	fštāna	stēnion	—	հւլ. spenis	—	h. spunne	sine
615.	<i>ստոյգ</i>	steuwā	satyá	haiṭya	etá, etefós	—	—	<i>jistovū</i>	u. sōṭ	—
616.	<i>ստորի</i>	stor	—	—	steira	—	—	—	h. storro	—
617.	<i>սրունք</i>	k'rūsni	—	—	—	crūs?	—	—	—	—
618.	<i>վաքսուծ</i>	swek's+k'omt	šašti	xšvašti	exē'konta	sexaginta	—	—	—	—
619.	<i>վեր, վերայ</i>	uper	upári	upairi	hy'per	super	—	—	հլ. over	q. ver
620.	<i>վեց</i>	k'swek's	šaš	xšvaš	héh, féx	sex	šēši	sestb	saihs	sé
621.	<i>տազր, տայզր</i>	daivēr	dēvár	—	dāēr	lēvir	dēveris	dēverb	u. tācor	—
622.	<i>տալ (զ.)</i>	g'ǎlōu	—	—	galóōs	glōs	—	<i>zūhiva</i>	—	—
623.	<i>տալ (բ.)</i>	dā, dō	dā	daḍami	dídōmi	do	dū'mi	damb	—	dān
624.	<i>տամուկ</i>	dā+mo+nily	dā-nu	dā-nu	dēmós	—	—	—	—	—
625.	<i>տասն</i>	dékṛ	dáçan	dasa	déka	decem	dé'simt	desętb	taihun	deich
626.	<i>տատանիլ</i>	dṇ	—	—	donéō	—	—	—	—	—
627.	<i>տատասկ</i>	dək'	dáçati	dāstra	dakeîn	—	—	—	tahjan	—
628.	<i>տարգալ</i>	dṛaw-լ	darvá	սլիլ. dār	dóry	trua	dervà	drevo	triu	drochta
629.	<i>տարտամ</i>	dṛm	drā'yati	—	darthánō	dormio	—	dremati	—	—
630.	<i>տեղ, ետղ</i>	sedlo	—	—	hellā	sella	—	unpp. sedlo	u. sētl	q. sedlon
631.	<i>տեռ «կաշի. 2. քող»</i>	der-s	dṛṇāti	dar	déros	—	dirù	dera	u. teran	լ. darn
632.	<i>տեսանել</i>	derk'	darç	darəsa	dérkomai	—	—	—	-tarhjan	derc
633.	<i>տևել</i>	dewə	duvás?	հւլ. duva(ištam)	dfē'n	dū-ro	—	davě	q. zaudern?	doe
634.	<i>տի-ք</i>	dīt, dīti	—	—	—	—	—	—	u. tīd	—
635.	<i>տի, «կապ»</i>	dē	dyáti	—	déō	—	—	—	—	—
636.	<i>տիզ</i>	dig'h	—	—	—	—	—	—	u. ticia	dega
637.	<i>տիկ</i>	dig	—	—	—	—	—	—	u. ticcen	—
638.	<i>տիղմ&gt;տիլ</i>	stél-	—	—	díza	—	telžiù	—	q. stallen	p. staot
639.	<i>տիւ (տի)</i>	diw	divā	—	télma -dios	diu, dies	dienà	dǎnb	(sin)teins	լ. diw

	հայ.	հնդ.	սանս.	իրան.	հու.Ս.	լտ.	լիթ.	հւլ.	գերմ.	կելտ.
640.	<i>տղել (տնտղել)</i>	dil	—	—	dendillō	—	—	—	—	—
641.	<i>տոկալ</i>	dowə-ko	duvās?	հւ. duva(istam)	dfē'n	dū-ro	—	davē	q. zaudern?	doe
642.	<i>տոդ, տոդուք</i>	stol	—	—	télma	—	telžiù	—	q. stallen	p. staot
643.	<i>տոռն (սանդի)</i>	doru	druṅī	պիլ. dār	dóry	trua	dervà	drêvo	triu	drochta
644.	<i>տորգ</i>	dorw	—	—	—	—	—	—	u. tifer	—
645.	<i>տուար</i>	dīpəro	—	—	—	—	—	—	—	—
646.	<i>տուն (ընտանի)</i>	dōm	dam	dəməna	dómos	domus	nāmas	domū	—	—
647.	<i>տուտն</i>	dud	—	—	—	—	—	—	q. tote	—
648.	<i>տոփել</i>	doph	—	—	déphō	—	—	u. dépati	—	—
649.	<i>տոփալ</i>	stib	—	—	steibō	stipo	stipti	—	u. stīf	—
650.	<i>տրամ «պիմի»</i>	dru-rā-mo	dāruṅā	drva	droón	dūrus	drútas	sū-dravū	u. trum	լ. dūr
651.	<i>տրուալ (րուալ)</i>	drōb	—	—	—	—	—	ξ. drobny'	hh. drafna	—
652.	<i>տրտուն</i>	drom	drā'yati	—	darthánō	dormio	—	d̄ymēti	—	—
653.	<i>տրտունք</i>	dōrd-	dardurá	—	dárda	—	dardē'ti	p. dūrdórū	—	dord
654.	<i>տոն</i>	dapni	—	—	dapánē	dapino	—	—	լ. tafn	—
655.	<i>g?</i>	ad-sk'	—	—	—	ad	—	—	at	ad
656.	<i>գախ</i>	sk'ə-kho	çākhā	պ. šax	—	—	šakà	saķū	hōha	լ. cainc
657.	<i>գայտել</i>	sk'at	kū'rdati	—	skirtáō	scateo	skatau'	n. скочить	ú. schurz	ú. ceird
658.	<i>գելուլ (գեղ)</i>	sk'el	—	—	skallō	sculpo	skeliù	n. цель	ú. skellen	scailt
659.	<i>ցիմ</i>	kyīno, ksīno	çyēnā	saēna	iktīnos	scidi	լ. skaida	çéditi	skaidan	p. skeja
660.	<i>ցիտ, ցտել</i>	sk'íd	čhid	sid	schízō	—	—	—	—	—
661.	<i>ցիր, ցրել</i>	sk'ēr	čhuráyati	—	—	cutis	kūtis	—	h. hutta	cūil
662.	<i>ցի</i>	sk'ēwo	skāuti	—	sky'los	caveo	—	ξ. skoumati	h. scauwōn	—
663.	<i>ցոյց</i>	skeu-sk'	ā-kuvate	պիլ. škōh	koéō	—	—	—	—	—
664.	<i>ցուլ</i>	skulu	—	—	sky'lax	—	bumbulis	ξ. boubel	η. femp	—
665.	<i>փամփուշտ</i>	phamph	bimba	—	pomp'hós	splendeo	լ. spilgans	—	q. flinkern	ú. lainn
666.	<i>փալլ (փաղփաղիլ, փողփողել)</i>	sphel, phel	phalgú	—	—	—	—	—	—	—
667.	<i>փայծաղ</i>	sphelg'hn?	plīhán	spərazan	splē'n,	lien	blužnis	slēzēna	u. spleen	selg
					splánchnon	—	—	—	—	—
668.	<i>փանաքի</i>	sphn	—	—	spánios	spolium	լ. sprangāt	—	—	—
669.	<i>փարել</i>	sphr	—	—	speira	—	լ. sprégstu	polica	լ. spjalk	լ. fflochen
670.	<i>փեղկ</i>	sphelg	phálaka	—	sphélas	—	—	—	hh. spraka	—
671.	<i>փեռել</i>	spher+ել	sphūr'jati	—	spáragma	—	—	—	hh. spiorr	—
672.	<i>փերթ</i>	spher+p	—	—	sparátō	—	—	—	—	—



	հայ.	հնդ.	սանս.	իրան.	հուհ.	լատ.	լիթ.	հուլ.	գերմ.	լեհ.
673.	փին (փնթի)	(s)phino	—	—	pinos	—	—	—	—	—
674.	փինատ «աղբատ»	(s)phēn	—	—	penia	—	—	—	—	—
675.	փոթ	spout	—	—	speúdō	pudet	spudinti	—	—	լ. ffwdan
676.	փործ	phor+đ	—	—	peira	(ex)perior	—	—	fraisan	—
677.	փուլ, փլանիլ	phōl	—	—	sphallō?	—	pūlti	—	h. fallan	—
678.	փուլ, փլել փուլ	phu	phupphu-	պ. pūk	physa	pustula	pūsti	пышать	h. fjūk	—
679.	փոքր	phuku	—	—	phaûlos	paucus	—	—	fawai	—
680.	փռել, սփռել	phēr-s	—	—	speirō	spargo	լ. spraujūs	—	ú. sprōeweu	—
681.	փրփուր	phēr	—	ouu. ffiur	aphrós	—	—	—	—	—
682.	քակոթ	kakka	—	պ. kaka	kákkē	caco	—	kaka	q. kakken	ú. cacc
683.	քաղել	ql	—	—	skallō	sculpō	skeliù	n. щель	h. skellen	լ. chwalu
684.	քաղց	swld-sk'	—	—	—	—	—	—	hh. svelta	—
685.	քամել	qm	—	—	—	—	—	—	—	—
686.	քամակ	kam	—	—	—	—	—	kamúoti	—	—
687.	քան	k <sup>2</sup> ān	—	—	—	—	—	լ. kamisis	—	—
688.	քառ	k <sup>2</sup> tvr	turi'ya	tūrya	tra-	quam	kā	—	hwan	—
689.	քառասուն	?	čatvārin'cat	čatvarāsata	tessarákonta	quartus	—	—	—	—
690.	քար	kar	karkara	—	kárkaros	quadrāgintā	—	—	—	—
691.	քարթ	(s)kṛp	kṛpāna	—	skorpíos	cancer	—	—	hardus	carn
692.	քալել	kau	—	—	—	carpo	kerpù	n. черп	ú. schraffen	cerb
693.	քաք	kakka	—	պ. kaka	kákkē	caveo	—	—	—	—
694.	քեցի	svēnyo	—	—	—	caco	—	kaka	q. kakken	ú. cace
695.	քերել (քորել)	(s)qer	kṛā'ti	—	keirō	—	sváiné	n. своя'чина	ú. geswte	—
696.	քերթել քերծել	+ p + đ	kṛntāti	kərentaiti	—	caro	skiriù	skora	h. sceran	scaraim
697.	քեմ	k <sup>2</sup> oinā	—	kaēnā	poine'	cortex	kertù	kratiti	u. skard	scrissid
698.	քիւք	k <sup>2</sup> ēmā	čāmati	պ. kām	témnonta?	—	skerdžiù	—	—	—
699.	քիւտ	swidro	svēda	xvaēda	hidrō's	—	kainé	čēna	—	—
700.	քիլ	skēwo	skāuti	—	skylos	sūdor	լ. swēdri	—	hh. sveiti	լ. chwys
701.	քոյր	swésōr	svásar	xvaāhar	—	cutis	kūtis	—	h. hutta	cūil
702.	քուհ (քուհք)	swopno	svápna	xvafna	hýpnos	soror	sesuo'	sēstra	h. swester	siur
703.	քոպ «ոտք» քրքանք «ծիծաղ» քրքուիլ «հատաչիլ» քրուիլ «ոտբալ»	kū	kōkūyatē	—	kō-kyō	somnus	sāpnas	sūnū	u. swefn	súan
						cavannus	kau'kti	u. kükati	ú. hiulen	լ. cwyn

	հայ.	հնդ.	սանս.	իրան.	հուհ.	լտ.	լիթ.	հուլ.	գերմ.	կելտ.
704.	քսան	wíkṣti	vimṣati	vīsaiti	fikati	vīginti	—	—	—	fiche
705.	օգնել օգուտ	aṃw	ávati	avaiti	enḗeos	avere	—	—	—	լ. awyr
706.	օղ «կօշիկ»	eu-dh	—	aodra	—	(ind)uo	au- iù	ob-u-ja	—	fuan?
707.	օղ «հավա»	aw-dho	—	aota	autmēn	—	áudra	—	—	լ. auhei
708.	օթ «հազնել»	ew-ti	—	ao-ḍra	—	(ind)uo	au'tas	ob-u-ja	—	fuan?
709.	օթ «զիշերել»	au-ti	—	—	—	—	—	—	—	—
710.	օծանել	ṛg <sup>2</sup>	an <sup>2</sup> j	—	—	unguo	hu. anctan	—	h. anco	imb
711.	օծ	ang <sup>2</sup> hi>ang <sup>2</sup> hi	—	—	—	anguis	angis	ռ. yж	h. unc	-ung
712.	օղ	aulo	—	—	—	alvus	aulis	ulica	ú. aul	—
713.	օր	āmōr	—	—	—	—	—	—	—	—

Ծանոթ.— Բոլոր այս ստուգաբանությունները հանված են իմ Արմատական բառարանից. նոր են միայն գերծել, քիւ, հոյակապ, մեղծ, որոնք իմ առաջարկություններն են, և երբու՛ճ որ առաջարկեց Lidén, Mélanges Pedersen 92:

Հաշված չէ թե ուրիշ լեզուներ ինչ չափով հավատարիմ են մնացած նախալեզվին. բայց տարակույս չկա, որ սանսկրիտը, հունարենն ու լատիներենը հայերենից գերազանց են այս մասին: Քննելով Walde-Pokorny Հնդեվրոպական բառարանի երկու հատորները, գտա որ 2223 նախալեզվյան արմատներից 1217 ունեն հունարեն ժառանգներ, որ լինում է ամբողջ կեսից ավելին կամ հայերեն արմատների կրկինից պակաս: Լեզվի հնությունը և մատենագրության ճոխությունը բավական բացատրում են դրա պատճառները: Բազմաթիվ սովորական բառեր, որոնք ընդհանուր են բոլոր հնդեվրոպական լեզուների մեջ, չեն պահված հայերենում. հիշենք այսպիսիներից հետևյալները.—

- noqt* «զիշեր»>սանս. naktā, հուհ. nyktós, ալբան. nate, լտ. nox, noctis, գերմ. Nacht, լիթ. naktis, ռուս. ночь, հիբլ. nocht.
- swell, sūl, sun* «արեգակ»>սանս. súvar, հուհ. hélios, լտ. sōl, կիմր. haul, գոթ. sauil, գերմ. sonne, լիթ. sáulė, ռուս. солнце.
- sūs* «խոզ»>գնդ. hū, հուհ. hys, լտ. sus, թխար. suwo, գերմ. sau, լեթթ. suve<sup>2</sup>ns, ռուս. свинья, բրլտ. houc<sup>2</sup>h.
- nu* «այժմ»>սանս. nu, գնդ. nū, հուհ. nu', լտ. num, լիթ. nū, ռուս. ныне, գերմ. nun.
- sunu, suyu* «որդի»>սանս. sunu, գնդ. hunu, թխար. soyā, հուհ. huiós, լիթ. sunūs, ռուս. сын, գոթ. sunus, հիբլ գերմ. sunu, գերմ. sohn, աճղլ. son.

*kíptom* «հարյուր»>սանս. çata, գնդ. satəm, հուհ. hekátón, լտ. centum, իռլ. cēt, բրլտ. kant, հիբլ գերմ. hunt, գերմ. hundert, լիթ. šimtas, ռուս. сто.

*tenu* «նուրբ, բարակ»>սանս. tanu, հուհ. tany-, լտ. tenuis, ռուս. тонкий, գերմ. dünn, իռլ. tanae.

*erē, rē* «թիավարել, թի»>սանս. aritra, հուհ. eréttō, լտ. remus, լիթ. iriù, գերմ. rudern, իռլ. rā.

*ombh, nobh* «պորտ»>սանս. nabhya, պրս. nāfa, հուհ. omphalós, լեթթ. naba, լտ. umbilicus, իռլ. imbliu, գերմ. Nabel.

*weg'h* «վարել, քշել (կառք ևլն)»>սանս. vahati, գնդ. vazaiti, հուհ. ochéō, լիթ. vežù, ռուս. возить, լտ. veho, գերմ. Wagen, իռլ. fēn.

*snē, nē* «թել մանել, հյուսել»> սանս. snāyati, հուհ. néō, լտ. neo, լեթթ. snaju, ռուս. нить, գերմ. nāhen, իռլ. snāthe.

*pū* «թարախ կապել»>սանս. pūya, գնդ. pūtay-, հուհ. pyos, լտ. pus, հիսլ. fūi, գերմ. faul, լիթ. pūvū.

*ster* «փռել, տարածել»>սանս. stṛnāti, հուհ. stornymi, ալբան. štrin', լտ. sterno, գերմ. streuen, ռուս. про-стереть, իռլ. sernim.

*sek* «հետևի»>սանս. sacate, հուհ. hépomai, լտ. sequor, իռլ. sechur, լիթ. sekù, հգերմ. —segga «հետևորդ»:

Ընդհակառակը կան բառեր, որ հայերենը մեծ հավատարմությամբ պահել է, մինչդեռ ուրիշ լեզուներ անհետ կորցրել են: Այս բանը հաստատվում է, երբ հայերենի հետ համեմատելի միայն մի կամ երկու լեզու կա: Անշուշտ կան նաև այնպիսի բառեր, որ մյուս բոլոր լեզուները կորցրել են, և միայն հայերենն է պահել. բայց այս կարգի բառերը

գտնել և հաստատել ամկարելի է: Հաճախ հայերենը ամենամեծ սատարն է հնդեվրոպական մախաձևը վերականգնելու համար: Այս կարգի բառերից իբր օրինակ հիշենք հետևյալները.

**Արտասուք և արտօստ.**— այս բառերի հնդեվրոպական մախաձևն է *drakru*, որից կրճատմամբ առաջացավ երկրորդական *dakru* ձևը և հետո էլ մախաձայնի ամկարով *akru*: վերջինից ծագեցին արիական և բալթյան ձևերը. մյուսներն ընդհանուրապես *drakru* ձևից են. իսկ հայերենը պահել է նախնական լիակատար *drakru* ձևը, որ շրջմամբ դարձրել է մախ *rdakru*, հետո հայկական սովորական հավելվածով **արտասար>արտասար:**

**Գող բառը՝ գաղել և գավառական գեղել «ծածկել»** բառերի, ինչպես նաև սրանց ածական գողտ, գաղտ, գեղտ ձևերի հետ երևան է հաճախ հնիս. *vel, vol, vj* արմատը և գրեթե անակաս *velj, volj, vjd* ձևերը. բայց այս բոլորը՝ որ այնպես գեղեցիկ կանոնավորությամբ պահված են հայերենի մեջ, չեն գտնվում մյուս ցեղակից լեզուների մեջ և կա միայն բալթյան ճյուղը, որ պահել է *vel* ածականը:

**Կեր, կուր** (կերակուր) արմատն է հնիս. *gʷer* «ուտել». ստանիս տարբեր է հնիս. *gei* «կուլ տալ» արմատը. զանազան լեզուների մեջ այս երկուսը շփոթված են իրար հետ, այնպես որ կարելի չէ որոշել թե իրապես ո՞ր արմատին են պատկանում: Հայերենը հարազատորեն պահել է երկու արմատները մի քանի ձայնդարձներով. այսպես՝ **կեր, կուր, \*կոր** (կոկորդ բառի մեջ) և **կել, կուլ** (գավառական «կոկորդ»):

**Պլոկել, պլոկել «քերթել, կեղևել, կեղեքել, կողբալուել»** բայը՝ որ շրջված է **լպոկել, լոպկել** հոմանիշից, ծագում է հնիս. *lob-* հոմանիշ արմատից: Նախալեզուն այս արմատը երկու ձևով էր ճանաչում՝ *lep* և *leub*, իրենց ձայնդարձներով. առաջինից են հուն. *lepō*, լիթ. *lurpū*, ռուս. *лупить* «կեղևել, քերթել, կողբալուել, հափշտակել, պետք եղած գնից ավելի թանգ վաճառել», որոնք ներկայացնում են ճիշտ հայերենի իմաստները: Երկրորդ արմատի վերջածայնը որոշված չէ թե *b*՝ էր, թե՞ *bh*, որովհետև բալթիկ-սլավական և այլ լեզուներ, որոնց մեջ կա այս արմատը, չեն կարող որոշել այն ձայնը: Հայերենը գալիս է որոշելու, թե բաղաձայնն էր *b*, որով այս մասին եղած տարակուսանքը վերջացնում և գերմանական ձևերի մասին եղած կասկածներն էլ փարատում է:

**Քառ «չորս».** հնդեվրոպական մախալեզուն «չորս» թվականի համար ուներ երկու ձև՝ *k<sup>2</sup>etwores* և *k<sup>2</sup>ivj-*. հնագույն հնդեվրոպական լեզուները պահում են այս երկու ձևերը. այսպես են սանսկրիտը, զանդկերենը,

հունարենը և իտալականը. սրանց հետ նաև հայերենը որ ունի **չորք** և **քառ**. մյուս լեզուները ջնջում են նրանցից մեկը:

**Քար.**— մյուս լեզուները պահել են կրկնված կամ ածանցական ձևերը և կամ է ածականով (ինչպես՝ գերմ. *hart*) և կամ զանազան տեղանունների վրա, որոնց ծագման մասին զանազան կարծիքներ կան, քանի որ ոչ մի լեզու պահած չէ բուն *kar* արմատը՝ իր մախնական լիմաստով. հայերենն է միայն, որ պարզական քար արմատով գալիս է լույս սփռելու և կասկածները փարատելու:

**Լալ.**— արմատը լտ. մյուս լեզուներն ունին ածած *plāq, plāg* ձևը. պարզ արմատը *plā* պահել է միայն հայերենը:

**Տղել, տնտղել.**— պահված է միայն հունարենը մեջ, բայց կրկնավոր *dentilō* «աչքերը այս ու այն կողմ շարժել, հայացքը մեկի մյուսի վրա ձգել» ձևով. պարզ արմատը ցույց է տալիս հայերենը (տիղ - *dil*):

**Հուպ տալ «սեղմել».**— գտնվում է սանս. *ubjati* և լիթ. *ūbyti* ձևերով. ժառանգների բացակայության պատճառով հնիս. *ub* «սեղմել, ճնշել» արմատի գոյությունը կասկածական էր. հայերենը՝ հուպ ձևով գալիս է հաստատելու նրա գոյությունը:

**Գալ.**— հնդեվրոպական արմատը ենթադրվում էր միայն հայերենի միջոցով (*wā*). մյուս լեզուների մեջ կար միայն *wadh* ածականը և այն էլ պահված միայն լատիներենի (*vādere*) և գերմանականի մեջ (*waten*). նորագյուտ հաթյան արձանագրությունների մեջ երևան եկավ *wā, wē* «երթալ», սաա «գալ» բայը և հայերենի մախնականությունը հաստատեց:

**Գոլ «տաքուկ».**— գտնվում է միայն բալթիկ-սլավական և գերմանական լեզուներում. բայց երկուսի մեջ էլ *g, k, d* ածականներով. պարզ *wel* արմատը պահում է միայն հայերենը, որ գիտե նաև գաղջ ածականը:

Այստեղ հիշատակելու արժանի է նաև թվականների մեջ տասնավորների կազմությունը: Հնդեվրոպական մախալեզվի մեջ տասնավորները կազմվում են բարդությամբ, որի առաջին եզրը միավորն է և երկրորդը *kṛt* կամ *kōmt*, որ *dékṛti* «սասնյակ» բառի սղված ձևն է: Այսպես, օրինակ՝ մախալեզվի մեջ ասում էին *wikṛti* 20, *trikōmtā* 30, *penk<sup>2</sup>ē-kōmtā* 50 և այլն: Տասնավորների կազմության այս ձևը պահեցին արիական, հունական, լատինական և կելտական լեզուները. իսկ բալթիկ-սլավականը և գերմանականը ստեղծեցին նոր ձև, որ կազմված է միավորի և ամբողջական «տասն» բառի հարադրությամբ: Հայերենը իր —սան և —սուն վերջավորությամբ առաջին խմբի հետ է,

այսինքն միանում է հունականի և արիականի հետ, և հեռանում է սլավականից: Այսպես, օրինակ՝ 20 թվականի համար ունինք՝ հնի. *wikr̥ti*>սանս. *vimṣati*, զնդ. *visaiti*, դորիական հուն. *fikati*, թոխար. *wiki*, քուչ. *ikam*, լտ. *viginti*, բրըտ. *ugent* և *hj*. քսան. իսկ նոր ձևով՝ հսլ. *diva dōsēti*, լիթ. *dvidešimt*, գոթ. *tvaitigjus*, հրգ. *zweinzug*:

Թողնում ենք հիշատակել այն բազմաթիվ մանր պարագաները, որոնցով լի է համեմատական քերականությունը և Արմատական բառարանը:

Այժմ առենց մեր 713 հնդեւրոպական արմատները, համեմատենք նրանք ցեղակից վեց ճյուղերի հետ (արիական, հույն, իտալական, գերմանական, կելտական և բալթիկ-սլավական) և տեսնենք թե ի՞նչ չափով պահված են այդ լեզուների մեջ:

713 բառերից 166 հատը ընդհանուր է, այսինքն գտնվում է նաև մյուս բոլոր վեց լեզուների մեջ (ընդհանրապես ամբողջությամբ, երբեմն միայն արմատական մասով):

Այդ բառերը տպված են շեղատառ:

38 դեպքում բացակայում է միայն կելտական և մնում են մյուս 5 ճյուղերը (արիական, հույն, լատին, բալթիկ-սլավական և գերմանական). — սրանք են՝ ազագիլ, ակն, աճիլ, այց, աչք, ասր, բամ (խոսիմ), դարիլ (դադարիլ), եղանիլ, եռալ, ես, ընդ, ընդերք, թոպել, թուք, լեարդ, լու, խարել, հանի, հեռ, հեալ, հոգ (հոգի), հոլովել, հով, մաքի, մեզ, մուկն, նա (այն), նա (մանավանդ), նու, ործկալ, որկոր, ստեղն, ստերք, ստեպ (ստիպել), տայգր, ցուցանել, փչել:

5 դեպքում բացակայում է միայն գերմանականը և մնում են մյուս հինգ ճյուղերը (արիական, հույն, լատին, բալթիկ-սլավական և կելտական). — այս բառերն են՝ առ(նախդիր), ողող (ուլուլալ «լաց լինել»), ոսկր, սոր, տամ (բայը):

13 դեպքում բացակայում է միայն իտալականը և մնում են մյուս հինգ ճյուղերը (արիական, հույն, բալթիկ-սլավական, գերմանական և կելտական). — այս բառերն են՝ ամեն, առգանել, առու, բոց, եւ, կին, հերու, մուր (մրուր, մրրիկ), սագ, սան, սուն (սնանիլ), ստինք, տեռ (կաշի). (սրանցից առու, սուն, ստինք նույնարմատ են և ճշտագույն հաշվով մնում է 10 բառ):

18 դեպքում բացակայում է միայն բալթիկ-սլավականը և մնում են մյուս հինգ ճյուղերը (արիական, հույն, իտալական, գերմանական և կելտական). — այս բառերն են՝ ածել, անդունդ, աստղ, ելանել, քառամ

(թարշամ), լուծանել, ծիծառն, հայր, հեռի, ձիր, մեծ, նաւ, ողն, որովայն, ուլն (ուղուկ), սար, վեր (ի վերայ), քար:

9 դեպքում բացակայում է միայն հունարենը և մնում են մյուս հինգ ճյուղերը (արիական, բալթիկ-սլավական, իտալական, գերմանական և կելտական). — այս բառերն են՝ բեկանել, կիւ, մոյթ, միստ, փայլ, քերթել, քոյր և օծանել. իսկ լեզու բառը տարբեր ձև ունի:

19 դեպքում բացակայում է միայն արիականը և մնում են մյուս հինգ ճյուղերը (հունարենը, բալթիկ-սլավականը, իտալականը, գերմանականը և կելտականը). — այս բառերն են՝ աղ, այգի, անիծ, առիծ, արօր, այտ, բերան, թարախ, թրիք, ի (նախդիրը), լալ, կռունկ, հացի, հուր, սա (այս), տեղ, ցելուլ (ցեղ), քաղել, օծ:

Այսպիսով հայերենը 102 դեպքում համեմատվում է հինգ ճյուղի հետ, որով մնում է 445 դեպք, երբ հայերենը համեմատվում է 4, 3, 2, կամ միայն մի լեզվի հետ:

Այժմ ամփոփվենք հայերենին ամենից ավելի մերձավոր երեք ճյուղերի՝ արիականի, հունարենի և բալթիկ-սլավականի միջև և տեսնենք մեր բառերի թվական հարաբերությունը սրանց հետ: Համեմատված բառերի քանակի կողմից առաջին տեղը բռնում է հունարենը (524 բառ), երկրորդ և երրորդ տեղը՝ արիականը և բալթիկ-սլավականը (երկուսն էլ 432 բառ): Իսկ եթե չհաշվենք այն 166 բառերը, որոնք ընդհանուր են բոլոր վեց ճյուղերին, կմնա 358 բառ հունարեն, 266 բառ արիական և 266 բառ էլ բալթիկ-սլավական. ուրիշ խոսքով հունարենը գրեթե հարյուր բառ ավելի մյուս երկուսից:

Ամենից ավելի կարևոր են այն դեպքերը, երբ համեմատությունները լինում են մի կամ երկու լեզվի հետ միայն: Այսպես՝

Հայերենը միայն արիականի հետ՝ 18 բառ.

արև, արեգ	զերծ
արծուի	ընծայ
երգ	թովել (թոթով)
ինձ (զյ)	արիական է միայն
խաչ, խոչ	ծագ
խինդ, խնծիդ	ծի
ծեծել, ծանծ	մարմին
կատակ	նետ
կոզի (արմատը կով, ընդհա-	սաստել
նուր է, բայց «կարագ» իմաստը)	ցրել

Արծաթ բառը մինչև իր վերջածայնը համապատասխան է գալիս արիական, իտալական և կելտական ձևերին: Բալթիկ-սլավականը չունի այս բառը. իսկ հունարենը նույն արմատը ածանցում է ուրիշ մասնիկով (árgyros):

Բուծանել բառի հնագույն ձևը եղել է *bhrōg*, որ պահված է իտալական և գերմանական ճյուղերի մեջ. սրանց *r* ընկնելով առաջացավ *bhusg'*, որ պահում են արիական ու հայկականը.— հունարենը, բալթիկ-սլավականը, ինչպես նաև կելտականը չգիտեն այս արմատը:

Նստիլ (նիստ) ծագում է հնիս. *sed* արմատից՝ ու նախդիրով. մյուս լեզուներն ընդհանրապես ունին աննախդիր պարզ արմատը (օրինակ լտ. *sedeo*, գերմ. *sitzen*, անգլ. *sit*, լիթ. *sėdu*, ռուս. *сидеть*). միայն արիականն է, որ գործածում է ու նախդիրով ձևեր (սանս. *nīśidati*, պրս. *nīšastan*, սոգդ. *nista*), նման հայկականին արևմտյան լեզուներն ունին նույն նախդիրով ձևը, բայց «բույն» նշանակությամբ (ինչպես լտ. *nodus*, գերմ. *nest*, լիթ. *lizdas*, ռուս. *гнездо*): Հայերենը չունի:

Լու ծագում է հնիս. *plusos* ձևից, որին համապատասխան է գալիս սանս. *pluṣi*, բայց ոչ հունարեն *psylla* կամ հսլ. *blücha*.

Հայերենը միայն հունարենի հետ 41 բառ.

Ազանել (գիշերը)	գեր (վեր)
ալիւր	դակու
աղմուկ	երաստան
աղտ (կեղտ), նաև աղծ	երթալ
աղօրի	եփել
անուրջ	թարփ
արածել (արօտ)	թի
արթուն	թիւ
աւել, աւելել	թմրիլ
աւել, յաւելուլ	խստոր
ափ (ձեռքի)	ծաղր, ծիծաղ
ծուռ	սուտ
կամուրջ	տատանիլ
մերծ	տղել, տնտղել
մոզի	ցուլ
մոլ (ընծիւղ)	փամաքի
որս?	փին
սար, սարք	փինատ (աղքատ)

սին	օթ (գիշերել)
սին	օր
սխալակել	

Հայերենը միայն բալթիկ-սլավականի հետ 27 բառ.

գեղծ (խոյլ)	կածան
գեթ. գիջանալ	կարդսու
գորտ	կոլր (ճյուղ)
դեռ	կուրծ, կրծել
եզր	հալել
եռելին	հարթնուլ
դ (ուսխդիր)	հեղուլ հեղեղ, զեղուլ
դոկղմիլ	ողողել
թաթաւել	(ջուր)
իսլ	սլանալ
լուկել	քամել
լաստ	քամակ
լիկ (լիճ)	քերծել
խուն	

Այստեղ պետք է հիշել կարկուտ բառը, որ շրջված է \*կակրուտ ձևից. իսկ սա էլ կրկնված է \*կրատ արմատից, որի հետ նույն է հսլ. *gradis* (նաև լտ. *grando*), մյուս լեզուները թեև նման են հնչում, բայց կազմում են տարբեր խումբ. այսպես՝ սանս. *hrādūni* և հուն. *chálaza*:

Չար, հարկանել ծագում է հնիս. *per* «զարնել» արմատից և սրա քրց ածականից. պարզ արմատը պահված է միայն բալթիկ-սլավականի և ալբանականի մեջ, որոնց հետ է նաև *hj*. *harp*, մյուսներից արիականը ունի քր ածականը և կելտականը ունի քօրց ածականը. զանազան լեզուների մեջ կան նաև *spher* կլն ձևեր, որ հայերենը չգիտե: Ուրեմն հայերենի ամենից մերձավորը բալթիկ-սլավականն է:

Ուղի «ճամբա». ծագում է սլ արմատից. մյուս լեզուներն ընդհանրապես ունին *aulos* ձևը՝ զանազան իմաստներով (օրինակ՝ հուն. *aulós* «երկարածն փոս անցք, խողովակ»). միայն սլավականն է, որ ձևով ու իմաստով համապատասխանում է հայերենին (ռուս. *улица* «փողոց»):

Ո՛ւր. ծագում է հնիս. *k<sup>2</sup>* անորոշից՝ *r* ածականով. մյուս լեզուների մեջ «ո՛ւր» նշանակող բառերը կազմված են նույն անորոշից՝ *dhe*

մասնիկով (օրինակ՝ գնդ. kudā, ռուս. куда և այլն). միայն լիթվացիներենն է, որ մեզ նման r մասնիկով ունի kur՝ «ո՛ւր»:

**Տարտամ** «դանդաղ, ծուլ»։ ձևանում է հնիս. drom «քնել, ննջել» արմատից, որ ածականն է պարզ drē «քնել» արմատի. նույն m ածականով ձևեր ունինք միայն սլավականի և լատինականի մեջ (ռուս. дремать «նիրհել, թմբել, անհոգ լինել», լտ. dormio «քնել, անգործ դատարկ լինել»)։ Ոմանք ուզում են այս արմատի տակ դնել նաև հսլ. dьromо «տրտում, մռայլ, տխուր լինել», բայց իմաստի տարբերության պատճառով կասկածում են. հայերենն ունենալով տրտում բառը՝ նույն արմատից և նույն իմաստով, հաստատում է տրված ստուգաբանությունը։

Հայերենը միայն լատինականի հետ՝ 6 բառ.

ամուսին	մանչ
ըստ	սրունք
հուպ (մօտ)	քաւել

Կարևոր է հիշել այգի, որի նախնական նշանակությունը (խաղող) կա միայն լատիներենում. մյուսները պահում են «լեռնային մանր պտուղ» իմաստով։

**Թակ, թակել** բառի արմատն է teg, որ կա միայն լատիներենում (tigra «գերան»), մյուսները (գերմանական և բալթիկ-սլավական) ունին steg արմատը։

**Սանդուղք** բառը թերևս ծագել է հնիս. sqand «ցատկել, վեր բարձրանալ» արմատից. այդ դեպքում մեր բառին ամենից ավելի մոտիկ է լտ. scāla (հինը \*scand-sla), որ նշանակում է նույնպես «սանդուղք»։

**Սիսեռն** բառի հետ համեմատելի ձևեր են. լտ. cicor, մակեդ. kikerroi, հուն. kriós, սանս. čična «ոլոռ». վերջինը նշանակությամբ անստույգ և ձևով էլ տարբեր է. ամենից ավելի մոտիկ են մեզ լատինը և մակեդոնականը։

Հայերենը միայն գերմանականի հետ՝ 15 բառ.

աճիւն	մոյն
անձն (արմատը առ ընդհանուր է.	նուրբ
իսկ ցի ածականը կա միայն	ողորմիլ

գերմանականում)

առասպել  
բով, բովել  
գոմ (ախոռ)  
հաստ, հաստատ  
մատչիլ, մօտ

ուստր  
տիք  
տուար  
տուտն  
քաղցնուլ

**Հացի** բառը թեև ընդհանուր հնդեւրոպական է, բայց միայն գերմանականն է, որ ունի հայերենի համապատասխան askhio ձևը. մյուսները զիտեն ösi, որ նախորդի պարզականն է և osen, որ սրա մի ուրիշ ածականն է։

**Ազագել** բառի պարզ արմատն է as «այրիլ, չորանալ».— սրա ածականներն են azd և azg. առաջինը գտնում ենք հունարենի և բալթիկ-սլավականի մեջ, որոնց հետ է նաև hj. ոստին. երկրորդը գերմանականի մեջ, որի հետ են նաև ազագել և աճիւն։

**Ամառն** բառի արմատն է sem- կամ semā-. և ձևերով գտնում ենք զանազան լեզուների մեջ. միայն գերմանականն է՝ որ ունի r-ով ձևեր (sommər). այսպես նաև հայերենը։

**Գոյ, գոլ** (լինել) բառը ծագում է հնիս. ves արմատից, որ զանազան լեզուների մեջ պահված է «մնալ, բնակիլ» իմաստով. միայն գերմանականն է, որ տվել է նրան «լինել, գոյ լինել» նշանակությունը. այսպես նաև հայերենը։

**Եղունգն** թեև ընդհանուր հնդեւրոպական է, բայց լեզվից լեզու այնքան այլափոխված է, որ կարելի չէ մի ընդհանուր ձևի վերածել. հայերենին ամենից ավելի մոտիկ է գերմանականը (nagel), իր l, n, g բաղաձայններով։

**Պալ**, նշանակում է «տեղից չջարժվող խոշոր ապառաժ քար», որի հետ նույն են պաղանձաւ «քարանձավ» և պղպղաքար «անշարժելի քար». հանվում է հնիս. bal բառից, որ նշանակում է «ուժեղ, խոշոր» (հմմտ. ռուս. бо́льшой)։ Ծագմամբ նույն է գերմանական pal «անշարժելի, հաստատուն», որ որոշ լեզվաբաններ վարանում են կցել նույն արմատին, իմաստի տարբերության պատճառով։ Հայերենի կատարյալ համաձայնությունը գերմանականի հետ ձևով և նշանակությամբ՝ գալիս է փարատելու կասկածը։

**Սէր**. ծագում է հնիս. Kei արմատից ro ածականով. արմատի նախնական նշանակությունն է «պառկիլ, հանգստանալ», որ հետո անցնելով «տուն, ընտանիք» իմաստից, հասնում է «սէր, սիրելի, սիրական»

նշանակության: Ձանազան լեզուներ պահել են կամ պարզ արմատը և կամ նրանից աճած ձևեր. րօ մասնիկով աճած ձևեր գիտե միայն գերմանականը:

Փեղկ. ժագուն է հնիս. *sphelg* ձևից, որ *sphel* պարզ արմատի ց-ով աճած ձևն է. պարզականը գտնվում է զանազան լեզուների մեջ, իսկ ց-ով աճած ձևեր կան միայն գերմանականում (օրինակ՝ ֆրիզ. *spalken* «ճեղքել»):

Հայերենը միայն կելտականի հետ՝ 6 բառ.

արգահատիլ	լերկ
արզանդ	մատն
գերան	ողորկ

Խուղ «խրճիթ» բառը թեև ընդհանուր հնդեվրոպական է, բայց ձևով ավելի մոտ է կելտականին (իռլ. *cúil*):

Հայերենը արիականի և հունականի հետ միասին՝ 26 բառ.

ազդր	ծետ
ալիք «կոհակ»	ծօն
աղալ	մարդ
ամալ	մի՛, մի՛թէ
այր	մինչ
աջ	ոզոր
առնուլ	չուել, չոզայ
առնել	սարդ
առն «արու վայրի ոչխար»	սխալ
(հատկապես հուն. <i>arneios</i>	ստել
«խոյ»)	տամուկ
երիւրել	տի (կապ)
գմրիլ (իմաստով ավելի նման	ցից
է արիականին)	փրփուր
իծ	

Հայերենը արիականի և բալթիկ-սլավականի հետ միասին՝ ութը բառ.

երդունմ	հուպ (սեղմել)
լեսուլ	ծող
լլուկ, լլկել	մոռանալ
լողալ	ոչ

Հայերենը արիականի և իտալականի հետ միասին՝ միայն մի բառ, որ է՝

խայթել, խէթ, խօթ.

Հայերենը արիականի և գերմանականի հետ միասին՝ 3 բառ.

մաշիլ  
մուլի  
սալ

Հայերենը արիականի և կելտականի հետ միասին՝ 5 բառ.

ամ  
գիւտ, գտանել  
եզն  
պեղել  
սուրբ (ճիշտ համապատասխան է սանս. *çubhrá*, իսկ միայն արմատով իռլ. *cuanna*):

Հայերենը հունականի և բալթիկ-սլավականի հետ միասին՝ 14 բառ.

արդ (այծմ)	ծուկն (մյուսները ներկայացնում են տարբեր
գերի	խմբակցություններ)
գերփել	մեք
դամբան (նշանակությամբ բոլոր- րովին նույն է հունարենը.	մօր (ճահիճ)
իսկ հպրուս. <i>dambo</i>	ողբ
«հիմք»՝ միայն ձևով).	ոստին (չոր)
երգիծանել	տոփել
կայծ	փարիլ
հերիւն	

Հայերենը հունականի և իտալականի հետ միասին՝ 9 բառ.

երեց	տիկ ձևերն են հույնը և
լար	լատինը).
կաթն	հաւ (ծայր)
կալ (բայր)	ծիւն
կոկորդ (արմատը ընդհանուր	յարմար
է, մեզ ամենից ավելի մո-	ու

Հայերենը հունականի և գերմանականի հետ միասին՝ 10 բառ.

աղբիւր (ուղիղ համապատասխանը հունարենն է, իսկ գերմանականը միայն արմատով).	արմ, արմատ
հինհնալ	բոկեղ
ներգելի	թառիլ
ոստ	ծառ
	ստորի
	տիկ

Հայերենը հունականի և կելտականի հետ միասին՝ ունի միայն մի բառ, որ է ռունգն.

Հայերենը բալթիկ-սլավականի և իտալականի հետ միասին՝ ունի 4 բառ, որոնք են՝ անկիւն, հարսն, մեղծ, քիղ:

Հայերենը բալթիկ-սլավականի և գերմանականի հետ միասին՝ ունի 18 բառ, որոնք են՝

բոկ	հնոց
բութ	հող
գաղջ	ծաղկել
գեղգեղել?	մլուկն
գոլ	մաղթել
թէ (եթէ, թեթուք)	մուլ (ծուխ)
լանջ?	սկունդ
կումբ	տրուպ
կոնչիլ «կուչ գալ»	քենի

Հայերենը բալթիկ-սլավականի և կելտականի հետ միասին՝ ունի միայն մի բառ, որ է թեկն (թիկունք):

Հայերենը իտալականի և գերմանականի հետ միասին՝ ունի 3 բառ, որոնք են՝ գալ (զգալ), թաքջել, միգ:

Հայերենը իտալականի և կելտականի հետ միասին՝ ունի 2 բառ, որոնք են՝ թեղի (ծառը) և ողոքել:

Վերջապես հայերենը գերմանականի և կելտականի հետ միասին՝ ունի 5 բառ, որոնք են՝

բլուր	ողջ
դուլ (դադար)	տիգ
լկիլ	

Ընդամենը չորս դեպք կա, ուր 3 արևմտյան լեզուները միանում են հայերենի հետ, առանց արիականի, հունականի և բալթիկ-սլավականի. սրանք են՝ գեղ (գեղեցկություն), բորբոք, հերկ? և ց? նախդիրը:

Այս բոլորը ի մի հավաքելով՝ տեսնում ենք, որ արևելյան լեզուներից արիականը ունի 18 առանձին համեմատություն, հունականը՝ 41 և բալթիկ-սլավականը՝ 27, երեքը միասին 86: Առանձին կամ մի որևէ ուրիշ լեզվի հետ միացած՝ ունինք արիական 61 համեմատություն, հունական՝ 101 և բալթիկ-սլավական՝ 72. այս երեքը իրար կամ որևէ արևմտյան լեզվի հետ միացած՝ ընդամենը 100 բառ, որ գումարելով առանձին համեմատությանց հետ (86)՝ կունենանք ընդամենը 186 արևելյան բառ: Արևմտյան լեզուներից լատինականը ունի 6 առանձին համեմատություն, գերմանականը՝ 15 և կելտականը՝ 6. միասին 27: Այս երեքը իրար հետ միացած (բայց չհաշվելով արևելյան լեզուների հետ եղած համեմատությունները)՝ ընդամենը 14 բառ, որ առանձին համեմատությանց հետ միասին գումարելով՝ կունենանք ընդամենը 41 արևմտյան բառ:

Արևմտյան բառերի քանակը չորս ու կես անգամ ավելի փոքր է արևելյաններից: Հայերենի ամենից ավելի մերձավոր լեզուն հունարենն է (101 բառ), որ միայն ինքը 2<sup>1</sup>/<sub>2</sub> անգամ ավելի է, քան բոլոր արևմտյանները (41 բառ):

Հայերենը երբեմն միանում է նաև թոխարերենի և ալբաներենի հետ: Երբ այս լեզուները երևան են գալիս մյուս լեզուների կողքին, մենք դրանք չենք հիշում. այսպես, օրինակ՝ գերան, որ համեմատվում է միայն կելտ. guern և ալբան. vere ձևերի հետ: Բայց պետք է հիշել մի դեպք, երբ հայերենը միանում է միայն թոխարերենի հետ (կող=kalyoi, որից կողմն և անկողին), և մի ուրիշ դեպք, երբ հայերենը միանում է միայն ալբաներենի հետ (այն է դարծ=dreð, droða): Հայերեն դալ բառի հետ հատկապես մտան է ալբաներեն daļe «թթու կաթ», որ պատկանում է ընդհանուր հնդեվրոպական դիել արմատին: Հիշենք նաև սլանալ, որի հետ մույն է ալբաներեն sul'om «հարձակվել, վրան վազել» և հավանաբար նաև սլավական ձևերը (ռուս. сызатъ «ուղարկել» ևլն):

Այժմ հավաքենք այն դեպքերը, երբ հայերենը առանձին մոտիկություն է ցույց տալիս հունարենի հետ, թեև բառը ընդհանուր է նաև ուրիշ լեզուների:

Աղուէս բառը իր նախածայն ա-ով համապատասխանում է ճիշտ հունարենին (alōpēks). մյուսները զուրկ են նրանից: Այսպես նաև



աղքատ բառը, որ մյուս լեզուների մեջ ունի *loiq*, *liq* արմատը, միայն հունարենի մեջ կա *o* նախածայնը (*oligos*):

Այլ բառի համար նախալեզուն ուներ երեք ձև. *alyo*, *ailo* և *anyo*. առաջինից է հուն. *állos*, երկրորդից թոխարական, իտալական, գերմանական և կելտական ձևերը, իսկ երրորդից՝ արիականն ու սլավականը: Հայերենը ծագում է *ailo* ձևից, որ կա՛մ վերի հնիս. *ailo* ձևն է, և կա՛մ *alyo* շրջված *aylo*:

Այժ բառի դեմ հայերենը և հունարենը միասին ունին *aig*՝ նախածնը, մյուսները *ag*՝ (առանց *յ-ի*):

Այր (սեռ. առն), նախածնը *anor* համապատասխանում է հունական *anēr* ձևին. մյուս լեզուները բղխում են հնիս. *nor* ձևից. հայն ու հունարենը միայն ունին *a* նախածայնը:

Անէծք բառի դեմ մյուս լեզուները հանում են *noid* արմատը. հայերենն ունի նաև *a* նախածայնը, որին համապատասխան է գալիս հունարեն *o* (*ónēidos*):

Անուն.— նման նախորդին՝ բոլոր լեզուների մեջ էլ ներկայանում է *n* նախածայնով. միայն հայը ունի *a* հավելվածը, ինչպես որ հունարենն էլ ունի *o* հավելվածը:

Ատամն.— բոլոր լեզուների համապատասխան ձևերն ունին նախածայն *d*. հայերենն է միայն, որ ունի սրա վրա *a* ձայնավորը. սրան համաձայն է գալիս հունարենը (*odús*, *odóntos*), որ ունի *o* նախածայնը:

Աստղ.— բոլոր լեզուներն էլ ունին *s* նախածայնը. միայն հայերեն և հունարեն ձևերն ունին *a*. այսպես *hj*. աստղ, հուն. *astēr*:

Բուսամիլ, բոյս բառը ծագում է հնիս. *bhū* արմատից, որի առաջին և հիմնական նշանակությունն է «աճիլ, մեծանալ (մանավանդ բույսի)». այս իմաստը պահվում է միայն հունարենի և ալբաներենի մեջ, և նրանց հետ նաև հայերենի մեջ: Բոլոր մյուս ճյուղերի մեջ ստացել է «գոլ, լինել» նշանակությունը և դարձել է էական բայ (ռուս. *быть*, պրս. *būd*, գերմ. *bin*): Հունարենը և հայերենը չեն փոխվել:

Գործ բառի դեմ ցեղակից լեզուները հանում են ընդհանրապես *vorg*՝ արմատը. միայն հունարենն է, որ ունի նաև *vorg*՝ արմատը, որին համաձայն է հայերեն գործ (այսպես նաև անգլերեն *work*):

Թեքել.— արմատն է *tek*, որի նախնական նշանակությունն է «ձեռքով կամ գործիքով որևէ բան շինել». այս ընդհանուր իմաստը պահել են հայերեն *թեքել* և հունարեն *téchne*, որ ամեն տեսակ արհեստի համար

էլ գործածական է. մյուս լեզուները իմաստը մասնավորել են փայտակերտության վրա:

Թումբ.— ճշտիվ համապատասխանում է հունարեն *tymbos* ձևին. մյուսներն ունին *tum* արմատից կազմված զանազան ձևեր. ինչպես՝ լտ. *tumulus*, իռլ. *tomh* ևլն:

Թուր.— ծագում է հնիս. *ter* արմատից, որի նախնական նշանակությունն էր «շփելով մաշեցնել» և հետո նշանակեց «ծակ բանալ, ծակել» (քարի դարի հետքերի շարունակությունն է): Ամեն տեղ պահված է այս արմատը՝ *ter*, *tor*, *tr* ձևերով և զանազան նշանակություններով. հայերենին ամենից ավելի մերձավորն է հուն. *tóros* «դուր»:

Իմ.— մյուս լեզուների համապատասխան բառերը սկսվում են *m* բաղաձայնով. միայն հունարեն ունինք *omé* (նաև ալբան. *im*), որին համաձայն է հայերեն իմ:

Ինն.— բոլոր հնդեվրոպական լեզուներն էլ այս թվականի համար ունին մի բառ՝ որ սկսվում է *n* բաղաձայնով (սլավական *девять* ազդվել է հաջորդ *десять* «տասը» թվականից). միայն հունարենը ունի նախահար ձայնավորով *enneá*, որին համաձայն է նաև հայերենը՝ ի ձայնավորով:

Լիզուլ «լիզել» բայը ունի նաև լիզանել ձևը. առաջինին համապատասխանում է հունարեն *leíchō*, երկրորդին՝ *lichneō*, որ կազմված է *-n* ածանցիչով, ինչպես հայերեն *-ան-*:

Չիւն և ձմեռն.— երկուսն էլ ունին իրենց համազորները զանազան լեզուների մեջ. բայց ձիւն ճիշտ համապատասխանում է հուն. *chiōn* ձևին և երկուսը միասին գալիս են հնիս. *ghiyōm* նախածնից. իսկ ձմեռն՝ որ կազմված է ձմեր ձևից *n* մասնիկով, ճշտիվ համապատասխանում է հունարեն *cheimērinós* բառին:

Մեղու միջատը նախալեզվում կոչվում էր *bhei*, որ զանազան մասնիկներով պահել են բալթիկ-սլավական, գերմանական և կելտական լեզուները: Վայրենիների մի նախապաշարման համեմատ այս միջատի անունը թաբուի ենթարկվելով՝ հնարվել է մի նոր բառ մի քանի լեզուների մեջ, ածանցելով «մեղր» բառից. այսպես են հուն. *mélissa*, ալբան. *mial'tse* և սրանց հետ էլ *hj*. մեղու:

Մի (մեկ) թվականն արտահայտվում է լեզուների մեջ երեք ձևով. արիականն ունի *eka*, հունարենը կազմում է *sem* արմատից (արական *sems*, իգական *smia*, չեզոք *sem*), իսկ եվրոպական լեզուները գործածում են *oinos* «միայն, առանձին» բառը (լտ. *unus*, իռլ. *oēn*,

գերմ. ein, հայրուս. ains, հւլ. *ini*).— հայերենն էլ ճիշտ նույն է հունարենի հետ. մի ծագում է հնիս. *smia* ձևից:

**Մունջ «համր»** ծագում է հնիս. *mundyo* ձևից, որ առաջանում է ուս «մրթմրթալ, փնթփնթալ» պարզական արմատից. մյուս լեզուները կամ պահում են պարզական արմատի նշանակությունը, և կամ զանազան ածականներով ձևացնում են «համր» իմաստը. միայն հունարենն է, որ ճիշտ հայերենի պես ունի *myndós* ձևը և «համր» նշանակությունը:

**Յագիլ, յագենալ «կշտանալ».**— ծագում է հնիս. *sāw* ձևից, որ *sā* պարզ արմատի ածականն է (*w*-ով). մյուս լեզուներն ունին է ածականը (հնչ. լտ. *satur*, լիթ. *sočius*, գերմ. *satt*, իռլ. *sāith*, ռուս. *сыт*) և կամ ռնգական են ներմուծում (վեդ. *á-sinvan* «ամկուշտ»). միայն հունարենն է որ հայերենի պես ներկայացնում է *sā* արմատի *w* ածականը (*áo* < *áfō* «կշտանալ»):

**Յեռուլ «կողք կողքի շարել, միացնել».** ծագում է հնիս. *sers* ձևից, որ *ser* պարզ արմատից է՝ *s* ածականով. մյուս լեզուները ունին կամ *ser* պարզ արմատից (լտ. *sero*, *series*), և կամ *m*, է ածականներով ածած բառեր (հուն. *hormathós* «շարք», իռլ. *sreth* «շարք»): Հայերենին ճիշտ համապատասխան է գալիս հուն. *énersis* «յեռում, միացում», որ նույնպես կազմված է *ser* արմատից՝ *s* ածականով, ունենալով նաև նախահար *en* «մեջ» = *h. j* նախդիրը:

**Նոր.**— այս բառի հնդեվրոպական նախածնն է *nevo*, որ պահված է բոլոր լեզուների մեջ (սանս. *nava*, պրս. *nav*, հուն. *néos*, լտ. *novus*, գերմ. *neu*, անգլ. *new*, ռուս. *новый*, լիթ. *naùjas*, իռլ. *nūe*). հայերենը ավելացրել է *r* մասնիկը. այսպես է նաև հունարեն *nearós*, որ կա *néos* ձևի կողքին:

**Որբ.**— ծագում է հնիս. *orbho* «որբ» բառից. ճիշտ սրան է համապատասխանում հունարեն *orphanós* «որբ», որ բարդությանց սկիզբը դառնում է *orpho*. նույն է նաև լտ. *orbis* «որդեկորոյս, այրի, որբ, զուրկ». արիականը և բալթիկ-սլավականը չունին այս բառը, իսկ մյուս լեզուները (գերմանական, կելտական) պահել են «ժառանգություն» իմաստով (գերմ. *erbe*), որ որբին թողված ինչքն է:

**Սիրտ.**— ընդհանուր հնդեվրոպական բառ է. հմմտ. հուն. *kardía*, լտ. *cor* (սեռ. *cordis*), գերմ. *herz*, լեթթ. *sirds*, ռուս. *сердце*, իռլ. *cride*, որոնք ծագում են հնիս. *k'erd*, *k'erd*, *k'rd* ձևերից. հայերենը ծագում է *k'erd* ձևից, որի հետ բոլորովին նույն է գալիս հոնիական *kēr* > \**k'erd*. շատ տարբեր է արիականը, որ ծագում է *g'hrd* ձևից (սանս. *h'rd*, զնդ. *zərəd*, պիլ. *zird*):

**Քարթ «արքայիկ ոձ».** ծագում է հնիս. *ker*, *sker* «կտրել» արմատից՝ *p* ածականով. պարզ արմատը պահված է մեր մեջ քերել բայով. *p* ածականով կան բազմաթիվ ձևեր զանազան լեզուների մեջ, բայց նշանակության կողմից մեզ ամենից ավելի մերձավորն է հուն. *skorpíos* «կարիճ, մի տեսակ խայթող ձուկ»:

**Քաղել** բառը թեև ընդհանուր հնդեվրոպական է, բայց միայն հունարենը (*skállō*) ունի «քաղել, քաղհանել» նշանակությունը. մյուսները ունին «կտրել, ճեղքել, բաժանել», որ մեր ցելուլ բառն է:

**Քիրտն** բառը նախալեզվի մեջ երկու ձև ունի. *swid*, և նրանից ածած *swidro*. առաջին ձևը ընդհանուր կարելի է կոչել, երկրորդը գտնվում է միայն հունականի և բալթիկ-սլավականի մեջ. նրանց հետ է նաև հայերենը՝ հեռանալով արիականից:

**Աղալ** (ցորենը այլուր դարձնել) գաղափարի համար հնդեվրոպացիք երկու բառ ունեին՝ *al* և *mel*. արևելյան խումբը, որի մեջ մտնում են արիականն ու հունարենը, գիտե *al* արմատը, իսկ արևմտյան խումբը, որի մեջ մտնում են բալթիկ-սլավական, գերմանական, կելտական, իտալական և ալբանական լեզուները, գիտեն *mel* արմատը. հայերենը միանում է հունարենին՝ մինչև ամենափոքր տարբերությանց մեջ անգամ. այնքան որ ալիւր բառը՝ իր հնագույն ալելը ձևով՝ ճիշտ ու ճիշտ համապատասխանում է հունարեն *álouron* հոմանիշին: Արևելյան խումբը գիտե նաև *mel* արմատը, բայց չի տված նրան լայն գործածություն. մինչդեռ արևմտյան խումբը չգիտե բնավ *al* արմատը. հայերենն էլ արիականի և հունարենի հետ գիտե *mel* արմատը, որից ունինք օրինակ՝ մլաղաց «ջաղացք» բառը:

**Փրփուր.**— այս բառը ծագում է *phēr* արմատից, որ և ունի *spēr* ձևը. սրանց հետ է նաև հունարեն *aphrós*. իսկ մյուս լեզուները *r*-ի փոխարեն ներկայացնում են *n* կամ *m*. ինչպես՝ սանս. *phēna*, լտ. *spuma*, հրգ. *foim*, ռուս. *пена* ևլն:

**Մեք.**— առաջին դեմքի դերանվան հոգնակիի համար նախալեզուն ուներ երկու ձև՝ *mes* և *wes*. առաջինից առաջանում են հունարենը և բալթիկ-սլավականը, իսկ երկրորդից արիականն ու գերմանականը. լատինականը (*nos*) և կելտականը հայցականի ձևից են առաջանում: Այստեղ էլ հայերենը հունարենի հետ է:

**Մեղր** բառի համար նախալեզուն ուներ երկու ձև՝ *mel* և *medhu*. առաջինը պահում են արևմտյան լեզուները (հուն. *méli*, լտ. *mel*, իռլ. *mil*, ալբան. *mjal'* և գոթ. *milisþ*), որոնց հետ է նաև հայերենը. իսկ երկրորդը պահում են արևելյան լեզուները, որոնց հետ է նաև բալթիկ-

սլավականը (սանս. madhu, ռուս. мед, լիթ. medùs): Բայց արևմտյան լեզուներն էլ գիտեն medhu ձևը, միայն «մեղրաջուր» նշանակությամբ (այսպես՝ գերմ. meth, իռլ. mid, հուն. méthui): Հայերենը՝ որ եվրոպացոց հետ գիտեն մեղր բառը, չունի medhu «մեղրաջուր» ձևը:

Հայերենի և հունարենի սերտ կապակցության նշան են ո՛չ միայն այն բառերը, որոնք երկուսի մեջ էլ նման ձևերով կամ նշանակությամբ կան, այլ և այն բառերը, որոնք թեև բոլոր լեզուների մեջ կան, բայց հավասարապես չկան հունարենի և հայերենի մեջ: Հիշենք այս կարգի բառերից հետևյալ օրինակները.

հնիս. widhewos «այրի», որից սանս. vidháva, գնդ. vidavā, լտ. vidua, իռլ. feob, գոթ. widuwō, գերմ. witwe, անգլ. widow, հայրուս. widdewu, ռուս. вдова.

հնիս. temos «մութ», որից սանս. támas, գնդ. tēmah, լտ. tenebrae, իռլ. teim, լիթ. tamsùs, ռուս. темно, գերմ. Dämmerung.

հնիս. tep «տաքանալ», որից սանս. tápah, պրս. tāb, ալբան. ftof, լտ. tēpeo, իռլ. tē, նորվ. teva, ռուս. тепло.

հնիս. wiros «մարդ, տղամարդ», որից սանս. vīra, գնդ. vīra, լիթ. vīras, հայրուս. wijrs, լտ. vir, իռլ. fer, գոթ. wair, հրգ. wer.

հնիս. swep, sup «քնել», որից սանս. svapiti, գնդ. xvap, լտ. sōpio, անգլ. svepan, ռուս. спать (թեև հնիս. swepnos կամ swopnos «քուն» գոյականը ընդհանուր է բոլորին, նաև հունարենին և հայերենին):

Հայերենի և հունարենի նմանության նշաններից մեկն էլ հայցականի վերջավորությունն է: Հնդեվրոպական աշխարհը, ինչպես հայտնի է, եզակի հայցականի երկու տեսակ վերջավորություն ունի. արիական և իտալական ճյուղերը ունին m, իսկ մնացյալը, նաև հունարենն ու հաթերենը ունին n. հայերենի մեջ հայցականի վերջավորությունը ջնջված է, բայց քան նախադրությունը (= լտ. quam) և ձիւն (= լտ. hiems) ցույց են տալիս, որ այստեղ էլ հայերենը հունարենի հետ է:

Հայերենի և հունարենի այսքան սերտ նմանությունը ի նկատի ունենալով՝ շատ լեզվաբաններ հայերենը համարում են եվրոպական լեզու: Իրոք հայերենը ունի եվրոպական լեզուների այն հատկանիշը, որով հնիս. l մնում է l, իսկ ասիականների մեջ դառնում է r. այսպես, օրինակ՝ հնիս. plē արմատից ունինք սանս. prāṇa, գնդ. pṛəṇa, պրս. pur, հյ. լի, հուն. pléōs, լտ. plenus, իռլ. lān, գերմ. voll, լիթ. pilus, ռուս. полный, ալբան. pl'ot կլն հոմանիշները: Կամ հնիս. liq «թողնել, լքանել» արմատից՝ սանս. rič, riṇákti, գնդ. irinaxti, հուն. lēipō, limpánō, լտ.

linquo, liqui, գերմ. leihen, լիթ. lėkù, likti, ռուս. от-лечить-ся և hj. լքանել:

Հայերենը կանգնած է եվրոպական և ասիական լեզուների միջև. օրինակ՝ արիականները չունին աղ բառը, բայց հայերենը գիտե ո՛չ միայն աղ, այլ և աղտ և աղծ, որոնք աղ բառի տարբեր ձևերն են և ծագում են հնիս. sald արմատից: Նույնը գիտեն նաև իտալականը և մանավանդ գերմանականը (գերմ. salz, անգլ. salt). իսկ բալթիկ-սլավականը կորցնելով «աղ» նշանակությունը, պահել է միայն «քաղցր» նշանակությամբ (լիթ. saldus, ռուս. сладкий):

Արիականները չունին ar «հերկել» արմատը և նրանից ծագած aratrom «արոր» բառը. հայերենը թեև նույնպես չունի ar արմատը, բայց շատ լավ պահել է եվրոպացոց հետ aratrom բառը՝ արաւր (արոր) ձևով:

**ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԿԱՄ ԵԳԵՅԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ  
ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ**

Հնդեվրոպական գաղթականությունից առաջ երկրագունդը դատարկ չէր. ամեն տեղ կային զանազան ազգեր ու ժողովուրդներ, ոմանք նույն իսկ ավելի բարձր քաղաքակրթությամբ, քան հնդեվրոպացիները: Այսպես՝ Եվրոպայի արևմտյան մասում բնակվում էին Իբերները, հյուսիսում Բրիտանացիք, միջին և հարավային մասերում Լիգուրները, Ետրուսկները, Պելասգները, Լին: Այս բոլորի մեջ նշանավոր էր Միջերկրական կամ Եգեյական քաղաքակրթությունը, որին պատկանում էին մի կողմից Կրետացիք և մյուս կողմից Փոքր Ասիայի արևմտյան մասի ժողովուրդները. Լյուդիացիք, Լյուկիացիք և Կարիացիք, որոնք լեզվի մասին ոչինչ չգիտենք: Հնդեվրոպացիք շփման մեջ մտան այս ժողովուրդների հետ զանազան հանգամանքներով. կամ իբրև հարևան, կամ իբրև նվաճյալ ժողովուրդ և կամ գտան նրանց իրենց ճանապարհի վրա, գաղթականության ժամանակ: Այս հարաբերությունները չէին կարող ազդեցություն չունենալ հնդեվրոպացոց լեզվի վրա. նրանցից սովորեցին երկրագործական զանազան գիտելիքներ, ձիադարմանություն, նավաշինություն, մետաղագործություն և այլն: Այս արհեստներին վերաբերյալ զանազան բառեր փոխառությամբ անշուշտ անցան իրենց: Արդ՝ մեզ անծանոթ է այդ ազգերի լեզուն. միևնույն ժամանակ լեզվաբանությունը միջոց չունի երևան հանելու հնդեվրոպացիների այն լեզուն, որ գործ էին ածում անմիջապես նախ քան գաղթականությունը: Ուստի մենք չգիտենք թե որոնք են այն փոխառությունները, որ ոչ-հնդեվրոպական ժողովուրդների լեզվից անցան հնդեվրոպացիներին:

Առնենք հույներին, իբրև մեր ավելի մերձավոր հարևաններին, որոնք անցան այն ճանապարհով, որով և հայերը:

Հույները՝ Քրիստոսից 2000 տարի առաջ նախահայրենիքից իջան դեպի հարավ և շփման մեջ մտան այս ժողովուրդների հետ. իրենք անքաղաքակիրթ ժողովուրդ էին. ուստի անշուշտ շատ բան պիտի սովորեին իրենց նոր՝ ավելի քաղաքակիրթ հարևաններից:

Երբ քննում ենք հունարեն լեզվի բառարանը, անշուշտ շատ բան բացատրվում է հնդեվրոպական լեզվաբանությամբ, շատ բան պատկանում է այն բառազանձին, որ հնդեվրոպական նախալեզվի հարստությունն էր կազմում, որ հույներն էլ իրենց հետ բերին իբրև ժառանգություն: Բայց մնում են դեռ շատ բառեր էլ, որոնք ո՛չ միայն անբացատրելի են հնդեվրոպական լեզվի արմատներով, այլ և հակառակ են այդ արմատների կազմության, մասնիկների հարադրության և բառերի ածանցման օրենքներին: Այդ կարգի բառերը համարվում են նույն ժողովուրդներից փոխառյալ բառեր:

Փոխառյալ բառերի շարքում առաջին տեղը բռնում են Հունաստանի հին տեղանունները, որոնք հունարեն լեզվով չեն բացատրվում: Ամեն երկրի մեջ էլ բնիկները ունեցել են քաղաքներ, գյուղեր, լեռներ, ծովեր, լճեր ու գետեր. սրանց անշուշտ անուններ դրել են: Եվ որոնք պետք չունեին ամեն անգամ այդ անունները փոխելու և նոր անուններ հնարելու: Ուստի բնականաբար շատերն անցել են նորերի լեզվին: Այսպես նաև Հունաստանի տեղական անունները: Հետևաբար այս անուններից նրանք, որոնք չեն մեկնվում հունարենով, պատկանում են բնիկների լեզվին: Kretschmer իր Einleitung աշխատության մեջ հավաքել է այս կարգի բառերը և նրանց վերջավորություններից դատելով՝ դուրս է բերել զանազան մասնիկներ: Այսպես, օրինակ՝ հին բնիկների լեզվին հատուկ մի մասնիկ է -ինթոս, որ գտնում ենք Kórinthos, Lébinthos, Sáminthos, Amárynthos, Tírynthos տեղանունների վրա: Նույն մասնիկը կա նաև մի խումբ հասարակ անունների ծայրին. ինչպես՝ térébinthos «բևեկնի ծառը», mínthos «անանուխ», hyákinthos «հակինթ (ծաղիկը և քարը)», asáminthos «լողանալու ավազան», lébinthos և érébinthos «սիսեռ», և վերջապես labyrinthos «լաբիրինթոս, բավիղ», որ ըստ նյութի էլ պատկանում է արդեն Կրետեին ու Եգիպտոսին, և չունի հնդեվրոպական բառի երևույթ: Այս բոլոր բառերը Միջերկրական և Եգեյական փոխառություններ են հունարենի մեջ:

Նման մասնիկ է նաև -isso կամ -issa, որից ունինք իբր հատուկ անուն Lárissa քաղաքը և իբր հասարակ անուն kypárisos «կիպարիս, նոճի» ծառը և nárkissos «նարկիս» ծաղիկը:

Հունարեն բուսանունների մեջ եգեյական փոխառություններ են դարձյալ՝ leirion «շուշան», fródon «վարդ», mēkōn «խաշխաշ», molóchē «մոլոչ», móron «թուր», mēlon «խնձոր», semídalis «սիմինդր, նաշի, բարակ ալյուր», spongos «սունկ, սպունգ»:

«Թագավոր, իշխան» նշանակությամբ մի խումբ բառեր ծագում են նույնպես եգեյականից. այսպես են՝ *balén, basileús, fánax, pálmys, ty'rannos*. — բազուսական խաղերից՝ *thriambos*, որի հետ նաև *iambos* և *dithyrambos*. — վերջապես *balanēion* «բաղանիք» և նմաններ:

Միայն հունարենը չէ, որ կնքեց զանազան փոխառություններ Միջերկրական կամ եգեյական լեզուներից: Նրանից անկախ փոխառություններ ունի նաև լատիներենը. այսպես են օրինակ՝ *abies* «եղևնի», *alcedo* «աղկիոն թռչունը», *anesum* «անիսոն», *cucumis* «վարունգ», *culleus* «կաշյա պարկ», *cupressus* «կիպարիս», *laurus* «դափնի», *lepus* «նապաստակ», *lilium* «շուշան», *malva* «մոլոշ», *malum* «խնձոր», *mentha* «ամանուխ», *morus* «թթենի», *murex* «ծիրանի խեցի», *napus* «շողգամ», *paelex* «հարձ», *pampinus* «որթի ծիլ», *plumbum* «կապար, արծիճ», *porrum* «պրաս», *racemus* «ողկույզ», *rosa* «վարդ», *seria* «կուժ», *simila* «սիմինդր, նաշիի» ևն: Այս բոլորը ձևով տարբեր են հունարենից, օրինակ՝

լատ. *malva* = հուն. *molóchē* = հյ. մոլոշ

լատ. *malum* = հուն. *mēlon* = հաթ. *mahlān* «խնձոր»

լատ. *rosa* = հուն. *fródon* = հյ. վարդ

լատ. *libra* = հուն. *lítra* = հյ. լիտր

սրանով էլ ապացուցվում է, որ եգեյական բառերը անկախորեն են փոխառնվել թե՛ հունարենի և թե՛ լատիներենի մեջ, և ո՛չ թե հունարենի միջոցով անցել լատիներենի (*Meillet, Traite de Gram. comp. t. 2* 17):

Միջերկրյան կամ եգեյական քաղաքակրթությունը ազդել է նաև հայերենի վրա: Հայերենի այս կարգի փոխառությունները կարող ենք բաժանել երկու կարգի. անուղղակի և ուղղակի: Անուղղակի փոխառությունները նրանք են, որ հունարենի (կամ նաև պարսկերենի) միջոցով անցել են հայերենի: Այսպես են՝ *հակինթ, լաբիրինթոս, կիպարիս, նարկիս, մեկոն, մոլոշ, սպունգ, վարդ, բաղանիք, անիսոն, լիտր, յամբիկոն* ևն: Այս կարգի փոխառությունները ուշ ժամանակի երևույթներ են և առանձին արժեք չունին:

Ուղղակի փոխառությունները թեև թվով քիչ, բայց շատ հին են և պատկանում են այն ժամանակին, երբ հայերը գտնվում էին դեռ եվրոպական հողի վրա և շփման մեջ էին Միջերկրականի և եգեյական ծովի շրջաբնակ ազգերի հետ: Այս կարգի փոխառություններից են հետևյալ բառերը. —

1) **Գինի.** — Հնդեվրոպացիք բնակվելով այնպիսի մի շրջանում, ուր չէր աճում խաղողը, բնականաբար չունեին նաև գինի: Բայց խաղողի մշակությունը և նրանից գինի պատրաստելու արհեստը ժամոթ էր այդ ժամանակ ավելի հարավ բնակվող ժողովուրդներին. այսպես՝ եգիպտացիք և ք. չորրորդ հազարամյակում, իսկ հարավարևելյան եվրոպայի ժողովուրդները արդեն և ք. 1700 թվերին ունեին խաղողն ու գինին: Միջերկրական ժողովուրդներից գինին անցավ Սեմականներին, որոնց մեջ ձևացան եբր. *yain*, եթովպ. *wain*, արաբ. *wain*, ասորեստանյան *inu*, իսկ ընդհանուր սեմական նախալեզվում՝ *\*wainu* «գինի»: Հնդեվրոպացի ժողովուրդները նույնը փոխ առին ուղղակի Միջերկրացիներից, երբ հյուսիսից իջնելով հարավ՝ բնակակից դարձան նրանց: Այսպես ձևացան հուն. *foinos* «գինի», *oinē* «որթ», ալբան. *vēne*, լատ. *vinum* և հյ. **գինի:** Լատինականից փոխառությամբ բառն անցավ կելտական և գերմանական խմբերին (գոթ. *wain*, հբգ. *wīn*, գերմ. *wain*, անգլ. *wine*, հիռլ. *fin*, կիմր. *gwin*). գերմանականից էլ բալթիկ-սլավական խմբին. այսպես՝ լիթ. *vy'nas*, հսլ. *vinu*, ռուս. *вино*: Ավելի հետո հնդեվրոպականներից բառը անցավ ոչ-հնդեվրոպական լեզուներին. ինչպես, սլավականից՝ մորդվին. *vinā* «գինի, օղի», իսկ հայերենից էլ Կովկասյան զանազան լեզուները. ինչպես՝ վրաց. *ղվինի, ղվինո, մինգր. ղվինի, լազ. ղուլինի, ղինի, ինգիլ. ղինէյ, սվան. գվինէյ, ղվինալ, թուշ. վէ, վէն, ուտ. ֆի, ֆինէի, արխազ. agf'y*: Նախ քան գինիի ներմուծումը՝ Հնդեվրոպացիք իբրև ոգելից ըմպելիք գործ էին ածում մեղրաջուրը, որ կոչվում էր *médhu*. — գինիի ներմուծումից հետո, մեղրաջրի գործածությունը, նրա հետ նաև *médhu* բառը ջնջվեց կամ առ առավելն ստացավ «գինի» նշանակությունը: Հայերենի մեջ բոլորովին վերացել է. մնում են միայն հուն. *méthy*, հբգ. *meto*, իռլ. *mid*:

2) **Իւղ.** — Որթատունկի մշակության նման կարևոր և Միջերկրական քաղաքակրթության ժամոթ էր ձիթենու մշակությունը և ձիթապտղից յուղի (ձեթի) պատրաստությունը: Հնդեվրոպացիք նախահայրենիքում ունեին կենդանական յուղը (*seipos*), բայց բուսական յուղ չէին ճանաչում: Հարավում ծանոթացան նաև այս արհեստին: Յուղ կամ ձեթ բառի Միջերկրական նախաձևը հայտնի չէ, բայց նրանից են ծագում փոխառությամբ՝ մի կողմից հունարեն *elaion* «յուղ» և *elaia* «ձիթենի» (հին ձևերն են *elaifon, elaiifa*) և մյուս կողմից՝ հայերեն *իւղ*, որի հնագույն ձևն է *եւղ*, ժողովրդական եղ: Հունարենից անկախաբար փոխառին լատիները *oleum, olivum* «յուղ» և *olea, oliva* «ձիթենի» ձևերով.

սրանից էլ գոթ. *alēw*, հրգ. *olēi*, գերմ. *öl*, հւլ. *olēj*, լիթ. *alėjus*, ալբան. *uli*:

Ավելի ուշ հնդեվրոպականներից անցավ ոչ-հնդեվրոպական լեզուներին. այսպես՝ սլավականից հունգարերեն *olay* և հայերենից՝ թուրք-թաթարական *yay*:

3) Թուզ.— Միջերկրական կուլտուրայի կարևոր արտադրություններից մեկն էլ թուզն է, որ թաց կամ չորացրած վիճակի մեջ ծառայում է իբր սնունդ: Հնդեվրոպական նախահայրենիքում թզենի չէր աճում: Հարավում ծանոթանալով այդ բույսին, հույները փոխ առին Միջերկրացիներից *tykon* կամ *sykon* ձևով, լատ. *figus*, որից էլ հին սաքսոներեն *figa*, գերմաներեն *feige* ևլն: Հայերենի մեջ մտել է բառը թուզ ձևով:

4) Սպունգն.— Սրա հետ նույն են հուն. *sphóngos* կամ *spongos* և լատ. *fungus*. ոմանք այս բառերը իրարից փոխառյալ են համարում, ոմանք էլ հնդեվրոպական. լավագույն է ըստ Meillet (*Dict. etym. It.* 386) երեքն էլ փոխառյալ համարել եգեյական լեզուներից:

ԳԼՈՒԽ Գ.

## ՆԱԽԱԳԱՅԵՐԵՆ ԼԵԶՈՒՆ ԵՎ ՆԱԽԱԳԱՅԵՐԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԻԾԸ

Լեզվական այն վիճակը՝ որ ներկայացնում էր հայերենը հնդեվրոպական նախահայրենիքից հեռանալու միջոցին, կոչվում է նախահայրեն: Ապագայում այդ լեզուն պիտի կրեր երկու կարգի փոփոխություն. ա) Լեզվական ձևերը ենթարկվելով բարեշրջության (էվոլյուցիայի) հրամայական օրենքներին, դարե դար պիտի ստանային նոր կերպարանք, մինչև հասնեին այն ձևին, ուր գտնում ենք այսօր: ք) Շփվելով օտար ժողովուրդների և լեզուների հետ կամ ենթարկվելով նրանց քաղաքական կամ քաղաքակրթական ազդեցության, հայերենը պիտի ընուներ նրանցից նորանոր տարրեր:

Այն ձևերը՝ որոնք կրելով առաջին կարգի փոփոխությունները, կազմում են այսօր նախահայրենի անընդհատ շարունակությունը, կոչվում են բնիկ ձևեր: Իսկ այն ձևերը՝ որոնք իբրև նոր տարրեր ավելացել են մեր լեզվի մեջ, կոչվում են օտար կամ փոխառյալ ձևեր: Արդի հայերենը, ինչպես և որևիցե դարի հայերենը, ներկայացնում է այդ երկու կարգի ձևերի (բնիկ և փոխառյալ) գումարը:

Հայերեն լեզվի պատմության և նրա հետ զուգընթացաբար հայկյանքի ուսումնասիրության համար կարևոր է երևան հանել նախահայրենի վիճակը:

Ի՞նչ միջոց ունինք դրա համար:

Հայերենը ավանդված է մեզ շատ ուշ ժամանակ. դժբախտաբար որևէ օտար աղբյուր էլ չէ գտնված մինչև այժմ, որ հայերենի հնագույն վիճակի մասին որևէ լուսաբանություն ընձեռեր մեզ: Ուստի մնում է մեզ դիմել գիտական մեթոդների:

Վերևում տրված սահմանից հետևում է, որ եթե հայերենի գանձարանից դուրս հանենք զանազան ժամանակ փոխառյալ ձևերը օտար լեզուներից, կունենանք նախահայրենի պատկերը: Մինչև Ե դարը, երբ հայերենը առաջին անգամ գրի առնվեց, մեր լեզուն փոխառություններ էր կնքել պարսկերենից, ասորերենից, հունարենից, լատիներենից, մասամբ նաև ասուրերենից, վրացերենից, խալդերենից և փոքրասիական

զանազան ծանոթ ու անծանոթ լեզուներից: Երբ փոխառու լեզուն հայտնի է, բնականաբար դյուրին է նրանից եղած փոխառությունները գտնել և հաստատել: Ըստ այսմ շատ լավ ուսումնասիրված են պարսկերենից, ասորերենից, հունարենից, լատիներենից, ինչպես նաև ասուրերենից և վրացերենից փոխառյալ բառերը հայերենի մեջ: Սակայն ո՛չ մի միջոց չկա խալդերենից և փոքրասիական զանազան լեզուներից եղած փոխառությունները որոշելու և հաստատելու, որովհետև այդ լեզուները կորած ու անհետացած են: Բարեբախտաբար այստեղ օգնության է հասնում մեզ հնդեվրոպական լեզուների համեմատական լեզվաբանությունը, որ որոշում է թե այս ինչ բառը հնդեվրոպական է թե ոչ, որով բնիկ հայերեն բառերը ըստ կարելվույն ճշտվում և հաստատվում են: Ասացինք ըստ կարելվույն, որովհետև հնդեվրոպական նախալեզվի և հայերենի ծայնաբանության բոլոր գաղտնիքները դեռ երևան համված չեն, և անշուշտ կարող են գտնվել զանազան անծանոթ կետեր: Կարևոր է նկատել և այն՝ որ որոշ հնդեվրոպական բառեր կարող են բոլոր մյուս լեզուների մեջ ջնջված և միայն հայերենի մեջ պահված լինել: Այդ բառերը ճանաչել և իբրև բնիկ հայերեն երևան հանել անկարելի է: Վերջապես կան անշուշտ բազմաթիվ հնդեվրոպական բառեր, որոնք գոյություն ունեցել են նախահայերենի մեջ, բայց հետո օտար ազդեցությանց առաջ տեղի տալով ջնջվել են: Այսպես, օրինակ՝ նախահայերենի մեջ գույն ցույց տվող բառերից ծանոթ են միայն դեղին և դեղձան. մնացյալներից կարմիր, կապոյտ, սեաւ, սպիտակ պարսկերեն են. կանաչ, թուխ, գորշ անծանոթ են: Արդ՝ անկարելի է, որ հիշյալ գույները անծանոթ լինեին նախահայերենին, քանի որ հնդեվրոպական լեզուների մեջ ընդհանուր են: Այսպես, օրինակ՝ հնդ. *raudh*, *rudhrós* «կարմիր»՝ լտ. *ruber*, հուն. *erythrós*, հւլ. *riđri*, սանս. *rudhirás*, զնդ. *raodita*, քուչ. *ratreṃ*, լիթ. *rauđas*, գոթ. *rauđs*, իռլ. *rúad*, գերմ. *rot*, որ պիտի տար հայերեն \*արոյդ կամ արուրդ: Հնագույն հայերենի մեջ (նախ քան Ե դար) անշուշտ եղել է \*արոյդ կամ արուրդ «կարմիր» բառը, բայց հետո ջնջվել է՝ փոխանակվելով պարսկերեն կարմիր բառով, որ անշուշտ կարմիր գույնի պատրաստության մի նոր եղանակի հետ ներմուծվել է Հայաստան:

Այս բոլորից հետևում է այն, որ բնիկ հայերեն բառերի գումարը՝ որ համեմատական լեզվաբանությունը կարողացել է երևան հանել մինչև այժմ՝ իր ունեցած միջոցներով, կազմում է նախահայերեն բառազանձի միայն մինիմումը: Այդ բառերի թիվը 713 (909) է: Մնացյալը անհայտ է:

Բայց բնիկ հայերեն բառերը ճշտել և երևան հանել՝ դեռ չի նշանակում նախահայերենի պատկերը երևան հանել, ինչպես որ Ե դարի հայերեն լեզվի քերականության հնդեվրոպական գծերը որոշել՝ չի նշանակում նախահայերենի քերականությունը երևան հանել: Որովհետև բնիկ հայերեն բառերը թեև նախահայերեն բառերի հետ էապես մույն են և կազմում են նրանց շարունակությունը, բայց ձևով մույնը չեն: Այսպես, օրինակ՝ գիտենք որ հայր բառը Հնդեվրոպական նախալեզվում *patēr* ձևն ուներ. և այն բարբառի մեջ՝ որին պատկանում են հայերենը, հունարենը, իտալական, կելտական և գերմանական լեզուները, արդեն դարձել էր *patēr*: Այս ձևը շատ ուշ, այն է արդեն Ե դարում եղել է հայր. և կարելի չէ ասել, թե հենց ո՛ր հայերը բաժանվեցին հնդեվրոպական խմբից, իսկույն *patēr* դարձավ հայր: Փոփոխությունը եղել է շատ դանդաղ: Այս բառի մեջ մենք ներկա ենք չորս ձայնական փոփոխության. *p* դարձել է *h*, *t* դարձել է *j*, *ē* ջնջվել է, շեշտը փոխադրվել է նախորդ վանկի վրա: Ենթադրելով թե ազգերի բաժանումը եղած լինի, ուրեմն պետք է եղել 3000 տարի, որպեսզի *patēr* դառնար հայր: Սակայն մենք չգիտենք թե այդ 3000 տարվա շրջանի ո՛ր կետում և ի՛նչ հերթով են տեղի ունեցել հիշյալ չորս ձևափոխությունները, որովհետև մենք չգիտենք ձայնական փոփոխությանց ժամանակագրությունը: Առանց այդ ժամանակագրության՝ կարող էր մեկը առաջարկել մի այսպիսի ընթացք.

- 2500 թ. *patēr*
- 2000 թ. փայի՛ր
- 1000 թ. հայի՛ր
- 500 թ. հայի՛ր
- + 200 թ. հայր

Մի ուրիշը կարող էր առաջարկել մի ուրիշ ընթացք. բայց դրանցից ո՛չ մեկը ստուգել և ճշտել կարելի չէ:

Առնենք ավելի բարդ մի օրինակ. հայերեն գիշեր բառը հնդեվրոպական ծագում ունի և կցվում է հուն. *hésperos*, լտ. *vesper*, իռլ. *fescor*, կիմր. *ucher*, լիթ. *vākaras*, հւլ. *večerū*, թխար. *wšē* ձևերին: Այս բոլորի նախաձևը դրվում է *vesperos* կամ *veqeros*: Հայկական ճյուղի բարբառը ուներ անշուշտ *veqéros* ձևը, որ Ե դարում արդեն եղել էր գիշեր: Հայերենի մեջ նախաշեշտ ի առաջանում է է ձայնից. ուստի գիշեր բառը նախապես \*գէշեր ձևն ուներ: Զանազան քննություններ ցույց են տալիս, որ այս է>ի ձայնափոխությունը տեղի է ունեցել 2-րդ

դարում. ուստի այդ ժամանակ հիշյալ բառը արդեն \*գեշեր ձևը ունեցած պիտի լիներ: Հայերեն նախածայն գ առաջանում է հնիւ. v ձայնից, ինչպես, օրինակ՝ գինի<\*գեմի<հնիւ. voinio: Այս բառը փոխառությամբ անցնելով վրացերենի՝ տվել է դվինի. ուստի այն ժամանակ, երբ հայերը Հայաստանում էին և վրաց հետ հարաբերության սկսած էին, հնիւ. v ձայնը դեռ գ դարձած չէր հայերենի մեջ, այլ տատանվում էր ց՝ միջին աստիճանի վրա: Այդ շրջանն է — Ձ դար: Կա նաև հնիւ. գ, որ անցնելով միջին գ՝ և այլ ձևերից, պիտի դառնար վերջապես շ: Որոշել այս բոլոր միջին ձևերը, մասնավոր նրանց ժամանակը, հասնելու համար մինչև հնագույն վիճակը, ուրիշ խոսքով վերականգնել նախահայերենի ճիշտ ձևը, գիտության արդի միջոցներով անկարելի է:

Այս պարագային մենք պիտի բավականանանք ուրեմն ներկայացնելով այստեղ հայերենի 713 (909) բնիկ բառերի ցուցակը: Մենք դասավորում ենք այդ բառերը երկու տախտակով: Առաջին տախտակը ունի 10 սյունակ. առաջինում այբուբենական կարգով շարված են հայերեն բառերը. երկրորդ սյունակում դնում ենք համապատասխան հնդեվրոպական նախալեզվյան այն ձևը, որից առաջացել է նույն հայերեն բառը: Հաջորդ սյունակներով գալիս են հնդիկ, իրանական, հունական, լատինական, բալթիկ, սլավական, գերմանական և կելտական ձևերը, եթե կան: Եթե որևէ լեզվի մեջ որևէ բառ պակասում է, դնում ենք — նշանը: Հաջորդ տախտակը մի ավելի պարզ ցուցակ է, որի մեջ բառերը դասավորված են ըստ նշանակության և ըստ տեսակի՝ 22 բաժանմունքով:

1) Բնության և նրա զորությանց մասին.

Արև, արեգ, արեգակն, լուսին, աստղ, լոյս, ամպ, ամպրոպ, բուք, մրրիկ, կարկուտ, ձիւն, սառն, մեգ, բալ, թօն, հեղեղ, գետ, առու, ողողել, մօր, լիկ «ճահիճ», տիղմ, աղբիւր, ալիք, անդունդ, հուն, ջեր, հողմ, հով, օդ, սար, բլուր, պաղանձաւ, սոր:

2) Կրօնական բառեր.

Դիք, ձօն, մաղթել, մեղք, սուրբ, տօն, երդումն, անէծք, թովել, ստեղծել, քաւել:

3) Մարդ և մարմնի մասեր.

Ակն, աչք, ականջ, ունկն, ռունգն, այտ, բերան, քիմք, լինդ, լեզու, ատամն, ծնօտ, երես, ալիք, մօրուք, կոկորդ, որկոր?, ուլն, ուս, արմուկն, ձեռն, ափ, աջ, մատն, եղունգն, թեկն, լանջ, ստինք, սիրտ, լեարդ, կող, մէջք, ողն, քամակ, որովայն, փայծաղն, ընդերք, արգանդ, երաստան, ազդր, ծունգ, ծունր, ամորձիք, փամփուշտ, պ... ոռ, հետք,

ոտն, ուրք, սրունք, — մարմին, անձն, միս, մուկն (մկան), ոսկր, յօդ, նեարդ, ջիլ, գեղծ, միտք, հոգի, տեռ (կաշի), արիւն. — արտօսր, թուք, մեգ, փին, քաք, տող (տողուք), քիրտն:

4) Հիվանդություններ և նմաններ.

Այտնուլ, արած, դալուկն, ելունդն, երկունք, ջերմ, կեղ, պալար, պուտ «բշտիկ», խիթ, խօթ, թարախ, լորջք, թանջ, լուսն, շիլ, խեղ, ործալ, հևալ, հիմիմալ, խոյլ, յղի, դեղ, թոթով.

5) Կենդանիներ.

ա) Ընտանի կենդանիներ. — ամիկ, այծ, աքաղաղ, բուծ, գառն, եզն, էշ, կով, հաւ, ձի, մաքի, մարի, մեղու, մոզի, շուն, որթ, ուլ, սագ, սկունդ, ցուլ, տուար, — ձագ, ձուկն, թռչուն:

բ) Վայրի կենդանիներ. — աղուէս, առիւծ, առն, արծուի, արջ, բորենի, գայլ, եղն, ինծ, լուսան, ծիծառն, կռունկ, ոզնի, ուրուր, ցին:

գ) Սողուններ, միջատներ և այլ վնասակար կենդանիներ. — անիծ, բռռ, բրէտ, գորտ, թիթեռն, իծ, լու, թրթուր, մլուկ, մուկն, մուս, մրջիւն, սարդ, տիգ, քարբ, օծ:

6) Ընտանիք. —

Ամուսին, այր, կին, հայր, մայր, հօրու, յօրայ, մօրու, հաւ, հանի, եղբայր, թոռն, քոյր, որդի, ուստր, դուստր, մանուկ, սան, հարսն, նու, սկեսուր, տայգր, տալ, քենի, ներ?, որբ, ընտանիք, գերդաստան, մարդ, արբանեակ, ընկեր, մանջ, երեց:

7) Երկրագործական. —

ա) Տունկեր. — բող, բողիկ, բոյս, բողկ, գաղձն, գարի, գեղծ, գինծ, դաղծ, դեղծ, եղևին, խստոր, կաղին, հացի, թեղի, մայրի, մորենի, որթ, սիսեռն, տատասկ, ցախ:

բ) Տունկի մասեր. — ած, արմ, արմատ, բողբոջ, թերթ, ծառ, կիւ, կողր, ձող, մոլ, ոզոր, ոստ, պալուկ «ծիլ», պտուկ «ծիլ», ջով «ծիլ», սերմն, ստեղն.

գ) Գործիքներ. — արօր, բահ, բիր, եղան, թի, լուծ, սամի, սամետի.

դ) Երկրագործություն. — ածու, աճել, առգանել, բրել, բուսանիլ, դիզել, հերկել, պեղել, քաղել, — այգի, արտ, արօտ, բերք, բերրի, ոստին, դալար, դեղ (խոտ), դեգ, բոյս, թուփ, արդիւնք, անդ, հող.

Յ) Խաշնարածություն և գյուղատնտեսություն.

Աղալ, արածել, արօտ, բուծանել, բուտ, բտել, գեղմն, գոմ, դիել, երի, երբուծ, թառ, թառիլ, թրիք, լակ, լափ, լափել, խաչ, խեչ, խոչ, ծամծ, կոյ, հովիւ, հօտ, հօրան, ձետ, մալել, մածնուլ, յղի, ործ, որոճալ, ստերջ, ստև, ստինք, տի «կապ», տիկ, տաւար, տուտն, քակոր:



9) Արհեստի և արվեստի վերաբերյալ.

Արծնել, ասեղն, աղալ, դակու, դարբին, դուրզն, երկան, թակ, թարփ, թքել, թիթեղն, լաստել, լար, կարթ, հերիւն, հէնք, հիճնել, հնոց, ձաղկ, ձև, ձուլել, մամուլ, մլաղաց, մխել, յօղել, նիգ, յեռուլ, սալ, սարել, սարք, ստորի, որս, տորգ, փեղկ, քերել, քերթել, քերծել, օղ.— գիր, երգ, երգել, գեղգեղել, ընթեռնուլ, թիւ, ուսանիլ:

10) Գույներ.— դեղին, դեղբ, դեղծան:

11) Վաճառականություն.— գին, գնել:

12) Շինարարական.— անդ (դրանդի), անդաստակ, անկիւն, առա-գաստ, առաստաղ, ատաղծ, գերան, (դոն), դուռն, թումբ, խուղ (հիւղ), կամուրջ, հոյակապ, մոյթ, սանդուղք, սիւն, տուն, ցանկ, ցիւ, քիւ:

13) Հագուստ և զարդ.— ագանիլ, անկողին, բարծ, մերկ, բոկ, գինդ, արդ, զարդ, զգենուլ, զգեստ, օղ «կոշիկ», օթ «հագնիլ», օթոց, օծանել:

14) Ուտելիք և ընպելիք.— աղանծ, բոկեղ, դալ, կաթն, կոգի, կորկոտ, կեր, կուր, կերակուր, արբ, ուտել, ալիւր, թան, մածուն, մեղր, չիր, դոն (հաց), ջուր.— սխալակիլ «հարբիլ»:

15) Առտնին տնտեսություն.

Աղօրիք, աղալ, ածիւն, ասր, աւել, ամալ, աման, այրել, արծարծել, աւն (ինչք), բովել, բուրդ, բոց, բորբոքել, գեղմն, եռալ, եփել, թանալ, թաթաւել, լեսուլ, լոգանալ, լուանալ, լուցանել, խայծաղ, խանծել, խարել, խարշել, խորովել, կայծ, հալել, հեղուլ, գեղուլ, հիճնել, հնոց, հում, հուր, մուխ, մուլ «ծուխ», մրուր, մուրկ, մրկել, մուր կամ մուրճ, մայ, շաղել, շաղաղել, նքոյր «մաղ», ունկուրք, պղպջակ, ջեռուցանել, սարիք «շղթայ», տարգալ, տոռն (սանդի), քամել, քերել:

16) Թիվ և չափ.

Մի, երկու, երեք... իննսուն և ինն, ամբողջ, ամենայն, աւելի, թիւ, կրկին, հաղ (հեղ), մէն, միայն, յուլով, ուղուկ, ստէպ, քան(ակ), երկայն, երկար:

17) Մետաղներ և հանքեր.

Աղ կամ աղտ, աղծ, արծաթ, աւազ, պալ, պղպղաքար, քար:

18) Ճամբի վերաբերյալ.

Արահետ, կածան, լաստ, մաւ, առագաստ, թի, գալ, երթալ, չոգայ, չուել, ուղի, յածիլ, սլանալ, ագանիլ «գիշերել», օթ «գիշերել»:

19) Ժամանակ և տեղ.

Ամ, ամառն, ամիս, արդ, արտ (դուրս), գարուն, գեր «վեր», գիշեր, դեռ, երեկոյ, երէկ, առընթեր, հանուր, հեռի, հերու, հուպ, ձմեռն, մերծ,

մէջ, մօտ, մինչ, յետ, յետոյ, յատակ, ներ, ներքս, ներքոյ, ի վեր, ի վերայ, տնել, տեղի, տի, տիք, տիւ, ցերեկ, օր:

20) Երկիր և պետություն, զենքեր.—

Ատեան, մարտ, աղմուկ «կռիվ», թուր, նետ, սլաք, կուճբ, գերի:

21) Սովորական կյանքի բառեր.

Ազագիլ, ածել, աղտ (աղծ), այլ, անծուկ, անուն, աղաւաղել, աղքատ, աղկաղկ, արգահատիլ, արթուն, առնել, առած, առակ, առասպել, առնուլ, ատել, արի, արու, արդար, անուրջ, արգել, ասել, արծարծել, այց, անկանել, արմանալ, բալ (ասել), բան, բառ, բամբասել, բառնալ, բարծր, բեկանել, բեռն, բերել, բերծ, բուրդ, բութ, բրդել, գալ, գալարել, գաղել, գաղտ, գաղջ, գարշ, գեղեցիկ, գեղգեղել, գերծել, գերփել, գող, գան, գելուլ, գլորել, գեղծալ (փափագիլ), գէջ, գլել, գիտեմ, գտանել, գոգ (գոգցես), գոյ, գործել, գուն, դարել, դադարել, դամբան, դամբարան, դառնալ, դեղևիլ, դի, դիակ, դնել, դուլ, եզր, եկ, երգել, երգիծանել, երերալ, երիւրել, ելանել, ելուզակ, եղանիլ, եղուկ, երևիլ, երէց, երթալ, երկնչել, զայրանալ, զանգիտել, զարկ, զարմ, զգալ, զեղուլ, զերծ, զմրիլ, ընթանալ, ընծայ, ընկենուլ, ընկեր, ընտանի, ընկնուլ, ընկղմել, ընտիր, թաթաւել, թակել, թաքչիլ, թառամ, թարշամ, թանծր, թարմ, թաւ, թմրիլ, թեթուք, թեր, թերի, թռչել, թոպել, թնդալ, իր, իրաւ, իսկ, լալ, լայն, լաւ, լերկ, լիգել, լի, լնուլ, լիրբ, լլկել, լկիլ, լողալ, լուծանել, լքանել, լուտալ, լուռ, լպիրծ, լպիրշ, լսել, խածանել, խայթել, խայծ, խայտ, խանդ, խուն, խնդալ, խնծիղ, ծաղր, ծիծաղ, ծամել, ծեծել, ծեր, ծնանել, ծուռ, կալ (կալուլ), կաղաղ «որջ», կաղաւել «ոճի սառիլը», կարդալ «կանչել», կարծր, կռնչիլ «կուչ գալ», կատակ, կեալ, կենդանի, կողմն, կլանել, կրծել, հայցել, հասանել, հաստ, հաստատ, հաւ, յաւ «ծայր», հարկ, հարկանել, հարթնուլ, հարցանել, հեծանել, հեղզ, հեռ, հին, հիւթ (նիւթ), հոգ, հոլանի, հուպ «սեղմել», հոլովել, հոտ, հոտոտել, ձաղել, ձառ «տգեղ, ծուռ», ձիր, ձրի, ճանաչել, մանր, մաշիլ, մատչիլ, մատաղ, մատղաշ, մեծ, մեղծ, մեղկ, մեղմ, մեռանիլ, մղեղ, մնալ, մոլի, մոլար, մոլոր, մոյն, մոռանալ, մունջ, մուռ «լուռ», յագեմալ, յանգ, յառնել, յարիլ, յարմար, յաւելուլ, յեղուլ, ներզև, նստիլ, նոր, նուրբ, նսեմ, շեղ, ողբալ, ողորդել (1. թափել, 2. լալ), ողորկ, ողորմիլ, ողորքել, ողջ, ոռնալ, ունիլ, ուտել, ուրանալ, ուծանալ, ունայն, ուսանիլ, չոր, պապանծիլ, պիճդ, պոլոկել, ջանալ, ջերմ, ջիմ, ջնել, ջինջ, ջնջել, սաստ, սաստիկ, սեռ, սերիլ, սերունդ, սէգ, սիրել, սխալ, սիմ, սնանիլ, սուտ, սուր, սպառնալ, ստէպ, ստիպել, սուրբ, ստանալ, ստոյգ, սփռել, տալ, տամուկ, տատանիլ, տարտամ, տղել, տնտղել, տոկալ, տոփել,

տտիպ, տրամ «պինդ», տրուպ, տրտում, տրտունջ, տեսանել, տեւել, ցեղ, ցելուլ, ցտել, ցրել, ցուցանել, ցայտել, փանաք, փայլ, փողփողել, փարիլ, փեռելել, փերթ, փինատ, փործել, փութալ, փլանիլ, փչել, փուք, փոքր, փրփուր, քաղց, քորել, քէն, քուն, քութալ, քքուիլ, քրքանք «ծիծաղ», օգնել, օգուտ:

22) Դերանուններ, շաղկապ և նմաններ.

Այս, այդ, այն, աւասիկ, աւաղիկ, աւանիկ, այլ, աստ, անդ, առ (մօտ), արդ, արդեօք, դա, դոյն, դու, և, եթէ, ես, ևս, եմ, գ, ի, իք, չիք, ինչ, իմն, իւր, զի, թէ, ընդ, ենթ, ըստ, հի՞, մեք, մի՞, միւս, միայն, միմեանք, նա«մանավանդ», միթէ, նա, նոյն, ո, ով, որ, ոմն, ոչ, ու, ուր, ուրեմն, ուրեք, ոք, սա, սոյն, ց, քան:

Բնիկ հայերեն բառերի այս ցանկը, որ իբրև նախահայերենի ուրվագիծ դրինք վերևում, նախահայերեն լեզվի տեսակետով մի մեծ պակասություն ունի.— դա է բարդ և ածանց բառերի հարցը:

Թե՛ բարդ և թե՛ ածանց բառերը զարմանալի կերպով փոփոխական բախտ ունին ամեն լեզվի մեջ էլ: Առձեռն բառարանում 300-ից ավելի բարդ և ածանց բառեր ունինք քաջ արմատից. այդ բոլորից հազիվ 25 հատը կյանք ունի այսօրվա գրական լեզվի մեջ: Ընդհակառակը, ոսկեդարյան հայերենում ամեն բառով կազմված բարդերը շատ խոշոր թիվ չեն կազմում, իսկ այսօրվա գրական լեզվի մեջ ամեն ածական ազատորեն կարող է բարդվիլ ամեն բառով: Սրանից հետևում է թե՛ նախահայերենն էլ կարող էր ունենալ վերոհիշյալ 713 բառերից կազմված բազմաթիվ բարդեր ու ածանցներ, որոնք գործածական չլինեին ոսկեդարյան հայերենում և ընդհակառակը, կան անշուշտ շատ ու շատ բարդեր ու ածանցներ, որոնք թեև սովորական են գրաբարի մեջ, բայց գործածական չէին նախահայերենում: Այսպես, օրինակ՝ տեռատես, հետևակ, մեղուանոց և այլն ոսկեդարյան բառերը այնպիսի բառեր են, որ կազմված լինելով բնիկ, այն է նախահայերեն արմատներից, ազատորեն կարող էին գոյություն ունեցած լինել նախահայերենում. սակայն ո՛չ մի միջոց չունինք այս բանը հաստատելու. ավելի ևս այն բառերը՝ որոնք ոսկեդարյան հայերենումն էլ գործածական չեն և ավանդված են միայն հետնագույն ժամանակի հայերենում. ինչ. ջրաղաց, ձիաբույծ, ծնեթեկ, կամ միայն գավառական բարբառներում. ինչ. աղուէսաքուն և այլն: Ի նկատի ունենալով այս հանգամանքը, մենք անհնար համարեցինք ոսկեդարյան բնիկ հայերեն բարդ ու ածանց ձևերը մտցնել հիշյալ ցուցակի մեջ, թեև սրանով նախահայերենի հարստության միմիումընը ավելի ևս նվազեցրինք:

Բնիկ հայերեն բառերի շարքում չդրինք նաև բնածայն բառերը, որոնց թիվը Արմատական բառարանում 152 է: Այս բառերից ոմանք իրենց նմաններն ունին հնդեվրոպական ուրիշ լեզուներում. դրա համար էլ զանազան լեզվաբաններ համարել են դրանք հնդեվրոպական ծագումից: Բայց ըստ որում բնածայն բառերը հաճախ ընդհանուր են բոլոր լեզուներին (ինչ, կկու, բու, ագռաւ, յոպոպ ևլն) և չեն կապվում այս և այն լեզվաբնին, մենք էլ չդրինք հայերենի բառերի ցուցակում, մանավանդ որ նրանց ամենամեծ մասը ո՛չ մի արժեք չի ներկայացնում քաղաքակրթության պատմության համար: Իմ կարծիքն այն է, որ հայերենի բնածայն բառերը կազմված են հենց իրենց առաջին այն է, որ հայերենի բնածայն բառերը կազմված են ածած ց, չ, մչ, ռ, մասնիկներով և կրկնությամբ. հմմտ. օրինակ՝ շաչել, շչել, շնչել, շառաչել, շառանչել, շշուկ, շշունջ, շփնչ, շրշիւն, շրշնջել: Այս կարծիքս հայտնել և լուսաբանել են իմ մանրամասն մի հոդվածում, որ հրատարակված է Դանդեսի մեջ, 1899 թ. էջ 202-207 և 232-236: Դուրսման հայագետը բերանացի հայտնեց ինձ իր համաձայնությունը՝ 1898 թվին, Ստրազբուրգում, ուր աշակերտում էի իրեն:

Բավականանք ուրեմն տալով այստեղ նույն 152 բնածայն բառերի պարզ ցանկը (այբուբենական կարգով):

### ԲՆԱԾԱՅՆ ԲԱՌԵՐ

- |                         |                     |
|-------------------------|---------------------|
| 1. Ագռաւ                | 13. Բթել            |
| 2. Ահա՛                 | 14. Բբչալ           |
| 3. Աղաղակ               | 15. Բզգալ           |
| 4. Այո՛                 | 16. Բնչել           |
| 5. Բաբէ                 | 17. Բոմբիւն, բմբիւն |
| 6. Բաղբաջել, բաղբանջանք | 18. Բու             |
| 7. Բաչիւն               | 19. Բչել            |
| 8. Բաջաղիլ              | 20. Բջել            |
| 9. Բառանջել             | 21. Գանգաչ          |
| 10. Բառաչ               | 22. Գանգիւն         |
| 11. Բարբանջել           | 23. Գանչել          |
| 12. Բարբաջել            | 24. Գարգաչանք       |

25. Գլգլալ
26. Գնչել
27. Գոչել
28. Գոռոչ
29. Գուրգուր (թռչուն է)
30. Գոգռալ
31. Գրգտել
32. Գրգրալ
33. Գրդալ
34. Դդիւն
35. Դդնչել
36. Դդչել
37. Դոփել
38. Դոնչել
39. Դրդնջիւն
40. Դրդջիւն
41. Դրնդել
42. Զռալ
43. Թանչել
44. Թաչել
45. Թառանչել
46. Թառաչել
47. Թափթափիլ
48. Թմբիւն
49. Թրունդ
50. Ժծմակ
51. Ժիծի
52. Խախանջել
53. Խախանք
54. Խախաչ
55. Խանչել
56. Խառնչել
57. Խարխսնճել
58. Խխնջել
59. Խնչել
60. Խոխոջ
61. Խռալ

62. Խռկալ
63. Խռնչել
64. Խռնտալ
65. Խռչակ
66. Խրխիւնջ
67. Խօշիւն
68. Ծափ
69. Ծղրիդ
70. Կական
71. Կակաչել
72. Կանչել
73. Կառանչել
74. Կառաչել
75. Կարկաչել
76. Կթղ(ալ?)
77. Կիւիւ
78. Կլկլեցմել
79. Կկու
80. Կնչել
81. Կնտնտոց
82. Կոչել
83. Կոռոչ(ել)
84. Կուկլուլել
85. Կոնչել
86. Կոչել
87. Կրաս
88. Կրկջալ
89. Կրճել
90. Հա՛
91. Հա՛յ հուչ
92. Հայիոյել
93. Հաչել (ախ քաչել)
94. Հաջել (շան)
95. Հառաչել
96. Հունչ, հնչել
97. Հոնչել
98. Հռչակ

99. Եթոց
100. Եիկ
101. Եիճոունք
102. Եիչ
103. Եիւ
104. Եղել «ճվճվալ»
105. Եճուել
106. Ենճուկ
107. Ենճուել
108. Եողփիւն
109. Եռղել
110. Եռճուել
111. Եռնչել
112. Եռուել
113. Եռուողել
114. Եռչել
115. Եռռալ
116. Եռվռել
117. Մայել
118. Մլաւել
119. Մունչ, մնչել
120. Մոմռալ
121. Մոնչել
122. Մրմնջել
123. Յայ յու
124. Յոպոպ
125. Նուալ

126. Շաչել
127. Շառանչել
128. Շառաչել
129. Շարշափ
130. Շշուկ
131. Շշունջ
132. Շչել
133. Շոիւնդ
134. Շոիւնչ
135. Շրշիւն
136. Շրշնջել
137. Պապաչել
138. Պոչիւն
139. Պոռոչել
140. Սոիւնչ
141. Վճիռն
142. Վնկել
143. Վու վու
144. Վոչալ
145. Վրնջել
146. Տատ
147. Տզզալ
148. Տքալ
149. Փոնչել
150. Փոնչել
151. Փստ-ա-ծաղիկ
152. Քեքրտալ

Կա նաև մի ուրիշ կարևոր հանգամանք:

Ամեն մի մեռյալ լեզվի համար մեր աղբյուրը հնից մնացած գրականությունն է: Բայց աշխարհում ո՛չ մի հին գրականություն ամբողջովին հասած չէ մեզ: Ո՛չ եգիպտական մեհենագիր արձանագրությունները, ո՛չ ասորեստանյան բևեռագիր արձանագրությունները, ո՛չ հին թագավորների կտրած դրամները կամ մեդալները, ո՛չ մի բան ամբողջապես ու անվթար հասած չէ մեզ: Սրան ապացույց է այն, որ շարունակ պեղումները երևան են հանում նորանոր արձանագրություններ ու հիշատակարաններ: Քսան և հինգ տարի առաջ

Փոքր Ասիայում երևան հանվեց 13 հազար կտոր արծաճագրություն, մի ազգի մասին և մի այնպիսի լեզվով, որոնց մասին 1914 թվից առաջ ոչ մի գաղափար չունեինք: Չորս տարի առաջ գտնվեցին պարսից Աքեմենյան թագավորների նորանոր արծաճագրությունները, և այլև, և այլև: Այսպիսի գյուտեր կրկնվում են շարունակ, աշխարհի զանազան անկյուններում, երբեմն ավելի մեծ, հաճախ ավելի փոքր չափերով:

Եթե այսպես են քարերի ու մետաղների վրա քանդակված հիշատակարանները, ի՞նչ պիտի լիներ թղթի վրա գրված գրականությունը, որ ենթակա է էլ ավելի արագ կորստի: Հնությունը տալիս է մեզ բազմաթիվ հեղինակների անուններ, որոնց գործերը չեն հասել մեզ: Այսպես՝ Ջրադաշտի անվան վերագրված Ավեստայի մեծ մասը, Աբիւղենոսի, Բարդածանի, նույն իսկ Թ դարու հայ հեղինակ Շապուհ Բագրատունու գործերը կորստյան են մատնված: Առհասարակ Ե դարից մինչև Թ դար հայերեն ոչ մի ձեռագիր հիշատակարան հասած չէ մեզ:

Եթե գրականությունը պակասում է մեզ, ուրեմն պակասում են նաև այն բառերը, որոնք գործածված են եղել գրականության մեջ:

Բայց եթե նույն իսկ ենթադրենք մի ընդամենը, որ եղած գրականությունը ամբողջովին հասած է մեզ, դարձյալ դա բավական չէ մի կորած գնացած լեզվի ամբողջ բառազանձը երևան հանելու համար: Միայն կենդանի լեզուների լավ աշխատասիրված բառարաններն են, որ կարող են ներկայացնել լեզվի ամբողջական բառազանձը: Ասում են կարող են, որովհետև կա՞ ազգ, որ կարողանա պարծենալ, թե իր ժողովրդի գործածած բոլոր բառերը, գրական թե բարբառային, վերաբերյալ ամեն մի արհեստի և մասնագիտության, լիովին հավաքել է: Եթե այսպես անկատար են նույն իսկ բառարանները, ո՞ր մնաց գրականությունը, մանավանդ մի աղքատ գրականություն, որ ավանդված է հնից: Գրականությունը կարող է աղքատ լինել գրական արտադրությանց թվի տեսակետից, ինչպես, օրինակ՝ եբրայական, գոթական, հին սլավական կամ զենդական գրականությունները, որոնք ընդամենը մի մի գրքով են մեզ հայտնի: Բայց գրականությունը կարող է աղքատ լինել նաև որակի տեսակետից, երբ նա միակողմանի է, այսինքն հեղինակները գրում են մի կամ երկու նյութի շուրջը: Այսպիսի գրականությունները, նույն իսկ քանակով հարստության դեպքում աղքատ են. իսկ ի՞նչ ասել, եթե նա միաժամանակ թե՛ քանակով և թե՛ որակով աղքատ է: Այսպես, օրինակ, հին հունական գրականությունը հարուստ է ոչ միայն քանակով, այլ և որակով. այնտեղ կարող ենք գտնել գիտության բոլոր ճյուղերի մասին զանազան գրվածքներ,

բազմատեսակ բարբառներով: Այնտեղ կգտնենք ոչ միայն կրոն, բանաստեղծություն, իմաստասիրություն, պատմություն և աշխարհագրություն, այլ և բնագիտություն, բուսաբանություն, բժշկություն, ծիսադարձություն, ռազմագիտություն, որսորդության գիտություն և այլն, և այլն: Քսենոփոնը իր «Որսորդություն» անուն ձեռնարկի մեջ տվել է նույն իսկ 47 հատ շան անուն<sup>1</sup>: Ո՞ր գրականությունն է հասել այսպիսի մանրամասնությանց: Մինչդեռ զենդական գրականությունը, օրինակ, կրոնականից կամ կրոնական բանաստեղծությունից այն կողմ չի անցնում:

Հայոց հին գրականությունը այս տեսակետից, համեմատելով հատկապես հույն գրականության հետ, շատ անբավարար է: Արդարև Ե դարու առաջին կեսից հասել է մեզ միայն 41 կտոր աշխատություն, որոնց մեջ գտնում ենք կրոն, բանաստեղծություն, պատմություն, մի քիչ փիլիսոփայություն, բայց գիտության այլ ճյուղերի մասին... ակնարկներ միայն: Այս բոլորը բավական չէ, որպեսզի կարենանք Ե դարու հայ ժողովրդի լեզուն և նրա հետ կյանքը երևան հանել: Ո՞ր են Հայաստանի բազմատեսակ կենդանիների, ձկների, թռչունների, բույսերի, խոտերի և այլն, և այլն անունները: Ո՞ր են երկրագործական, գյուղատնտեսական, ձիաբանի և ուրիշ զանազան արհեստների վերաբերյալ բառերը: Ո՞ր են նույն իսկ գյուղացիների ու քաղաքացիների, մարդկանց և մանավանդ կանանց հատուկ անունները...: Այս բոլորից պարզ է հետևեցնել, որ Ե դարից և դեռ հետո էլ մեզ ավանդված գրականությունը չի տալիս մեզ հայ լեզվի ամբողջական բառապաշարը: Այս էլ ուրեմն մի մեծ թերույթ է՝ նախահայերենի պատկերը երևան հանելու համար:

Հին հայ գրականության թողած պակասը կարելի էր լրացնել արդի բարբառների միջոցով, որոնք շատ հարուստ են յուրահատուկ բազմաթիվ գավառական բառերով:

Գավառական բառերի մանր մունր ժողովածուներ շատ կան: Ամենամեծ ժողովածուն է իմ Գավառական բառարանը (տպ. Թիֆլիս 1913), որ ունի 30,000 բառ ու ոճ: Սրանից հետո գալիս է Ս. Վ. Ամատունու «Հայոց բառ ու բան»-ը (տպ. Վաղարշապատ, 1912), որ ունի 16,000 բառ ու ոճ: Մեր Պետական Համալսարանի գրադարանում գտնվում են 30 ձեռագիր գավառական բառարան, մեծ մասամբ լուրջ և ընդարձակ աշխատություններ, որոնց յուրաքանչյուրը պարունակում է մի առան-

<sup>1</sup> Oeuvres complètes de Xénophon, trad. Talbot, Paris 1879, t. 1, p. 329:

ծին բարբառի գավառական բառերը: 1935 թվին ես ձեռնարկեցի կազմելու մի Ընդհանուր գավառական բառարան, որի մեջ պիտի հավաքեի տպված և անտիպ այդ բոլոր աշխատությունների գավառական բառերը: 100 էջ պատրաստեցի այդ աշխատությունից, բայց ավելին կարելի չէրի:

Գավառական բառերի ամենամեծ մասը հայերենից կազմված սովորական բարդություններ և ածանցներ են, որոնք թեև շատ կարևոր են նոր հայերենի բառազանձը ճոխացնելու համար, բայց լեզվաբանության համար ոչ մի նոր բան չեն տալիս: Սակայն գավառական բառերի մեջ կան նաև այնպիսի ձևեր, որոնք բոլորովին նոր արմատներ են ներկայացնում և չափազանց կարևոր են հայ լեզվաբանության համար՝ մի քանի տեսակետով:

Այստեղ մենք նկատի ունինք այն հանգամանքը, թե ի՞նչ չափով այդ բառերը կապվում են հնդեվրոպական լեզուների հետ, ի՞նչ չափով կարող են նրանք լրացնել հին հայ գրականության թերությունները, ուրիշ խոսքով ինչքան կարող են երևան հանել այնպիսի բնիկ հայ բառեր, որոնք պատահմամբ չեն մտել հին գրականության մեջ, հետո մոռացության մատնվել ընդհանուր հայ լեզվի կողմից և պահվել միայն մի գավառի անկյունում:

Տալիս են այստեղ մի փոքրիկ ցանկ գավառական բառերի՝ համեմատված հնդեվրոպական այլ լեզուների հետ, հետևաբար և բնիկ հայերեն:

1. Առաջ Դրբ. «յույժ, շատ». հին ձևը պիտի լինի աճռի, ուր անշուշտ և կրկնված է սաստկության համար. պարզ ձևն է առի. հմմտ. հուն. *ari*, *eri*, վեդ. *ari*, բուրն էլ սաստկություն ցույց տվող նախամասնիկներ՝ հայերենի հետ միևնույն նշանակությամբ (Boisacq, *Dict. étym.*, 77, 279):

2. Ափու «հայր». հմմտ. *apa*, հմմտ. հուն. *apfá*, *apphyn* «հայր», գոթ. *aba* և հիսլ. *afi* «մարդ, այր». բուրն էլ մանկական բառեր (Pokorny 1, 47):

3. Բոթել «իրել, մշտել». տե՛ս Pokorny 2, 125 հմմտ. *bhaut*, *bhut* «զարնել, իրել» արմատի տակ հիշված ձևերը:

4. Բոռալ (եթե բնածայն չէ). հմմտ. հմմտ. *bhuo* «կատաղած ցուլի գոռալը», որից հիռլ. *būriud* «գոռալ, բոռալ», *būra* «կատաղություն, բարկություն», նորվ. *būra* և լեթթ. *bauruót* «բոռալ», հսլ. *burja* «փոթորիկ» ևլն (Pokorny 2, 191, Trautmann 28).

5. Բուլ «խմորի գունդ» (Ազլ. թիւ, Ջղ. Բ՛ուլ, Դրբ. Ծմ. պիւլ) < հմմտ. *bhōl* արմատից, որի վրա ավելի ընդարձակ տե՛ս Արմատ. բառ., հտ. 7, էջ 106:

6. Բուքի (Դրբ. պի՛քի) «մի տեսակ վայրի ծառ». հմմտ. հմմտ. *bhāgos*, *bhūgos* > հուն. *phāgós*, *phēgós* «կաղնի», հրգ. *buohha*, գերմ. *buche*, ռուս. *бук* ևլն (Pokorny 2, 128, Boisacq 1023):

7. Թոնթորալ, որի հետ ձևով և իմաստով ճիշտ նույն է հուն. *tonthoryzō* «ամորոշ մի ձայն հանել, հանդիմանել, մրթմրթալ» (Boisacq 975):

8. Թործ, իմաստով գրեթե նույն է հուն. *tórmos* «պտուտակը մեջը մտցնելու փոսը». արմատն է հմմտ. *ter*, *tor* «ծակել», որից հյ. ունի՛նք թուր (*tör*).- հյ. թործ և հուն. *tórmos* ածական են՝ մին *ծ* և մյուսը *m*-ով ածած (Boisacq 976):

9. Լակ «թույլ՝ փշացած ձու» < հմմտ. *slæg*, *slæg* կամ *leg*, *læg* «թույլ լինել, կակղիլ» արմատից. հմմտ. հուն. *lagarós* «կակուղ, թույլ, տկար», *lēgō* դադրիլ, հոգնիլ, լտ. *laxus* թույլ, հիռլ. *lacc* թույլ, կակուղ, տկար, հիսլ. *lākr* վատ, անարժեք, հիլու. *slakr*, անգլ. *slæc*, հրգ. *slah* կակուղ, լեթթ. *legéns* «թույլ, մեղկ, կակուղ», նաև ռնգականով՝ հուն. *langázō*, լտ. *langueo* «թուլանալ, լքվիլ» ևլն (Pokorny 2, 712, Boisacq 548, 1094, Berneker 684): Պատահական է պրս. *lay* լակ ձու», որ պիտի տար լազ:

10. Լիժ «հիղկ, վողորկ. 2. ամամոթ, աներես». հմմտ. հսլ. *slizkū*, ռուս. *слизъ*, սլով. *slizek*, հրգ. *slíchan*, որոնց նախածնն է *slizu* «սահուն, լարծուն», և հարուս. *līse* «սողալ», լեթթ. *lēžāt* «սահնակով սահիլ», որոնց նախածնն է *lēžō*, ըստ Trautmann, էջ 161 և 270 (Trautmann երկուսի կապը չէ նշանակած):

11. Լկիլ «սառույցի հալվիլ սկսիլը» < հմմտ. *leg* «ծորիլ» արմատից. հմմտ. հիռլ. *legaim* «լուծվիլ, հալվիլ». մանրամասն տե՛ս Արմատ. բառ. հտ. 7, էջ 140:

12. Լոք տալ «ցատկել» < հմմտ. *lok* «ցատկել». հմմտ. հուն. *lekân* ցատկել, լտ. *iocusta* մորեխ, լիթ. *lekiù* թռչիլ, *lakstyti* թռչկոտել, ցատկել, լեթթ. *lékát* ցատկել ևլն (Boisacq 555, 577, Ernout-Meillet 531, Berneker 706, 718, Pokorny 2, 420):

13. Կուլ «կոկորդ» < հմմտ. *g<sup>2</sup>ul* արմատից. հմմտ. լտ. *gula* կոկորդ, սանս. *gala* վիզ և կոկորդ: Ավելին տե՛ս Արմատ. բառ. հտ. 9, էջ 1393 և MSL 15, 244:

14. Կուլայ «ջրի փարչ» = սանս. *gōla* «կուլա», հուն. *gaulós* «կաթ կթելու աման, ջրի դուլ» (Boisacq 141). տե՛ս իմ հոդվածը՝ MSL 15, 244:

15. Հալ, հել «կալի թի» = լտ. pala «թի» (տե՛ս իմ հոդվածը՝ MSL 20, 162):

16. Հօտ, յօտ «մի տեսակ աման» < հնիւ. ped, pod «աման», որից հրգ. vaz, հաքս. fat, անգլ. foet, հիւլ. fat, բուլղոս էլ «աման», լիթ. pûdas, լեթթ. pûds «պտուկ» (Pokorny 2, 22):

17. Մկկալ «այժի ծայրը». հմմտ. հուն. mekâsthai մայել, լտ. miccio, մրգ. mechzen, գերմ. meckern «մկկալ», սերբ. mekati «մայել» ևլն. բուլղոս էլ բնածայն. այսպես են նաև հուն. mykâsthai, մրգ. mugen, ռուս. мычать «բառաչել» ևլն (տե՛ս Trautmann 177, 188, Boisacq 631, 649):

18. Մղմող, մղմեղ «ցեց» < հնիւ. mol արմատից. հմմտ. գոթ. malō, հիյուս. molr, հրգ. miliwa, գերմ. Milbe, հւլ. և ռուս. моль «ցեց» (տե՛ս իմ հոդվածը MSL 15, 244):

19. Մորտել «կրծել». այս հետաքրքրական բառը պահված է Գանձակում և շատ հազվագյուտ կերպով Ղարաբաղում. (գործածական էր մեր ընտանիքում. մօկնը շաքար ա մօռտըմ «մուկը շաքար է կրծում»). սքանչելի կերպով համապատասխանում է լտ. mordeo «կծել, խածնել» (> ֆրանս. mordre), սանս. mrd, mardayati «ջարդել, փշրել», զնդ. marəd, հպրս. mrda «ջարդեց» բառերին, որոնց հետ միասին հանվում է հնիւ. mord արմատից (mər պարզ արմատի d-ով աճականն է). հմմտ. Pokorny 279, Boisacq 884 և 1094:

20. Մուզ (իմա՛ մոյզ «մուկ գույն»). սրա հետ նույն է հնչում հնիւ. moiq<sup>w</sup>o «գորշագույն, մուկ գույնով», որի վրա տե՛ս Pokorny 2, 302:

21. Նան «մայր, տատ». հմմտ. սանս. nana՛ մայր, մայրիկ, պրս. nana մայր, հուն. nánna, nénnna, nínna մորաքույր, ալբան. nane մայր, գալլ. nain տատ, սերբ. nana մայր ևլն: Այս բուլղոս մանկական բառեր են և հանվում են հնիւ. nana, nena ձևից: Հայերենը կարող է առաջացած լինել նույն արմատից, բայց կարող է և փոխ առնված լինել պարսկականից (Pokorny 2, 317, Boisacq 663):

22. Շիւ «դալար ճյուղ ծառի». հմմտ. հատկապես հուն. skípon և լատ. scīpiō «ծեռքի գավազան», սրանց հետ նաև լտ. scāpus «բուն, բույսի ցողուն», scōpa «բարակ ճյուղ, շիվ», հրգ. skaft, հիյուս. skapt «բառ» ևլն: Հնիւ. ձևը դրվում է skīp «գավազան, բարակ ճյուղ», որ իմաստով և ձևով ճիշտ մեր բառն է (Boisacq 875, Pokorny 2, 562):

23. Պլալալ «աղոտ փայլիլ». կարելի է դնել հնիւ. bhal «փայլիլ» արմատի տակ, որից ունինք սանս. bhāla փայլ, հուն. phalós «փայլուն, սպիտակ», լիթ. bālnas, հւլ. bēlū «սպիտակ» ևլն: Նույն արմատը ունի նաև bhlei ծայնդարձը՝ «փայլիլ, փայլվիլիլ» նշանակությամբ (տե՛ս

Pokorny 175 և 210): Եվ որովհետև հնիւ. bh չի տալիս hj. պ, ուստի կարելի է ենթադրել հնիւ. bēl ծայնդարձը, որ ճիշտ պիտի տար հայերեն կրկնությամբ պլպլալ:

24. Սալմի, սալմին, սրմին՝ զանազան բարբառներում նշանակում է «ոստայնակի հորի այն քառակուսի կարճկեկ գերանը, որի վրա փաթաթվում է գործված կտավը». թուրքերեն ևս ասվում է selmen, sermin (տե՛ս Կամուսի արաբերեն բառարանի թրք. թարգմ. հտ. Բ. 684, 688 և հտ. Գ. 368), որ անշուշտ փոխառյալ է հայերենից.- այս բառի հետ համեմատելի են լիթ. šelmuō, šelmenys, հւլ. slēmja «տան կատարի գերանը», հուն. sélma «ատաղձ, գերաններ, շենքի լաստակ, գերան, նավի կամուրջ», հրգ. swēlli «գերան, շենք», հիյուս. sēla «սյուն» ևլն: Այս բառերի նախածայնը որոշելու համար կան զանազան կարծիքներ: Հայերենն էլ, եթե կապ ունի նրանց հետ, կարենա թերևս որևէ նպաստ մատուցանել (տե՛ս Boisacq 858, Trautmann 301-2, Pokorny 2, 503):

25. Սլկիիլ «սահիլ». ունինք հնիւ. slēig, sliq «լպրծուն, սահուն, հղկել» արմատը, որի զանազան ժառանգների վրա տե՛ս Boisacq 584 և Pokorny 2, 390. սակայն հայերենի նախածայն s հարմար չէ և չգիտեմ ինչպես պիտի մեկնվի:

26. Փիփերդ (ծանոթ բույսը). հմմտ. լիթ. papartis, լեթթ. paparde, ռուս. náporot, սլով. práprat, սանս. párapa «պտեր կամ ուրիշ բույս». սրանց կազմության մասին տե՛ս Trautmann 206 և Pokorny 2, 21:

Այս 26 ստուգաբանություններից մի քանիսը կարող են սխալ կամ պատահական լինել. բայց կան այնպիսիները, որոնք բուլղոսի ստույգ են և ցույց են տալիս, որ մեր գավառական բարբառներն էլ ունին հնդեվրոպական բառեր, որ գրաբարի մեջ պատահաբար գործածված չեն:

Մենք այս կարգի բառերն էլ չկարողացանք հավաքել և դնել նախահայերեն բառերի շարքում, որով մեր միմիմունը էլ ավելի նվազեցրինք:

Այս վերապահությամբ քննելով ուրեմն մեր բառացանկը, նախահայոց քաղաքակրթության մասին կարող ենք հետևյալ ուրվագիծը ներկայացնել:

Բնության և իր ուժերի մասին բավական հարուստ է նախահայերենը. պակասում են միայն երկինք, երկիր, ծով, շանթ, և այլ նման մի քանի բառեր, որոնց ծագումը ո՛չ հնդեվրոպական է և ո՛չ էլ իրանական: Կրոնական գաղափարների վերաբերմամբ շատ աղքատ են նախահայերը: Նրանց միակ աստվածությունն է դիք, որ հնդեվրոպական ծագում ունի.

մյուս բոլոր աստվածները իրանական կամ ասորական ծագում ունին. նույն իսկ աստուած Բառը, ինչպես քիչ հետո կտեսնենք փռյուզիական ծագում ունի: Պակասում են նույնպես կրոնական դասակարգ, ծեսեր ու արարողություններ նշանակող բառերը:

Առանձնապես հարուստ է նախահայերենը մարմնի մասերի վերաբերյալ բառերի կողմից (71 բառ, այսինքն բոլոր տեսակների մեջ թվով ամենից ավելին), թեև հիվանդությանց համար մեծ քանակությամբ բառեր չկան: Այս բանը կարելի է բացատրել բժշկական արվեստի տկարությամբ հին հայոց մեջ. համեմայն դեպս ծանոթ են դալուկն, թանջ և մանավանդ ջերմ, որ այժմ էլ հայ գյուղացու համար ամեն հիվանդության համանիշ է: Ջերմը թեև հնդեվրոպական արմատից է, բայց ընդհանուր չէ. հնդեվրոպացիք ջերմի համար ընդհանուր բառ չունին. և օրինակ՝ լատ. febris «ջերմ» անծանոթ ծագում ունի: Շատ կարևոր է դեղ բառի գոյությունը և ծագումը: Այս բառի առաջին և հիմնական նշանակությունն է «խոտ». այս իմաստով գտնում ենք գործածված շատ հազվագյուտ կերպով՝ մեր հնագույն գրականության մեջ: Այսպես՝ Եւ խոտ նորա նուազեսցէ և դեղ դալար անդ մի՛ գտցի. Ես. ԺԵ. 6. Լիզանիցէ արջառ զդեղ դալար ի դաշտի. Թուոց ԻԲ. 4. Մի՛ ելցէ ի վերայ նորա ամենայն դեղ դալար. Օր. ԻԹ. 23. Ո՛չ գտցի ի նմա դեղ դալար. Ես. ԻԷ. 10. այս բոլոր վկայությանց մեջ դեղ դալար նշանակում է «կանաչ խոտ», և նույն է խոտ դալար դարձվածքի հետ. հմմտ. Ամենայն խոտ դալար ի կերակուր. ԾՆ. Ա. 30. Ժողովես զխոտ դալար. Առակ. ԻԵ. 25: Բառիս այս հնագույն իմաստին ապացույց է նաև վրացերենը, որ ոսկեդարից մի քանի դար առաջ, այն ժամանակ, երբ հայերենի բունները ջնջված չէին տակավին, փոխ է առել մեզանից այս բառը՝ մղելս «խոտ, դալարիք» նշանակությամբ: Բառիս ծագումը ցույց է տալիս, որ նախահայոց մեջ բժշկությունը կատարվում էր խոտերով կամ արմատներով. հմմտ. Լաբուր. էջ 5. Ձի ոչ դեղովք և արմատովք բժշկես դու, այլ բանիւ. Իմ. ԺԶ. 11՝ Ոչ դեղք և ոչ սպեղանիք բժշկեցին զնոսա:

Նախահայերը հարուստ են նաև կենդանիների կողմից. բոլոր ընտանի կենդանիների անունները գտնում ենք նախահայերենի մեջ. բացակայում են այստեղ միայն ջորի, և ձկների ու թռչունների գանազան տեսակները, բացի մի երկուսից, որոնց անունը հնդեվրոպական է: Վերջին կետը կարելի է բացատրել նրանով, որ ձկների ու թռչունների տեսակները երկրից երկիր փոխվում են, և հայերը Հայաստան գալով այստեղ միայն ճանաչեցին ու բնիկներից սովորեցին տեղական ձկների

ու թռչունների անունները: Նախահայերենը գիտե նաև բոլոր գլխավոր վայրի կենդանիների անունները. պակասում են միայն վագր, փիղ, կոկորդիլոս կամ նիհանգ, յովագ և այլն, որոնք չգտնվելով Հայաստանում և Փոքր Ասիայում, բնականաբար փոխառյալ պիտի լինեին ուրիշ ազգերից: Շատ կարևոր է քննել առիւծ բառի ծագումը: Հնդեվրոպացիք առիւծ չգիտեին. Եվրոպայումն էլ այս շրջանում առիւծը վերջացած էր. բայց դեռ գտնվում էր Թրակիայում և հյուսիսային Հունաստանում. Հոմերոսը այնպես է նկարագրում առիւծը և նրա սովորությունները, որ անշուշտ տեսած պիտի լինի. Հերոդոտը պատմում է թե ինչպես պարսիկները հարձակում կրեցին առիւծներից և իր պատմությունը հաստատում է Արիստոտ (տե՛ս Pictet, P. տպ. Ա. էջ 529): Ուստի ենթադրում ենք որ հայերը առիւծ բառը կազմեցին Թրակիայում:

Նախահայերենը հարուստ է ընտանեկան կազմակերպության վերաբերյալ բառերով. բայց ինչպես հնդեվրոպական շրջանում, նույնպես էլ նախահայոց մեջ կարևոր էր միայն արական գծի ազգականությունը. այս պատճառով պակասում են աներ, աներորդի կամ աներծագ, զոքանջ, քեռի բառերը, որոնք հնդեվրոպական չեն, և փոխառյալ են մի անծանոթ լեզվից:

Ջարմանալի են նախահայերենի երկրագործական բառերը: Հակառակ մեր երևակայածին, նախահայերը հարուստ չեն այս կարգի բառերով. երկրագործական գործիքներից շատերի անունները, ինչպես մաճ, խոփ, մանգաղ, զերամդի, կանդրիւ, փոցիս, տափան, ցաքան, հեծանոց, հոսելի և այլն, հնդեվրոպական ծագում չունին, ուստի չկային նախահայերենի մեջ: Նույն իսկ այն գործիքները, որոնց անունը հնդեվրոպական է, ինչ. բահ, բիր, թի, երկրագործական լինելուց ավելի՝ խաշնարածական կամ գյուղատնտեսական են: Պակասում են նախահայերենի մեջ բոլոր հացաբույսերի անունները. ինչպես օրինակ՝ ցորեն, հաճար, վարսակ, կորեկ. սրանցից ո՛չ մեկը հնդեվրոպական չէ: Տարօրինակ է, որ սրա հակառակ՝ հնդեվրոպական ծագում ունին տունկի մասերի անունները (արմատ, բողբոջ, թերթ, կողր, կիւ, ոստ, սերմն, ստեղն, մու), երկրագործական կյանքի համար անկարևոր մի քանի բույսեր (ինչ. բող, բողկ, գինձ, դաղձ, դեղձ) և մի քանի անտառային ծառեր, ինչ. եղևնի, հացի, մայրի, կաղնի, ցախ. սրանք էլ երկրագործական արժեքից ավելի խաշնարածի համար արժեք ունին: Հովիվը կաղնի, եղևնի կամ մայրի ծառի հովանու տակ նստած, արածացնում է հոտը. խոզերը կերակրվում են կաղնու ծառի պտուղներով և

այլն: Ընդհակառակը խաշնարածության վերաբերյալ բառերը շատ են ու առատ (36 բառ), որոնց միացնելով մահ կենդանիների տեսակների վերաբերյալ բառերը (55 բառ), մարմնի մասերի անունները (71 բառ), ինչպես և երկրագործական բաժնում դրված այն բառերը, որոնք երկրագործական լինելուց ավելի խաշնարածական են, կտեսնենք որ նախահայերը ո՛չ թե արդի հայոց պես երկրագործ, այլ խաշնարած ժողովուրդ էին: Նրանք զարգացած չէին ո՛չ արհեստների և ո՛չ էլ մանավանդ վաճառականության մեջ. այս պատճառով արհեստի վերաբերյալ շատ քիչ բառ ունինք. ավելի քիչ են վաճառականության վերաբերյալ բառերը. չափի, կշռի և դրամի վերաբերյալ ո՛չ մի բառ չկա, բացի արծաթ բառից, որ թե՛ իբրև «մետաղ» և թե՛ իբրև «դրամ», միակ հնդեւրոպական բառն է հայերենի մեջ: Ոչ միայն մասնավոր բառերը, այլ և նույն իսկ ընդհանուր նշանակություն ունեցող չափ, կշիռ, դրամ, կշռել, արժել, արժան, թանկ բառերը բնիկ հայ հնդեւրոպական չեն:

Հիշենք վերջապես, որ նախահայերենը չուներ պատերազմական արվեստի, զենքերի և պետական կազմակերպության վերաբերյալ բառեր (ինչ. արքայ, թագաւոր, իշխան, պետ, նախարար, սեպուհ, ազատ և այլն, և այլն), որոնք ավելի հետո պիտի փոխ առնվեին իրանյաններից կամ ուրիշ ազգերից: Լատիներենում էլ զենքերի անունները ընդհանուր հնդեւրոպական չեն մեծ մասամբ. շատերը փոխառյալ են ետրուսկներից կամ Իտալիո այլ նախաբնիկներից. այսպես, օրինակ՝ lancea «միզակ» սպանացիներից: Հայոց բնիկ զենքերն են միայն թուր, նետ և սլաք, որոնք հնդեւրոպական ծագում ունին. մնացյալը մեծ մասամբ պարսկերեն է:

Այս բոլոր տվյալներից հետևում է, որ նախահայերը հնդեւրոպական նախահայրենիքից հեռանալուց հետո և նախ քան Հայաստան մտնելը, կուլտուրական խոշոր առաջադիմություն չունեին, թեև գտնվում էին որոշ բարձրության վրա. նրանք ո՛չ միայն ժառանգել էին հին հնդեւրոպական քաղաքակրթությունը, այլ և իրենց դարավոր բնակության մեջ թրակիայում և ապա Փոքր Հայքում, ավելի բարձրացրել էին այն, և անշուշտ հարևան ժողովուրդների (հաթեր, ասորեստանցիք, խալդեր և այլն) օրինակով ավելի ևս զարգացրել:

Նոր հայրենիք Հայաստանում, իրենց աշխատասիրությամբ և նոր հարևանների օրինակով (մարեր, պարսիկներ, ասորիներ, հռովմայեցիք և ապա հույներ), ավելի ևս պիտի առաջանային և ստեղծեին քաղաքակրթության մի նոր միջավայր:

ԳԼՈՒԽ Ե.

## ՀԱԹԵՐԵՆԻ, ԹՐԱԿԵՐԵՆԻ, ՓՈՅՈՒԳԵՐԵՆԻ ՈՒ ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ԼԵՁՈՒՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՎՐԱ

Առաջին հարցը, որ ներկայանում է մեր առաջ, հետևյալն է. եթե նախահայերը գաղթելով հնդեւրոպական նախահայրենիքից՝ եկան վերջապես հաստատվելու Հայաստանում, ո՞ր ճանապարհով եկան և իրենց ճանապարհին ո՞ր ժողովուրդների հետ հարաբերություն ունեցան:

Նախահայրենիքից մինչև Հայաստան երկու ճանապարհ կա. մեկը Սև ծովի արևմտյան եզրքներով, արդի Ռումինիայով իջնում է դեպի հարավ, մտնում է Թրակիա, Հելլեսպոնտոսի վրայով անցնում է Փոքր Ասիա և ուղիղ դեպի արևելք դիմելով՝ Փոքր Հայքի միջով մտնում է Հայաստան: Երկրորդը Սև ծովի հյուսիսային կողմով և հարավային Ռուսաստանի տափաստաններով հասնում է մինչև Հյուսիսային Կովկաս, այստեղից ճեղքում է Կովկասյան լեռնաշղթան և Կասպից ծովի արևմտյան եզրքներով իջնում է վերջապես Հայաստան:

Ճանազան տվյալներ հաստատում են, որ նախահայոց գաղթը եղել է առաջին ճանապարհով. նախ՝ որովհետև երկրորդ ճանապարհը բռնել էին արիական ցեղերը, որոնց հետ հայերենը առանձին կապակցություն չունի: Երկրորդ՝ որովհետև հին հույն պատմիչները ավանդաբար պատմում են, թե հայերը ուրիշ ցեղերի հետ Եվրոպայից գաղթել են Փոքր Ասիա. և վերջապես կա պատմական հիշատակություն թե արդի հայերը (արմենները) - Ե և Ձ դարերին բնակվելիս են եղել արդի Փոքր Հայքում (Հերոդոտ, Ե. 49, 52), Ալիսի ակունքներից արևմուտք, Կիլիկիո և Մատիանացոց միջև, և իրենցից դեպի հյուսիս և արևելք՝ բնակվում էին Սասպիրները և Ալարոդները: Այդ ամբողջ ճանապարհի վրա կան Արմենիա անունով վայրեր. Թեսալիայում Boibeis լճի մոտ կար Armenion քաղաքը (տես իմ «Ստրաբոն Հայոց մասին», Երևան, 1940, էջ 33 և 61). Թեսալիայում կար նույնպես Ormenion քաղաքը (Իլիական II 2, 734), որ և Orminion (Ստրաբոն, գիրք Թ), Բիւթանիայում



կար Ormionion լեռը, Սինոպի մոտ կար Armene նավահանգիստը, Ալիսի ակունքի մոտ կար Armenion լեռը:

Պատմությունը տալիս է մեզ բազմաթիվ ժողովուրդների անուններ, որոնք բնակվելիս են եղել Արևելյան Եվրոպայից մինչև Փոքր Հայք փոխադրված ճանապարհի վրա՝ այն հնագույն ժամանակներում:

Առաջին և գլխավոր ժողովուրդն էին թրակացիք, որոնք բնակվում էին արդի հարավային սլավոնական երկիրներում, այն է Դանուբի հովտում. նրանց սահմանն էր մի կողմից ծովը և մյուս կողմից Մակեդոնիո լեռները, իսկ գլխավոր բնակավայրը արդի Ռումինիան: Հարավում՝ արդի Յունաստանում բնակվում էին պելասգները. Կրետեյում կար մի առանձին ժողովուրդ, որ հասել էր քաղաքակրթության բարձր աստիճանի և ծանոթ էր Կրետացի անունով: Փոքր Ասիայում Արևմտյան կողմում բնակվում էին կարիացիք, լիդիացիք, միսիացիք, տրովադացիք, հյուսիսային կողմում՝ բիթանացիք, պափլագոնիացիք և պոնտացիք. հարավում՝ լիկիացիք, պամփիլիացիք, իսավրիացիք և կիլիկեցիք (կամ հիթիտներ). միջին մասում՝ պիսիդիացիք, փոյուզիացիք, լիկայոնիացիք և կապադովկացիք:

Այս ժողովուրդների ծագման և ցեղակցության մասին զանազան հակասական կարծիքներ կան. հույն պատմիչները (Հերոդոտ և այլն) պատմում են թե Փոյուզիացիք նախապես բնակվում էին Եվրոպայում, ուր կրում էին Briges անունը իրենց ցեղակից Թրակացոց հետ և ավելի հետո Հելլեսպոնտոսի վրայով անցան Փոքր Ասիա և հետզհետե ավելի ներս հառաջացան: Փոյուզիացոց լեզվով գտնված մնացորդները ցույց են տալիս, որ այդ ցեղը իրոք հնդեվրոպական է: Այս հարցով զբաղվել են հատկապես Tomašek, Die alten Thraker և Kretschmer, Einleitung in die geschichte der griechischen sprache (1896), որոնք գտնում են, թե Փոյուզիացիք և Թրակիացիք՝ փոքրասիական ուրիշ ազգությունների հետ (ինչպես Թիւնացիք, Բիթանացիք, Տրովադացիք և այլն) կազմում են մի առանձին ճյուղ հնդեվրոպական լեզվաբնի մեջ:

Պելասգները նախահունական բնիկներն էին և պատկանում էին ոչ-հնդեվրոպական մի ցեղի, որ հետո հունաց տիրապետության և քաղաքակրթության ազդեցությամբ ոչնչացավ: Նրանց ցեղակից, համեմայն դեպս ոչ-հնդեվրոպական մի ժողովուրդ էին նաև Կրետացիք, որոնց գաղթական հատվածներն էին ըստ Հերոդոտոսի՝ Լիկիացիք և Կարիացիք: Այս երկուսին ցեղակից էին նաև Միսիացիք և Լիդիացիք: Թե՛ այս և թե՛ մյուս ցեղերի ծագման մասին լավագույն փաստերը պիտի գտնեինք լեզվական մնացորդների մեջ, բայց դրանք այնքան քիչ և

աննշան են, երբեմն էլ բոլորովին անհայտ, որ անկարելի է դրանց քննությանը որևէ եզրակացության հանգել: Քրեչմեր, իր վերոհիշյալ աշխատության մեջ, այս երկրորդ խմբի լեզուները միացնելով միմյանց հետ, համարում է մի ծագումից, որ կոչում է փոքրասիական (ոչ-հնդեվրոպական): Հիմա սովորություն է կոչել Ասիանական: Ընդհակառակը Bugge, Lykische studien (Christiania, հտ. I 1897, II 1901) գտնում է, որ տրված փաստերը անբավարար են և թե այդ լեզուները ավելի մերձավոր են հայերենի և հետևաբար հնդեվրոպական են:

Ահա այն ժողովուրդները, որոնց հետ հայերը այսպես թե այնպես հարաբերության մեջ մտած պետք է լինեին, նախ քան Հայաստան հասնելը: Այժմ պետք է քննել թե նախահայերը Եվրոպայից մեկնելիս մենա՞կ են դուրս եկել, թե՞ վերոհիշյալ ժողովուրդներից մեկի կամ մի քանիսի հետ (ինչպես պարսիկները՝ հնդիկների հետ, կամ իտալական ժողովուրդները կելտերի հետ), որոնք մնալով ճանապարհի այս ու այն կողմում, ասպարեզ տվին հայերին՝ իբրև առաջընթաց խմբի, թափանցելու մինչև Հայաստան: Քննել այս հարցը, նշանակում է միաժամանակ քննել թե ինչ ցեղակցական կապ կա հայերի և վերոհիշյալ ժողովուրդների՝ կամ որ նույն է հայերենի և նրանց լեզուների միջև:

Հույն մատենագիրներից Հերոդոտոս և Եվդոքսոս հայերին համարում են փոյուզիական սերունդ կամ հատված, և լեզվով էլ նույն կամ նման: Հերոդոտոս իր պատմության մեջ (է.73) հայերին կոչում է Փոսպոն և ասում է թե «Հայք սերունդ են փոյուզիացոց և լեզուաւ բազմօք փոյուզերէն խօսին» (Αρμένιοι δὲ τὸ μὲν γένος ἐκ Φοσυίας καὶ τῆ φωνῆ πολλά φοσυρίζουσι): Դիոնիսիոս Ալիկառնացի ևս հայերին համարում է Փոյուզիացիների հետ համալեզու և Քսերքսեսի պատերազմի մասին խոսելիս ասում է թե հայերն էլ պարսից բանակում զինված էին Փոյուզիացոց նման ձևով: Նոր քննիչներից Քրեչմեր, իր վերոհիշյալ աշխատության մեջ (էջ 208) և Meyer, Geschichte des Alterthums (1893, հտ. II, էջ 41, 58) գտնում են, որ հայերը Թրակացոց ու Փոյուզիացոց հետ կազմում են մի՛ ցեղ, նախապես բնակվում էին Թեսալիոն հյուսիսային կողմում, խոսում էին փոյուզերենի ազգական մի լեզու և երրորդ հազարամյակին փոյուզիական ցեղերի հետ Փոքր Ասիա մտան և Փոքր Ասիոն հյուսիսային մասերով անցնելով (Բութանիա և այլն), եկան Հայաստան: Bugge, Lykische studien ավելի մեծացրեց խնդիրը և

բոլոր փոքրասիական լեզուները հայերենին մերձավոր, հետևաբար հնդեւրոպական և ցեղակից դուրս բերավ: Վերջապես ինքը Jensen, Hittiter und Armenier (Strassburg 1898) կարդալով Չաթերի թողած զանազան պատկերագիր արձանագրությունները, որոնց բանալին անհայտ էր, հետևցրեց, թե Չաթերը նախահայերն են, թե նույն իսկ այդ երկու անունները միևնույն բառերն են և թե հաթ-հայերը Եվրոպայից դուրս գալուց հետո, երկար ժամանակ քնակվել են Կիլիկիայում, հիմնել են այնտեղ սեփական կուլտուրա, գիր ու գրականություն, որից հետո անցել են հաստատվելու արդի Չայաստանում<sup>1</sup>:

Փռյուզ-հայկական ցեղակցության մասին խոսում են նաև Hübschmann (Arm. Gram. I, 405), Meillet (Esquisse d'une gr. comp. էջ XIII), Գարագաշյան (Քննական պատմ. հայոց. Ա էջ 7-10) և Տաշյան (Ուսումն դասական հայերեն լեզվի Ա, էջ 123-173): Սկզբում Չյուբշման (KZ 23, 1877, էջ 48-49) խոսելով հայերենի և փռյուզերենի նմանության մասին, տատանվում էր վճիռ տալ, թեև հակամետ էր ընդունելու, թե «փռյուզերենն ու հայերենը մերձավոր ազգական էին և մյուս փոքրասիական լեզուների հետ մի ընտանիք էին կազմում»: Ավելի ուշ (Arm. Gram. 1897, էջ 405) գրեթե հրաժարվեց այս կարծիքից: Չարցի լուծումը կախված լինելով փռյուզերեն, թրակերեն և հայերեն բառերի նմանությունից, որի վրա հենվել էին նաև նախորդ քննիչները: Չյուբշման և Մեյե գտնում են, որ փռյուզերենից, մանավանդ թրակերենից մեզ հասած բառերն այնքան քիչ և աննշան են, որ կարելի չէ դրանց վրա հիմնվելով հայերենի ցեղակցության մասին դրական վճիռ դուրս բերել. ուրիշ խոսքով եղածը ոչինչ չի ասում: Ավելի վճռական է խոսում Meillet (Les nouvelles langues indo-eur. trouvées en Asie centrale, Paris 1912, էջ 7), որ ասում է թե «առանց վճռական պատճառաբանությանց հայերենը կցում են փռյուզերենին, որ հազիվ թե ծանոթ է»: Գարագաշյան մերժում է ընդունել, թե հայերը փռյուզիական գաղթականներ են, ինչպես կարծել են Ռոլինսոն և ուրիշներ: Չատկապես Տաշյան մի առ մի քննելով մեզ ավանդված թրակերեն և փռյուզերեն բառերը և համեմատելով դրանք հայերենի հետ՝ գտնում է, որ այդ երեքը մեկ ճյուղ համարելու բնավ հիմք չկա. թրակերեն և

<sup>1</sup> Այս բոլորի ամփոփումը տես իմ հոդվածում, որ հրատարակվել է «Վտակ» ժողովածուում, 1901, էջ 229-235:

փռյուզերեն բառերը ավելի նման են հունարենին կամ արիական լեզուներին, քան թե հայերենին: Ահա այս կարգի բառերի մի ցուցակ.

Փռյուզ.	abberet = քերտ
»	azēn, հյգ. azéna մորուք
»	anar այր
»	armán կռիվ
»	bábalon, bámbalon առականք = հուն. phallós
»	Bagaiós Աստված = հայր. бага
»	bonok կինը
»	balēn արքա
»	bedy ջուր = հւլ. voda
Թրակ.	bátēs գետ
»	bend կապել = պր. band, գերմ. binden
»	brilōn սափրիչ = հւլ. brits
»	brūtos մի տեսակ գարեջուր = լտ. (de)frutum
»	brychón կիթառ
Թրակ.-փռյուզ.	bria քաղաք
Փռյուզ.	gállaros, gélaros եղբոր կինը=հուն. gálōs, լտ. glos, gloris, հյ. տալ
Թրակ.-փռյուզ.	germo = ջերմ
Փռյուզ.	gissa քար = գերմ. kies
»	glurós ոսկի, giúrea ոսկյա
»	gordum քաղաք = ռուս. город
»	dáos գայլ = հուն. thō's շնագայլ
Թրակ.	diza ավան, քաղաք = գնդ. daēza
Փռյուզ.	dumos ընկերություն
Թրակ.	hébroz բուծ
Փռյուզ.	éksis, ավելի ճիշտ ezis = հյ. ոզնի, լեթթ. ezis
»	eti ևս = հուն. éti
»	zēkia բանջարեղեն, կանաչեղեն = ռուս. зпак
»	zémelen գերի
Թրակ.	zēlta ոսկի? = ռուս. золото
Թրակ.-փռյուզ.	zemelō մայր երկիր = հւլ. zemlja
Փռյուզ.	zeumán աղբերակ
Թրակ.	zilai գինի = հուն. chális անապակ գինի
»	zordum քաղաք = ռուս. город

- Փռյուզ. ianatéra = ներ = լտ. janitricēs = հուև. enátēr  
 » ios ով, որ = հուև. hós, զնդ. yō  
 » kakun վատ = հուև. kakós  
 » ke և = լտ. que, հուև. kai  
 » kıklēn Մեծ Արջի համաստեղությունը (իբր «սայլ») =  
 հուև. kykla անիվ  
 » knumánei (տր.) գերեզմանին = հարս. kani փոս, սանս.  
 khaniman?  
 » kory'bantes երգող ու պարող քուրճ  
 » mandákes խուրճի կապ  
 » mania գեղեցիկ = լտ. manus լավ  
 » matar = մայր  
 Թրակ. ny'sa նիմֆա = ալբան. nuse հարս  
 Փռյուզ. hóru վեր  
 Թրակ. p̄inon գարեջուր = հւլ. pivo  
 Փռյուզ. semun = հյ. սմին, սմա  
 Թրակ.-փռյուզ. sikinnis պար ի պատիվ Դիոնիսոսի = լիթ. šókti պարել  
 (այս sikinnis բառը, ինչպես նաև նախորդ semun ձևը  
 ցույց են տալիս, ըստ Kretschmer, Einleitung, էջ 229 և  
 230, որ թրակո-փռյուզերենը satem լեզու է հայերենի  
 նման. տե՛ս վերը՝ էջ 24-25):  
 Թրակ. skálmē = դանակ, թուր = հիւլ. skálm թուր:

Ահա և մի ամբողջական հատված փռյուզերեն արձանագրություն-  
 ներից (դնում են նախ հունատառ բնագիրը, հետո լատինական տա-  
 ռադարձությունը և հետո հայերեն բառացի թարգմանությունը).

ιος	vi	σεμουν	κνουμανει	κακουν
ios	ni	semun	knumanei	kakun
ով	ոք	սմին	գերեզմանի	վնաս
αδδακετ		ετιτετικμενος		ειτου
addaket		etitetikmenos		eitu
տայցէ,		անիծեալ?		լիցի.

Ինչպես տեսնում ենք, այս բոլոր բառերի և նրանց հայերեն  
 հոմանիշների միջև ո՛չ մի նմանություն չկա. բառերի մեծ մասը ակներև  
 կերպով հնդեվրոպական է, բայց կապվում են ուրիշ լեզուների հետ և ո՛չ

հայերենի: Հայերենին չափազանց նման է semun սմին, բայց այսքանը  
 բավական չէ ընդունելու համար երկուսի մեջ անձուկ ցեղակցություն:  
 Նույն կարծիքը հայտնում է նաև այժմ Marquart<sup>1</sup>, որ ասում է թե «թեև  
 հնագույն հայերեն հիշատակարանների և փռյուզերենի միջև 12 դա-  
 րերի հեռավորություն կա, բայց և այնպես բնավ նմանություն չկա հայ և  
 փռյուզիական լեզուների միջև»:

Սակայն նույն պատմագիրների վկայությունները չափազանց որոշ  
 են թրակո-փռյուզիական և հայկական ցեղակցության համար, որի  
 կողմն են նաև արժեն ձևով զանազան տեղական անունները Թրա-  
 կիայում, Փռյուզիայում և Փոքր Ասիո հյուսիսային մասերում: Ուստի  
 հաշտեցնելու համար հույն մատենագիրների տվյալները իրակա-  
 նության հետ, կարող ենք ասել, թե հայերը թրակո-փռյուզիականից  
 անկախ մի ցեղ են. նախապես բնակվել են Թրակիո սահմաններում և  
 այդ ժողովուրդների հարևանության մեջ, թրակո-փռյուզիական  
 շարժումից առաջ, կամ հենց դրա պատճառով Թրակիայից անցել են  
 Փոքր Ասիա, իրենց հետամնաց մասերը շփման մեջ են եղել  
 փռյուզիացուց հետ և թերևս ընդունել են նրանց լեզուն, բայց բուն  
 առաջընթաց մասը, որ վերջապես եկել հաստատվել է Հայաստանում,  
 որևէ կապ չունի նրանց հետ:

Փռյուզիական հարցից շատ ավելի դժվար է փոքրասիական մյուս  
 լեզուների հարցը, քանի որ այս լեզուներից՝ շատ ավելի քիչ բան  
 գիտենք, կամ նույն իսկ ոչինչ չգիտենք:

Կապադովկացուց լեզվի համար մի հետաքրքրական աշխատություն  
 ունի Karolides (Γλωσσάριον συγκριτ. έλληνοκαπαδοκικων λέξεων  
 Զմյուռնիա 1885): Այս աշխատության մեջ հեղինակը հավաքում է այն  
 բոլոր բառերը, որոնք գործածական են Կապադովկիո արդի հունաց  
 բարբառում, բայց հունարեն չեն և ենթադրում է, որ դրանք հին  
 կապադովկացերենի մնացորդներն են: Արդ՝ այս բառերը բոլորովին  
 նույն են հայերենի հետ. ինչպես kalakóni - գայլիկոն, peisáchi -  
 փայծաղն, marúkia - մորուք, muzia - մոզի, pagártzi - բաղարջ և այլն:  
 Սակայն այս բառերը հայերենից փոխառություն են և այն էլ ուշ  
 ժամանակի փոխառություն, քանի որ հետին ծայնաշրջության  
 համեմատ են. հմմտ. հատկապես pagártzi, ուր p = հայերեն բ, g=ղ և  
 tz=ջ: Սրանից հետևում է, որ հիշյալ բառերը չեն կարող ապացուցել ո՛չ

<sup>1</sup> Die Entstehung und Wiederherstellung der arm. Nation, էջ 4:

կապաղովկացերենի հնդեվրոպական լինելը և ո՛չ էլ հայերենի հետ ցեղակցությունը:

Ամենից ավելի աղմուկ հանեց գիտական աշխարհում Չաթյան-հայկական հարցը: Jønsen իր բոլոր արդյունքները համաձայն դուրս բերելով հայ լեզվաբանության տվյալների և ծայնական օրենքների հետ, դրանով իր տեսությունը ընդունելի ընծայեց բոլորին: Հյուբերման թեև չէր արտահայտված հրապարակով, բայց համամիտ էր Ենսենին. Տաշյան իր «Ուսումն դասական հայերեն լեզուի» աշխատության մեջ համամիտ և պաշտպան դուրս եկավ. մեր երկրորդական գրողները, որոնց թվում և տողերիս գրողը, հախուռն հափշտակությամբ ընդունեցին նոր տեսությունը, հակառակ այն հանգամանքին, որ ինչպես Meillet ասում է, գտնված նյութը բավական չէր վճռելու հայերենի ցեղակցության հարցը և առ առավելն կարող էր ցույց տալ որ հաթերենը հնդեվրոպական լեզու է:

Բոլորովին նոր և անսպասելի հայտնություններ դուրս եկան վերջերս<sup>1</sup>: 1906 թվին Հուգո Վինգլեր գերմանացի գիտունը պեղումներ կատարեց հիթիթների Հաթթուշաշ մայրաքաղաքի ավերակներում (այժմ Բողազոյ, Անգորայից 145 կիլոմետր արևելք) և գտավ հիթիթ թագավորների պալատը, հիթիթների մեծագույն աստուծո մեհեանը, մի մատենադարան, որ հիմնվել է մ. Ք. 1300 թվին և հետո դարձել հիթիթական պետական արխիվ: Այս բոլորի մեջ երևան եկան մեծ քանակությամբ (մինչև 13,000 կտոր) թրծուն կավե տախտակներ, ծածկված արծանագրությամբ: Ամեն մի տախտակի երկու երեսը գրված է և ունի 40-80 և մինչև 120 տող. դրանից հասկացվում է, թե ինչպիսի մեծ նյութ է երևան հանված հիթիթական պատմության համար:

Պրագայի համալսարանի չեխ պրոֆ. Հրոզնին ձեռնարկեց լուծել հանելուկը: Բարեբախտաբար արծանագրությունները գրված էին ո՛չ թե հիթիթական պատկերագիր անծանոթ գրությամբ, այլ ասորեստանյան բևեռագրերով, ուստի և առաջին անգամից հեշտությամբ կարդացվեցին: Ինչ վերաբերում է գրվածքի իմաստը հասկանալուն կամ թարգմանելուն, այստեղ մեծագույն օգնությունը մատուցին գաղափարագրերը և հիթիթ-սումեր-աքքադերեն մի բառարան, որ գտնվել էր նույն արխիվում: Հրոզնին ասում է, որ ինքը շատերի նման նախապես տրամադրված էր գտնելու ոչ-հնդեվրոպական մի լեզու, բայց սպասածի բոլորովին հակառակը դուրս եկավ:

Մի լեզու, որտեղ wadar նշանակում է «ջուր», kuis նշանակում է «որը» և kuid նրա չեզոքն է, մի լեզու, որտեղ բայը խոնարհվում է yami, yasi, yazi և այլն, չի կարող հնդեվրոպական չլինել: Հրոզնին անցավ Պուլիս և հինգ ամիս աշխատելով թանգարանում պահված քարերի վրա, մանրակրկիտ քննության ենթարկելով ամեն մի բառ, գտած ու վերլուծած ամեն մի գաղտնիքը հազարավոր օրինակներով ու վկայություններով հաստատելուց հետո, վերջապես բոլորովին վստահելով իր գյուտի վրա, համարձակվեց հաղորդել գիտական աշխարհին: Իր այս առաջին հայտարարությունը հրատարակեց 1915 թ. նոյեմբերին, որից հետո Die Sprache der Hethiter սովոր աշխատությունը, որ հիթիթ լեզվի ամբողջ քերականությունն ու համառոտ բառարանն է (Leipzig 1917):

Իր գյուտն անելուց հետո իբր փորձ Հրոզնին սկսեց թարգմանել առաջին անգամ 7 մեծ արծանագրություն, որոնց յուրաքանչյուրն ունի 150-300 տող, կրոնական ու պատմական բովանդակությամբ:

Երկու փորձերն էլ շատ հաջող էին: Հրոզնիի վերլուծությունը այնպես ճիշտ էր, որ ո՛չ միայն նույն իսկ սկեպտիկ գիտունների կողմից ընդունելություն գտավ, այլ և նորանոր փաստերով հաստատվեց ու վավերացվեց: Այսօր բավական մեծ թիվ են կազմում այն գիտունները, որոնք զբաղվում են հիթիթերենով և ունին արդեն զանազան աշխատություններ: Հիշենք ի միջի այլոց Forrer, Johannes Friedrich, Götte, Sommer ևլն: Հիմնվեց մի նոր գիտություն Արևելքի պատմության և հատկապես հնդեվրոպական լեզվաբանության մեջ, այն է՝ հիթիթաբանությունը:

Հիթիթական արծանագրությունները ավելի հաջողությամբ և ճիշտ վերլուծելուն նպաստեցին մի քանի հանգամանքներ. այսպես՝ գտնվեց երեքլեզվյան մի բառարան (սումերերեն-աքքադերեն-հաթերեն), թեև համառոտ. երկրորդ՝ մի մեծ արծանագրություն երկու լեզվով՝ հաթերեն և աքքադերեն, որ պատկանում է հաթերի Հաթթուշիլիշ Ա թագավորին (մ. Ք. 1950 թթ.): Բայց ավելի կարևոր է այն հանգամանքը, որ արծանագրությանց մեծ մասը, համաձայն աքքադերեն արծանագրությանց ընդհանուր սովորության, գրված է սումերական գաղափարանշաններով, այնքան որ շատ տողեր ամբողջապես աքքադերեն են: Այս պատճառով ահա շատ տեղ ինքնին կարդացվում և հասկացվում է: Գաղափարագիր գրության ձևը մի վատ կողմ ունի. նա բավարարում է պատմաբանին, որովհետև սա փնտրում է գրվածքի իմաստը, բայց անօգուտ է լեզվաբանի համար, որ փնտրում է բառի

<sup>1</sup> Տպված է նախապես «Նորք»-ի մեջ, 1925 թ., № 5-6, էջ 389-93:

իմաստի հետ նաև ընթերցանությունը և նույն իսկ հնչական նրբությունները: Ահա այս է պատճառը, որ թեև նորագյուտ հիթիթական արծանագրությունները ամբողջապես թարգմանվեցան, բայց բազմաթիվ հասարակ բառերի ընթերցվածը չիմացվեց. այսպես՝ 1, 2, 3, 4, 5... թվանշանները, «աստված», «թագավոր», «որդի» և այլն բառերը: Սրանք բոլորը պատկերագրով են և ո՛չ տառերով:

Հիթիթական արծանագրությունները սուկ տարեգրություններ չեն, այլ ներկայացնում են մի ամբողջ գրականություն իր զանազան ճյուղերով. այսպես, օրինակ՝ թագավորական գավազանագրքեր, օրենքների ժողովածու, դաշնագրեր, պատմություն, նամակներ, բառարան, աղոթքներ, երեք և չորս լեզվով այբբենարան, մի նշանավոր օրհներգություն՝ 3500 տողից: Ավելի կարևոր է հիթիթական քաղաքակրթության նշանավոր հուշարձանը, այն է՝ նրանց օրենսգիրքը, որ հրատարակեց ֆրանսերեն թարգմանությամբ Հրոզնին (Code Hittite, Paris 1922): Նույնը գերմաներեն թարգմանությամբ հրատարակեց Գիմները, որից էլ կատարվել և հրատարակվել է ռուսերեն թարգմանությունը (Ж. Контене и проф. А. Захаров, Культура востока, Хетты и хеттская культура):

Այս օրինագիրքը, որ իր հնությամբ կարող է միայն համեմատվել Համնուրաբիի օրենսգրքի հետ (2100 մ. Ք.), սրանից 700 տարի ավելի նոր է և գրված է կամ հիթիթական Շուպալիլուլիումաշ (1390-1350) թագավորի օրով, կամ նրա որդի Սուրշիլիշ Բ-ի (1347-1310) և կամ նվազ հավանաբար Հաթթուշիլիշ Գ թագավորի ժամանակ (1300-1270): Օրենսգրքի մեծ մասը վերաբերում է պատժական դատաստանագրքին և պարունակում է սպանության, վիրավորման, գողության, ստրուկ փախցնելու և նման հանցանքների մասին զանազան պատիժներ: Հետաքրքրական է, որ գողության պատիժները առհասարակ տուգանքով են վերջանում. և տուգանքը տարբերվում է համաձայն գողացված առարկայի արժեքի. այսպես՝ տարբեր է ոչխարի գողության պատիժը տավարի գողության պատժից և տավարի գողության պատիժն էլ տարբերվում է համաձայն գողացված տավարի տարիքի: Օրենսգիրքը մի առ մի թվում է այս պատիժները մանրամասնությամբ: Բացվում է ուսումնասիրության նոր աղբյուր՝ իրավունքի նախնական պատմության համար:

Մյուս կարևոր գործերից են.

1. Կոմանայի Պապանիկրի քրմապետի կազմած հիթիթական ծիսարանը, որ բնագրով և թարգմանությամբ հրատարակեցին Sommer և

Eholf<sup>1</sup>: Այստեղ գտնում ենք հետաքրքրական տեղեկություններ հիթիթական կրոնի, աստվածների, զոհաբերության, պատգամախոսության, դևերի և տոնական զգեստավորության մասին:

2. Հաթթյան թագավորների և շրջակա զանազան պետությանց թագավորների միջև կնքված 10 մեծ դաշնագիր՝ աքքադերեն և սումերերեն լեզուներով, որ բնագրով ու թարգմանությամբ հրատարակեց Weidner (Politische Dokumente aus Kleinasien, Leipzig 1923, երկու հատոր):

Լեզվաբանական տեսակետից պարզվեց, որ բոլոր արծանագրությունները մի լեզվով չեն, այլ գրված են 8 տարբեր լեզուներով. սումերերեն, աքքադերեն, կամիսերեն, լուվերեն, պալերեն, խուրիեերեն, հաթերեն և մանդայերեն: Առաջին երկուսը հաթերի համար օտար, մյուսները տեղական լեզուներ են (Hrozny, Über die Völker und Sprachen des alten Chatti-Landes, Boghasköi-Studien, № 5): Ամենազխավորն է՝

1. Կամիսերենը (անունը ենթադրական է. կոչում են նաև կաներեն, կանիսերեն, նեսերեն կամ հաթերեն), որով գրված է արծանագրությանց մեծագույն մասը: Կամիսերը, ինչպես նրանց լեզվի քերականությունը ցույց տվեց, հնդեվրոպական ժողովուրդ են. նրանք մ. Ք. երրորդ հազարամյակի վերջում արշավեցին Փոքր Ասիա և նվաճելով տեղական ժողովուրդներին, տեղ դարձան նրա կենտրոնական մասին: Ավելի հետո նրանք առաջացան դեպի հարավ և իրենց տիրապետության տակ առին Կիլիկիան, Ասորիքը և Միջագետքը: Բաբելական ժամանակագրության մեջ հիշված է, թե Բաբելոնի առաջին հարստության (2225-1926) վերջին շրջանում Հաթերի թագավորը արշավեց Ասորեստանի վրա: Այս թվականը հիմք է ծառայում ճշտելու նրանց նախնական գաղթը:

2. Հաթերեն. — Հիթիթ (ավելի ճիշտ խաթթի) կոչվում են տեղական հին նախաբնիկները, որոնց լեզվով գտնված կան 50 կտոր արծանագրություն, շատը կամիսերեն թարգմանությամբ միասին: Այս լեզուն մյուս բոլորից տարբեր է և ունի նախամասնիկային դրություն. սրանից հետևում է, թե այդ նախաբնիկները հնդեվրոպացի չեն: Մյուս տեղական ժողովուրդներից են՝

3. Մանդայեցիներ, իրանական ժողովուրդ, որ Մարաստանից գաղթել է մ. Ք. 3-րդ և 2-րդ հազարամյակին, ըստ ասորեստանյան

<sup>1</sup> Das Hethitische Ritual des Papanikri von Komana, Leipzig, 1924.

ժամանակագրության: Սրանց լեզվով գտնված արձանագրությունները քիչ են, բայց ցույց են տալիս իրանական բնույթը:

4. Խարրի կամ Յուրրիներ (hurli-li), որոնք պատկանում են միտանի ցեղին. սրանց լեզվով գրված արձանագրությունները շատ չեն: Սեծագույնը վերոհիշյալ 3500 տողանոց օրհներգն է. լեզուն ներկայացնում է միտաներենի մի բարբառը. իսկ ըստ Յրոզնիի հնդեվրոպացի չեն:

5. Պալա (Pala), որոնց լեզվով շատ քիչ բան կա գրված: Ըստ Յրոզնիի հաթյան գաղափարագրերն են, որ նույնպես հնդեվրոպական են:

6. Լուվ, որոնց լեզվով ծանոթ է միայն 700 բառ և երկլեզվյան մի բնագիր լուվերեն-կամիսերեն: Կամիսերենին շատ մոտիկ մի բարբառ է: Լաի կամ luya հնագույն ցեղն է, որ շատ մոտիկ է Պալաին:

Հնդեվրոպական եկվոր Կամիսները տիրելով այս բոլոր ժողովուրդներին և պարտադրելով նրանց կամիսերենը, միևնույն ժամանակ մեծապես ազդվեցին տեղական լեզուներից. այնպես որ կամիսերենը թեև հիմնական բառերով ու քերականությամբ հնդեվրոպական է, ինչպես հայերենը, բայց հայերենի պես ունի իր բառարանում օտար բառերի մի մեծ թիվ: Կամիսները քաղաքակրթական տեսակետով ընկան Ասորեստանցոց ազդեցության տակ և առին նրանցից բևեռագրական արվեստը: Ինչպես գիտենք, բևեռագրության հնարիչները եղել են Սուներները, որոնք Բաբելոնի նախասեսնական բնիկներն են: Սուներներից բևեռագրությունը անցավ եկվոր սեմականներին, բայց այդ գրությունը այնպես էր կազմված, որ առանց սուներական լեզվի գիտության, անկարելի էր որևէ բան արձանագրել. ուստի Ասորեստանում և Բաբելոնում միշտ սովորում էին սուներերենը՝ իբրև գիտական կամ ուսումնական լեզու: Այսպես եղավ նաև Հաթիների երկրում: Նմանապես աքքադերենը այն ժամանակվա Արևելքի դիվանական լեզուն էր և միջազգային դաշնագրերը կնքվում էին այս լեզվով: Ահա այս պատճառով Կամիսները ստիպված էին իրենց արձանագրությանց մեջ գործածել սուներերեն և աքքադերեն լեզուները, ինչպես որ տեղական պահանջներին էլ բավարարություն տալու համար՝ գործ էին ածում մանդայերեն, խարրիերեն, լուվերեն, պալայերեն և նախահաթերեն լեզուները:

Հիթիթական նոր գիտությունը կարևոր է ընդհանուր հնդեվրոպական լեզվաբանության և մասնավորապես հայերենի տեսակետով: Նախ՝ ջնջված է արդեն այն ենթադրությունը, թե հաթերը հայեր են. 2) Հնդեվրոպացոց հնագույն հիշատակությունը, որ համաձայն ասորեստանցոց Սալմանասար թագավորի արձանագրության հասնում էր

մինչև 935 թիվը, հիմա շատ ավելի հնանում է. ԺԴ դարի նորագյուտ մանդայական արձանագրությանց մեջ արդեն հիշվում են Ինդրա, Վարունա և Միտրա հնդիկ աստվածությունները. և եթե հնդեվրոպացի Կամիսները ասորեստանցոց մոտ հիշված են 1926 թվից առաջ, ուրեմն նրանց զաղթը և Փոքր Ասիայում հաստատվելը սրանից շատ ավելի հին է: Դրա համար էլ վերևում նշանակեցինք Ս. Բ. 3-րդ հազարամյակի վերջում:

Ամփոփելով այս բոլորը, մենք հասնում ենք հետևյալ եզրակացության.— Փոքր Ասիայում բնակվող ժողովուրդների հնագույն խավը հնդեվրոպացի չէ. ավելի հետո եվրոպայից եկել են հնդեվրոպական ցեղերից զանազան ալիքներ, ինչպես կամիսները, հայերը և փոյուզիացիք. հաստատված չէ թե այս ցեղերը միևնույն ճյուղին են պատկանում, թեև բոլորն էլ հնդեվրոպացի են:

Ինչ որ էլ լինի, հայերը ապրելով այս զանազան ցեղերի հարևանության մեջ, անկարելի է, որ կրած չլինեն նրանց ազդեցությունը՝ թեկուզ փոքր չափով: Այս ազդեցությունը մենք երևան կարող ենք հանել լեզվի միջոցով: Համաձայն այն մեթոդի, որ հիշեցինք նախորդ գլխում, եթե մենք հայերեն լեզվից դուրս բերենք նախ՝ բոլոր բնիկ բառերը, որոնք հայերը ունենին եվրոպայում եղած միջոցին, և երկրորդ՝ բոլոր այն փոխառյալ բառերը, որոնք հայերը ձեռք բերին Հայաստան հասնելուց հետո (խալդերեն, ասուրերեն, վրացերեն, ասորերեն, պարսկերեն, հունարեն, լատիներեն և այլն), մնացյալը կլինի համազունարն այն բոլոր փոխառությանց, որ հայերը կնքել են փոյուզերենից, թրակերենից և բոլոր փոքրասիական լեզուներից: Այս բանը դժբախտաբար կապված է երեք դժվարության հետ. նախ՝ որովհետև համազունարը պատկանում է բոլորին, ուստի մենք չենք կարող որոշել թե ո՞ր բառերն են պատկանում փոյուզերենի, կամ թրակերենի, կամ կամիսերենի և կամ մյուս փոքրասիական ժողովուրդների լեզուներից մեկին կամ մյուսին. քանի որ այդ լեզուներից ո՛չ մեկի մասին բավարար ծանոթություն չունինք: Երկրորդ՝ փոյուզերեն, թրակերեն և կամիսերեն լեզուները լինելով հնդեվրոպական և որոշ չափով մերձավոր հայերենի, վախ կա որ այդ լեզուներից եղած փոխառությունները իրենց հնդեվրոպական գույնի պատճառով խառնված լինին բնիկ հայերեն բառերի մեջ, որով մի կողմից այդ փոխառությունները կմնան անհայտ և մյուս կողմից՝ բնիկ հայերեն կոչված բառերի մի մասը իրոք բնիկ չի լինիլ: Երրորդ՝ ավելի մեծ դժբախտությամբ՝ խալդերեն լեզուն մեզ հայտնի չէ, նույն իսկ նրա ընդհանուր նկարագիրը մեզ անծանոթ է.

հետևաբար, մեր համագումարը չի կարող ճիշտ լինել և նրա մեջ կլինին բոլոր փոքրասիական լեզուների հետ նաև խալդեերենից փոխառյալ բառերը: Վերջին ճշտագույն հաշվով՝ եթե ուրեմն հայերեն լեզվից դուրս բերենք ծանոթ լեզուներից փոխառյալ և բնիկ հայերեն բառերը, մնացյալը կլինի Փոքր Ասիո ոչ-հնդեվրոպական լեզուներից + խալդեերեն լեզվից փոխառյալ բառերի համագումարը: Այս համագումարը բաժանելու և յուրաքանչյուրին իր ճիշտ բաժինը տալու համար, մենք առայժմ միջոցներ չունինք և դատում ենք հետևյալ ձևով.

ա) Այն բառերը, որոնց փոյուզիական համագորը հայտնի է, պատկանում է բնականաբար փոյուզիական փոխառությանց շարքին:

բ) Այն բառերը, որոնք թեև հնդեվրոպական ձև ունին, բայց ճշտով չեն համապատասխանում հայերենի ծայնական օրենքներին, համարում ենք փոյուզերեն կամ ուրիշ որևէ փոքրասիական հնդեվրոպական լեզվից փոխառություն:

գ) Որովհետև հայերը շատ ավելի մեծ շփում են ունեցել խալդերի հետ, որոնք հայերից շատ ավելի բարձր քաղաքակրթություն, գիր ու գրականություն ունեին և որոնց հետ միախառնվելով հետո մի ազգություն կազմեցին, ուստի և փոխառությունների մեծ մասը պատկանում է խալդեերենին. հետևաբար այն բոլոր բառերը՝ որոնք նախորդ երկու պայմաններից դուրս են մնում, համարում ենք խալդեերեն:

Այստեղ պիտի հավաքենք թրակո-փոյուզիական և փոքրասիական փոխառությունները, խալդեերենները թողնելով հաջորդ գլխին:

1) Աստուած, նույն է թրակո-փոյուզիական այն նշանավոր աստվածության հետ, որ հույն մատենագիրները հիշում են Սաբազիոս, Սաբաձիոս (Σαβάζιος) և այլն ձևերով: Այս աստվածության անունը հատկացվեց հետո Բագոսին: Հայերենի մեջ գերագույն աստվածության անունն էր, դրա համար էլ հետո ընդհանուր իմաստ ստացավ և քրիստոնեության ժամանակ նույն իսկ հնդեվրոպական բնիկ հայկական դիք բառը մոռացության մատնեց:

2) Սայլ, որի հին ձևը պիտի լինի \*satil. նույն է հունարեն *sátilla* «բույլք աստեղաց, Մեծ Արջի համաստեղությունը», *satine*, հոգ. *satina* «սայլ, կովի կառք»: Հունարեն ձևերը փոքրասիական ծագում ունին և համարվում են փոյուզիական փոխառություն: Մեր բառը համապատասխանում է իր երկու նշանակություններովն էլ. որովհետև հայերեն սայլ նշանակում է ոչ միայն «եզան կոշտ կառքը», այլ և «Մեծ և Փոքր Արջի համաստեղությունները»:

3) Փանդիան, հին հայ վիպասանների նշանավոր երաժշտական գործիքն է, որ կոչվում է նաև քանդիան կամ քամփիան. սա մի տեսակ թելավոր նվագարան էր, որի կազմությունը հայտնի չէ: Բառիս հետ բոլորովին նույն են լուդիարեն *pandûra*, *pandûrion*, *panduris* «երեք լարով քնար», վրաց. փանտուրի, փանդուրի, թուշ. և չեչեն. փանդուր «լարավոր նվագարան», օսեթ. *fändur*, *fändir* «երկու լարով կիթառ»: Փոքր Ասիայից բառն անցել է հույներին և տվել է *pandûra*, *pánduron* «երեքարյան քնար» (հունաց մեջ ավանդություն կար միշտ, թե փանդիան Փոքր Ասիայից է եկած): Հունարենից ձևացել են լատ. *pandura* և թրք. *pandura*, որի միջոցով էլ բուլղար. *pandura*, սերբ. *pandura*, *pandur*, *bandur*, ուկրայն. *banduro* «լարավոր նվագարան կամ կիթառ»:

4) Ագարակ.— այս բառը շատ նման է հնչում հնիս. *ag'ro* «արտ, անդաստան, ագարակ» բառին, որի հայերեն ժառանգն է արտ: Ըստ ձևի ագարակ չի կարող հայերեն լինել. և որովհետև բոլորովին նման է նախորդին, ուստի պետք է համարել փոխառյալ: Փոխառությունը չի կարող լինել իրանյան լեզուներից (սանս. *ágra*) իր գ ծայնի պատճառով, այլ պատկանում է արևմտյան խմբին (հուն. *agros*, լատ. *ager*). հետևաբար պետք է դնել փոյուզիականից կամ կամիսերենից, (եթե սակայն սումերական *agar* «դաշտ» բառը չէ):

5) Աղիս.— այս բառին նման են վրաց. *ալիզի* և պրս. *axiz*. բայց երկուսն էլ փոխառյալ են հայերենից: Ավելի կարևոր է Հեսիքիոսի ավանդած *álips* «ժայռ» բառը, որ կարող է մեզ մատնանիշ անել փոքրասիական ծագում:

6) Արագիլ.— պետք է կցել հունարեն *pelargós* հոմանիշին: Այս հունարեն բառը թեև ստուգաբանվում է *pelós* «սև» և *argós* «սպիտակ» բառերից, բայց դա անշուշտ ժողովրդական հարմարանք է: Բառի հին ձևը պետք է դնել \**peraglós* կամ \**paraglós*, որ տեղափոխությամբ տվել է *pelargós*: Փոքրասիական ծագումով բառ է և նույն աղբյուրից է նաև հայերենը:

7) Կարիճ.— փոխառյալ է փոքրասիական մի լեզվից, որից է նաև հունարեն *karís*, *karidos* «խեցգետին»: Երկու իմաստների նույնության համար համեմատել հայերեն կարիճ, որ Ղարաբաղի բարբառով նշանակում է նաև «խեցգետին». նույնպես լատիներեն *noëa* «կարիճ» և «խեցգետին», իսկ արաբերեն *'aqrab* «կարիճ» և *'aqrab-al-ma* «խեցգետին», որ է «ջրի կարիճ»:

8) Սեխ.— այս բառին նման է հնչում հունարեն *sekys* «վարունգ, սեխ կամ դղում», որի ծագումը անստույգ է. հավանական են համարում կցել

հին սլավոնական *tyky* «դղում» բառին և դնում են թրակո-փոյուզիական փոխառություն. նույնը պետք է ասել նաև հայերեն բառի համար:

9) Սրինգ.— այս բառը համարվում է փոխառյալ հունարեն *syrix*, *syringion* հոմանիշից. բայց այս հույն բառերը լիովին չեն ծածկում հայերեն ձևը. մյուս կողմից հույների մեջ կար ավանդություն՝ թե սրինգը փոքրասիական կամ փոյուզիական ծագում ունի: Ըստ հունական դիցաբանության Սրինգը փոյուզիական ծագումով *հիմֆա* էր: Ապոլլոնը սիրահարվեց նրա վրա. *հիմֆան* փախավ. Ապոլլոնը հետապնդեց. երբ հասվեհաս էր, *հիմֆան* կանգնեց և եղեգ դարձավ. Ապոլլոնը կտրեց այդ եղեգը և սկսեց սիրո երգը նվագել: Ավելի հարմար է ուրեմն հայերեն սրինգ դնել ո՛չ թե հունական, այլ փոյուզիական փոխառություն:

Այս փոխառությունները՝ որ նշանակեցինք վերևում, թվով չափազանց քիչ են, բայց որակով, այսինքն իրենց կուլտուրական արժեքով՝ շատ բարձր:— Աստված բառը բովանդակում է իր մեջ ամբողջ կրոնական ու դիցաբանական աշխարհը. փանդիոն ու սրինգը ներկայացնում են ո՛չ միայն երաժշտությունը, այլ և հին հայոց վիպասանությունը, այսինքն անգիր բանահյուսությունը. սայլը և ազարակը ո՛չ միայն ներկայացնում են ամբողջ գյուղական տնտեսությունը, այլ և սայլը նշանակելով Մեծ Արջի համաստեղությունը, ներկայացնում է հին հայոց աստղաբաշխական գիտությունը: Այս տեսակետով փոյուզիական այս փոխառությունները մեծ արժեք ունին և ենթադրել են տալիս իրենց հետևից փոխառությունների մի ուրիշ շարք, որ սակայն գիտության արդի միջոցներով անկարող ենք ճշտել ու որոշել:

Ինչպես Միջերկրյան, նույնպես և թրակո-փոյուզիական փոխառությունների շարքում կարող ենք գտնել թե՛ ուղղակի և թե՛ անուղղակի փոխառություններ: Ուղղակի կարող ենք կոչել վերոհիշյալ բառերը, որոնք ձևով տարբեր են հունարենից և ցույց են տալիս շատ հին ծագում: Սրա հակառակ, շատ ավելի նոր և հունականի միջոցով են փոխ առնված աղեկատ «թել մանելու իլ» (հունարեն *alekátē*), միթր կամ միտր «եպիսկոպոսական թագ» (< հն. *mitra*) և այլն, որոնք ըստ հունագետների բնիկ հունարեն բառեր չեն, այլ փոքրասիական փոխառություն:

Լեզվաբանական տեսակետով շատ կարևոր է առիծ (հնագույն ձևը առեւծ) բառի ծագումը:

Այս անասունը հենց Նոր քարի դարի շրջանին Եվրոպայի ամենամեծ մասից վերացած էր. չկար նաև հնդեվրոպական նախահայրենիքում. այս պատճառով էլ հնդեվրոպական լեզուների մեջ մի և ընդհանուր բառ

չկա առյուծի մասին: Ավեստայում դեռ առյուծ չէ հիշված. սանսկրիտը ունի *simhás* բառը, որի հետ ծագմամբ միանում է հայերեն ինձ. այս երկուսը միասին ենթադրում են հնիս. *singha* ձևը, որ անշուշտ փոխառյալ է մի ո՛չ-հնդեվրոպական հին լեզվից, քանի որ հնդեվրոպացոց մոտ առյուծ չկար: Եվրոպական լեզուներում շատ տարածված է մի ուրիշ բառ, որ լտ. *leo*, հրգ. *lewo*, գերմ. *Löwe*, լիթ. *lėvas*, հւլ. *lėvė*, միռլ. *leo*, հկիմր. *leu* և հուն. *léōn*, *līs* ձևերն ունի: Սրանց բոլորի մայրն է հունարենը, որից փոխառյալ է լատինը և սրանից էլ բոլոր մյուս եվրոպական ձևերը: Բայց հունարենն էլ փոխառյալ է Միջերկրական լեզվից, որից ծագել են նաև եբր. *layiš*, *labty*, ասուր. *labbu*, եգիպտ. *ruabu*, խպտ. *laboi*, արաբ. *labuat* ևլն: Բալկաններում ուշ ժամանակ կային դեռ առյուծներ. ինչպես որ Յերոզոտն էլ հիշում է Քսերքսեսի ժամանակ, Մակեդոնիայում (VII 125): Յույն բառի փոխառությունն էլ ուշ ժամանակից է: Յայերն էլ իրենց ճանապարհի վրա գտան առյուծը և տվին նրան այս անունը՝ հանելով հնդեվրոպական *reug*՝ արմատից, որ նշանակում է «մռնչել»: Առյուծը գերազանցապես մռնչող գազանն է: Բայց հայերենի մեջ *reug*՝ արմատը առանձին և բայական արժեքով գոյություն չունի: Սրանից հետևում է երեք բան. 1) եթե հայերը կազմել են առիծ բառը և չեն ընդունել համատարած *leo* բառը, ուստի Միջերկրական շրջանից էլ ավելի վերև, Թրակիայում տեսել ու ճանաչել են այդ գազանը. 2) որ *reug*՝ «մռնչել» արմատը այդ հնագույն ժամանակ հայ լեզվում գոյություն ուներ դեռ իր բայական իմաստով. 3) եթե ոչ, ուրեմն առիծ բառը հայերեն չէ, այլ փոխ է առնված թրակերենից, ըստ որում Թրակիայում այն ժամանակ առյուծներ կային և թրակերենումն էլ համապատասխան մի բառ պիտի գտնվեր:

Մեզ մնում է խոսել հատկապես հաթերեն լեզվի մասին և որոնել թե ի՛նչ կապ կա հայերենի և այդ նորագյուտ հաթյան լեզուների միջև:

Հաթյան լեզուներից ամենագլխավորը, այ՛ն՝ որով գրված են արձանագրությունների մեծագույն մասը և որ ոմանք պարզապես հաթերեն, ուրիշներ կամիսերեն կամ նեսերեն են կոչում, ինչպես վերևն էլ ասացինք, հայտնապես հնդեվրոպական լեզու է:

Դնում ենք այստեղ մի համառոտ բառացանկ այդ լեզվից՝ ցույց տալու համար ընթերցողներին՝ նրա և ուրիշ հնդեվրոպական լեզուների նմանության աստիճանը: (Ցանկի մեջ յուրաքանչյուր կամիսերեն բառի դեմ դրված է իր հայերեն նշանակությունը. եթե հայ բառը ծագմամբ էլ



Ուրյն է կամիսական ձևի հետ, երկուսի միջև դրված է = նշանը. իսկ եթե ոչ՝ հայերեն նշանակությունից հետո՝ փակագծի մեջ դրված է ցեղակից հայերեն կամ մի ուրիշ լեզվով համապատասխան բառը):

### Ցանկ կամիսերեն բառերի

akalas = ակն, աչք (լտ. oculus)  
ap, ēp առնել, հափշտակել (ափ)  
āppa յետ, յետևը (ապա)  
arraš յետույք (= հուն. órros)  
dāi = դնել  
ēd = ուտել  
ēšhar = արիւն  
gaəna = կանացի  
genu = ծունկ  
gimmanza = ձմեռն  
hannaš մեծ մայր (= հանի)  
hapātiš վասսալ (= հպատակ)  
hapatiya լսել, հնազանդիլ (= հպատակիլ)  
hark քանդվիլ (= հարկանիլ)  
handais տաքություն, ջերմություն (= խանդ)  
harganu աւերել (= հարկանել)  
hastai = ոսկր  
hatta ծակել, կտրել (= հատանել)  
huhhaš մեծ հայր (= հաւ)  
hulaliya փաթաթել (= ոլորել?)  
imma այժմ (= հիմա)  
ipullis «vagina» (= գվռ. պլլիկ)  
išpar ոտնակոխ անել, ջարդել (= սպառնալ)  
iskalla = ցելուլ  
kardi = սիրտ  
kuen զարնել, սպանել (= հյ. գան)  
laman = անուն  
lukka այրել, վառել (= լուցանել)  
maldiyat աղոթեց (= մաղթել)

mällā աղալ (= մլաղաց)  
maninkuwanza կարծ (= մանր)  
mashuil = մուկն  
mekkis = մեծ  
mer = մեռանիլ  
nekumanza = մերկացյալ  
nepis երկինք (= ամպ, ռուս. небо)  
newah նորոգել (= ռուս. новый, հյ. նոր)  
pahhur = հուր  
palhiš լայն (= հոլ «մերկ, բաց»)  
parā մոտը, քովը (= առ)  
pettar թել (= փետուր, թիռ, թեր)  
samanas հիմնարկեք (= հիմն)  
sipant զոհել (= սպանդ)  
siptamis = եօթներորդ (լտ. septem)  
sittar = աստղ (պրս. sitāra)  
taks միացնել, շինել կլն (= թեքել, լտ. texo)  
tarasas տեմդ (= պրս. t̄ab>հյ. տապ)  
tarkummiya = թարգմանել  
tri = երեք (ռուս. три)  
tunakalas արեգակ  
tuwa հեռու (= հուն. dfān շատոնց)  
ūk = ես (լտ. ego)  
unutu աման (= անոթ?) (սումերական փոխառություն)  
wā, wē = զալ, երթալ  
wātar = գետ, ջուր (սաքս. watar)  
warā այրել (= վառել)  
warsas անձրև (= սանս. varšá)  
wēs հագնել (լտ. vestis)  
wās = գնել (սանս. vasná)  
yugan = լուծ (սանս. yugám)  
zik = դու (հուն. sy)

Բուն հաթերենից հետո, Յրոզնին ձեռնարկեց լուծելու նաև մեհե-  
նագիր հաթերենը, այն՝ որ ծանոթ էր մեզ Jensen-ի վերլուծմամբ: Իր մի  
աշխատության մեջ (Les inscriptions hittites hiéroglyphiques, 1933-40),

Չրոզնին հաստատեց, որ այս լեզուն էլ հնդեվրոպական է, թեև կրել է ուժեղ ազդեցություն ասիանական լեզուներից:

Ահա մի քանի հնդեվրոպական բառեր այս լեզվից.

- amu ես, ames, emes, meas = իմ
- nas մենք (ռուս. нас)
- tivas = քո (ռուս. твой)
- yas սա, որ, yasyas ով որ (= սա՛նս. yas)
- tuvai = երկու (= ռուս. два)
- asas նստել, asta նստում է
- as լինել (= լտ. esse)
- akvaya ձի (= լտ. equus)
- korna կոտոշ, եղջիւր (= լտ. cornu)
- kuvana = շուն (= հոււն. κύων)
- menulas լուսին (= հոււն. μένη)
- padai = ոտքեր (= լտ. pes, pedis)
- stas տեղ
- vasanasa զգեստ (= լտ. vestis)

Քերականությունից հիշենք aya «անել» բայի խոնարհման գաճազան ձևերը.

ներկ.	ayasa	անում ես
	ayata	անում է
	ayata	անում են
հրմ.	aya	արա՛
	ayatu	թող անե՛
	ayaru	թող արվի՛
կտր.	ayaxa	արի
	ayata	արիր, արեց
	ayamen?	արինք
	ayatana	արիք
	ayata	արին
դերբ.	ayatas	արած
	ayames	արված

Բոլոր վերջավորությունները հնդեվրոպական են և կարելի է գտնել նրանք՝ սանսկրիտի, հունարենի, լատիներենի և այլ հնդեվրոպական հին լեզուների մեջ:

Այս լեզուն է հիթիթական pala լեզուն, որ շատ մոտիկ է լուվերենին, իսկ լուվերենն էլ հաթյան աշխարհի հնագույն լեզուն է<sup>1</sup>:

Ի՞նչ ենք տեսնում, երբ համեմատում ենք այս բառացանկը հայերենի հետ:

Այն սխալ կարծիքը՝ թե հաթերը հայեր են ըստ Ենսենի, և այն ենթադրությունները թե հայերը փոյուզիացոց և փոքրասիական հնդեվրոպացիներին ցեղակից են՝ մեզ սպասել էին տալիս խոշոր մանություններ հայերենի և կամիսերենի միջև: Խորապես հուսախաբված ենք: Կամիսերենը նման է հայերենին այն չափով, որ չափով նման է որևէ հնդեվրոպական լեզու: Նա ո՛չ միայն անձուկ մանություն չունի հայերենի հետ, այլ և պատկանելով հնդեվրոպական լեզուների շրջան խմբին (հմմտ. հաթ. kardi = հյ. սիրտ), բավական հեռանում է հայերենից: Մի լեզու՝ որտեղ գտնում ենք ūk «ես», zik «դու», šumaš «դուք» (պրս. šumā), nāwi «նոր», wātar «ջուր», kinu «այծմ» (պրս. aknūn), dāi «դնել», ēd «ուտել» ևլն, միայն ընդհանրապես մերձավոր է հայերենին և բնավ ավելի չէ, քան հունարենը կամ պարսկերենը:

Բայց եթե կամիսերենը հայերենին անձուկ ցեղակից լեզու չէ, այնուամենայնիվ պետք է վստահ լինել՝ որ կարող է բացատրել մեր լեզվի ինչ ինչ մութ կետերը՝ իբրև շատ հին հնդեվրոպական լեզու: Այս մասին խոսել Արմատական բառարանի և Համեմատական քերականության գործն է: Բայց սրանից դուրս, կարելի է կարծել նաև, որ հայերենը փոխ առած լինի ինչ ինչ բառեր կամիսերենից, լուվերենից կամ մյուս հաթյան լեզուներից: Ըստ որում կարծում են ոմանք, որ հաթյան արձանագրությունների մեջ շատ անգամներ հիշված Hayaša երկիրը, որ կամիսական պետության հակառակորդներից մեկն էր, Հայաստանն է: Այսպեսով հայերը կամիսների կամ հաթերի մոտիկ հարևաններն են: Դեռ հրատարակված չէ կամիսերենի և մյուս հաթյան լեզուների բառարանը, որ խոստացել են Չրոզնին և մյուս գիտունները: Կա միայն Sturtevant-ի Hittite Glossary (Baltimore 1931), որ հաթերենի համառոտ բառարանն է: Կարդալով այս գիրքը, ինչպես նաև այն բոլոր բառացանկերը, որ հրատարակված են նախորդ աշխատությունների մեջ, ես կարողացա գտնել հետևյալ համեմատությունները, որ հիշում են

<sup>1</sup> Հաթերեն արձանագրություններին մի նոր լուծում է առաջարկել Գաբրիել Միքայելյան (Jensen-ից տարբեր) Les langues des Hattis (Déchiffrement des inscriptions hiéroglyphiques), որ հրատարակված է Revue archéologique թերթում (Alep 1931): Այս աշխատությունը չեմ տեսած և չգիտեմ էլ թե ինչ ընդունելություն է գտած գիտական աշխարհում:

վերապահությամբ՝ մինչև այն ժամանակ, երբ կամիսերենի ծայնական օրենքները ճշտիվ կքննվին ու կհաստատվին, և կիրատարակվի հաթյան բոլոր լեզուների ամբողջական բառարանը:

appa	ապա
hatta	հատանել
hulaliya	ուլորել
xunik	խանգարել
paršiia	փշրել
dagan	յատակ
warā	վառել
arriwar	առաւօտ
pettar	փետուր
šarāwanzi	շարաւանդ «կապ»

Այս բառերի մի մասը կարող է բոլորովին պատահական նմանություն ունենալ. մի մասը կամիսերենի հետ ցեղակից միայն լինել, իսկ մի քանիսն էլ ուղղակի փոխառյալ լինել. այսպես են թվում փետուր և վառ բառերը: Իսկ շարաւանդ բառի համար նկատենք, որ կամիսական z ծայնը նախավոր t-ից ծագած լինելով՝ կամիսական šarāwanzi ձևի դեմ մենք կունենանք ավելի հին \*šarāwanŋi, որ բոլորովին նման է հայերենին, և որ սակայն պետք է իրանական փոխառություն լինի թե՛ հայերենի և թե՛ հաթերենի մեջ:

Ամենից ավելի հայերենին նման են համարում հաթերի Մուրշիլիշ անունը՝ որով կոչվում են մի քանի թագավորներ: Դա մեր Մուշեղն է, որ ոչ մի մեկնություն չունի դեռ: Մուրշիլիշ ձևի մեջ շ վերջավորությունը կամիսերեն եզակի ուղղականի նշանն է, որ համապատասխանում է սանս. –s, լտ. –us, հուն. –os վերջավորությանց: Ըստ այսմ պարզ ձևն է Մուրշիլի. սա պիտի տար հայերեն Մուրշիլ կամ Մուրշեղ, և r ծայնի սովորական անկումով՝ Մուշեղ (հմմտ. քարշել>քաշել, պարշտել>պաշտել, խարշել>խաշել և այլն):

Մի այսպիսի հին ու «ազգային» հատուկ անվան փոխառությունը կամիսերենից՝ անշուշտ առանձին նշանակություն ունի, և ենթադրել է տալիս, որ նա մենակը չէ և ուրիշ նմաններ էլ պետք է ունենա:

**Ծանոթ.**— Ամերիկացիք նոր պեղումներ կատարելով Բողագ-քոյից ոչ-հեռու Ալիշար կոչված վայրում, գտան մի անծանոթ լեզու՝

որ խոսում են Անատոլիի մի գյուղում մի քանի ժերուհիներ և որ հաթերենի մնացորդ կարծեցին (BSL 33, №100, էջ 184): Ավելի հետո պարզվեց որ այդ անծանոթ լեզուն Կովկասից գաղթած չերքեզների լեզուն է!

**ԽԱԼԴԵՐԵՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՎՐԱ**

Նախ քան հայերի գաղթը Հայաստան, այս երկիրը բնակված էր մի առանձին ժողովրդով, որ կրում էր Խալդի անունը (ըստ Քսենոփոնի *Χαλδαίοι*): Երկիրը մեկ պետություն չէր կազմում, այլ բաժանված էր զանազան իշխանությանց, որոնցից ամենամեծերն ու նշանավորներն էին՝

- 1) Նաիրի, Վանա ծովի հարավային կողմը.
- 2) Բիայնա, Վանա ծովի արևելյան կողմը.
- 3) Ուրարտու, Վանա ծովի հյուսիսային կողմը:

Այս ժողովրդի ծագումն ու նախնական պատմությունը բնավ հայտնի չէ մեզ. պատմության մեջ առաջին անգամ երևան է գալիս ն. Ք. ԺԴ դարում, Ասորեստանցոց դեմ մղած պաշտպանողական պատերազմներով:

Ասորեստանցիք Միջագետքում կազմելով մի մեծ պետություն, ուզեցին նվաճել իրենց հյուսիսային հարևաններին: Առաջին թագավորը՝ որ արշավեց Նաիրիի վրա, Սալմանասար Ա-ն է (1330-1316), որ Տիգրիսի հովիտով բարձրացավ դեպի Տիգրանակերտի դաշտը. նրա որդին Թիգլաթ-Ադար Ա (1310-1270) արշավեց Կորդվաց աշխարհը. բայց այս արշավանքները թույլ բաներ էին և հաջորդ թագավորները՝ իրենց ներքին կռիվներով զբաղված՝ ստիպված էին մոռանալ Նաիրին:

Ասորեստանցոց պետությունը նորից զորացավ Թազլաթ-Պալասար Ա-ի ժամանակ (1108-1080), որ մի մեծ աշխարհակալ եղավ. երեք անգամ արշավեց Նաիրիի վրա և հասավ մինչև Վանա ծովը, հարկատու դարձնելով այն կողմերի բազմաթիվ մանր իշխաններին:

Սրանից հետո Ասորեստանցոց պետությունը նորից ընկավ. նվաճված ժողովուրդներից Բաբելացիք, Հաթերը, Հրեաները և Դամասկացիք ապստամբելով անկախություն ձեռք բերին. շարժվեց նաև Նաիրին և թոթափելով հարկատվության լուծը՝ անկախ կառավարվեց մոտ 200 տարի:

Ասորեստանցոց թուլացած պետությունը նորոգելու ձեռնարկեց Թուգուլթի-Նինիպ Բ (889-885), որ նորից արշավեց դեպի Նաիրի. իր հաջորդները շարունակեցին իր գործը և նվաճեցին մինչև Միջերկրական ծովը: Նվաճված ժողովուրդների և Ասորեստանի միջև սկսվեց մի մեծ պատերազմ. արևմուտքի բոլոր ժողովուրդները միացան և մի հզոր դաշնակցություն կազմեցին Ասորեստանի դեմ: Ասորեստանցոց թագավորը 21 անգամ արշավեց նրանց վրա և այդ դաշնակցությունը խորտակեց: Նույնպիսի մի դաշնակցություն կազմեցին նաև Խալդիական ցեղերը, որոնց գլուխն անցավ Ուրարտուի Արամե թագավորը (860). դաշնակցության կենտրոնը եղավ Բիայնայի Տուսպա քաղաքը, որի բարձրաբերձ ու անմատչելի ժայռերի վրա հիմնվեց Վանա բերդը: Ուրարտյան թագավորները նվաճեցին արևելքից մինչև Ուրմիո լիճը և Կասպից ծով, արևմուտքից մինչև Կիլիկիա և Ասորիք, հյուսիսից մտան Կուրի հովիտը, իսկ հարավից սպառնում էին նույն իսկ Նինվեին: Այն բոլոր պետությունները՝ որ գտնվում էին Ասորիքի շրջանում, Հաթերը, Կումմուխ, Կարկեմիշ, Մալաթիա, Համաթ, Դամասկոս, Սամարիա, Հրեաստան, Փյունիկե, Փղշտացիք, Տյուրոս, Մովաբի և Ամմոնի փոքր երկիրները և Մարաստան մտան խալդիների դաշնակցության մեջ՝ իբրև վասալ երկիրներ: Եվ այսպես Խալդիան դարձավ Արևելքի ամենամեծ պետությունը: Շատ երկար տևեցին այն պատերազմները, որ մղեցին Ասորեստանցիք, նվաճելու այս երկիրները և խորտակելու դաշնակցությունը. վերջապես ընկավ Կարկեմիշը և Հաթերի պետությունը կործանվեց (717). նրանից քիչ հետո ջարդվեց Ուրարտուի թագավորը Ռուսաս և Խալդերի դաշնակցությունը խորտակվեց (714):

Դրանից հետո Խալդիան ընկավ ու հասավ երկրորդական պետությանց շարքը. իրենց թագավորները խոհեմություն համարեցին ամփոփվել իրենց սահմանների մեջ, երբեմն տարեկան նվերներ ուղարկելով Ասորեստանյան թագավորներին՝ հաշտ ու բարեկամ մնալ նրանց հետ և իրենց բովանդակ ուշադրությունը դարձնել Խալդիո ներքին բարօրության վրա: Այս վիճակը տևեց մինչև Կիմմերների արշավանքը, որ եկավ տակնուվրա անելու Առաջավոր Ասիան:

Կիմմերները հնդեվրոպական մի ժողովուրդ էին, որ բնակվում էին հարավային Ռուսաստանի տափաստաններում, Ազովի ծովի եզերքները: Միջին Ասիայից բարբարոսների մի նոր ցեղ, որ կոչվում է Շակամ Սկյութացի, ճանապարհ ընկավ դեպի արևմուտք: Անցնելով Կասպից ծովի հյուսիսային տափարակներից, Սկյութացի բարբարոսները փռվեցին մինչև Դոնի հովիտը: Կիմմերները զարհուրելով նրանցից՝

փախան զանազան ուղղությամբ (750): Մի մասը մտավ Խրիմ, երկրորդ մասը Թրակիայի և Վուփորի վրայով անցավ Փոքր Ասիա, իսկ երրորդ և ավելի ստվար մասը մտավ Կովկաս: Կիմներներին հետևեցին նաև Սկյութացիք և լցվեցին Կուրի հովիտը, Ուրարտու՝ մինչև Մարաստան, Ասորեստան և Եգիպտոսի սահմանները: Ամբողջ Արևելքը նրանց ասպատակության և ավերումի ասպարեզ դարձավ, բայց հատկապես Խալդիան, որ Սկյութացի և Կիմներ բարբարոսների կենտրոնավայրն էր դարձել: Քաղաքները կործանվեցին, ժողովուրդը ջարդվեց, գաղթեց, երկիրը ավերակ դարձավ:

Այդ միջոցին Խալդիայի սահմանների վրա երկու նոր ժողովուրդներ երևացին. արևելյան կողմում գորացան Մարերը, որոնց թագավորը Կիաքսար՝ նվաճեց Նինվեն, գրավեց Ասորեստանցոց պետությունը (608), ջարդեց Սկյութացիներին և Արևելքից դուրս վտարելով՝ հիմնեց մի գորավոր պետություն: Արևմտյան կողմում ասպարեզ դուրս եկան Յայերը (Արմենները), որոնք այդ ժամանակ բնակվում էին Ալիսի հովիտը: Ցնցվելով Կիմներների և Փոքր Ասիո մյուս ժողովուրդների շարժումից, նրանք անցան Եփրատը և մտան Արածանիի հովիտը: Խալդիները ուժ չունեին դիմադրելու նորեկներին. Խալդիո արևելյան նահանգները՝ իրենց մայրաքաղաքով միասին (Վան, Վասպուրական և այլն) անցան մարաց իշխանության. Խալդիները հետզհետե ետ քաշվեցին դեպի հյուսիս և հյուսիս-արևելք, ասպարեզը թողնելով արևելքից մարերին և արևմուտքից հայերին:

Երկու դար տևեց հայերի առաջացումը. այս ժամանակամիջոցին նրանք կամաց կամաց մեկ կողմից բարձրանում էին դեպի հյուսիս և արևելք, մյուս կողմից իջնում էին դեպի հարավ: Յուսիսից հասան մինչև Կուրի հովիտը, իսկ հարավից անցան Տորոսի լեռնաշղթան և հասան Տիգրիսի արևելյան ճյուղը՝ որ Յայաստանի սահմանն է: Այս երկու դարի ընթացքում հայերը աճեցին և գորացան և այնպես ծուլեցին բնիկներին իրենց մեջ, որ երկու դար հետո արդեն Խալդ ու Խալդիա չկար, այլ կազմվել էր մի՛ ժողովուրդ և մի՛ երկիր, հայ ու Յայաստան:

Լեզուների պատմության մեջ նկատված է, որ երբ մի օտար ցեղ տիրում է մի ուրիշ ժողովրդի և միանում է նրա հետ, թեև իր լեզուն պարտադրում է նրան, բայց ինքն էլ փոխադարձաբար կրում է բնիկների լեզվի և քաղաքակրթության ազդեցությունը. շատ բառեր փոխ են առնվում տիրողների լեզվի մեջ, բնիկների ոճաբանությունը թարգմանվում է նոր լեզվով, վերջապես ամբողջ արտասանության ձևը փոխվում է:

Այս ընդհանուր օրենքից չէր կարող բացառություն կազմել նաև հայերենը. անտարակույս նա մեծապես ենթարկվեց խալդերեն լեզվի ազդեցության և ավելի քան ուրիշ որևէ ազգից՝ կրեց Խալդիների կնիքը, որովհետև հենց Խալդիներն էին, որ կազմեցին նոր հասարակության մի կարևոր մասը: Ահա այս պատճառով հարկավոր է մեզ ծանոթանալ նախ խալդերեն լեզվին ու գրականության:

Խալդիները գրության արվեստին ծանոթացան Ասորեստանցոց միջոցով: Սարգուրի Ա. Բիայնայի թագավորը (835-820) Ասորեստանից բերել տալով վարպետներ, նրանց ձեռքով և Ասորեստանյան լեզվով քանդակել տվեց Վանում մի քանի արձանագրություններ, որոնց մեջ պատմում էր իր քաջագործությունները՝ Ասորեստանցոց թագավորների օրինակով: Նրա հաջորդը Իսպուհնիս (820-800) հիմք դրավ զուտ Խալդյան ազգային գրականության: Այդ օրվանից սկսած՝ Խալդյան թագավորները թողել են մեզ հարյուրավոր մեծ ու փոքր արձանագրություններ խալդերեն լեզվով, որոնց մեծագույնն է Սարգուրի Բ-ի արձանագրությունը 400 տողով: Իսկ հնագույնը, որքան էլ որ հույս ունենանք գտնելու նորանոր, թեկուզ հազարավոր արձանագրություններ, չպիտի անցնի մ. Ք. 820 թիվը, քանի որ այդ ժամանակ արդեն ո՛չ թե խալդերեն, այլ ասուրերեն էին գրվում, ինչպես ցույց են տալիս Սարգուրի Ա-ի քարերը (Sayce, էջ 403):

Այս արձանագրությունները գրված են ասորեստանյան բևեռագիր գրությամբ: Բայց Ասորեստանյան բևեռագրի դրությունը մի չափազանց բարդ ու դժվար բան էր: Իր բազմաթիվ գաղափարանշանները, այբուբենի բազմաձայն արժեքը, միևնույն նշանագրի մերթ իբր գաղափարագիր և մերթ իբր առանձին տառ գործածությունը, մինչև այսօր էլ կազմում են մի անլուծելի հանգույց: Խալդիները ըստ կարելվույն պարզեցին այս դրությունը, դժվարությունները ջնջեցին և դարձրին ըստ կարելվույն տանելի մի վանկային դրություն: Ահա այս գրությամբ էլ գրված են Խալդյան արձանագրությունները:

Առաջին եվրոպացի գիտունը՝ որ զբաղվեց այդ արձանագրություններով, Ֆրանսիացի հայագետ Սեն-Մարտենն (Saint Martin) էր: Մի առանձին հոդվածում՝ որ հրատարակված է Journal asiatique ամսաթերթում (1823 թ.), քննելով Խորենացու նկարագրությունը Վանա բերդի մասին, հետևյալից թե Յայաստանումն էլ պիտի գտնվին բևեռագիր արձանագրություններ և հրավիրեց այս մասին գիտունների հատուկ ուշադրությունը: Իր դրոճամբ, Ֆրանսիայի կառավարության կողմից, երիտասարդ մի ուսումնական, Շուլց (Schulz) գերմանացին, ուղարկվեց

Հայաստան, 1826 թվին, տեղի վրա պրպտումներ կատարելու և այդ արձանագրությունները երևան հանելու: Շուրջ 1828 թվին ուսումնասիրեց Վանն ու իր շրջակաները, և իր կյանքի գնով երևան հանեց 38 հատ բևեռագիր արձանագրություններ: Նա սպանվեց մի քանի քուրդ ավազակների ձեռքով 1829 թ., բայց իր օրինականությունները ֆրանսիական կառավարության ջանքերով եվրոպա տարվեցին և հրատարակվեցին Journal asiatique հանդեսում (հտ. IX, № 52) 1840 թվին:

Շուրջի գտած խալդերեն արձանագրությունները թվով 38 հատ էին, որոնց վրա հետզհետե ավելացան նորերը: Չանագան գիտուններ սկսեցին փորձեր անել վերծանելու այդ արձանագրությունները: Առաջին հաջող վերլուծումը կատարեց Հինքս (Hincks) անգլիացին, 1874 թվին, նույնը ավելի զարգացրեց Ստանիսլաս Գիյան (Stanislas Guyard), 1880 թ. և կատարելության հասցրեց Սեյս (Sayce) անգլիացին, 1882 թվին: Նա հրատարակեց մի ստվար աշխատություն, The Cuneiform inscriptions of Van (JRAS 14, էջ 377-732 և հտ. 20, 1-48), որի մեջ նա տալիս է ոչ միայն խալդիայի աշխարհագրությունը, պատմությունը և կրոնագիտությունը, այլ և խալդերենի քերականությունը, խալդյան արձանագրությունները՝ իրենց ընթերցանությամբ, թարգմանությամբ և վերլուծությամբ, ինչպես նաև խալդերեն լեզվի հատուկ և հասարակ անունների ամբողջական բառարանը:

Խալդյան բևեռագրությանց վերծանման այս դրությունն է, որ այժմ ընդունված է բոլոր գիտունների կողմից: Այս դրությունը հետևյալն է.


Որովհետև խալդյան տառածևերը (թե՛ գաղափարանշանները և թե՛ տառերը), բոլորովին նույն են ասուրականի հետ, ուստի կարողում են Ասորեստանցոց այբուբենով: Այստեղ կարելի էր առարկել, թե տառերի ձևական նույնությունը անհրաժեշտաբար չի ենթադրում նաև հնչման նույնություն. օրինակ՝ ո նշանը թեև կա հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն միևնույն ձևով, բայց հայերենում կարդացվում է օ, ռուսերենում պ, ֆրանսերենում ն: Այսպես էլ կարող էին խալդյան բևեռագիր նշանները նույն լինել ձևով ասուրականի հետ, բայց հնչմամբ տարբեր:

Այս առարկությունը թեև արդարացի է, բայց հերքվում է այն իրողությամբ, որ տեղերի և անձերի հատուկ անունները երկուսի մեջ էլ (թե՛ ասորեստանյան և թե՛ խալդյան արձանագրությանց մեջ) միևնույն ձևով են գրված. օրինակ՝ խալդյան Սարդուրի, Իսպուլիմիս, Ռուսաս, Արգիստիս անունները՝ գրված են ասորեստ. Սարդուրի, Ուշպիմա, Ռուսա,

Արգիստի: Սրանից հետևում է թե երկու լեզվի էլ տառերը միևնույն հնչումն ունին:

Բայց միայն ընթերցանությունը բավական չէր արձանագրությանց միտքը հասկանալու համար. պետք էր իմանալ նաև լեզուն և թարգմանել: Դրան իբրև միջոց են ծառայում բազմաթիվ գաղափարանշանները, և այն որոշիչ նշանները, որոնք ցույց են տալիս հաջորդ բառի արժեքը:

Շատ բարեհաջող մի հանգամանք է մեզ համար այն, որ գաղափարագրեր գործածող ազգերը գաղափարագրերի մոտ նաև բացատրիչ նշաններ էլ են գործածել: Օրինակ եգիպտացիք մարդ նշանակող բառերից և անձնանուններից հետո դնում են ներքևի № 1 նշանը, օձ նշանակող բառերից հետո № 2 նշանը, ընթացք, երթ և այլն նշանակող գոյականներից և բայերից հետո № 3 նշանը, արև, լույս, ժամանակ նշանակող բառերից հետո ☉, կրակից հետո № 5 և նշան և այլն (Roeder, Ägyptisch 1913, էջ 5): Երբեմն էլ նշանները կրկնվում են. օրինակ ws'tn «քայլել» բառից հետո դրվում են № 3 և 6 նշանները:



Այսպես նաև Ասորեստանցիք զանազան բառերից առաջ դնում են զանազան գաղափարանշաններ, որոնք նշանակում են թե հաջորդ բառը մարդո՞ւ անուն է թե՛ աստվածի, քաղաքի կամ երկրի, թե նա շե՛նք է և կամ քարե, փայտե մի առարկայի անուն է և այլն: Իսկ այն բառերը՝ որոնք մնում են այս շրջանից դուրս, բացատրվում են համաձայն իրենց գործածության տեղի, համեմատությամբ այն բոլոր դեպքերի՝ որոնց մեջ նրանք գործածված են և օգնությամբ մյուս բառերի: Կարևոր է հիշել նաև այն հաջող հանգամանքը, որ խալդյան բևեռագիր արձանագրությանց ընդհանուր ոճը նույն է Ասորեստանյան արձանագրությանց ոճի հետ և նախադասությունները ունին միևնույն հորինվածությունը. նախ թագավորը հիշում է իր անունը և հայրանունը, տալիս է իր տիտղոսները, հետո պատմում է իր գործերը, հաճախ

վերջում տալիս է անծօքներ՝ արձանագրությունը քանդել ուզողների հասցեին:

Դնում ենք այստեղ մի օրինակ Սեյսից (եջ 448-9), որով գործնականապես կարող ենք տեսնել արձանագրությանց վերլուծման եղանակը:

Խալդայան արձանագրությանց սիրելի ձևերից մեկը հետևյալն է. (գաղափարանշանները պահում ենք, իսկ վանկագրերը տառադարձում ենք լատինատառ).

ustadi <sup>𐎠𐎢𐎡𐎢</sup> Manaidi <sup>𐎠𐎢𐎡𐎢</sup> xaubi <sup>𐎠𐎢𐎡𐎢</sup> I-kiuni xudadi  
pari <sup>𐎠𐎢𐎡𐎢</sup> Assur-nini <sup>𐎠𐎢𐎡𐎢</sup> Alqani 6421 <sup>𐎠𐎢𐎡𐎢</sup> 𐎠𐎢𐎡𐎢 𐎠𐎢𐎡𐎢  
| <<< i adaki zazgubi adaki >>> | <<< | <<<  
agubi 286 <sup>𐎠𐎢𐎡𐎢</sup> <sup>𐎠𐎢𐎡𐎢</sup> <sup>𐎠𐎢𐎡𐎢</sup> 𐎠𐎢𐎡𐎢 | <<< 2251 <sup>𐎠𐎢𐎡𐎢</sup> | <<<  
paxini <<< 8205 𐎠𐎢𐎡𐎢 suse | <<<

Եթե այս հատվածի մեջ բաց անենք գաղափարանշանների իմաստը Ասորեստանցոց համաձայն, հատվածը կկարդացվի այսպես (վանկագրերը պահելով).

Ustadi երկիրն Մաննա xaubi երկիրն Իրկիունի xudadi pari երկիրն Ասորեստանի երկիրն Ալգանի 6421 անծ-եր adaki zazgubi adaki առողջ-ներ agubi 286 անասուն ձիեր 2251 եզ paxini ներ 8205 ոչխար suse ներ:

Այժմ սրա դեմ դնենք ասորեստանյան արձանագրությանց հետևյալ հատվածը, որ նույնպես նրանց շատ սիրելի ձևերից մեկն է.

«Դագարա երկրից ես մեկնեցա. Բարա քաղաքին մոտեցա. Բարա քաղաքը գրավեցի. 320 նրանց զինվորներից սպանեցի. նրանց եզները, նրանց ոչխարները, նրանց ավարը քշեցի, քաղաքները հրով այրեցի»:

Ասորեստանյան արձանագրությանց մի սովորությունն էլ այն է, որ գաղափարանշանի կողքին հաճախ դրվում է նրա ընթերցումը և կամ նրա արժեքի վերջին 1 կամ 2 վանկը. ճիշտ ինչպես այսօր գրում ենք «2 (երկու)» կամ «2-րդ»: Ըստ այսմ paxini կամ ... paxini, որ դրված է «եզ» գաղափարանշանի կողքին, նշանակում է «եզ», իսկ suse կամ ... suse, որ դրված է «ոչխար» գաղափարանշանի կողքին, նշանակում է

«ոչխար»: Ուրիշ դեպքերում, եթե գտնենք paxini և susi բառերը համապատասխան իմաստով առանձին գործածված, առանց գաղափարանշանի և առանց որևէ նախավանկի հավելման, նշանակում է թե այդ բառերը ամբողջական են և ոչ թե ներկայացնում են միայն վերջին վանկերը:

«Ողջ» բառը մի քանի ուրիշ արձանագրությանց մեջ գործածվելով համանման ձևով, գրված է սակայն ոչ թե գաղափարանշանով, այլ sexeri ձևով: Սրանից հետևում է թե այդ գաղափարանշանը պետք է կարդալ sexeri և կամ թե sexeri նշանակում է «ողջ»:

Այս նույն գաղափարանշանը, որ վերջումն էլ ունի հոգնակիի նշանը, վերաբերում է անշուշտ նախորդ «անծ» բառին, որ նույնպես հոգնակի է: Այժմ նկատի ունենանք adaki բառը որ կրկնված է երկու անգամ և zazgubi, agubi բառերը, որոնք հավասարապես վերջանում են -bi: Բազմաթիվ արձանագրությունների համեմատությունից պարզ երևում է, որ այս վերջավորությունը բայի եզակի առաջին դեմքի նշանն է: Այս բոլոր կետերը միասին ի նկատի առնելով պիտի տեսնենք, որ մեր առաջ ունինք ասորեստանյան սովորական մի դարձվածի խալդայան թարգմանությունը. այն է՝ «մարդկանց մասամբ կոտորեցի, մասամբ ողջ ողջ բռնեցի»:

Այժմ եթե նկատենք, որ ուրիշ արձանագրությանց մեջ paru արմատը նշանակում է «շարժվել», xaubi (եզակի առաջին դեմքի վերջավորությամբ) նշանակում է բազմաթիվ դեպքերում «նվաճեցի», -di ներգոյականի վերջավորությունն է և ustabi (եզ. առաջին դեմքի վերջավորությամբ) նշանակում է «մոտեցա», - կարող կլինինք վերի հատվածը թարգմանել այսպես.

«Մոտենալով երկիրն Մաննայի, նվաճեցի երկիրն Իրկիուն. դուրս եկա երկրից Ասորեստանի երկրից Ալգանի, 6421 անծ մասամբ կոտորեցի, մասամբ ողջ ողջ գերեցի, 286 ձի, 2251 եզ և 8205 ոչխար»:

Ահա այսպես են վերլուծվել խալդայան բևեռագիր արձանագրությունները, որոնց ամբողջական հավաքածուն հրատարակվեց վերջերս Գերմանիայում, - Corpus inscriptionum chaldaicarum, հրտր. Lehmant-Haupt, Berlin 1928: Sayce-ի աշխատությունը առաջ տարին ուրիշ քննիչներ՝ նույն ոճով. նորագյուտ արձանագրություններ ավելացրին բառերի և օրինակների թիվը, կամ կասկածելի տեղերը ճշտեցին: Այնպես որ խալդերենի ուսումը բավական առաջ գնաց: Մի քանի տարի առաջ հրատարակվեց խալդերենի մի կոկիկ քերականություն (J. Friedrich, Einführung ins Urartäische, Leipzig 1933, էջ 70), մի քանի

բնագիրներով միասին, նրանց թարգմանությամբ և մանրամասն բացատրությամբ:

Հանելով այս աշխատությունից՝ տալիս ենք այստեղ խաղերենի ամբողջական քերականությունը:

Խաղերենի մեջ անունները (գոյական և ածական) ընդհանրապես վերջավորվում են ձայնավորով, մեծ մասամբ *i*, քիչ անգամ *a*, *e*, *u*. ինչ *pili* «ջրանցք», *auri* «տեր», *patari* «քաղաք», *alsui* «մեծ», *kiura* «երկիր», *aše* «այր մարդ» և այլն:

Հոլովումը կազմվում է հետամասնիկներով: Խաղերենը ունի երկու թիվ՝ եզակի և հոգնակի, և 7 հոլով՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական, ներգոյական և նախդրիվ հայցական: Գործիական չէ հայտնաբերված:

Ուղղականի մասնիկն է եզ. և հոգ. *še*, հայցականը եզ. *ni*, հոգ. *li*, սեռական և տրական եզ. *i*, *ei*, *iei*, հոգ. *auē*, բացառականը՝ եզ. *ni*, հոգ. *ani*, ներգոյականը՝ եզ. *a*, հոգ. *a* (անվան բունի ձայնավորի ջնջմամբ), նախդրիվ հայցականը՝ եզ. *edi*, հոգ. *aidi* կամ *ašte*:

Այս մասնիկները բնականաբար միանալով անվան վերջին ձայնավորի հետ (*a*, *e*, *u*), կրում են աննշան փոփոխություններ: Անտես անելով այդ մանրամասնությունները, տալիս ենք այստեղ *esi* «տեղ, վայր» բառի հոլովման պատկերը (\*ները ինձանից կազմված ձևերն են ըստ կանոնի, թեև չեն ավանդված).

<b>եզ.</b>		<b>հգ.</b>
Ո. * <i>esise</i>		* <i>esise</i>
Հ. * <i>esini</i>		* <i>esili</i>
Ս. * <i>esiei, esil</i>	}	* <i>esaue</i>
Տ. * <i>esie(i)</i>		
Բ. <i>esini</i>		* <i>esani</i>
Ն. <i>esia</i>		* <i>esa</i>
ՆՀ. * <i>esēdi</i>		* <i>esaidi, *esašte</i>

Թվական անունները հայտնի չեն, որովհետև միշտ թվանշանով են գրված: Ունինք միայն *šusini* «մի, մեկ», *atibi* «տասը հազար», և իբր մակբայ՝ *tarani* «երկրորդ անգամ», *šišhini* «երրորդ անգամ»:

Դերանուններից հայտնի են միայն՝ առաջին և երրորդ դեմքերից մի քանի ձևեր. Ա դեմք.- ուղ. *ieše* «ես», Տ. Հ. –*me*, որ գործածվում է իբր

վերջահար թե՛ գոյականի և թե՛ բայի վրա. ինչ. *Haldiš-me aruni* Խալդիս ինձ տվավ, *arume* տվեց ինձ, *terume* դրաւ զիս, *artume* տուին ինձ, *hašial-me* եկան առաջս: Ա դեմքի ստացական հոդն է *-uki*, ինչ. *ebaniuki* երկիրս, *auriuki* տերս, *kauki* առաջս:

Երրորդ դեմք.- բունն է *ma-*, որից հայց. *ma-ni* զնա, սեռ. *me-i* նորա ? և իբր վերջահար –*ni* տր. *hyc*. նշանակությամբ?: Ստացականներն են *mani* նորա? և *masi* յուր. օրինակ՝ *aluše tinini tule, masē tini telē* ով անունը կջնջե, իր անունը կդնե...:

Ցուցականներից հայտնի են *ini* այս, հոգ. *inili* սրանք, այսոքիկ, *inani* այն, հոգ. *inanili* նրանք, այնոքիկ, *ikuka* նույն. օրինակ՝ *ini ebani* այս երկիրը, *inili ebani* երկիրքս այսոքիկ:

Հարաբերականից ունինք *ali* որ, *aluše* որը, *alikiđ... alikiđ* մեկը... մյուսը:

Բայի բունը ըստ սեռի երկու տեսակ վերջավորություն ունի. ներգործական բայերը վերջանում են *u*, չեզոքները *a*. այսպես՝ *aru* տալ, *paru* բռնել, *šidištu* կառուցել. բայց *ula* երթալ, *hašia* ընդ առաջ գալ, *ušta-* դուրս գալ, և այլն: Լավ օրինակ է *šiu* փոխադրել և *šia-* այս կողմ գալ, առաջինը իբրև ներգործական՝ ս հանգով, երկրորդը չեզոք՝ *a* հանգով:

Բայի ժամանակներից հայտնի են միայն երկու սեռի կատարյալի եզ. *a* և *q*, և հոգնակի *q* դեմքերը. սրանց վերջավորություններն են՝

	<b>ներգ.</b>	<b>չեզ.</b>
եզ. <i>a</i> .	<i>bi</i>	<i>di</i>
գ. <i>ni</i>		<i>bi</i>
հգ. <i>q</i> .	<i>itu</i>	<i>li</i>

Սրանք կցվում են ուղղակի բայի բնին:

Մյուս ժամանակներից հայտնի է միայն ներգործականի ներկայի (որ և ապառնի և ըղծական) եզակի *q* դեմքը. վերջավորությունն է *ie*. հոգնակի երրորդը թվում է թե *-letu* վերջավորությունն ուներ: Մյուս դեմքերը, ինչպես և ամբողջ չեզոքը, անհայտ են:

Հրամայականից ընդ ամենը երկու օրինակ կա. *turi* «ոչնչացրու» և *ulē* «զնա». առաջինը ներգործական սեռից, երկրորդը՝ չեզոք:

Բայակերտ մասնիկ է *nan* –*lu-*, որ կարող է կցվել բայի բնի վրա, առանց հայտնի նշանակության. այսպես՝ *suidu-bi* կամ *suidu-lu-bi* նվաճեցի, *teru-bi* կամ *teru-lu-bi* հաստատեցի:



Համաձայն այս կանոնների տալիս են բայի խոնարհման մի օրինակ (\*Մերը ինձանից կազմված ձևերն են ըստ կանոնի, թեև չեն ավանդված).

Գերգ. բունը հաս առնել	չեզոք ušta դուրս գալ	
	Մերկ.	
եզ.	գ. *haule	
հզ.	գ. *hauletu	
	Կտր.	
եզ.	ա. hauri	uštadi
	գ. hauni	uštabi
հզ.	գ. *haitu	uštali
	հրամ.	
եզ.	բ. *hauri	*ušte

Բառակալության համար ծանոթ մասնիկներն են -še -ու-թյուն. կազմում է վերացական բառեր. ինչ. alsuiše մեծություն (արմատը alsui մեծ), ulguše կյանք, pišusaև ուրախություն, hausa բառ, իր:

-hini կազմում է վերաբերական ածական կամ գոյական, հայրանուն և տեղանուն. ինչ Menua-hini Մենուասին պատկանող, Sarduri-hini Սարդուրի որդին (Սարդուրյան), Eria-hini (երկիրը):

-ini- կազմում է նախորդին նման վերաբերական, տեղանուն և ածական. ինչ. Menua-ini Մենուասին պատկանող, Haldini խալդին պատկանող, Lušaini երկիրը, pišušinini ուրախ:

խալդերենում բարդություն չկա. ասվում է պարզապես Menuai pili Մենուասի ջրանցքը:

Շարակարգության վրա տեղեկություններ.-

Կովկասյան զանազան լեզուների նման խալդերենում նախադասության կազմը սովորաբար կրավորական ձևով է. փոխանակ ասելու «Մենուասը բերավ այս ջրանցքը», ասում են «Մենուասից բերուեց այս ջրանցքը» - Menuaše ini pili aguni. կամ ավելի լավ՝ փխ. «Մենուասը կառուցեց սրանք» ասելու, ասում են «Մենուասից սրանք կառուցվեցին» - Menuaše inili šidištuali, ուր կառուցել - šidištu բայը ունի կրավորական -ali վերջավորությունը:

Սեռական հատկացուցիչը մեր աշխարհաբարի նման դրվում է հատկացյալից առաջ. ինչ. Haldii patari խալդիի քաղաքը:

Ստացական և ցուցական ածականները դրվում են գոյականից առաջ. ցուցականը համաձայնվում է. ինչ. masē tini իր անունը, ini ebani այս երկիրը, inili ebanili այս երկրները:

Տեղանունները ներգոյականում կարող են մնալ անփոփոխ ուղղական ձևով. ինչ. Ardini «Արդինի քաղաքում»:

Նախադասությունը կարող է լինել անվանական (էական բայ չի գործածվում). ինչ. Menuai pili tini Մենուասի ջրանցք (ե) անունը:

Անկատարը կազմվում է manu «գտնվիլ» բայով. Uitani agununi manu: Ուիտանի (քաղաքը) ամրացրած էր:

Դնում ենք այստեղ (դարձյալ Friedrich-ի գրքից առնելով) ըստ կարելվույն քիչ գաղափարանշան ունեցող մի ամբողջական հատված՝ իր թարգմանությամբ.

Haldinini	ušmašini	Menuaše	Išpauinihiniše	ini	pili
խալդյան	գորոքյամբ	Մենուասով	Իսպուինիսյան	այս	ջրանցքը
aguni.	Menuai pili	tini...	Menuaše	alie:	Aluše
բերված (ե).	Մենվասի ջրանցք(ե)	անունը	Մենուաս	խոսում է.	Ով վոք
ini	dub-te tulie,	aluše	pitulie,	aluše	ainiei inili
այս	արձանագրությունը	վոչնչացնե,	ով վոք ջնջե,	ով վոք	ուրիշին այս

dulie,	aluše	ulīše	tiulie,	ieše	ini	pili	agubi,	turinini
դարձնե,	ով վոք	ուրիշը	ասե,	Յե՛ս	այս	ջրանցքը	բերի,	ավերիչին
Haldiše...				pieini	mei	arhiurliani	mei	inaini
խալդի	աստվածը	(այլ		? և	(իր)	?	և (իր)	?
		աստվածներ)						
mei	nara	auie		ululie.				
և (իր)	?	խավարը?		տանին?				

(անձանոթ բառերը պիտի լինին կինը, որդիքը, ինչքը, տունը-տեղը կամ նման բաներ):

\* \* \*

Ի վերջո ավելացնում ենք մի փոքր բառացանկ (94 բառ), որ կազմել ենք Friedrich-ի նույն գրքի վերջը գրված խալդերեն հատվածների վրայից, դուրս ձգելով միայն բոլորովին կասկածելի բառերը:

aše այր մարդ  
aše վահան?  
abilidu ավելացնել, հաւելուլ ի  
amaštu այրել  
aini որևէ մեկը  
alsui մեծ  
alsuiše մեծություն  
aru տալ  
atu ուտել. 2. ավերել  
agu տանել, բերել (ջուր, գերի,  
ավար)  
arniuše զործ  
a խոսիլ  
alie խոսում է  
aluše մեկը, ոք, ով որ  
atibi տասը հազար  
agununi ամրացրած  
alusi տեր, իշխան  
alusini իշխանական  
aliki... aliki մեկը... մյուսը  
burašti հպատակեցնել  
bauše բառ. 2. իր, բան.  
badusi քանդված  
biduiaše վերադարձին  
bidia վերադառնալ  
du անել?  
edani երկիր  
euri տեր  
esi տեղ, վայր  
oreli թագավոր  
gunuše կռիվ, պատերազմ  
hau առնել, գրավել  
harharšu փլցնել  
haxia ընդ առաջ գալ  
huradini մարտիկ  
huxia աղոթել, աղերսել,  
աստվածներին դիմել

ini այս  
inani նույն, հիշյալ  
inili այսոքիկ  
ioše ես  
ikuka նույն  
iu երբ  
istini այնտեղ  
xiura երկիր, գետին  
karu հաղթահարել, հաղթել  
-kai (վերջահար) առջևը  
kauki իմ առաջ  
kiri կոնք  
kugu, kuiu արձանագրել  
manu գտնվիլ  
mese հարկ  
manae մնաս  
nuna գալ  
naha գնալ  
nahu փոխադրել  
pili ջրանցք  
patari քաղաք  
paru բռնել, գրավել  
pulusi կոթող  
pišuse ուրախություն  
pišuxinini ուրախ  
pitu վնասել  
suidu նվաճել  
susi պարիսպ?  
suluxi գետին ընկնել, խոնարհիլ  
šuia թշնամի?  
šehiri ողջ, կենդանի  
šali տարի  
šia այս կողմ գալ, անցնիլ  
šiu փոխադրել  
šidištu կառուցել, շինել  
šusini մեկ  
šistini երրորդ անգամ

tuaie մաքուր, զուտ, փայլուն  
tini անուն  
tarani երկրորդ անգամ  
tarae զորավոր?  
teku ավար տանել?  
teru հաստատել, դնել  
tu ոչնչացնել  
turini քանդող  
tiu ասել  
uldi այգի?  
uxta դուրս գալ

ulushta առաջ երթալ, առջևից երթալ  
ula երթալ, դիմել  
ulu տանիլ?  
üelidu զորք հավաքել  
ulguše կյանք  
ušmaše զորություն?  
uštu նվեր բերել  
uli մեկ ուրիշը  
ui և, ու?  
zadu անել, շինել, պատրաստել  
zašgu սպանել

Բևեռագրերի վերծանության այս դրությունը պատմության համար կարելի է բավարար կոչել. բայց լեզվաբանության համար բավական պակասավոր է: Պատմաբանը, որ ուզում է իմանալ դեպքերը, ճանաչել թագավորների անունը, որոշել նրանց ժամանակագրությունը, գտնել տիրապետության սահմանը, դուրս բերել քաղաքների, գավառների ու նահանգների անունները և այլն, մոտավորապես հասնում է իր փափակին: Բայց լեզվաբանը՝ որ պետք ունի բավական ընդարձակ բառապաշարի, քերականական կանոնների, հուլովման ու խոնարհման ըստ կարելվույն ամբողջական պատկերին, չի գտնում դրանք: Օրինակ թվականները՝ որոնք լեզվի ամենաբնորոշ բառերի շարքն են կազմում, անծանոթ են, որովհետև գաղափարանշանով են դրված:

Շատ կարևոր էր որոշել թե խալդերենը լեզվաբանական ո՞ր ճյուղին է պատկանում: Առհասարակ ընդունված է, որ խալդերենը հայերենի հետ կապ չունի և նույն իսկ հնդեւրոպական ճյուղին էլ չի պատկանում: Գերմանացի Մորթման գիտնականի փորձերը հայերենով լուծելու այդ բևեռագրերը՝ անհաջող անցան: Մի մանրամասն քննության մեջ (Entzifferung und Erklärung der armenischen Keilinschriften von Van und Umgegend, հրատարակված ZDMG հտ. 26, էջ 465 և շար., 1872 թվին) այս ուսումնականը ուզեց հաստատել թե խալդերենը հայերեն է: Ինչպես բոլոր գիտունները, նույնպես և Մորթմանը խալդյան արձանագրությունները կարդում էր ասուրական այբուբենով, բայց որովհետև ինքը բավական հմուտ չէր ասուրական այբուբենի դրության, շատ տեղ նշանները սխալ էր կարդում, երբեմն էլ գաղափարանշանները իբր տառ կարդում: Ընդունելով որ խալդերենը հայերեն պիտի լինի, իր այդ սխալ ընթերցանությամբ ստացած բառերը Մորթման համեմատում էր արդի

հայերեն բառերի հետ և իմաստներ հանում: Hübschmann հայագետը KZ 23 (1877), էջ 46-48 ցույց տվավ, որ համեմատության եզրերը ճիշտ չեն. ձայնական համապատասխանությունները իրար չեն բռնում. և այն ձայնական օրենքները՝ որոնք ըստ Մորթմանի վերլուծման կարելի է դուրս բերել խալդերենի համար, հայերենի օրենքները չեն:

Քրիստոսից մի քանի դար առաջվա մի լեզու չի կարող նույն լինել այսօրվա վիճակի հետ և նույն իսկ եթե խալդերենը հայերենը լիներ, շատ տարբեր պիտի լիներ արդի հայերենից: Մորթմանի երևան հանած հայերենը հայերենի ո՛չ մի շրջանին չի համապատասխանում: Միևնույն ժամանակ Սեյա անգլիացին ցույց տվավ, թե Մորթմանը ասորեստանյան լեզուն չգիտե և տառանշանները սխալ է կարդում (տե՛ս իր հոդվածը On the cuneiform Inscriptions of Van, KZ 1877, հտ. 23, էջ 407-9): Մորթման ինքն էլ էր ստիպած խոստովանվելու, թե իր վերծանությամբ ո՛չ մի քերականական օրենքի չի հասնում և թե միևնույն բառի հոլովումը կամ խոնարհումը իրարից շարունակ տարբեր են: Ուրիշ խոսքով չկա քերականություն: Բայց առանց քերականության էլ լեզու չկա:

Մորթմանի ընթերցանության և վերլուծման սխալ լինելուն իբրև գերագույն ապացույց բավական է հիշել այն ծիծաղելի հանգամանքը, որ Մորթմանը Սարգուրի Ա-ի արձանագրությունն էլ՝ որ գրված է Ասորեստանյան լեզվով, խալդերեն կարծեց և իբր հայերեն վերլուծեց! (Sayce, The cuneiform inscriptions of Van, էջ 383):

Այսպես ուրեմն, Մորթմանի փորձը բոլորովին ձախողված էր:

1900 թվին Յ. Սանտալճյան հրատարակեց մի ստվար աշխատություն (Les inscriptions cunéiformes urartiques, տպ. Վենետիկ), որի մեջ նույնպես պաշտպանում է այն միտքը, թե խալդերենը հայերենի հին վիճակն է և խալդիներն ու հայերը իբրև ազգ էլ միևնույնն են:

Սանտալճյանի աշխատությունը շատ ավելի գերազանց է քան Մորթմանինը: Նախ՝ Սանտալճյանը արձանագրությունները կարդում է ճիշտ այնպես, ինչպես ընդունված է բևեռագետների կողմից: Իր կողմից մտցրած փոփոխությունները չափազանց քիչ են և պատճառաբանված: Երկրորդ՝ Սանտալճյանը ընդհանրապես հետևում է արդեն ընդունված թարգմանության և այս կողմից էլ քննադատելի շատ կետեր չունի (այս մասին տե՛ս էջ 166):

Սանտալճյանի տեսության հիմնական նորությունը այն է, որ խալդերեն բառերը (ձևով և նշանակությամբ նույն պահելով հանդերձ) համեմատում է հայերեն բառերի հետ և այսպիսով խալդերենը դարձնում է իբրև մի կամուրջ հնդեվրոպական նախալեզվի և գրաբարի միջև:

Գաղափարը շատ ճիշտ ու գիտական է, միայն պետք է քննել, թե ի՞նչ չափով հաջողված է իրեն պաշտպանել ու հաստատել այդ միտքը:

Սանտալճյանը իր աշխատության մեջ (էջ 1-315) դնում է 88 խալդյան արձանագրություն, լատինական տառադարձությամբ և տող առ տող ու բառ առ բառ գրաբար, լատիներեն ու ֆրանսերեն թարգմանությամբ: Սրան հաջորդում է խալդերենից հայերեն, լատիներեն ու ֆրանսերեն բառարանը (էջ 317-449), բառերի լեզվաբանական զուգորդություններով հանդերձ: Ներածության մեջ (էջ IX) դրված մի ցուցակից երևում է, որ խալդերեն բոլոր բառերի թիվն է 424, որոնք ըստ ծագման բաշխվում են հետևյալ ձևով.

Ա. — Հնդեվրոպական լեզուներ.

1. Հայերեն (հին).....	174
2. Հունարեն.....	152
3. Սանսկրիտ.....	22
4. Իրանական լեզուներ.....	21
5. Լատիներեն.....	16
6. Գերմաներեն.....	5
7. Լիթվաներեն.....	3
8. Հին սլավերեն.....	1
9. Լիդիական.....	1
10. Հայերեն (նոր).....	2
11. Քրդերեն.....	4

Գունար հնդեվրոպական բառերի 401

Բ. — Սեմական լեզուներ.

1. Ասորերեն.....	12
2. Արամերեն.....	1

Գ. — Թուրանական լեզուներ.

1. Սումեր-աքքադերեն.....	5
2. Թուրքերեն (?).....	1

Գունար.....19

Դ. — Անհայտ բառեր..... 4

Ճիշտ է Սանտալճյանի դատողությունը՝ թե սեմական ու թուրանյան բառերը փոխառություն են խալդերենի մեջ, իսկ 401 հնդեվրոպական բառերը՝ բնիկ: Արդարանալի է նաև այն հանգամանքը, որ 401 բառերից միայն 176-ն է հայերեն, իսկ մնացյալ 225-ը պատկանում է զանազան հնդեվրոպական լեզուների: Կարելի է ընդունել, որ այդ 225 հնդեվրոպական խալդերեն բառերը ավելի ուշ կորել են գրաբարի մեջ, ինչպես որ շատ ուրիշ հնդեվրոպական բառեր էլ կորել են գրաբարի մեջ և գրաբար բառեր էլ կորել են արդի հայերենում:

Ամբողջ հարցը այն է ուրեմն, թե հայերենի հետ զուգորդված խալդերեն բառերը իրոք կարելի՞ է զուգորդել և ձայնական ինչ կապակցություն կա նրանց միջև:

Շատ ծանր կլիներ մի առ մի քննել բոլոր 176 բառերը. կառնենք միայն մի քանի տիպական օրինակներ:

Խալդ. suse «ոչխար» (էջ 427) զուգորդում է հյ. բուծ բառի հետ:— Այս բառը հնդեվրոպական ծագում ունի. նախաձևն է bhug'ō, որ չի կարող բնավ դառնալ suse: Ո՞ր լեզվի մեջ bh դառնում է s: Եթե խալդերենը հայերենի հնագույն վիճակն է, suse ձևը շատ ավելի մոտիկ պիտի լիներ bhug'ō-ին, քան բուծ: Մինչդեռ այստեղ մենք հակառակն ենք տեսնում: Չենք հաշվում դեռ այն հանգամանքը, որ հնիս. bhug'ō բառը բոլոր լեզուների մեջ էլ պահված է «այծ» իմաստով և ո՛չ թե «ոչխար»: Ներելի էր, եթե խալդերենում suse նշանակած լիներ «այծ», իսկ հայերենում բուծ «ոչխար»: Քանի գնանք դեպի հինը, այնքան մոտ պետք է լինինք նախալեզվի ձևին և իմաստին: Այստեղ երկու դեպքումն էլ հակառակն է:

Խալդ. masi կամ masi (հայտնի չէ ո՞րն է համարում հնագույն ձևը) զուգորդված է հյ. մեծ բառի հետ (էջ 395): Այս երկուսը հոմանիշ են, ուստի նշանակության կողմից առարկելի ոչինչ չկա: Ամենամեծ առարկության արժանի է սակայն հյ. Ե ձայնավորի դեմ խալդ. a: Գիտենք որ մեծ հնդեվրոպական բառ է և նրա նախաձևն է meg'a: Եթե հնիս. օ կարողացել է մինչև այսօր էլ մնալ Ե (մեծ, մեմծ), ինչպես կարող էր խալդյան շրջանում դարձած լինել a: Հնիս. օ ձայնավորը a-ի վերածել հնդիկ-իրանական հատկանիշ է, իսկ հայերենի, ինչպես և հունարենի ու հաթերենի հատկանիշն է այդ ձայնավորը պահել օ (տե՛ս վերը էջ 33):

Ընդունելով հնիս. օ>խալդ. a՝ վերացվում է խալդերենի հայկական լինելու գաղափարը և խալդերենը դառնում է իրանական:

Խալդ. uzatu «արծաթ» զուգորդվում է (էջ 445) հյ. արծաթ բառի և սրա ցեղակից ձևերի հետ, որոնց մեջ կա նաև սումեր. uzatu: Արծաթ էլ հնդեվրոպական բառ է և նրա նախաձևն է arg'ato: Բայց հյ. արծաթ, սեռ. արծաթոյ՝ շատ ավելի մոտիկ է նախաձևին, քան խալդ. uzatu, ուր նախաձայն a դարձել է u, r կորել է, ց՝ դարձել է z (ինչպես իրանյանների մեջ և հակառակ հայերենի), և վերջապես բառավորի օ ձայնավորը վերածվել է u, մինչդեռ գրաբարում պահված է n (սեռականի ոյ վերջավորության մեջ): Այս բոլորը ավելի ուշ ժամանակի երևույթներ են. այնպես որ խալդյան ձևը չի կարող հայերենի նախորդը լինել: Լավագույն բացատրությունը տված պիտի լիներ Սանտալճյան, եթե ասեր պարզապես թե խալդյան uzatu փոխառյալ է սումերական uzatu ձևից, եթե այսպիսի բառ իրոք կա:

Խալդ. parubi «բերի» ձևի հետ (էջ 406) զուգորդվում է հյ. վարեմ և բերեմ.— հայտնի չէ թե սրանցից ո՞րն է ընդունում. բայց համեմատված ցեղակից ձևերից և էջ XXVII դրված հիշատակությունից երևում է, որ գերադասում է բերեմ:— Այս բառն էլ հնդեվրոպական է և նախաձևն է bher: Այստեղ էլ դարձյալ մեր առաջ է կանգնում հնիս. օ > խալդ. a ձայնափոխությունը, որի մասին խոսեցինք քիչ առաջ: Բայց այստեղ կա նաև հնիս. bh > խալդյան p ձայնափոխությունը: Եթե հյ. p այնպես հավատարիմ կերպով ներկայացնում է հնիս. bh, ինչպե՛ս կարելի է նրանից ավելի հին համարված խալդերենում գտնել p:

Խալդ. ies «ես» զուգորդվում է (էջ 377) հյ. ես բառի հետ:— Այս բառը հնդեվրոպական է և ծագում է eg'ō նախաձևից: Ե դարում ես բառը հնչվում էր es, որով օ ճիշտ համապատասխանում էր հնիս. օ ձայնին: Հարյուրավոր տարիներ հետո միայն բառակզբի Ե դարձավ ye. ի՞նչպես կարող էր խալդյան շրջանին նախաձայն օ հնչվել ye. իսկ եթե խալդյան ies իրականություն է, ուրեմն կապ չունի հյ. ես բառի հետ:

Խալդ. urpu զուգորդվում է հյ. սուրբ բառի հետ (էջ XXVIII).—այս բառը հնդեվրոպական է և ծագում է k'ubhro նախաձևից: Հնիս. k' կանոնավոր կերպով տալիս է հյ. u. բայց խալդյան ձևի մեջ ջնջվել է. ուստի նա ո՛չ մի կապ չունի հնիս. k'ubhro և հյ. սուրբ բառերի հետ:

Սանտալճյանի համեմատությունների մեջ չկա ձայնական օրենքների կանոնավոր համապատասխանություն: Դնենք այստեղ վերի 6 օրինակները.

խալդ.	հնիս.	հյ.
suse	bhug'ō	բուծ
masi	meg'a	մեծ
uzatu	arg'ato	արծաթ

parubi	bher	բերեմ
ies	eg'o	ես
urpu	Kubhro	սուրբ

Այս օրինակների մեջ նկատելի է, որ հնիս. bh դառնում է անկանոն կերպով մերթ s, մերթ p.— հնիս. g' դառնում է s, z, իսկ ածեմ = խալդ. agubi բառի մեջ g, և ասեմ = խալդ. ada բառի մեջ d (էջ XXVII).— հնիս. e դառնում է a, ie.— a դառնում է l, u, a.— և այս բոլորը միայն վերոհիշյալ սակավաթիվ օրինակների մեջ:

Մի օրինակ էլ տանք խալդերեն ու հայերեն համեմատություններից՝ անկախ հնդեվրոպականից:

Խալդ. sidī նշանակում է «նորից». Սանտալճյան (էջ 423) այս բառը կցում է հյ. վերստին հոմանիշի հետ, այս վերջինը վերլուծելով վերստի-ն. այսպեսով խալդ. sidī = հյ. ստի: Բայց վերստին չի կազմված այնպես՝ ինչպես ենթադրում է Սանտալճյան, այլ վեր բառից՝ ուստ և ին մասնիկներով, ինչպես անդստին, աստստին: Հետևաբար արմատ բառը կարելի չէ համեմատել մասնիկի հետ: Սանտալճյան խալդ. sidubi «նորոգեցի» բառն էլ հանում է sidī «նորից» բառից, որով այս բառն էլ կապում է վերստին բառի հետ: Երկուսն էլ կեղծ են և անընդունելի:

Սանտալճյանը դնում է նաև հունարեն ու պարսկերեն փոխառություններ: Այսպես՝

խալդ.	hupadus	հյ. հիւպատոս	< հուն. hypatos
	pišûse	պիտոս	< pitys
	us-	ոյժ	< պիլ. ôž

Ինչպես էլ որ պատճառաբանե Սանտալճյան, այս բառերը չէին կարող փոխառյալ լինել խալդերենի մեջ հունարենից ու պարսկերենից, կամ եթե լինեին էլ, տարբեր ձև կունենային Քրիստոսից ութ դար առաջ:

Սանտալճյան տալիս է նաև խալդերեն քերականության ուրվագիծը: Եզակի սեռականի վերջավորություններն են e, i, 'u, 'uə, di, edī, ni, inī, nini, ki, kâi, kid. մինչև վերջավորությունները գտնում ենք նաև եզակի տրականի, հայցականի և հոգնակի ուղղականի, սեռականի, տրականի և հայցականի համար: Մյուս հոլովները չկան: Այս վերջավորություններից ո՛չ մեկը չի կապվում հնդեվրոպական հոլովման հետ, որ ունի եզ. սեռ. es, os, osyo, տր. ei, oi, հոգ. ուղղ. es, սեռ. om, տր. bhis. հարմար է գալիս միայն եզ. հյց. n և հզ. հյց. ns: Սրանք էլ ի հարկե պատահական են:

Չեմ խոսում խոնարհման մասին, որ չափազանց աղքատ է և չի տալիս որևէ կապակցություն ո՛չ հնդեվրոպական և ո՛չ էլ հայերեն ձևերի հետ (ինչպես՝ ներկա a, կատարյալ i, u, bi, ni, ada, ապամի i, di, ni, sə):

Վերը (էջ 162) ասացինք, որ Սանտալճյան թե՛ ընթերցման և թե՛ քարզմանության մեջ հետևում է բևեռագետների կողմից ընդհանուր ընդունված ձևին: Ցույց տալու համար թե ինչ չափով շեղվում է նրանցից՝ դնում ենք այստեղ Մենուաս Ա-ի արձանագրությունը Friedrich-ի ընթերցումով (տող 1) և քարզմանությամբ (տող 2), ապա Սանտալճյանի ընթերցումով (տող 3) և քարզմանությամբ (տող 4).

1) Haldinini	ušmašini	Menuaše	Išpuihiniše		
2) Խալդյան	զորությամբ	Մենուասով	Իսպուինիսյան		
3) Haldinini	usmasini	Minuas	Išpuihinish		
4) Օգնությամբ-խալդեանց	ուժեղաց	Մինուաս	Իսպուինեայ-որդի		
1) ini	pili	aguni.	Minuai pili	tini...	
2) այս	ջրանցքը	բերված (ե).	Մենուասի ջրանցք (ե)	անունը.	
3) ini	pili	aguni.	Minuai pili	tini...	
4) զայս	զրուբեան-տեղի	կառոյց.	Մինուայ անուանատեղի	կոչեաց	
1) Menuaše	alie:	Aluše ini	dub-te	tulie,	
2) Մենուաս	խոսում ե.	Ով որ այս	արձանագրությունը վոչնչացնե,	արձանագրությունը	
3) Minuas	adae:	Alus ini	DUP-TE	tulie,	
4) Մինուաս	ատ.	Որ որ զայս	արձանագրութիւն	բառնայ,	
1) aluše	pitulie,	aluše	ainiei inili	dulie,	
2) ով որ	զնջե,	ով որ	ուրիշին այս	դարձնե,	
3) alus	pi tulie,	alus	ainiei inili	duli,	
4) որ որ	զանունն բառնայ, որ որ		հողով զայս տեղի	ծածկե,	
1) aluše	uliše	tiulie,	ieše ini	pili agubi,	
2) ով որ	ուրիշը	ատե,	Յես այս	ջրանցքը բերի,	
3) alus	'ulis	tiuli,	ies ini	pili agubi,	
4) որ որ	ուրիշ	իւր սեփականե,	զոր ես	յայսմ անուանատեղոյ կառոյցի	
1) turinini	Haldiše...	pieini	mei	arhiuruliani	
2) ավերիչին	Խալդի (աստվածը)...	?	և իր	?	
3) turinini	Haldis...	pieini	mei arhi	'urudani	
4) քանդակաց պաշտպանք Խալդիս...		զանուն	նորա,	զհայր և զորդեակս	
1) mei	inaini	mei	nara	auie	utulie.
2) և իր	?	և իր	?	խավարը?	տանին?
3) mei	inaini	mei	nara	a'ue	'utulie
4) նորա,	զքաղաքակիցս	նորա	զետոց	ջրովք	ողողեցնե:

Համեմատությունը ցույց է տալիս, որ ընթերցման մեջ տարբերություն չկա, իսկ թարգմանության մեջ պահված է ընդհանուր ոգին սակավ բացառությամբ: Ինչ որ մյուս մեկնիչների համար անծանոթ է մնում, Սանտալճյան մեկնում է մի որևէ լեզվի միջոցով: Այսպես՝ վերջին տողերի անծանոթ բառերը մեկնված են հետևյալ ձևով.

pieini «ամուն». հմմտ. հուն. poiós «որ ունի այս ինչ հատկությունը».  
arhi «հայր». հմմտ. հուն. archē «սկիզբ».

'urudani «վորդի». հմմտ. հյ. որդի, սանս. putrá, հին իրան. puthra, քրդ. hour, ouyrde.

inaini «քաղաքակից», արմատը inu «բնակեցնել». հմմտ. հուն. en-ē-mai «բնակիլ».

nara «զետ». հմմտ. ասուր. nāru «զետ».

a'uié «ջուր». հմմտ. քրդ. ouu. aw, պրս. āb, սանս. āpas, լտ. aqua, հւլ. vo-da «ջուր» և հյ. աւիշ.

'ululie «ողողել» = հյ. ողողել:

Այս բոլոր մեկնությունները կեղծ ու անհարմար են.— հուն. poiós նույն է poiós «որը» բառի հետ և ծագմամբ համապատասխանում է հնիս. k<sup>w</sup>o > լտ. quis, հյ. n, ով բառերին, ուստի չէր կարող խալդերենում ունենալ p նախածայնը, չհաշվելով նշանակությունը, որ շատ հեռու է.— հուն. archē ծագմամբ անծանոթ է, բայց «հայր» չէ.— հյ. որդի կապ չունի putra և ն բառերի հետ և ծագում է հնիս. portiyō ձևից (արմատը per, por ծնել).— հուն. en-ē-mai «բնակիլ» մեկնվում է en «մեջ» նախդիրով ē-mai «նստիլ» բայից և կապվում է հնիս. ēs «նստիլ» արմատին. ուստի կարելի չէ կապել խալդ. inaini «քաղաքակից» ձևի հետ.— ասուր. nāru «զետ» կարող էր տալ խալդ. nara «զետ», բայց եթե Սանտալճյանը կամենար, կարող էր խալդերեն բառը կապել սանս. nara և նոր հուն. nerón «ջուր» բառերի հետ.— խալդ. a'uié «ջուր» կարելի չէ կապել քրդ. ouu. aw «ջուր» ձևի հետ, որովհետև նոր ժամանակի ծնունդ է. կարելի է միայն համեմատել հնիս. ap «ջուր» բառի հետ. սրանից տարբեր է լտ. aqua < հնիս. aq<sup>2</sup>ā «ջուր». իսկ հւլ. voda ո՛չ մի կապ չունի սրանց հետ, ծագում է հնիս. vedo ձևից, որի ժառանգն է նաև հյ. գետ, իսկ հւլ. vo-da բաժանել vo և da մասերին, ինչպես նաև հյ. աւ-իշ բառը աւ և իշ մասերին, որպեսզի vo և աւ կցենք քրդ. aw և խալդ. a'uié բառերին, գիտական լեզվաբանության մեջ անթույլատրելի արարքներ են:

Այս բոլորից կարող ենք եզրակացնել, որ Սանտալճյանի փորձն էլ խալդերենը կապելու հայերենի հետ՝ ապարդյուն է:

Հետաքրքիր ընթերցողը կարող է վերևը դրած մեր խալդերեն բառերը համեմատել հայերենի հետ: 92 բառերից հայերենին քիչ թե շատ նման են հնչում՝

abilidu ավելացնել

atu ուտել

agu տանել (ած - ago)

arnišē գործ (առնել)

aliki այլ ոք

harharšu փլցնել (խաղխարել)

ieše ես

xiura երկիր (զաւառ)

paru բռնել

susi պարիսպ! (հմմտ. հյ. սիւս «պարսպապատ որսատեղի»)

šia այս կողմ անցնել (չուել)

teru դնել (դիր)

uli մեկ ուրիշը (այլ)

ulišē ուրիշը

ui եւ (ու)

Բայց այս բոլորը պատահական նմանություն միայն ունին. համեմատված բառերը կամ իմաստով կասկածելի են, կամ եթե նույն են, տարբեր կազմություն ունին (այսպես ulišē ուրիշը. կազմված է še վերջավորությամբ և բառն է uli, իսկ հայերեն ուրիշ առաջանում է որիշ, որոշ ձևից և սկզբնաբար չէր նշանակում «ուրիշ»), և կամ վերջապես հնդեւրոպական լեզուներով ավելի լավ մեկնություն ունին (ինչ. ածել, ես, դնել, այլ, ու, ուտել, հաւելուլ, առնել): Թե խալդերենը կապ չունի հայերենի հետ՝ լավագույն կերպով պիտի ապացուցանեին թվական անունները, որոնք դժբախտաբար չեն ավանդված: Եղածները այնու ամենայնիվ šusini մեկ, tarani երկրորդ անգամ, šušini երրորդ անգամ, որոնք բոլոր —ո մասնիկով կազմված են երևում, բնավ կապ չունին հայերենի հետ: Այսպես են նաև հոլովական և բայական այն վերջավորությունները, որ տեսանք:

Այսպես ուրեմն, խալդերենը կապ չունի հայերենի հետ, և սա մի շատ կարևոր հայտնություն է մեզ համար, որովհետև սրանով էլ լուսաբանում ենք հայերի ծագումը, նրանց գաղթականությունը և խալդիների հետ ունեցած ամնչությունը: Հայաստանում էլ հաստատվելուց հետո հայերը խալդիներին համարել են մի ստոր ցեղ, (չնայած որ խալդիները ավելի բարձր քաղաքակրթություն ունեին քան հայերը). և

դրա համար էլ հայերենի մեջ կազմվել են խաղտալեզու, խաղտալուր, խաղտախուղտ նախատական բառերը: Այս բոլորը նշանակում են «թանձրախոս, կոշտ ու կոպիտ բարբառով խոսող» և հայերի դեպի խալդիները տածած արհամարհանքի հետ միաժամանակ ցույց են տալիս, որ հայերեն և խալդերեն տարբեր լեզուներ են:

Սակայն հաստատել, թե խալդերենը հայերենի հետ կապ չունի և կամ թե հնդեվրոպական լեզու էլ չէ, բավական չէ խալդերեն լեզվի գաղտնիքներին թափանցելու համար: Եղել են կարծողներ, թե խալդերենը ցեղակից է սեմական լեզուներին կամ կովկասյան լեզվախմբին, հատկապես վրացերենին կամ ուտիերենին: Եվ կամ թե Փոքր Ասիո (Ասիանական) հին լեզուների խմբին է պատկանում: Սակայն այս բոլոր ենթադրությունները դեռ կարոտ են ապացույցի, ուստի և չեն ընդունված գիտունների կողմից և խալդերենի ծագման ու ցեղակցության վերաբերյալ բոլոր հարցերը մնում են անպատասխանի:

Առանձնապես կարևոր է խալդերեն և ուտիերեն լեզուների ցեղակցության հարցը:

Այս հարցը բարձրացրեց առաջին անգամ Գալուստ Տ. Մկրտչյանը (Միաբան), Արարատ ամսագրի 1893 թվի նոյեմբերի համարում: Նա նկատեց որ խալդերեն բայերի անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքի *bi* վերջավորությունը նույն է ուտիերենի հետ, որ նույնպես ունի *bi*: Այս տեղից երկու լեզուների ցեղակցության խնդիրը: Բայց որովհետև ո՛չ Միաբանը ուտիերեն գիտեր և ո՛չ էլ ուտիագետները խալդերեն գիտեին, ուստի հարցը մնաց անհետևանք: 1936 թվին Երևանում հարցը նորից արծարծվեց, այս անգամ արդեն ուտիագետների մի խմբակի կողմից, և ավելի մեծ աղմուկով: Հրատարակվեց նույն իսկ մի առանձին ուսումնասիրություն (խալդերեն լեզվի բանալին), ուր դրված էր մի քանի խալդերեն արձանագրությունների վերլուծումը ուտիերեն լեզվով, ուտիերենի քերականության ուրվագիծը համեմատությամբ խալդերենի և ուտիերեն-խալդերեն բառերի համեմատական մի բառարան (148 բառ): Եզրակացությունն այն էր, որ խալդերենը նույն ուտիերենն է՝ իր բառամթերքով և քերականական կազմությամբ:

Ոչ ոք չընդունեց այս տեսությունը:

Ես, տրված համեմատություններից 49 հատը բոլորովին ճիշտ ու համոզիչ գտնելով՝ հավանություն տվի նոր տեսության:

Այդ 49 բառերը հետևյալներն են (տե՛ս Բանալի, էջ 10-14 և 57-63).

### խալդերեն

1. karuni նվաճեց
2. kuruni հզոր է
3. xaubi վերցրեց
4. ebani վայր
5. pili ջրանցք
- \*6. tini անվանելով
- \*7. aguni անցկացրեց
8. sidiištuni կառուցեց
9. alie ասում է
- \*10. giei վայրի (տեղի)
11. ubardu հրաման
12. teruni վերջացրեց
13. uštabi աղոթեց
14. tekuni նվեր
- \*15. aše այր, մարդ
- \*16. aruni բերեց
17. aaldubi ձևափոխեց
- \*18. mee նրա
19. aluše ով վոր
- \*20. tiulie կյուրացնի?
- \*21. arhiurulliani ընտանիք
- \*22. badusie կործանված?
23. zieldi սեղան տաճարի
24. esie օրենքի
25. eurie տիրոջ
- \*26. terubi շինեց?
- \*27. kini բաժանեց
- \*28. taraiuxi իշխան
- \*29. gii քարի?
30. zadubi շինեց
31. uidi փայտեղենների
32. xarxaršubi ավերեցի
33. Xaldini-li խալդիի տեղը
- \*34. tulie կզլորի

### ուտիերեն

- gärene նվաճեց  
gürüne հզոր է  
k'aufebi վերցրեց  
ebani վայր  
pili ջրանցք  
cini անունն է  
akene անցկացրեց  
šidāštune կառուցեց  
ele ասում է  
gae վայրի (տեղի)  
ubar հրաման  
t'erene վերջացրեց  
neuštēbi աղոթեց  
t'ek'ine նվեր է  
išu այր, մարդ  
arene բերեց  
ahaldebi փոխեց  
mee սրա  
alsin ով վոր  
ciale bo կյուրացնի  
arhiurulux ցեղն հիմնովին  
arha ընտանիք  
badeçi կործանված  
zilda սեղան տաճարի  
siae կարգի  
urue մեծին, քաջին  
serebi շինեց  
k'inebi բաժանեց  
t'araiux իշխաններ  
žəə քարի  
zadebi շինեց  
oldi փայտե սյունով դեմ տված  
xarxarzubi ավերեցի  
xaldininili խալդիի տեղը  
t'uledo կզլորի

35. pitulie կփչացնի
36. abilduni հրդեհեց
- \*37. al բարձր
38. asili սրբազան
39. baadgulubi առի, նվաճեցի
- \*40. kai հայտ է
41. kukubi կառուցի
42. naxubi առի
43. neiš նվեր
44. patari քաղաք
45. su երկինք
46. suini երկնային
47. šeri շարք
48. urudani ժառանգ
49. zaarie շինություն

- putulebo կքերծի
- pildene կրակեց
- ala բարձր
- xasili սրբավայր
- baadkulebi կործանեց
- k'ai հայտնի է
- kukubi կանգնեցրած
- naxubi թալանած
- neiš նվեր
- patar հավաքավայր առևտրի
- su երկինք
- suine երկնային
- šeri շարք
- urudan ծնող
- zaara տունել

Ով որ այս 49 բառերը խաղերեն և ուտիերեն իրար հետ կհամեմատի, չի կարող չընդունել նրանց բացարձակ նույնությունը թե՛ ձևի և թե՛ նշանակության կողմից, և չի կարող չեզրակացնել թե ուտիերեն և խաղերեն լեզուները նույն կամ ցեղակից են: Համեմատել հատկապես խաղերեն šidiištuni «կառուցեց» և ուտիերեն šidaštune «կառուցեց», որոնք նույն են ձևով, իմաստով, արմատով և վերջավորությամբ:

Իմ «կարծիքը» հրատարակվելուց հետո, ոմանք կասկած հայտնեցին հենց ուտիերեն բառերի հարազատության վրա. ուտի դիմեցին երևանում գտնված մի քանի ուտիացիների, որոնք հայտնեցին թե ուտիերեն այդպիսի բառեր չկան: Այս հայտարարությունը ավելի ծանրացրեց խնդիրը: Ուտի Պատմության և Գրականության Ինստիտուտը ինձ և ընկեր Սևակին գործուղեց Վարդաշեն, տեղի վրա քննելու համար ուտիերեն բառերի ստուգության հարցը:

1937 թվի օգոստոսի 22-ին մեկնեցինք Երևանից, 24-ին հասանք Նուխի և 25-ին Վարդաշեն էինք: Տեղի գյուղխորհուրդը մեծ սիրով աջակցեց մեզ և հենց հաջորդ օրվանից մեզ մոտ ուղարկեց բնիկ Վարդաշենցի, լավ ուտիագետ և ամենից վստահելի 4 անձնավորություն, որոնք են.

1. Լիզա Փուլադովա, ուտիական դպրոցի ուսուցչուհին և վարիչը. ավանդում է ուտիերեն լեզու և հրատարակած ունի ուտիերեն լեզվին վերաբերյալ մի քանի աշխատություններ:

2. Քրիստաֆոր Փուլադով, գյուղխորհրդի քարտուղարը:
3. Իվան Միխայիլովիչ Կոտիև, 66 տարեկան, կոլխոզնիկ:
4. Մարկոս Պաճիկով, 70 տարեկան, կոլխոզնիկ:

Այս չորս հոգուն հարցափորձեցինք նախ առանձին առանձին, հետո զույգ զույգ՝ առաջինը երկրորդի հետ և երկրորդը չորրորդի հետ: Մեր հարցուփորձին մասնակցում էին երբեմն նաև այլ անձնավորություններ՝ ուտի կամ հայ:

Ահա մեր քննության արդյունքը՝ վերոհիշյալ 49 բառերի ստուգության վերաբերմամբ:

1. Ուտ. gärene, պետք է ուղղել gärebe, նշանակում է «միացրեց, խառնեց». չի նշանակում «նվաճեց»:

2. Ուտ. güüne «հզոր է, հարուստ է» գոյություն չունի. կա güünexa «որոտում է»:

3-4 չկան:

5. Ուտ. pili «ջրանցք» չկա. կա միայն իբր ուտիական ազգանուն. այդ գերդաստանի մարդիկը բոլոր այժմ մեռել են. վերջին ժառանգը սպանվել է 1936 թ.—«Բանալի» գրքի հեղինակը հայտնել էր ինձ թե այդ տոհմը ջրպետ կամ ջրբաշխ է եղել. ուտի ուտ. pili «ջրբաշխյան». 70-ամյա ծերունի Պաճիկովը հայտնեց, որ նրանք զուռնաչի են եղել:

6. Ուտ. cini «ամուսն է». ճիշտ է. միայն ուղղելու է cine:

7. Ուտ. akene «անցկացրեց, վերցրեց» ճիշտ է:

8. Ուտ. šidaštune «կառուցեց». այս բառը, ինչպես տեսանք, բացարձակապես նման է խաղ. šidiištuni «կառուցեց» բառին, որի վրա ինքս էլ (Բանալի, էջ VI) առանձնապես մատնանիշ լինելով՝ երկու լեզուների կառուցվածքի նույնությունը հաստատեցի: Հեղինակն այս ուտիերեն բառը տպագրական վրիպակ համարելով՝ ուղղեց šidaštene. մեր մեկնելու օրը փոխեց դարձրեց sidašbene «քանդելով շինեց», որ պետք է հասկանալ idašbene: Մեր հարցափորձած ուտիացիք չընդունեցին šidaštune ձևի գոյությունը, ինչ որ հեղինակն էլ արդեն ջնջել էր և Բանալի, էջ 20 էլ հայտնապես ասում է, թե «šidušt բայը՝ լեզուն մոռացության է տվել»: Պաճիկովը ուղղեց šei ašnebe «լավ արեց»: Այսպիսով այս սքանչելի ապացույցը նախնական ձևից բոլորովին հեռացավ և ջնջվեց:

9. Ուտ. eie «ասում է». գոյություն չունի. կա միայն eilexa «կանչում է կամ աքլորը երգում է»:

10. Ուտ. gae «վայրի, երկրի». կա. միայն ուղղելու է gane:



11. Ուտ. ubar «հրաման». չկա. հեղինակը իմ մեկնելու օրը այս բառը սրբագրեց *ub-har-tu* «խոսք յուրաքանչյուրին = հրաման». սրանով *ubar* «հրաման» բառի գոյությունն էլ ջնջվեց, որովհետև *har* «յուրաքանչյուր» պարսկերենից փոխառություն է:
- 12-14 չկան:
- 15-16 կան:
17. Ուտ. *ahaldēbi* «ձևափոխեց». չկա:
18. Ուտ. *mē* «սրա». չկա (կա սակայն *mē* այս):
19. Ուտ. *alšin* «ով վոր». չկա:
20. Ուտ. *cialē bo* «կյուրացնի». կա *cialē bo* ձևով:
21. Ուտ. *arhiurulux* «ցեղն հիմնովին». չկա. բայց կան *arxa* և *arxiux* «ընտանիք»:
22. Ուտ. *badēci* «կործանված». չկա. այլ կան *bat'ki* «կործանված», *baddeki* «թաղեց» ևլն. առաջինը թվում է թե թրք. *bat'* «ընկղմել, մեջը խրվել» արմատից է, իսկ երկրորդը՝ բնիկ ուտիերեն, բայց իմաստով անհարմար է խալդերենին:
23. Ուտ. *zilda* «սեղան տաճարի». չկա: Այս շատ կարևոր բառի վրա առանձին ուշադրություն դարձրինք և պատահած մարդուն հարցրինք: Ոչ ոք չիմացավ: Հեղինակը մեկնելու օրս Բանալիի օրինակիս մեջ՝ այս բառի կողքին ավելացրել էր *zildesun* «բարձր երգել». այս բառը կա և առաջանում է պրս. և թրք. *zil* «զիլ, բարձր ձայն» բառից, ուստի կապ չունի խալդերենի հետ:
24. Ուտ. *sia* «կարգ, հաշվարկում», *siaē* «կարգի, հաշվարկման». չկա. ինձ թվում է թե թրք. *sayə* «թիվ, հաշվարկում» բառի հետ է շփոթված:
25. Ուտ. *urue* «մեծին, քաջին». հեղինակը իմ օրինակում այս երկուսի կողքին ավելացրել էր «օրհնություն». առաջին երկու իմաստը չիմացան:
26. Ուտ. *serebi* «շինեց». կա:
27. Ուտ. *k'inēbi* «բաժանեց». կա. կարդա՛ *xinēbi*:
28. Ուտ. *t'araiux* «իշխաններ», *t'ara* «իշխան». չկա. բայց կա *t'arastun*, *t'arazdi*, *t'aranēdi* «իշխել, կառավարել», որոնցից անշուշտ եզրակացրել է *t'ara* «իշխան»:
29. Ուտ. *žə* «քարի», *žə* «քար». կա:
30. Ուտ. *zadēbi* «շինեց». չկա. չկան նաև սրա մյուս խոնարհյալ ձևերը, որոնք հիշված են Բանալի, էջ 12. կա միայն *zad* «բան», որ թուրքերեն է (հայերն էլ են գործածում) և որից հորինել է «շինել» բայը:

31. Ուտ. *oldi* «փայտե սյունով դեմ տված». չկա. կա միայն *ol* «փայտե սյուն». չկան նաև *oldesun*, *olzudi*, *oledi* բայական ձևերը, որոնք հիշված են Բանալի, էջ 12, և որոնք անշուշտ հորինել է նույն արմատից:
32. Ուտ. *xarxarzubi* «ավերեցի». չկա. կան միայն *xarx'əsun* «քերել, քերծել» և *xarxarzup'i* «չանգոեցի», ևլն. «ավերել» իմաստը ենթադրություն է:
33. Ուտ. —*ninili* «տեղը» կան *li* «ավան». չկա:
34. Ուտ. *t'uledo* «կզլորի» ևլն. կա:
35. Ուտ. *putulebo* «կքերծի». չկա. այս բառը հեղինակը իմ օրինակում ուղղել էր *puturišebo* «կմաշկի». այս ձևը կա, ինչպես նաև *puturiš* «կեղևից հանած» ևլն:
36. Ուտ. *pildene* «կրակեց». չկա. չկա նաև *pil* «կրակ». կա սակայն *p'ol* «բոց»:
37. Ուտ. *ala* «բարձր». կա:
38. Ուտ. *xasili* «սրբավայր». չկա. ծանոթ է սակայն *xas* «լույս» և ըստ հեղինակի (տե՛ս № 33) *li* «վայր», որ նույնպես չգտանք:
39. Ուտ. *baadkulebi* «կործանեց». չկա. կա միայն *bat'əvnēki*, որ մեկնեցին թրք. *bat'ərdə* «ընկղմեց»:
40. Ուտ. *k'ai* «հայտնի է». կա:
41. Ուտ. *kukubi* «կանգնեցրած». իմ օրինակում հեղինակը ուղղել էր *kucebi* «կանգնեցրեց, շինեց». այս ձևերը չկան. կա միայն *kucnēdi* «կանգնեցրեց»:
42. Ուտ. *naxubi* «թալանած». իմ օրինակում հեղինակը ուղղել էր *naxunēbi* «անիրավացի կլանեց, վերցրեց». չկա:
43. Ուտ. *nēiš* «նվեր». իմ օրինակում հեղինակը ուղղել էր *nēiš* «նվեր, ծառա աստուծո». չկա:
44. Ուտ. *patar* «հավաքավայր առևտրի». չկա այսպիսի բառ. կա միայն *P'adar* գյուղը Վարդաշենի մոտ, ուր տոնավաճառ է լինում. (հեղինակը իմ օրինակում ուղղել էր *P'atar* «վաճառականական կենտրոն»). հատուկ անունը հասարակ անուն է դարձրել:
45. Ուտ. *su* «երկինք». հեղինակը իմ օրինակում ուղղել էր *si* կամ *köy* «երկինք». չկա ո՛չ *si* և ո՛չ *su*. բայց կա *köy*, որ թուրքերենից է փոխառյալ:
46. Ուտ. *suine* «երկնային». չկա:
47. Ուտ. *šeri* «շարք». չկա. չկա նաև *šeri* «շարք». կա միայն *šergi* «շարք», որ թուրքերեն է. իմ օրինակում էլ հեղինակը չէր նշանակել ո՛չ *šeri* և ո՛չ *šeri*, այլ միայն *järg* «շարք»:

48. Ուտ. *urudan* «ծնող». իմ օրինակում հեղինակը ուղղել էր *urut'an*, երկուսն էլ չկան:

49. Ուտ. *zaara* «տունել». իմ օրինակում ուղղել էր *zagara* «տունել», երկուսն էլ չկան:

Այսպեսով ամբողջ գրքից ընտրված միակ վստահելի 49 բառից, որոնք մեզ իբր հիմք էին ծառայել, 33-ը չկա: Մնաց միայն 16 բառ, որ վերը նշանակում են աստղանիշով: Սրանցից մի երկուսն էլ արդեն կասկածելի են խալդերենի հետ համեմատության համար. այսպես № 29 չե և խալդ. *gii* «քար»,

№ 22 *badeçi* «կործանված» < բրք. *bat'* արմատից, Թերևս նաև

№ 26 *serebi* շինեց = խալդ. *terubi* և

№ 20 *clale bo* կյուրացնի = խալդ. *tiulie*:

Մնացյալ 12 բառերը պահում են իրենց ուժը:

Թե այս 12 բառերը բավակա՞ն են հաստատելու խալդերենի և ուտիերենի ցեղակցությունը՝ շատ կասկածելի է: Ես որ հավատում եմ գիտնականի գրչի անկեղծության, հավատում եմ նաև որ այն բառերը կես դար առաջ գոյություն ունեցել են և հետո ջնջվել են, կամ թե նույն իսկ այժմ իրենց գոյությունը շարունակում են Նիժով: Խ. Փոլադյանը՝ որ ուտիական հնությանց ուշադիր հետևող մի անձնավորություն էր, հաճախ կրկնում էր այդ և օրինակ էր բերում ուտիերեն *qoy* «նապաստակ» բառը, որ առաջ գոյություն ուներ, իսկ այժմ ջնջվել է՝ փոխանակվելով բրք. *t'ovšan* բառով: Կարելի բան չէ, որ ուտիերենը «երկինք» գաղափարի համար սեփական բառ չունենա. ուտիի *köy*, որ թրքական փոխառություն է, կարող է փոխանակած լինել *si* ձևը. սրանով փրկվում է նաև *suinö* «երկնային» բառը էլ: Ուտիագետների վրա անհրաժեշտ պարտք է մնում ուրեմն հաստատել վերոհիշյալ կորած բառերի գոյությունը՝ ինչ ձևով որ լինի: Խ. Փոլադյանը արձանագրեց այն բոլոր ուտիական բառերը, որոնք են խալդերենի համար շատ կարևոր են համարում և խոստացավ ամեն տեսակ որոնումներ կատարել և արդյունքը հաղորդել:

Երկու ճակատագրական թերություն են գտնում Բանալիի մեջ, որ չափազանց մեծ վնաս է բերում գործին: Առաջինն այն է, որ ամենքիս հայտնի թուրքերեն բառերը, որ մտել են նաև ուտիերենի մեջ, բնիկ ուտիերեն են համարվում և ո՛չ թե թուրքերեն: Այսպես են *jarg* «շարք», *zad* «բան», -ի «ավան», *bat'* «ընկղմվել» ևն, որոնց համար պնդում է թե թուրքերենն է փոխ առել ուտիերենից: Ինչ ձևով էլ որ պատճառաբանվի,

անկարելի է համոզվել, թե այդ բառերը, որոնք իրենց արմատներով և իրենց զանազան ածանցներով գոյություն ունին Յակուտների աշխարհից սկսած՝ Թուրքեստանի վրայով մինչև Կովկաս և մինչև Ադրիականի ծովափը, և փոխառյալ ձևերի տակ գտնվում են հաճախ հայերենում, վրացերենում, քրդերենում, ռուսերենում, նոր հունարենում և բալկանյան զանազան լեզուներում, բնիկ թուրքական չեն, այլ ուտիերեն: Այդ ինչպիսի՞ խոշոր ազդեցություն պետք է վերագրել ուտիերենին:

Երկրորդ թերությունը մեջ բերված ձևերի գիտական անճշտությունն է: Հեղինակը ենթադրում է մի ձև, հավատում է իր գյուտի ճշմարտության, ուտի առանց զգուշացման մեջ է բերում այն՝ իբրև իրապես գոյություն ունեցող մի ձև և ո՛չ թե ենթադրություն: Սրա ամենացայտուն օրինակը Բանալի, էջ 13 դրված և «ավան» բառն է: Նախ հիշում է խալդերեն *Xaldinili* «խալդի եղած վայրը», *Menuaxinili* «Մենուայի տեղը» և սրանց դեմ դնելով ուտիերեն *xaldinili* «խալդի եղած տեղը, խալդական», *Vardanli* «Վարդանական», *Menuaxinili* «Մենուայի տեղը, Մենուաչեն», *Yagubli* «Հակոբների գյուղը, Հակոբանոց», ենթադրում է ուտիերեն և «ավան»: Բայց ո՛չ մի ձևով չի հայտնում, որ այս բոլորը ենթադրություն է և ընթերցողը հավատում է թե կա իրոք ուտիերեն և «ավան» բառը, ինչպես որ ես էլ հավատացած էի: Այժմ պարզվեց, որ ուտ. և «ավան» ձևով բառ չկա և սոսկ ենթադրություն է *Vardanli* գյուղանվան վրայից հարմարացրած: Բոլորովին այլ հարց է այն, թե այդ ենթադրությունը ճի՞շտ է թե սուտ, բայց կարևոր է այն թե ուտիերեն և «ավան» գոյություն չունի:

Երբ համեմատում ենք որևէ բնիկ հայերեն բառ հնդեվրոպական նախալեզվյան ձևի և ժառանգակից լեզուների համապատասխան ձևերի հետ, հայտնի կերպով տեսնում ենք ձայնական այն խոշոր զանազանությունը, որ կա նրանց և հայերենի միջև և այն խոշոր այլափոխությունը՝ որին ենթարկված է բառը հայերենի մեջ: Օրինակի համար հայր, քոյր, եղբայր, երկու, երեք ևն այնպես այլափոխված են նախավոր ձևերի համեմատությամբ, որ շատ դժվար է համոզել մարդկանց՝ որ նրանք միևնույն բառերն են: Նույն իսկ արդի ֆրանս. *père*, *soeur*, *frère*, *deux*, *trios* և այլն բառերը շատ ավելի մոտիկ են վերոհիշյալ նախաձևերին, քան հայերեն ձևերը, որոնք նրանցից առնվազն 1600 տարի ավելի հին, այսինքն մոտիկ են նախալեզվին: Հայերենի այսքան մեծ այլափոխությունը, նույն իսկ արդեն Դ դարում,

ասում են լեզվաքնին ուսումնականները, նշան է ոչ-հարազատ մի խոշոր տարրի գոյության, և այդ տարրը պիտի լինի խալդական ժողովուրդը, որ միացավ հայերի հետ:

Նախորդ գլխում մենք հասանք այն եզրակացության, որ եթե հայերեն լեզվից դուրս հանենք բոլոր բնիկ (հնդեվրոպական) բառերը, ինչպես նաև ծանոթ լեզուներից փոխառյալ բառերը (պարսկերեն, հունարեն, ասորերեն և այլն), մնացյալը կլինի Փոքր Ասիո ոչ-հնդեվրոպական լեզուներից + խալդերեն լեզվից փոխառյալ բառերի համագումարը: Միևնույն ժամանակ ավելացրինք, որ այդ բառերի մեծագույն մասը պետք է լինի խալդիական փոխառություն: Այդ համագումարը բաղկանում է 5572 բառից, որոնք մի առ մի հիշել այստեղ ավելորդ ենք համարում: Բավականանա՞նք քննության առնելով միայն կուլտուրական արժեք ունեցող մի քանի բառական խմբեր:

### 1) Գույներ. —

Մենք տեսանք, որ գույն ցույց տվող բառերից բնիկ են միայն դեղին և դեղձան. մյուսներից պարսկական ծագում ունին աշխետ, կարմիր, կապոյտ, ճերմակ, սպիտակ, սեաւ և նույն իսկ գոյն ու երանգ բառերը: Երբայեցերեն է բոսոր, արաբերեն է քումայթ, իսկ արջն (սև) Կովկասյան է: Մնում են անծանոթ հետևյալ բառերը. — գորշ, երփն, թոյր, թուխ, լուրջ կամ լուրթ, խաժ, խարտեաշ, ծաւի, կանաչ, համակ (գորշախայտ), հիր (հակնթագույն կամ երկնագույն), ճնդիկ (զուտ սև), շառագույն, շէկ: Ենթադրելի է թե այս բառերի գոնե մի մասը խալդերեն է:

### 2) Մետաղներ. —

Նախահայերը մետաղներից ծանոթ էին միայն արծաթին. մյուս մետաղներից անազը վերցրին Ասորեստանցիներից, արոյրը, պղինձը, արճիճը պարսկերենից, կլայեկը արաբերենից, ինչպես որ ավելի հետո չուգունը ռուսերենից, զինգը, միկելը, ալլիմիմիումը, պլատինը և այլն եվրոպացիներից: Անծանոթ են մնում կապարը, երկաթը և ոսկին: Այս բառերի համար գիտունները տալիս են զանազան մեկնություններ. բայց այս բոլոր մեկնություններն էլ անբավարար են: Հավանաբար հայերը հիշյալ մետաղների ծանոթությունը և գործածությունը խալդիներից են վերցրած:

### 3) Բույսեր. —

Հնդեվրոպական նախահայրենիքը շատ հարուստ չէր բույսերով. հետևաբար և նախալեզուն չունեւ բուսական բառերի մեծ պաշար: Հայերենում, հատկապես գավառական բարբառներում, ունինք բույսերի, ծառերի, մանավանդ խոտերի բազմատեսակ անուններ: Սրանց

մեծ մասը մեկնվում է հայերենով, հետևաբար երկրում հետո կազմված բառեր են: Այսպես, օրինակ՝ սխտորուկ, երիցուկ, արևքուրիկ, արև-ծաղիկ, կերմեջնոցիկ, մազխտո, գառանդմակ, անթառամ, պարոնբանջար, երեքնուկ, սիրիսիրի, մեռելածաղիկ, պոչուկ, ծտապաշար, աւելուկ, սիպտուկ, իշկաթնուկ, կովուճակտիկ, հացուպանիր ևլն գավառական բառերը: Բայց կան նաև բազմաթիվ արմատական բառեր, որոնք չեն կարող մեկնվել հայերենով. ինչպես՝ հին հայերեն՝ ցորեան, վարսակ, եղիճ, կոտիմն, գավառական մանդակ, մուճուղեզ, օղին ևլն ևլն: Այս վերջին տեսակի բուսանունները կարող են փոխառյալ լինել խալդերենից կամ Հայաստանի այլ բնիկների լեզվից: Հատկապես այն բուսանունները, որոնք համարվում են Հայաստանի բնիկ ծնունդ. ինչպես ծիրանը, կտաւատը, ցորենը ևլն: Ծիրան բառը գտնվում է նաև Կովկասյան լեզուների մեջ. ինչ. վրաց. ճերամի, թուշ. ճերամ, ափխազ. աճարամ. և այս բոլորը, հայերենի հետ, կարող են փոխառյալ լինել խալդերենից:

Կան բույսեր, որոնք նախահայրենիքում գոյություն ունեին, և հետևաբար նախալեզվումն էլ մի որևէ բառով նշանակված էին: Բայց Հնդեվրոպացիք զաղթավայրերում գտան ու ճանաչեցին նույն բույսի մի ուրիշ ավելի լավ տեսակը և թողնելով իրենց հին բառը՝ փոխ առին տեղական լեզվից մի ուրիշ բառ: Այսպես եղավ հատկապես խնձորը:

Այս պտղի համար երկու գլխավոր բառ կա հնդեվրոպական լեզուների մեջ. Հյուսիսային և Արևմտյան Եվրոպայի լեզուները ներկայացնում են մի ձև, որ է հսլ. ablūko, լիթ. óbūlas, հրգ. apful, հինլ. aball, անգլ. aeppe, հիսլ. ople, հպրուս. woble. սրանց հետ նույն է նաև Կամպանիայի Abella քաղաքի անունը, որ բուն նշանակում է «խնձորաբեր» (ոսկերի լեզվով): Այս բառը փոխառյալ է եվրոպական ոչ-հնդեվրոպական մի լեզվից, որ խոսվում էր նախ քան Հնդեվրոպացոց տարածումը: Հարավային Եվրոպայում ունինք հունարեն melon, դորիական malon, լատիներեն malum, ինչպես և հաթերեն mahlan: Այս բառը պատկանում է Միջերկրական կուլտուրային և անշուշտ ներկայացնում է մշակված ընտանի խնձորի մի տեսակը, որ Միջերկրացիներից անցավ եկվոր Հնդեվրոպացիներին, փոխանակելով նախկին հասարակ տեսակը: Հայերենը չի ճանաչում ոչ ablūko և ոչ malum ձևը, այլ ունի խնձոր: Այս բառի ծագումը հայտնի չէ: Ըստ ձևի նա կարող է լինել հնդեվրոպական (արմատը խինձ կամ խունձ, աճած —որ մասնիկով, ինչպես ունինք հատոր, բեկոր ևլն). և թերևս հենց այն բառն է, որ ուներ հնդեվրոպական նախալեզուն: Բայց այս բանը հաստատել անկարելի է:

Իսկ եթե խնձոր հնդեվրոպական չէ, կարող է փոխառյալ լինել խալդեերենից:

4) Ամաններ.—

Հնդեվրոպական շոքանից երկու բառ միայն ունինք հայերենի մեջ ամանեղենի համար. մեկը աման բնույն է, երկրորդը՝ տիկ, որ հայ ժողովրդի մեջ մինչև այսօր էլ իբրև աման է գործածվում: «Աման» նշանակող մյուս բառերից արդու, բաժակ, գրիւ, դոյլ, դորակ, զամբիւղ, թակոյկ, լական, խորգ, կապիճ, կուժ, ճաշակ, մար, նուազ, շիշ, պայուսակ, սապատ, սկաւառակ, սրուակ, տակառ, տաշտ, տաշտակ, քանդուկ, քուրծ, քսակ փոխառյալ են պարսկերենից.— ապուղայ, կաթսայ, տարմալ՝ ասորերենից.— ափստ, բակեղեթ, կաքոս, կաղաթ, կամփսակ, կիւաթոս, կոնք, կոտիւղ, պնակ, սիտղ, սկուտեղ, ստոման, տառաղան, քուզայ, քսեստ՝ հունարենից.— հանապ՝ եվրոպականից.— անծանոթ են մնում հետևյալները.— անօթ, գուշ, խաւեակ, խուփ, խբարդեայ, խեցի, ծափ, կահոյր, կայթ, կարաս, կեռիկ, կճուճ, կուր, հաղաղակ, մեսուր, պուտուկ, սափոր, առանց հաշվելու այն բոլոր գավառական բառերը, որ գործածական են մեր ժողովրդի մեջ՝ զանազան տեղերում: Այս բառերի որոշ մասը խալդիական փոխառություն են կարծում:

5) Ոստայնանկություն.—

Այս արհեստը հին հնդեվրոպացոց արդեն ծանոթ էր. նախահայերը ժառանգել էին նրանցից հինել, ասեղն, հերիւն, ասր, գեղմն, ազանել, զգենուլ, զգեստ, օթոց, լար բառերը.— Պարսիկներից ստացան առասան, ապրիշում, աստառ, բամբակ, դաստառակ, դերծակ, դերծան, դիպակ, դրոշակ, կերպաս, հանդերձ, ճախարակ, շապիկ, շար, պաստառ, ջուլիակ, սնդուս, սրսկապան, վերմակ, վարշամակ, և այլն բառերը.— Ասորիներից՝ ամղան, զգաթ, գուրպայ, շուշփայ.— բայց ավելի կարևոր ոստայնանկական բառերը մնում են անծանոթ. այսպես են ազբն, առէջ, բարաթ, գորգ, թել, իլ, ծոպ, կապերտ, կարժ, կծիկ, կկել, կկոց, կարել, հիւսել, մանել, շաղամաթ, ոստայն, ստէժ, և այլն: Այս բառերի անշուշտ որոշ մասը հայերը ստացել են խալդիներից, ուրիշ խոսքով ոստայնանկության կիսկատար արհեստը կատարելագործել են ավելի քաղաքակիրթ խալդիների միջոցով:

6) Ընտանիք.—

Արդեն տեսանք, որ հնդեվրոպացոց ընտանեկան կազմակերպությունը արական գծի վրա էր. կնոջ կողմի ազգականները կարևորություն չուներին. դրա համար էլ դրանց հատուկ բառեր գոյություն չուներին: Բա-

ծանուծից հետո հնդեվրոպական ժողովուրդները մասամբ իրենց մեջ, մասամբ ուրիշ ո՛չ-հնդեվրոպական հարևանների ազդեցությամբ կազմեցին իզական ճյուղի համար էլ զանազան բառեր: Հայերենում, ինչպես տեսանք, արական գծի ազգականական բառերը մեծազույն մասամբ հնդեվրոպական են. ինչ. սկեսուր, տագր, նու և այլն: Ապագայում հայերը ազգականական բառեր փոխ չեն առել օտարներից, բացի պապ և մամ բառերից, որոնց բնիկ հայերեն ձևերը (հաւ, հանի) կային լեզվի մեջ:

Վերոհիշյալներից դուրս հայերենի ազգականական բառերի մեջ առանց մեկնության են մնում աղջիկ, կոյս, աներ, հոր, քեռի, եղար, զոքանչ, փեսայ, զաւակ, թռն, լաճ, թայրաթոտք և խնամի բառերը, որոնց մի մասը իզական գծին է պատկանում: Կարծում են, որ այս բառերը, գոնե մասամբ, մտել են հայերենի մեջ խալդեերենից փոխառությամբ:

7) Դրամներ.—

Հայերենի ամենաթույլ կողմը դրամականն է. այս կարգի բոլոր բառերը փոխառություն են կամ պարսկերենից, կամ հունարենից և կամ մինչև իսկ ասորերենից: Միակ բնիկ բառը հայերենի մեջ արծաթն է, որ թե՛ ընդհանրապես մետաղ է նշանակում և թե այդ մետաղով կտրված դրամը: Փոխառյալ բառերից դուրս ունինք բնիկ, նաքարակիտ, խերեւեշ, որոնք մանր տեսակի դրամներ են նշանակում և հավանաբար խալդիական փոխառություններ են:

8) Գրական.—

Հայերենի մեջ բնիկ, այսինքն հնդեվրոպական ծագումից են՝ ուսանիլ, գիր, (գիրք, գրիչ), թիւ, ընթեմուլ: Թողնելով օտար փոխառությունները, ինչ. դպիր, դպրոց, մատեան, մելան, կաղապար, մազաղաթ և այլն, որոնք պարսկերենից, հունարենից և ասորերենից են ծագում, հայերենի մեջ ունինք մի խումբ ամենասովորական բառեր, որոնք սակայն ո՛չ մի մեկնություն չեն ստացել: Այսպես են թուղթ, թանաք, կածին, էջ, գիծ, գծել: Որովհետև հայերը Հայաստան մտած ժամանակ դեռ քաղաքակրթության բավական ստոր աստիճանի վրա էին, մինչդեռ խալդիները նրանցից շատ ավելի բարձր քաղաքակրթություն, գիր ու գրականություն ունեին, ուստի հավանաբար այս բոլոր բառերը հայերը փոխ են առել իրենց նվաճած խալդիներից: Դժբախտաբար հայերը, ինչպես երևում է, այս բոլորի միայն բառերը ձեռք բերին՝ իբրև օտար արտադրություն, իսկ իրենց համար գիր ու գրականություն չստեղծեցին, մինչև կգար Մեսրոպը՝ որ հունական և

ասորական քրիստոնեական քաղաքակրթության ազդեցության տակ կինարեր հայերեն գրերը և հիմք կղներ հայկական գրականության:

Այն մի քանի բառերը, որ հիշեցինք վերևում, մի շատ փոքր թիվ են կազմում այն հազարավոր բառերի մեջ, որոնք դեռ չմեկնված մնում են հայ լեզվի բառազանձում: Արմատական բառարանը ունի ընդ ամենը 10.772 արմատ, որից 909 մեկնված է իբր բնիկ, 4016 իբր փոխառյալ, 152 իբր բնածայն (123 բառ էլ սխալ ու կեղծ բառեր են): Մնում է ուրեմն 5572 անծանոթ բառ, որի մի մասը ենթադրվում է թե հայերը փոխ են առել խալդիների լեզվից՝ իրենց դարավոր կենակցության ժամանակ: Այս բառերը ներկայացնում են կյանքի բոլոր ասպարեզները, հետևաբար ամեն տեղ էլ կարելի է ենթադրել խալդիների ազդեցությունը: Խալդերենի ազդեցությունը թափանցել է նույն իսկ շատ ավելի խորը. խալդերեն լեզուն անծանոթ լինելու պատճառով մենք ճիշտ չենք կարող ասել, թե նա ինչ չափով է ազդել հնդեվրոպական սեռի և երկակի թվի ջնջման, հոլովների պահպանության, աշխարհաբար հոգնակի կազմության և զանազան մասնիկների փոխառության վրա: Բայց կարող ենք ավելի վստահորեն ասել, որ հայերենի ծայնական դրության ձևավորումը առանձնապես պարտական ենք խալդերենի.— հայերեն բաղաձայնների հնգյակ խումբը՝ բաղկացած յուրաքանչյուրը երեք անդամից (բ, պ, փ և այլն) ճիշտ իր նմանը ունի կովկասյան լեզուների, հատկապես վրացերենի մեջ և հավանաբար նաև խալդերենի հետ նույն է: Նույնպես հնդեվրոպական երկար ծայնավորների ջնջումը հայերենի մեջ՝ թերևս արդյունք է խալդերենի ազդեցության: Նկատելի է, որ մեր դրացի վրացերեն, լազերեն և այլն լեզուներն էլ չունին երկար ծայնավորներ:

Այն բոլորը՝ ինչ որ ասացինք խալդերենի ազդեցության մասին հայերենի վրա, թե՛ բառական և թե՛ մանավանդ ծայնաբանական ու քերականական տեսակետից, զուտ ենթադրություններ են, որոնք ո՛չ մի փաստացի ապացույց չունին: Տեսանք վերևում գրեթե հարյուր խալդերեն բառ, որոնցից ո՛չ մեկը հայերեն չէ: Ոչ միայն այդ, այլ և խալդերենի մինչև այժմ հայտնի ամբողջ բառացանկում չկա ո՛չ մի բառ, որ անհերքելի կերպով հայերեն կարելի լինի համարել: Արմատական Բառարանում, զանազան պատճառներով, մենք խալդերեն համարեցինք միայն 15 բառ, հիմնվելով հատկապես այն հանգամանքի վրա, որ նրանք կապվում էին հյուսիսային և հարավային կովկասյան լեզուների հետ կամ բնիկ հայ երկրի բուսական անուններ են:

Այդ բառերը հետևյալներն են.

ընկոյզ	կարաս	հաճար?
ծեփել	կարասիք	ճակ «էգ»?
ծիրան	կրթել	նժար?
ծիրիլ	կռել (կուռ, կռան)	տող?
կաղամախ	կտաւ	փառ «զգեստ»

Ավելի ենթադրական են ծայնաբանական ու քերականական երևույթները.— հայերենը ունի 3 աստիճանի 5 շարք բաղաձայն. կարիք չկա այդ բանը կովկասյան, և նրա վրա հիմնվելով խալդիական ազդեցության վերագրելու: Նախալեզուն ուներ 4 աստիճանի 4 շարք բաղաձայն.

b	bh	p	ph
g <sup>1</sup>	g <sup>1</sup> h	k <sup>1</sup>	k <sup>1</sup> h
g <sup>2</sup>	g <sup>2</sup> h	k <sup>2</sup>	k <sup>2</sup> h
d	dh	t	th

հնդկերենը՝ որ նախալեզվին այնքան մոտիկ մի լեզու է, ունի 4 աստիճանի 5 շարք բաղաձայն.

b	bh	p	ph
g	gh	k	kh
j	jh	č	čh
d	dh	t	th
đ	đh	ť	ťh

հունարենը ունի 3 աստիճանի 3 շարք բաղաձայն.

β	π	φ		b	p	ph
γ	κ	χ	այն է՝	g	k	ch (kh)
δ	τ	θ		d	t	th

Իսկ ծ, ձ, ց, ճ, ջ, չ բաղաձայններից կարող ենք գտնել հնդկերենի, աֆղաներենի, իտալերենի, գերմաներենի, անգլերենի, ռուսերենի և ուրիշ լեզուների մեջ, որոնք բոլոր հնդեվրոպական են առանց տարակուսի: Միայն հայերենի՞ն մերելի չէ ունենալ 3 աստիճանի

բաղաձայն (բարբառներում դեռ 4 աստիճանի), առանց խալդերենի ազդեցություն ենթադրելու<sup>1</sup>:

Երկար ձայնավորների ջնջումն էլ կարիք չկա վերագրելու խալդերենին, որովհետև այսօրվա հունարենը, պարսկերենը և ռուսերենն էլ զրկված են երկար ձայնավորներից: Վեց հոլովների պահպանությունը նույնպես կարիք չկա վերագրելու խալդերենին, որովհետև հնդկերենն ու ռուսերենն էլ պահպանել են նույն հոլովները և ավելի ևս: Երկակի ջնջումը նույնպես կարիք չկա անպատճառ խալդերենին վերագրելու, որովհետև, առանց այն էլ, այսօր քերականական այդ կարգը ջնջված է բոլոր հնդեվրոպական լեզուների մեջ: Սեռի ջնջումն էլ խալդերենին վերագրելու կարիք չկա, որովհետև պարսկերենն ու անգլերենն էլ, որոնք մի քանի դար առաջ սեռ ունեին, այժմ ջնջել են այն:

Եվ այսպես, ո՞ր կետից էլ որ բռնենք, հայերենը իր ընկերներն ունի հնդեվրոպական լեզուների շարքում և անպատճառ խալդերենի ազդեցությունը ենթադրելու կարիք չկա:

Սակայն խալդիական փոխառությանց ավելի կարևոր և այս անգամ արդեն ավելի անվիճելի մի շարք են կազմում Հայաստանի աշխարհագրական անունները:

Ամեն մի ազգ, որ նվաճում է մի ուրիշ երկիր և ժամանակավոր կամ մշտական բնակություն է հաստատում այնտեղ, այդ երկրի աշխարհագրական անունների հետ վարվում է հետևյալ ձևով. — 1) Սովորաբար ամեն մի անուն պահում է անփոփոխ, հարմարեցնելով միայն իր լեզվի ձայնական օրենքներին: Այսպես, թուրքերը տիրելով Հայաստանին, չփոխեցին Ալն, Վան, Չմշկածագ, Երզնկա, Բաքերդ, Կումայրի, Կարս, Չագածոր և այլն անունները, այլ թուրքերենի ձայնական օրենքների համաձայն՝ դարձրին Էգին, Վան, Չիմիշգեզեք, Էրզինգեան, Բայբուրթ, Գիւմրի, Ղարս, Չանգեզուր և այլն: Նույնպես ռուսները անցյալ դարում տիրելով Հայաստանին, չփոխեցին Շուշի, Էջմիածին, Երևան, Գորիս և այլն անունները, այլ պահեցին չնչին փոփոխությամբ՝ Шыуа, Эч-миадзин, Эриуань, Герюси: Նույն է նաև աշխարհիս բոլոր երկիրների համար: Հնդեվրոպացիք տիրելով Եվրոպայի, Ասիայի, Ափրիկեի և Ամերիկայի զանազան տեղերին, պահեցին նախաբնիկների տված

<sup>1</sup> Այսպես է մտածում նաև Н. Pedersen, ՉՍ 1929, էջ 120, որ մինչև անգամ անցնում է այն մտքին, թե ընդհակառակը հայերենն է, որ ազդել է Կովկասյան լեզուների ձայնաբանության վրա:

անունները և դրա համար էլ Եվրոպան և մյուս երկիրները լի են այնպիսի անուններով՝ որոնց իմաստը մեզ անհայտ է:

2) Տիրող ցեղը բնիկ անունները ժողովրդական ստուգաբանությամբ նմանեցնում և վերածում է իր լեզվի որևէ մի ձևին: Այսպես, թուրքերը ճորոխը դարձրել են Չիւրիւք-սու (փտած ջուր), Օծունը՝ Ուզունլար (երկարներ), Արագածը՝ Ալագեռզ (խայտակն), Կապանը՝ Ղափան (կշիռք) և այլն:

3) Հաճախ, տեղական անունները բնիկների լեզվից թարգմանվում են նորեկների լեզվին. այսպես՝ Քարինտակ դարձել է Տաշալթի, Ծովքը՝ Գեուլջիք, Նորաշենը՝ Թագաքենդ, Վաղաւերը՝ Թեզխարաք և այլն:

Այս երեքը աշխարհագրական անունների փոփոխության սովորական ձևերն են. քիչ անգամ միայն նորեկները դնում են բոլորովին նոր անուններ. այսպես, Էջմիածինը դառնում է Իւչքիլիսա, Աւետարանցը՝ Չանախչի, Կարինը՝ Երզրում, Կումայրի՝ Ալեքսանդրապոլ, և այս հատկապես այն ժամանակ, երբ նորեկները հիմնում կամ շինում են մի բոլորովին նոր քաղաք կամ գյուղ:

Աշխարհագրական անունների փոփոխության այս ընդհանուր օրենքներից չէին կարող բացառություն կազմել նաև Հայերը: Ուստի նրանք էլ երբ մտան Հայաստան, բնականաբար պահեցին առհասարակ այն ձևերը, որ գործածական էին բնիկների մեջ, լինեն դրանք խալդիներ թե ուրիշ մանր մուսր ժողովուրդներ: Եվ ահա դրա համար էլ ունինք Վան = Բիայնա, Տոսպ = Տուշպա, Արարատ = Ուրարտու:

Հայաստանի տեղագրական անունները մենք կարող ենք բաժանել երկու կարգի. 1) Այն անունները, որոնք ո՛չ մի մեկնություն չունին հայերենի մեջ. ինչ. Մասիս, Արարատ, Վան, Կարին, Երզնկա, Փարպի, Երևան, Քանաքեռ, Տաթև, Փարաքար և այլն և այլն: 2) Այն անունները, որոնք ուղղակի մեկնվում են հայերեն լեզվով. ինչ. Ցամաքաբերդ, Ջրաբերդ, Աշտարակ, Վարազաբոյն, Ծովատեղ, Վաղաւեր, Էջմիածին, Սևքար, Ծակքար, Շնաթաղ և այլն: Սրանցից դուրս են մնում թուրքերեն և ռուսերեն անունները, որոնք բոլորովին նոր շրջանի արդյունք են. ինչ. Մուլլադուրսուն, Քեշիշքեանդ, Ալուչալու, Թայչարուխ, Ալեքսանդրապոլ, Ելիզավետապոլ, Ելենովկա, Սուխոյ-Ֆանտան, Սիմեոնովկա և այլն: Արդ՝ առաջին կարգի անունները խալդիական անուններ են և անշուշտ մի օր պիտի գտնեն իրենց մեկնությունը, եթե խալդերեն լեզուն երևան գա: Ամեն մի փորձ՝ մեկնելու այդ անունները հայերեն լեզվով, հակառակ է տրամաբանության և առաջուց դատապարտված է անհաջողության: Բայց երկրորդ կարգի անուններն էլ, թեև արտաքին երևույթով

բոլորովին հայերեն, բայց կարող են սակայն, գոնե ոմանք, խալդիական բառերի աղճատված ձևերը լինել, իբրև արդյունք ժողովրդական ստուգաբանության: Այսպես՝ ինչպես Ուզունլար «երկարներ» թուրքերեն բառը էապես ամենևին թուրքերեն չէ, այլ հայերեն օծուն «օծավետ» բառի աղավաղությունն է, նույնպես օրինակ՝ Աշտարակ, որ մեզ համար բոլորովին հայերեն բառ է, կարող է լինել խալդիական մի որևէ բառի աղավաղյալ ձևը: Այս բոլորը կարելի է ճշտել և որոշել միայն այն ժամանակ, երբ երևան կգա խալդերեն լեզուն, բայց առ այժմ խալդիական ազդեցությունը այդ կողմից անուրանալի է: (Տե՛ս և էջ 190):

Տեղական հատուկ անուններից հետո հարց է բարձրանում անձնական հատուկ անունների մասին: Հայերենի անձնական հատուկ անունները կարող ենք բաժանել երկու խմբի. 1) Ձուտ հայերեն անուններ և 2) Օտարազգի անուններ: Ձուտ հայերեն անունները շատ քիչ են մեր մեջ: Այսպես օր. Հրաչեայ, Հրանոյշ, Արուսեակ, Վարդիթեր, Հերիքնազ, Լուսնբազ, Նորայր, Սկայորդի և այլն. ընդհակառակը շատ առատ են օտար անունները. այսպես՝ պահլավերեն Արշակ (արջուկ կամ արու), Երուանդ (արագ), Բագարատ (աստվածատուր), Սպանդարատ (սրբատուր), պարսկերեն Ջիւանշիր (մատաղ առյուծ), Արզուման (փափագող), Ջիհանգիր (աշխարհակալ), եբրայեցերեն՝ Սամուէլ (լսող աստուծո), Յակոբ (խաբող), Էմմանուէլ (ընդ մեզ աստուած), Գաբրիէլ (ախոյան իմ Աստուած), հունարեն՝ Ստեփանոս (պսակ), Փիլիպպոս (ծիսսեր), Բարսեղ կամ Վասիլ (թագավոր), լատիներեն Լևոն (առյուծ), թուրքերեն Ալլահվերդի կամ Թարվերդի (աստվածատուր) ևլն, չենք հիշում նոր եվրոպական և ռուսական անունները, ինչ. Եղուարդ, Ալֆրեդ, Սաշա, Վալոդիա և այլն, և այլն: Այս բոլորից դուրս կան մի խումբ հայկական հատուկ անուններ, որոնք ոչ մի լեզվով չենք կարող մեկնել. այսպես՝ Հայկ, Արամ, Արամայիս, Արա և այլն: Արդ՝ անտեղի չէ կարծել որ այդ անունները նույնպես խալդիական փոխառություններ են. որին իբրև ապացույց կարող է ծառայել Արամէ, խալդիական այդ նշանավոր թագավորի անվան բացարձակ նմանությունը հայոց Արամ անվան հետ: Դժբախտաբար խալդիական անուններից էլ շատ բան ծանոթ չէ մեզ, որպես զի կարելի լիներ համեմատություններն ավելի ընդարձակել: Բայց այսքանն էլ բավական է ընդունելու համար, որ խալդիական փոխառություններ կան նույն իսկ մեր անձնական հատուկ անունների մեջ: Այս մասին զորավոր ապացույց է մեր տոհմական անունների —ունի վերջավորությունը, որ փոխառյալ է խալդիական —ini ձևից, որով կոչվում են բազմաթիվ

խալդիական տեղանուններ. տարակույս չկա, որ հայ նախարարական տոհմերից շատերը խալդիական ծագում ունին:

Ամփոփելով այս բոլորը՝ մենք կարող ենք իբրև եզրակացություն ասել, որ խալդերենի ազդեցությունը անուրանալի է հայերենի վրա: Հայերենը փոխ է առել խալդերենից ո՛չ միայն իր սովորական բառամթերքի մի կարևոր մասը, այլ և իր անձնական հատուկ անունների մի մասը և տեղական անունների ամենախոշոր մասը: Սխալ չի լինի ասել, որ եթե խալդիական արյունը շարունակում է ապրել մեր արյան մեջ և խալդիական երկիրը շարունակում է իր գոյությունը Հայաստանում, նույնպես և խալդիերենը շարունակում է ապրել հայերեն լեզվի ծալքերում, հայկական շրթունքների վրա:

## ՄԻՏԱՆԵՐԵՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՎՐԱ

Հին եգիպտական և հաթյան նորագյուտ արձանագրությունները երևան հանեցին մի գաղտնիք, որ մինչև այժմ անծանոթ էր. այդ այն է, որ Խալդիներից էլ առաջ Հայաստանը բնակված է եղել մի ուրիշ ժողովրդով, որ կրում է Միտանի անունը: Սրանց հնությունը մ. Ք. 3000 թվականն անցնում է:

Փոքր պետություն չէր Միտանին, այլ բառիս բուն իմաստով կայսրություն. նա՝ բնականաբար իր ամենից ավելի մեծացած շրջանին, տարածվում էր Կապադովկիայից մինչև Նինվե՝ Ասորեստանի մայրաքաղաքը, որ նրան հպատակ էր: Նրա մեջ էին Ասորիքը, Պոնտոսը, Միջագետքը և Կովկասը: Միտանիներն են հիմնել, ինչպես կարծում են, Ասորեստանի մայրաքաղաքը և իրենք են եղել այդ երկրի հնագույն բնակիչները, որոնց հետո հաջորդեցին սեմականները:

Այս լայնածավալ պետությունը քաղաքական և առևտրական հարաբերության մեջ էր մտել եգիպտական պետության հետ, իբր հավասար հավասարի հետ, ժՁ և ժԷ դարերում, երբ Ասորեստանը դեռ մի փոքրիկ պետություն էր և նոր էր սկսում տարածվել իր շուրջը: Այս ժամանակից երևան են հանված Միտանիների թագավոր Տուշրատայի 7 նամակները՝ գրված եգիպտոսի փարավոնին:

2500 թվից էլ առաջ Բաբելաստանի Կիշ քաղաքից մի սեմական գաղութ գալիս հաստատվում է Տիգրիսի միջին հոսանքի վրա, Միտանի ժողովրդի շրջանում: Նրա կուլտուրական ազդեցությամբ և Բաբելոնի հետ մշտական հարաբերությամբ նույն տեղի Միտանիները սեմականանում են, ընդունում են Բաբելացոց լեզուն և երկու ժողովուրդների ձուլումից առաջանում է Ասորեստանյան ժողովուրդը: Այս ժողովուրդն է, որ հետո մեծանում է և գերազանցում իր բոլոր հարևաններից, և կազմելով մի հզոր պետություն, կործանում է նույն իսկ Միտանու պետությունը, շուրջ 1300-ական թվերին: Այս ժամանակից հետո երևան են գալիս Խալդիները, իբրև Հայաստանի նոր տեր:

Միտանիների լեզուն անծանոթ չէ. այս լեզվով ունինք Տուշրատա թագավորի մի նամակը, եգիպտական փարավոնին, երկու նամակ Արգավայի լեզվով՝ որ Միտանու մի բարբառն է թվում, և վերջապես Փոքր Ասիայում գտնված մի քանի արձանագրություններ՝ Խարրիների լեզվով, որոնց մեծագույնը 3500 տողանոց մի օրհներգ է: Խարրիներն էլ Միտանիների մի ճյուղն էին և նրանց լեզուն միտաներենի մի բարբառն էր:

Բացի սրանից, կան զանազան թագավորների և տեղերի անուններ:

Միտանիների լեզուն, դեռ լավ քննված չէ. բայց այնուամենայնիվ երևում է, որ նա արիական ճյուղին է պատկանում և թերևս իրանական է. այսպես, օրինակ՝ բոլորովին իրանական են Artatama, Artasuvava և այլն հատուկ անունները:

Ի՞նչ հարաբերություն կարող էին ունենալ հայերը Միտանիների հետ: Նախ քան Հայաստան մտնելը՝ հայերը բնակվելով Փոքր Ասիայում, անշուշտ ուրիշ փոքրասիական ժողովուրդների հետ միասին շփման մեջ պետք է լինեին նաև Միտանիների հետ: Հայաստան մտնելուց հետո, այս շփումը ավելի ևս մեծ պետք է լիներ, որովհետև Միտանիներն էլ կազմում էին Հայաստանի բնակչության մի մասը: Կարելի է ենթադրել, որ այս շփման ժամանակ՝ ինչ ինչ փոխառություններ տեղի ունեցած լինեն. բայց այդ փոխառությունները ստուգել անկարող ենք նյութի սակավության պատճառով: Իսկ եթե ենթադրենք, թե Հայերի Հայաստան մտած ժամանակ Միտանիներն արդեն ձուլված պիտի լինեին Խալդիների հետ, այնուամենայնիվ կային տեղական հատուկ անուններ, որոնք Միտանիներից ժառանգություն էին մնացել Խալդիներին, և Խալդիներից էլ անցան Հայերին: Այսպես, օրինակի համար, Ալշէ տեղանունը, որ Խալդիների ժամանակ դարձել էր Ալզի, անցել է հայերենին՝ Աղձնիք ձևով: Ոմանք ենթադրում են, թե Խարրի անունից է Խարբերդը, կամ թե Բալաների անունից է Բալու: Կարելի է դեռ ասել, որ Մանդայեցոց անունով են Մանդակունիք և այլ նման ենթադրություններ, բայց այդ բոլորը զուտ ենթադրություններ են, որ կարելի չէ ապացուցանել: Համենայն դեպս անուրանալի է, որ Հայաստանի տեղանունների գոնե մի մասը միտանական ծագում ունի: Ապագա հայտնություններ թերևս կարողանան ավելի մեծ բան ասել մեզ այս մասին:

\* Միտանիների մասին եղած գրականությունից հիշատակելի են.  
Bork.- Die Mitannisprache, Berlin, 1909.



Հայերենի մեջ կան նաև մի քանի բառեր, որոնք ձևացած են տեղանուններից. այսպես են՝

ախլախնձոր (Ախլաք կամ Խլաք քաղաքի անունից),

ախորան «սրընթաց և ահեղ» (Ախուրեան գետի անունից),

դուժ «բարբարոս» (հայոց մոտ ապրող մի ցեղի անունից),

խաղտ «կոշտ, կոպիտ» (որից խաղտալեզու, խաղտալուր, խաղտիխուղտ. բոլորն էլ Խալդ ազգի անունից),

ծայթ «հավատքի մեջ թերի» (Հայաստանում բնակվող գնչուական Ծաթ ժողովրդի անունից),

կորճ «ծուռ, թյուր, անհարթ» (Հայաստանի Կորճայք նահանգի անունից),

մանի «ամսի 16-րդ օրը» (Մանի լեռան անունից),

մարդպետ «ներքինապետ Հայոց արքունիքի» (Հայաստանում բնակվող Մարդ ժողովրդի անունից):

ԳԼՈՒԽ Ը.

## ԱՍՈՒՐԵՐԵՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՎՐԱ

Ասուրները կամ Ասորեստանցիք պատկանում են սեմական ցեղին:

Շատ հին ժամանակ, Սեմական ցեղի մի ճյուղը մեկնելով Արաբիայից՝ գալիս նվաճում է Քաղդեսստանը և իր մեջ ծուլում տեղացի Սումերներին (մ. Ք. 4000 թ.): Այնուհետև սեմականացած Քաղդեսան հիմնում է մի մեծ պետություն, որ տարածվում է մինչև Միջերկրական ծովը, իր իշխանության տակ առնելով նաև Ելամը (մի ընդարձակ երկիր՝ Պարսից ծոցից մինչև Համադան): Ելամացիք ապստամբվում են, և ո՛չ միայն տապալում են Քաղդեսայի իշխանությունը, այլ և իրենք նվաճում են այդ երկիրը՝ հիմնելով նոր Ելամական պետություն: Քաղդեսայի սեմական ժողովուրդները թողնում են ու հեռանում. մի մասը անցնելով արևմուտք՝ հիմնում է Փյունիկեն, մյուս մասը գալիս է հյուսիս և հիմնում Բաբելոնն ու Ասորեստանը (մ. Ք. 23-րդ դար): Օգտվելով դրացի պետությունների շարունակական կռիվներից, գերազանցելով նույն իսկ իր հարևան Բաբելաստանը, Ասորեստանը հետզհետե զորանում է և հիմնում Արևելքի ամենամեծ պետությունը (մ. Ք. ԺԵ դար): Իր իշխանությանն են հպատակվում այն բոլոր ժողովուրդները, որոնք տարածված էին Ելամից մինչև Ալիս ու Սարոս գետերը, և Եփրատից մինչև Նեղոս ու Ափրիկեի խորքերը: Ութ դար է տևում Ասորեստանի այս ահավոր պետությունը և հետո Կիմներների ու Սկիթացոց արշավանքի ժամանակ՝ Մարաց ձեռքով ի սպառ ջնջվում ու անհետանում (608):

Քաղաքական այս խոշոր մեծությունը չէր կարող առանց ազդեցության մնալ նվաճված ժողովուրդների քաղաքակրթության և լեզվի նկատմամբ: Բայց ո՛չ միայն նվաճված ու մերձավոր, այլ և հեռու մնացած ու անկախ ժողովուրդներն էլ որոշ չափով պիտի կրեին այդ ազդեցությունը: Այն ժամանակ, երբ Ասորեստանը իր փառքի գագաթնակետն էր ապրում, Հայերը (Արմենները) դեռ չէին մտած Հայաստան (Խալդիա): Նրանք բնակվում էին դեռ Փոքր Ասիայի միջին մասերում, այն է՝ Ալիսի հովտում, և չկա ո՛չ մի հետք, որ ցույց տա, թե հայերն էլ հպատակած լինեն Ասորեստանցոց: Խալդիները արևելքից և Հաթերը հարավից պատմե՜լ էին նրանց համար: Այս պարագային, Ասորեստանցոց ազ-

Knudtzon, Bugge, Torp.- Die zwei Arzawa-Briefe, die ältesten Urkunden in indogerm. Sprache, Leipzig, 1902.

Հայերենով հմմտ. Տեղեկագիր Գիտ. և ար. ինստ. 1, էջ 125-154:

դեցությունը անուղղակի ճանապարհով և փոքր չափով միայն պիտի հասներ հայերին: Բուրդովին ուրիշ է խալդիների հարցը: Խալդիները 700 տարի շարունակ շփվելով Ասորեստանցոց հետ, անշուշտ շատ ավելի մեծ չափերով ազդված պիտի լինեին նրանցից: Նախորդ զլխում մենք տեսանք, որ խալդիները գրության արվեստը Ասորեստանցիներից սովորեցին: Խալդյան բևեռագիր այբուբենը ասորեստանյան բևեռագրության մի ավելի պարզ ձևն է միայն, և նույն իսկ խալդյան առաջին արձանագրությունները ասուրերեն լեզվով են գրված: Ասուրերենի ազդեցությունը խալդերենի վրա անուրանալի է:

Երբ հայերը մտան խալդիա և ժառանգեցին խալդիական հարստությունները, բազմաթիվ խալդերեն փոխառյալ բառերի մեջ ստացան նաև ասորեստանյան բառեր: Այսպեսով հայերենի մեջ մուտք գործեցին երկու կարգի ասուրերեն բառեր. մեկը նախ քան Հայաստան մտնելը, երկրորդը՝ Հայաստանում, խալդերենի միջոցով: Միջոց չունինք որոշելու առ այժմ, թե այդպիսի փոխառություններից ո՞րը ինչ կարգի է պատկանում: Բավականանում ենք միայն տալով այստեղ ասուրական փոխառյալ բառերի ընդհանուր ցուցակը:

1) Անագ «կլեկ» < ասուր. anāku, սումեր. naagga, nīggi, հին սումեր. anag «անագ»:

2) Բերդ < ասուր. bīrti, bīrtu «բերդ». այս բառը, իբրև պատերազմական արվեստի բառ, փոխառությամբ անցել էր արամեերենի, եբրայեցերենի և թերևս նաև խալդերենի, ուր որոշ ծայնական փոփոխության ենթարկվելուց հետո՝ անցավ հայերենի:

3) Բուռ «ծեփելու կիր կամ գաճ» < բաբել. \*būlu, ասուր. pūlu «կիր», որից փոխառյալ է նաև հունարեն pōros «տուֆ, փխրաքար»:

4) Գագաթն «մարդու և լեռան գագաթ» < բաբել. gagadu, gaggadu, ասուր. kaḫkadu, սումեր. gaggud «զլուխ»:

5) Թոնիր. ամբողջ Արևելքում տարածված բառ է. բուրդի մայրն է սեմականը, որից անցել է իրանցիներին և այնտեղից էլ թուրքական ժողովուրդներին: Բայց ո՞չ մի լեզվի ձևը ճշտիվ չի համապատասխանում հայերենին: Որովհետև ամենահին ժամանակից սկսած՝ թոնիրը գոյություն ունի հայոց մեջ, կարծում են, որ փոխառությունը կատարված է ասուրերենից (tinūru), որ անցել է նախ խալդիներին և այնտեղից էլ մեզ:

6) Խուց «փոքր սենյակ» < ասուր. xuṣṣu «ցանկապատ. 2. շենքի հավելվածական մաս». այս բառը նախապես նշանակում էր «եղեգ», հետո

եղավ «եղեգից շինված տնակ», հետո «խրճիթ, հյուղակ», որից էլ մեր «փոքրիկ կամ անշուք սենյակ» իմաստը:

7) Կիր. այս բառի ծագումը հայտնի չէ. շատ մոտիկ են հնչում արամեերեն և եբրայեցերեն ցիր, արաբերեն յիր (որ է դարձյալ \*ցիր) և սաբեական ցիրո հոմանիշները. բուրդն էլ պատկանում են սեմական լեզվաբնին, բայց ասուրերենում չի պահված: Ենթադրելի է որ հնագույն ձևն էր ասուր. \*ցիր, որ իր հոմանիշ բուռ բառի հետ անցավ հայերենի: Հայաստանի վրայով բառը անցավ Կովկաս, ուր տվեց վրացերեն, լազերեն, ոսերեն կիրի և թուշերեն, ինգուշերեն, չեչեներեն կիր հոմանիշները:

8) Կղզի.— այս գաղափարի համար հնդեւրոպական նախալեզվի մեջ որևէ բառ չկա. հունարեն nāsos «կղզի» բառը թվում է թե լգեական փոխառություն է, որի հետ կարող են կապ ունենալ լատ. insula և իռլ. inis «կղզի»: Հայերեն կղզի բառի հետ շատ նման են ասոր. gāzar-tā և արաբ. jazār, jazīra հոմանիշները, որոնց սեմական արմատն է gzar: Եվ որովհետև այս երկուսից չի կարող ծագել հայերեն կղզի, ուստի ենթադրել պետք է, որ կղզի հին ասուրական փոխառություն է: Արմատը gzar շրջվել է նախ grz և հետո դարձել է glz: Ամենահին ասուրական փոխառությանց մեջ ց տալիս է հայերեն կ (ճիշտ ինչպես հնդեւրոպական բառերի մեջ). հմմտ. կիր<ցիր, կշիռ<gišrinno, կմախք<gimaxxu:

9) Կմախք<ասուր. gimaxxu, kimaxxu, qimaxxu «դագաղ», սումեր. kimax «գերեզման». այս իմաստներից մեր կմախք նշանակության հասնելու համար, պետք է նկատի ունենալ Ասուրաբաբելական թաղման արարողությունը, երբ դիակը կավով պինդ ծեփում և մարմնի պատկերն էին դուրս բերում, որով կմախքը նաև դագաղ էր դառնում:

10) Կմախիք «մեռելի սգահանդես և մեռելի վրա եղած ողբ ու կոծ, լալիք». ծագում է նույն ասուրական բառից, որից նաև կմախք: Այս երկուսի հետ նույն է նաև Կամախ (քաղաքի անունը), որ հայ Արշակունի թագավորների գերեզմանոցն էր՝ Անի ամրոցի դեմ, որ նույն թագավորների գանձարանն էր:

11) Կնիք < ասուր. kunūku «կնիք», kanīku «կնքված բան», աքքադ. qanāqu «կնքել»: Ասուրաբաբելական քաղաքակրթության ամենանշանավոր գյուտերից մեկն է: Այն ժամանակվա մարդիկ առհասարակ գրել-կարդալ չիմանալով՝ հնարել էին կնիքը, որ մերթ առանձին պահում էին և մերթ էլ իբր մատանի կրում էին իրենց մատին: Կնիքի վրա փորագրված էր տիրոջ անունը, և տերը ստորագրության փոխարեն այդ կնիքով կամ մատանիով կնքելով՝ հաստատում կամ վավերացնում էր

որևէ գրություն: Այս բանն է, որ ասուրերենից հայերենի և հայերենից էլ թուրքերենի անցնելով, թուրքերենի միջոցով թափանցել է ուզոֆիննական և սլավական աշխարհը ու տվել է վերջապես ռուս. книга «գիրք» բառը: (Այս կարծիքը հայտնել են Mikkola, Pedersen, Munkácsi, որ և ընդունել է Berneker, իր սլավական Արմատական բառարանում, էջ 664):

12) Կշիռ < ասուր. gišrinno «լծակ, կշիռք», սումեր. gušur, gušra «ծող, լծակ»: Արդեն տեսանք վերը (կղզի բառի տակ), որ հնագույն ասուրական փոխառությունների մեջ ց տալիս է հյ. կ:

13) Կոզեռ «անչափահաս մանուկ, երեխա, տղա». իբրև «ծագուկ կամ փոքրիկ» կապվում է հաջորդ բառի հետ:

14) Կոզոն «ուղտի ձագ». — ինչպես ուղտ, նույնպես և իր ձագը կոզոն, իբրև Հայաստանի ոչ բնիկ մի անասունի անուն, անշուշտ փոխառյալ պետք է լինին օտարներից: Ասուրական արձանագրությունների մեջ արդեն հիշատակված է, որ ուղտը բերվել է դրսից և հետո ընտանեցվել է Ասորեստանում: Առաջին անգամ ուղտը բերել է Թագլաթպալասար Ա (1108-1080 Ն. Ք.). հիշատակված են Եփրատի ափին Էլիմառ քաղաքից, Guzan կամ Gulzan երկրից, Mēsu երկրից և Մարաստանից բերված ուղտեր: Ասորեստանից ուղտը մտել է Հայաստան, ըստ որում հյ. ուղտ փոխառյալ է ասուր. uldu հոմանիշից: Իր ձագի անունը (կոզոն) գտնում ենք միայն արաբ. jazūr ձևի մեջ, որ լինելով բնիկ սեմական բառ, ենթադրել է տալիս ասուր. \*gZR (հմմտ. վերը կղզի), որից էլ անցած պիտի լինի հայերենի:

15) Հալա «զգեստ» < ասուր. ḫalāpu, ḫalābu «ծածկել», որից nahlap-tu «կերպաս, հագուստ, զգեստ»:

16) Մալուխ «հաստ չվան» < ասուր. maxullānu նույն նշանակությամբ. հայերենի մեջ լ-խ շրջվել են, իսկ վերջածայն ու ջնջված է, ինչպես gišrinno>կշիռ բառի մեջ:

17) Մաղխազ «թագավորի պահապանների գլխավորը», որից մաղխազութիւն «հայ նախարարական Մաղխազունի տան պաշտոնը». < ասուր. malxazu «իշխան»?

18) Մաքառիլ «կովիլ» < ասուր. maxaru «ղեմ կանգնիլ, հակառակիլ, մրցիլ, թշնամու ղեմ դուրս գալ»:

19) Մզել «քամել» < ասուր. mazū «մզել, քամել (գինի և այլն)»:

20) Նահանգ < ասուր. na-an-ga «երկրամաս, երկրի շրջանակ, երկիր, վայր»:

21) Ուղտ < ասուր. uldu, որի վրա տե՛ս վերը կոզոն բառի տակ:

22) Ուրազ «փայտ տաշելու գործիք» < ասուր. ur-ra-ku «քարտաշ». հայոց ուրազը՝ քարտաշի գործիքն է եղել:

23) Տամալ կամ տամալի «տանիք, երդիք, տան վրա ճեմելիք» < ասուր. tamlū, tamlū «պատշգամբ»:

24) Տարածել < ասուր. tarāšu «փռել, մեկնել, տարածել»:

25) Ցեց < ասուր. šāšu «ցեց, որ շորերն է ուտում»:

26) Փոխ, փոխել և այլն < ասուր. paḫḫu «փոխել, փոխանակել», pāḫu «փոխանակություն. 2. փոխառություն, փոխատվություն. 3. ընկալազիր, ստացական», pāḫatu «փոխանակության առարկան», pāḫatu «փոխանակություն»:

27) Քաղաք < ասուր. kalakku «պարիսպ, շրջապարիսպ, դարավանդ». գիտենք, որ «քաղաք» նշանակող բառերը բուն «բարձունք կամ ամրություն» նշանակությունն ունին:

Ասուրերենից փոխառյալ բառերի շարքում չենք հիշում բնականաբար այն բառերը, որոնք թեպետ ծագումով Ասորեստանյան են, բայց հասել են մեզ ուրիշ լեզուների միջոցով: Այսպես են օրինակ՝

1) Դպիր, ծագում է սումեր. dub, ելամ. tuppi, աքքադ. duppu «արձանագրություն, գրության տախտակ» բառից. որ տվել է նախ հին պրս. dipi, պիլ. dipir «քարտուղար, գրագիր», որից էլ հետո՝ հայերեն դպիր:

2) Չամբիւղ, ծագում է ասուր. zabbīlu «մի բան տանելու աման» բառից. անցել է նախ պարսկերենի, ուր տվել է zanbīl ձևը, այստեղից էլ հայ. զամբիւղ:

3) Փիլթայ «պատրույզ». — բուն աղբյուրն է եգիպտական petira, որ անցել է նախ սեմական աշխարհը, ուր տվել է եթովպ. fatala «ուլորել, հյուսել», ասուր. patālu «փաթաթվել, գալարվել», ասոր. fātīlā «պատրույզ», սրանցից փոխառությամբ պրս. pitīla, հետո թրք. piltā, որից էլ հայ. փիլթայ, ռուս. фитиль և այլն:

Այս կարգի բառերի թիվը բավական մեծ է, բայց ավելորդ ենք համարում հիշել մի առ մի: Կարևոր է սակայն հիշատակել դարաշրջան նշանակող երեք հետաքրքրական բառեր, որոնք են.

1) Ներ «600 տարվա մի շրջան», որ մտել է հայերենի մեջ հունական nēros ձևից, իսկ սա էլ ծագում է սումերական nēru «600» բառից:

2) Սոս «60 տարվա մի շրջան», որ մտել է հայերենի մեջ հունարեն sóssos ձևից, իսկ սա էլ ծագում է ասուր. šuššu, šušu «վաթսուն» բառից: Բոլորի աղբյուրն է սումեր. šuš «վաթսուն», որ կազմված է uš «30» բառի կրկնությամբ (իբր uš-uš 30+30), իսկ սա էլ առաջանում է a «տասը» × օժ «երեք» բառերից:

3) Շար «3600 տարվա մի շրջան». սրա բուն աղբյուրն է բաբել. šar, ասուր. ša-ar, որ նշանակում է «3600» թիվը: Սրանից են փոխառյալ ասոր. sar, հունարեն sáros, լատ. sarus «3600 տարվա շրջան»: Բայց սրանցից կարելի չէ ենթադրել հայ. շար, քանի որ սկսվում է շ ձայնով, մինչդեռ մյուսները ունին s: Հայտնի չէ, թե ի՞նչ ճանապարհով ասորեստանյան ձևը եկել հասել է մեզ: Կարելի էր թերևս ենթադրել, թե ասուրաբաբելական ձևը նախ մտել է խալդերենի մեջ, որից անցել է հետո հայերենի: Սակայն բառի շատ սահմանափակ գործածությունը և գործածության հանգամանքները չեն կարող ընդունելի դարձնել նաև այս կարծիքը:

Բացի հասարակ անուններից Ասորեստանը տվել է մեզ նաև չորս հատուկ անուն, որոնք են.

1) Նանե աստվածուհի Հայոց, դուստր Արամազդի՝ հոր ամենայն աստվածոց < ասուր. Nanā, Ninā աստվածուհի (Սուլմերական Ninni և փոքրասիական Նանա):

2) Սենեքերիմ, նշանավոր թագավոր Ասորեստանցոց (705-681) և մեծ աշխարհակալ. ծանոթ է մեզ Ս. Գրքի միջոցով (Դ թագ. ԺԸ. 13). Ժ դարից սկսվեց գործածվել նաև մեր մեջ. ասուրերեն ձևն է Sin-ahhē-erība, որ բուն նշանակում է «Սին (Լուսին աստվածը) եղբայրներս շատացրեց»:

3) Ադրամելեք և

4) Սարասար կամ Սանասար } Ասորեստանցոց Սենեքերիմ թագավորի որդիքը, որոնք իրենց դաժան հորը սպանելով՝ Հայաստան փախան և նրանցից սերվեցան Արծրունի և Գնունի նախարարական տոհմերը (Դ թագ. ԺԹ. 37, Ես. ԼԷ. 38): Այս անունները գործածական դարձան նաև հայոց մեջ: Երկուսն էլ հասել են մեզ եբրայեցոց և հույների միջոցով՝ Աստվածաշնչի թարգմանությամբ:

Սրանցից դուրս կա նաև երկու կասկածելի բառ, որոնք են՝

1) Կաշի. այս բառի հետ նման են սուլմեր. kuš «կաշի, մորթ» և արաբ. qaš°. և կարելի է ենթադրել, որ ասորաբաբելական աշխարհի միջոցով անցած լինի մեզ:

2) Կորիւն «առյուծի ձագ» (բայց նաև գայլի, շան, կետի, իժի կամ վիշապի ձագ). սրա հետ նման են հնչում ասոր. gūrā, արաբ. jārū, եբր. gūr, gōr «անասունի ձագ», բայց հատկապես «առյուծի ձագ»: Ի նկատի ունենալով ց>կ ձայնափոխությունը, կարելի էր ասել, որ այս բառն էլ հնագույն ասուրական փոխառություններից է, բայց ասուրերենը ունի

միայն girru «առյուծ»: Հետևաբար և փոխառության հարցը մնում է անստույգ:

Այժմ եթե մի հետադարձ հայացք ձգենք այս բոլոր փոխառությունների վրա, կտեսնենք Ասուրաբաբելական քաղաքակրթության հետքերը: 27 փոխառություններից 7 պատկանում են պետական կյանքին. սրանցից չորսը վարչական են (մադխազ, նահանգ, քաղաք, նաև կղզի), 3-ը զինվորական (քերդ, մաքառիլ, նաև գագաթն՝ իբր ամրության վայր), վեցը պատկանում են շինարարական արվեստին (բուռ, կիր, թոնիր, խուց, տամալի, ուրագ), երեքը նորամուտ անասունների անուններ են (ուղտ, կոզմ, կոզե), ամազը պատկանում է մետաղագործության (հնդեւրոպական հայերը, ինչպես գիտենք, հնապես ճանաչում էին միայն արծաթը. մյուս մետաղներին հետո ծանոթացան և զարմանալի չէ, որ ամազը Ասորեստանցիների միջոցով ստացած լինեին. նույն իսկ Հնդիկները ամազը ստացել են Սեմական աշխարհից. հմմտ. սանս. nāga «անագ, կապար»).— առտնին տնտեսության վերաբերյալ բառեր են հալաւ, մալուխ, կշիռ, մզել, սովորական կյանքի վերաբերյալ բառեր են տարածել, փոխ, փոխել, ցեց.— և վերջապես կմախք, կմախիք և կնիք ներկայացնում են Ասորեստանյան կուլտուրայի ամենահետաքրքրական երևույթները, որոնց մասին արդեն խոսել ենք վերը:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅԼ ԲՆԻԿՆԵՐԻ ԵՎ ԿՈՎԿԱՍՅԱՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՎՐԱ

Երբ Արմենները (Հայերը) հառաջացան Խալդիա, բնականաբար մի անգամից ամբողջ երկիրը չլցրեցին, այլ նախ մտան արևմտյան գավառները, հետո դիմեցին դեպի կենտրոնը և ապա դեպի հյուսիս, հարավ և արևելք: Այսպես՝ հայերը նախ մտան Ծոփաց աշխարհը, հետո Տուրուբերան, մինչև Վանա ծովի արևմտյան եզրերը. այստեղից նրանք դիմեցին դեպի հարավ՝ Աղձնիք և դեպի հյուսիս՝ Այրարատ: Քսենոփոնի ժամանակ (401 թ.) Հայաստանը տարածվում էր վերին Երասխից մինչև Բոհտան-սու. Կորդուացիք առանձին ու անկախ ժողովուրդ էին, ինչպես և Տայեցիք, Խալիբները և Փասիանցիք: Ն. Ք. 189 թվին, երբ Ջարեհ և Արտաշես հիմնեցին անկախ հայկական փոքրիկ թագավորություն, առաջինը իր իշխանության տակ ուներ միայն Ծոփքը, Հանձիթը և ուրիշ մի քանի գավառներ. իսկ Արտաշես՝ իշխում էր միայն Այրարատի մի մասի վրա: Սրանից հետևում է, որ հայաշատ վայրերը միայն այս նահանգներն էին: Հիմնվելով Ստրաբոնի տված տեղեկությանց վրա՝ Հյուբշման (Հին Հայոց տեղ. անունները, էջ 60) գտնում է, որ այդ ժամանակ հոծ հայություն կար Այրարատի և Տուրուբերանի մեջ, օտար տարրերով խառն հայություն կար Ծոփաց և Աղձնյաց մեջ, իսկ Հայաստանի մյուս նահանգների բնակչությունը բաղկացած էր զանազան օտար տարրերից: Հայերը դեռ այդ տեղերը ոտք չէին կոխած: Ջարեհ և Արտաշես ընդարձակում են իրենց երկիրը, օտար ազգերից խլելով նոր հողամասեր. այսպես՝ Մարերից խլեցին Կասպիանեն (Փայտակարան), Փավնիտիսը (Սիւնիք?) և Բասորոպետան (Վասպուրական). Վրացիներից խլեցին Պարիադրոս լեռան ստորոտի գավառները (Տայք, Կղարքք), Խորձյանը և Գուգարքը. Խալիբներից և Մոսիմացիներից խլեցին Կարինն ու Դերջանը, Կատաոնացիներից խլեցին Եկեղիքը, իսկ Ասորիներից՝ Տարոնը<sup>1</sup>: Ուրեմն այդ նահանգների ու գավառների ժողովուրդները մար, վրացի, խալիբ, մոսիմացի, կատաոնացի, ասորի և անշուշտ

<sup>1</sup> Տե՛ս Ստրաբոն Հայոց մասին, Երևան, 1940, էջ 57:

նաև խալդի էին: Շուտով հայացան Սիւնիքը, Վասպուրականը, Բարձր Հայքը և թերևս Մոկք. մասամբ և մակերևութաբար հայացան Կորդուք, Արցախ, Ուտի, Գուգարաց հարավային մասը և Տայք. իսկ Պարսկահայք և Փայտակարան միշտ օտար մնացին ու բնավ չհայացան: Մինչև Ձ դար Ծոփաց մեջ (Հանձիթ) դեռ մնում են Ուրտացիք, որոնք խոսում են մի առանձին լեզու՝ տարբեր հայերենից և ասորերենից. մինչև Ժ դար՝ Ասորիները, Խուբեցիները և Սասնեցիք իբրև առանձին ժողովուրդներ ապրում են Հայաստանի հարավային նահանգներում և ունին իրենց սեփական լեզուն. իսկ Առանցիք (Աղվանական մի ցեղ) ապրում են Ուտիի մեջ: Աղվանների հայացումը Մարքվարտ դնում է ԺԱ դարում<sup>1</sup>: Դեռ Ժ դարում արաբ աշխարհագիր Իստախրի և ուրիշներ գիտեն, թե Պարտավի բնակչությունը առաներեն է խոսում: Ուտի նահանգում Թ դարից հիշվում են Սևորդիք, որ համարվում են հունգարական մի ժողովուրդ: Վանա ծովի արևելյան կողմում (Մարդաստան գավառի մեջ) բնակվում էին Մարդացիք, որոնք հիշվում են Քսենոփոնի ժամանակ և իրենց գոյությունը դեռ շարունակում են Ներոնի օրով (54-68): Հերոդոտոս հիշատակում է նաև Սասպիրացիներին (Հայաստանի հյուսիսային կողմում, Սպերի մոտ), Մատիացիներին՝ Վանա և Ուրմիո լճերի միջև, և Պակտիացիներին՝ Հայաստանի հարավային կողմում<sup>2</sup>:

Այսպես ուրեմն, Հայաստանի հողի վրա բնակվում էին, բացի խալդիներից՝ 18 զանազան բնիկ ժողովուրդներ, յուրաքանչյուրը իր առանձին ու սեփական լեզվով: Այդ բոլոր ազգերը կամաց կամաց ձուլվեցան հայոց մեջ և հայերեն լեզուն ընդհանուր դարձավ Հայաստանի ամեն կողմը: Ստրաբոն (21-25 թվերին) ասում է, որ իր ժամանակ արդեն բոլոր նվաճված նահանգները հայախոս էին դարձել (ὡστε πάντας δμογλώττους εἶναι այնպես որ բոլորը միալեզու եղան)<sup>3</sup>: Այս խոսքը պետք է հասկանալ այն մտքով, թե հայերենը իբրև տիրող լեզու հասկացվում էր ամբողջ Հայաստանում, բայց միայն հին նահանգների մեջ էր ընդհանուր խոսակցական լեզու (Hübschmann, Հին Հայոց տեղ. ան. էջ 28 և 53):

Այս բոլոր ազգությունները հայանալու և հայախոս դառնալու ժամանակ՝ անշուշտ պահեցին իրենց բնիկ լեզվից որոշ հետքեր: Որոշ բառեր, հատկապես տեղական նշանակություն ունեցող բառերից,

<sup>1</sup> Marquardt, Entstehung, էջ 36:

<sup>2</sup> Hübschmann, Հին հայոց տեղւոյ անունները. Վիեննա 1907, էջ 10-61:

<sup>3</sup> Ստրաբոն Հայոց մասին, էջ 57:

ինչպես բույսերի անուններ կ'ըն, մտան հայերեն լեզվի մեջ՝ կ'ամ իբրև տեղական բարբառային ձևեր և կ'ամ նույն իսկ կարողացան տարածվել ընդհանուր հայերենի մեջ: Օրինակի համար՝ Խորենացու Աշխարհագրության մեջ (էջ 610) հիշվում է կատակ անունով մի թռչուն, որ հատուկ է եղել Ուտի գավառին: Այս բառը անշուշտ ուտիերեն է: Չունենալով ո՛չ մի տեղեկություն այդ լեզուների մասին, բնականաբար չենք կարող որոշել նրանց ազդեցության չափը: Այդ լեզուներից փոխառյալ բառերը գտնվում են հայերենի չմեկնված բառերի շարքում և արդի գավառական բարբառներում:

Սակայն եթե այս բնիկների լեզուն մեզ ծանոթ չէ, ընդհակառակը շատ լավ գիտենք Կովկասյան զանազան ազգերի լեզուները, որոնցից ոմանք նույնպես գտնվում են Հայաստանի նախաբնիկների թվում և հետո հայացել են: Ուստի, բուն նյութի քննության անցնելուց առաջ, տանք մի ընդհանուր տեղեկություն Կովկասյան լեզուների վիճակագրության և նրանց լեզվաբանական ցեղակցության մասին:

Կովկասյան լեռնաշղթայի երկու կողմերում խոսվում է 40 լեզու, չհաշվելով հնդեվրոպական ցեղերի լեզուները (ինչպես են՝ ռուսերենը, հայերենը, օսեթերենը, թաթերենը, լահճերենը կ'ըն) և թուրք-թաթարական ցեղերի լեզուները (ինչ. նողայ, բալթար կ'ըն):

Այս 40 լեզուները բաժանվում են երկու խմբի.

ա) Հարավային Կովկասյան լեզվախումբ.

բ) Հյուսիսային Կովկասյան լեզվախումբ.

Հարավային խումբը պարունակում է չորս գլխավոր լեզուներ, որոնք են՝ վրացերեն, մինգրելերեն, լազերեն և սվաներեն: Հյուսիսային խումբը բաժանվում է երկու ճյուղի՝ արևելյան և արևմտյան:

Արևելյան ճյուղը, որ կոչվում է նաև չեչեն-լեզգիական, ունի 8 ընտանիք.

1) Չեչենական ընտանիք (չեչեն, բաց կամ թուշ, ինգուշ լեզուները).

2) Ավարո-անդի ընտանիք (ավարերեն, անդի, բոտլիխ, գողդբերի, կարատա, ալվալ, բազուլալ, տինդի, ճամալալ, խվարշի, դիդո, կապուճի, խունգալ).

3) Լակ կամ կազիկունուխ.

4) Արճի.

5) Դարգվա (Խիլերկիլի, ակուշա, վարկուն, կայտաղ, կուբաճի).

6) Սամուրյան ընտանիք (լեզկի, աղուլ, թաբասարան, ռուտուլ, ծախուր, բուդուխ, քեկ).

7) Ուտի.

8) Խինալուդ.

Արևմտյան ճյուղը, որ կոչվում է նաև Աբասգո-կերկետ, պարունակում է՝

1) Ադիգե (չերքեզերեն, կաբարդիներեն).

2) Ուբիխ և

3) Ափխազերեն լեզուները:

Այս բոլոր լեզուները որոշ չափով ծանոթ են գիտության. հրատարակված են բառարաններ, քերականություններ և զանազան բնագիրներ: Հատկապես քննված են վրացերենը (իբրև այս բոլորի մեջ ամենից քաղաքակիրթ ազգի լեզուն և իբրև միակը, որ օժտված է նաև հին գրականությամբ), լազերենը և ափխազերենը: Սակայն այնուամենայնիվ դեռ չկան գիտական մեթոդով պատրաստված ուսումնասիրություններ և մենք չգիտենք այս զանազան լեզուների ցեղակցական կապը: Ամենից ավելի հայտնի է հարավային խմբի դրությունը. այս խումբը կազմող 4 լեզուները հայտնի կերպով մեկ աղբյուրից են առաջանում և իրար հետ ունին ճիշտ այն հարաբերությունը, ինչ որ օրինակ՝ սեմական լեզուները իրար հետ: Բայց թե արդյոք հյուսիսային Կովկասյան լեզուներն էլ բոլորը իրար հետ ցեղակից են, ավելի ևս՝ թե արդյոք նրանք կապ ունին՝ հարավային Կովկասյան լեզուների հետ թե ոչ՝ հայտնի չէ:

Գաղափար տալու համար այս լեզուների հարաբերության մասին, դնում ենք այստեղ 1-20 թվականները հինգ գլխավոր լեզուներով:

վրացերեն	լազերեն	կաբարդին	ուտի	չեչեն
1. էրթի	առ	zzə	sa	ça“a
2. օրի	ժուռ	t'ü	p'ä	ši “ə
3. սամի	շում	ʃə	xib	q' o“ə
4. օթխի	օթխ	p'tlə	bip	dl“ə
5. խութի	խութ	tx'u	˚xo	pxi“ə
6. էքվսի	անշ	xə	u˚x	yalx
7. շվիդի	շքույթ	blə	vu˚γ	worh
8. ովա	օրվո	yyi	muγ	barh
9. ցխրա	չխորո	bγu	vuy	is
10. աթի	ուիթ	pʃə	vic	it
20. օցի	էչ	t'os	γa	tyə

Եթե հարավային և հյուսիսային Կովկասյան լեզուները տարբեր ճյուղերի են պատկանում, ուրեմն հայերենի մեջ ունինք երկու տարբեր ներկայացուցիչներ, որովհետև հյուսիսարևմտյան սահմանում Վրացական ժողովուրդներն են, որ հայացել են, իսկ հյուսիսարևելյան սահմանում՝ Առանցիք, այն է Ռուսացիք:

Այն բառերը, որոնք հասարակաց են հայերենի և վրացերենի կամ ուրիշ Կովկասյան որևէ մի լեզվի, թվով 900 հատ են<sup>1</sup>: Այս բառերի մի մասը, և անշուշտ մեծ մասը, վրացերենը և մյուս Կովկասյան լեզուները փոխ են առել հայերենից, քանի որ այդ ժողովուրդները պատմական շրջանում ընդհանրապես գտնվել են հայկական կուլտուրայի և քաղաքական ազդեցության տակ: Բայց անուրանալի է, որ հնագույն շրջանում հայերն էլ ունեցել են փոխառություններ, ինչպես հիշեցինք վերևում, թե՛ վրացերենից և թե՛ Կովկասյան մյուս լեզուներից: Լեզվաբանների գործը պիտի լինի մազել այդ 900 բառերը և որոշել ու հաստատել, թե դրանցից որո՞նք փոխառություն են հայերենից վրացերեն և որոնք ընդհակառակը Կովկասյաններից անցել են հայերենի: Այս նպատակին հասնելու համար մենք ունինք հետևյալ միջոցները.

1) Այն բառերը, որոնք հայկական կազմություն ունին, օրինակ ածանցված են որևէ հայերեն մասնիկով կամ ներկայացնում են հայկական մի բարդություն, մինչդեռ նրանց արմատը չկա Կովկասյան լեզուների մեջ, բնականաբար փոխառյալ են հայերենից.— այսպես վրաց. արտավարի «7 փթանոց չափ» փոխառյալ է հյ. արտավար բառից, որովհետև ունի հայկական կազմություն (բարդված է արտ և վարել բառերից, որոնք հայերեն են և չկան վրացերենում): Դարձյալ վրաց. *նիվթի* «նիւթ, տարր», *նիվթիերի* «նիւթական» բառերը անշուշտ փոխառյալ են հայերենից, որովհետև նրանց մայրը, որ է *նիւթ*, ունի հայկական կազմություն (կազմված է *նի* մասնիկով՝ *հիւթ* արմատից) և այդ *հիւթ* արմատը գոյություն չունի վրացերենում: Նույնպես վրաց. *մաշքաթելա*, ռուս. *մաշկատիլ*, «չղջիկ» բառերը անշուշտ փոխառյալ են հյ. *մաշկաթել* հոմանիշից, որովհետև սա զուտ հայկական բարդություն է, և վրացերենում կամ ուտիերենում գոյություն չունին առանձին *մաշկ* և *թել* արմատները:

2) Այն բառերը, որոնք ծագումը գիտենք թե հնդեվրոպական է, բնականաբար փոխառյալ են հայերենից և ո՛չ թե հակառակը.— այս-

<sup>1</sup> Այս բառերի ձայնաբանության մասին տե՛ս իմ ընդարձակ հոդվածը, Արարատ, 1898, էջ 309, 365:

պես՝ վրաց. ուրնորա «խոսակցություն», բորբոքի «զայրանալ, բարկանալ», հումի, ումի «հուս», վրաց. մխիե «գորշ», լազ. մղ «մխալ», ռուս. մուղ՝ «մուր», վրաց. նավի «նավ» և այլն փոխառյալ են հայերենից, որովհետև սրանց մայրը (հյ. բան, բորբոք, հում, մուխ, նաւ) հայերենի հնդեվրոպական բառերից են:

3) Պատահում է երբեմն, որ նախորդ երկու պայմանները միանում են մեկ բառի վրա. այս պարագային, հայերենից փոխառյալ լինելը ապացուցվում է կրկնակի փաստով.— այսպես՝ վրաց. հասակի, ասակի «տարիք, հասակ, բարձրություն, մեծություն», ասակովանի «հասակավոր», ուսասակո «անչափահաս» բառերը անշուշտ փոխառյալ են հայերենից, որովհետև նրանց մայրը հասակ, թե՛ ունի հայկական կազմություն (ակ մասնիկով հաս-անել արմատից) և թե՛ այդ հաս արմատը հնդեվրոպական ծագում ունի և չկա վրացերենում: Նույնպես վրաց. սաստիկի «կարծր, անզուր, խիստ» (հմտ. սաստիկի քարի «սաստիկ քամի», սաստիկի կացի «անզուր, դաժան մարդ»), սաստիկորա «կատաղություն, բռնություն» անշուշտ փոխառյալ են հայերենից, որովհետև նրանց մայրը՝ սաստիկ, թե՛ ունի հայկական կազմություն (իկ մասնիկով սաստ արմատից) և թե՛ այդ սաստ արմատը հնդեվրոպական ծագում ունի:

4) Այն բառերը, որոնք հայերենը փոխ է առել ասորերենից, պահլավերենից, երբեմն էլ հունարենից, և միևնույն ժամանակ գտնվում են վրացերենում կամ մյուս Կովկասյան լեզուներում, անշուշտ փոխառյալ են հայերենից վրացերեն և այլն, և ո՛չ թե ընդհակառակը: Արդարև Վրացիք և մյուս Կովկասյան ժողովուրդները չլինելով ուղղակի հարևան ասորիների, պահլավների և մասամբ էլ հույների, չէին կարող նրանցից ուղղակի փոխառություններ կնքել: Ուստի բնական է ենթադրել, որ այդ կարգի փոխառությունները Հայոց միջոցով են անցել Կովկաս: Սրան իբրև ապացույց ծառայում է նաև այն հանգամանքը, որ այդ կարգի փոխառությունները, եթե որոշ ձայնական փոփոխությունների ենթարկվել են հայերենի մեջ, նույն ձայնական փոփոխություններով գտնվում են նաև վրացերենում և այլն: Օր.

զմրուխտ	< իրան. *zumurruft	վրաց. զուրմուխտի
զանձ	< պիլ. ganj	» զանձի
ադամանդ	< հուն. adamantos	» ադամանտի
անդերձ	< պիլ. andarz	» անդերձի
բաղեն	< եբր. baddim, հուն. baddin	» բաղենի

բազմակ	< ասոր. mazmak	»	բազմակի
հրապարակաւ	< պիլ. *frapāḏak	»	ուրակպարակաղ
հրովարտակ	< պիլ. fravartak	»	րոարտակի
հրեայ	< ասոր. ṯhūḏāyā	»	հուրիա
քաղաք	< ասուր. kalakku	»	քալաքի

Այս բառերից մի քանիսը շատ բնորոշ են իրենց ծայնափոխության տեսակետով. օրինակ՝ հրեայ < ṯhūḏāyā բառի մեջ նախաձայն Ի-ի անկունը զուտ հայկական օրենք է. նույնպես ծ>ր ծայնափոխությունը. այս ծայնը իրենց լեզվի մեջ չունենալով՝ հայերը դարձնում էին միշտ ր՝ թե՛ ասորերեն և թե՛ պահլավերեն փոխառությանց մեջ. ինչ. ապարանք < հպրս. apadāna, շամփուր < ասոր. šappūḏā, սպարապետ < հպրս. spāḏa-pati և վերջապես -եայ զուտ հայկական մասնիկ է, որ փոխանակվել է հայոց մոտ ասորական āyā մասնիկի հետ (հմմտ. քրիստոնեայ, քաղդեայ): Այս բոլոր ձևափոխությունները միաժամանակ գտնում ենք վրաց. հուրիա բառի մեջ:— Ձմրուխտ < zumurrut բառի մեջ Ի>խ ծայնափոխությունը զուտ հայկական հատկություն է. հայերենը չունենալով ֆ (Ֆ) ձայնը, պահլավական փոխառությանց մեջ է բաղաձայնից առաջ դարձնում էր խ. ինչ. պրս. Hazāraft>Հազարաուխտ, պրս. zar-sufta>զառնաուխտ:— Հրովարտակ և հրապարակ բառերի մեջ ր>հր ծայնափոխությունը զուտ հայկական է և հատուկ է հնագույն հայերենի բառերին. վրացերեն րոարտակի և ուրակպարակաղ ձևերը չէին կարող առաջանալ, եթե իրանցից առաջ չլինեին հ նախաձայնով սկսող ձևերը, որովհետև վրացերեն լեզվի ծայնաբանության մեջ չկա մի այնպիսի օրենք, որով նախաձայն ֆ ջնջվի:

Այս բոլորից պարզ է ուրեմն այն, որ ասորական, իրանական և մասամբ էլ հունական փոխառությունները հայերենից են անցել Վրաստան և Կովկաս, զոնե հնագույն ժամանակներում: Ավելի հետո, երբ պարսիկները և հույները առաջացան մինչև Կովկաս, փոխառությունները կարող էին լինել ուղղակի:

5) Վրացական գրականությունը սկզբնական շրջանում օգտվել է հայ գրականությունից: Աստվածաշունչը և ուրիշ զանազան գրվածքներ թարգմանվել են հայկական օրինակի վրայից: Այդ թարգմանությանց ժամանակ, ինչպես բնական էր սպասել, այլևայլ բառեր իբրև պարզ տառադարձություն, անցել են վրացերենի: Այս կարգի բառերը, ինչպես և առհասարակ այն բառերը, որոնք վրացական գրականության մեջ

հազվադեպ գործածություն ունին, փոխ առնված պետք է լինին հայերենից և ոչ թե ընդհակառակը:

6) Այն բառերը, որոնք հակառակ առաջին պայմանին, ունին Կովկասյան կազմություն, կամ նրանց արմատը կա՝ վրացերենում կամ մյուս Կովկասյան լեզուներում, բայց չկա հայերենում, բնականաբար փոխառյալ են Կովկասյաններից հայերեն: Այսպես՝ հյ. ոչխար բառը իր նմաններն ունի լազ. չխուրի, մինգ. շխուրի, վրաց. ցխովարի, ինգիլ. ցխոր հոմանիշների մեջ: Բայց այս բառը հայերեն չէ, այլ փոխառյալ է Կովկասյաններից, քանի որ արմատը չխ—ցխ գոյություն ունի վրացերենի մեջ և նշանակում է «կեալ, ապրիլ». այս արմատից են վրաց. ցխովելի «չնչավոր, անասուն» ցխովրեթա «կյանք, կենսագրություն, պատմություն», սացխովարի «կենսական, ուտելիք, սնունդ, բնակություն» և այլն. ըստ այսմ ցխովարի>ոչխար նշանակում է բուն «կենդանի»:

7) Այն բառերը, որոնք հայերենի մեջ սահմանափակ և միայն տեղական գործածություն ունին, մինչդեռ Կովկասյանների մեջ ավելի ընդհանուր են, բնականաբար փոխառյալ են Կովկասյաններից հայերեն և ո՛չ թե հակառակը: Այսպես՝ ծէս բառը հայ մատենագրության մեջ շատ ուշ ժամանակ միայն գործածված մի բառ է (առաջին անգամ Ոսկիփոր) և բարդ ու ածանց ձևեր էլ չունի. նոր գրական լեզուն է միայն, որ կենդանություն տալով նրան, կազմել է զանազան բառեր. ինչ. ծիսական, ծիսարան, ծիսակատարութիւն, հայածէս, յունածէս և այլն: Սրան հակառակ, նույն բառը հին ժամանակից սկսած շատ կենդանի է վրացերենում, ուր ունի բազմաթիվ ածանցներ. ինչ. ծեսի «կարգ, բնության օրենք, կարգադրություն, կանոն, եկեղեցական ծես, սովորություն, բնություն, բարք», ծեսերա «կարգադրել, կանոնավորել, կարգավորել», զածեսերա «կանոն, հաստատություն, իրաման, կարգ», զանծեսերա «կարգադրություն, կարգադրել, կանոնավորել», մոծես «ընկերության անդամ, քահանա, արեղա, կրոնավոր», ուծեսո «անկարգ, խառնակ, անկանոն», ուծեսորա «խառնակություն, անկարգություն»: Այս հանգամանքից հետևում է, որ ծէս բառը փոխառյալ է վրացերենից:

Դժբախտաբար կարելի չէ բոլոր 900 հայ-կովկասյան բառերը վերոհիշյալ 7 կետերի համեմատ մեկնաբանել. և կան շատ այնպիսի բառեր, որոնց համար կարելի չէ ասել, թե ո՞վ է փոխատուն և ո՞վ է փոխառուն, զոնե եթե ուզենանք վերաբերվել գիտական սկեպտիկ վերաբերմունքով: Այսպես օրինակ՝ ծայր բառը գտնում ենք նաև



վրացերենի մեջ ծվերի ձևով, բայց վճռել՝ թե սրանցից ո՞րն է փոխառյալ՝ կարելի չէ:

Մի կողմ թողնելով հայերենից փոխառյալ Կովկասյան բառերի հարցը, որ մեր ներկա նյութից դուրս է, և քննության առնելով միայն հայերենի փոխառյալ բառերը, մենք կտեսնենք, որ այս բառերը բաժանվում են երեք տարբեր խմբի.

1) Այն բառերը, որոնք գտնվում են հայերենի և հյուսիսային Կովկասյան լեզուների մեջ և չկան վրացական խմբի մեջ: Այսպես, օրինակ՝ խոտ, որի հետ նույն են արչ. xotu, անդ. xordo «խոտ», xotte «արմատ», ուտ. xod, ավար. Կսթ «ծառ», ռուս. xüt<sup>у</sup>, ցախ. xüta «գարի»: Այս կարգի բառերը հայերենի այն փոխառություններն են, որ կատարվել են հյուսիսային Կովկասյան լեզուների խմբից:

2) Այն բառերը, որոնք գործածական են մեր Ե դարի գրականության մեջ և գտնվում են նաև վրացական խմբի մեջ ու չկան հյուսիսային Կովկասյան լեզուներում. սակայն վրացական խմբի մեջ էլ նրանք ո՛չ թե առանձնապես նման են վրացերենին, այլ ավելի լազերենի ու մինգրելերենի: Հայտնի է, որ վրացական խմբի լեզուները երկու կարգի են բաժանվում. մի կողմում գտնվում է վրացերենը, մյուս կողմում լազերենն ու մինգրելերենը. օրինակ՝ առաջինի ծ, ձ, ց ձայների դեմ մյուսներում գտնում ենք միշտ ժ, ջ, չ. ինչպես՝

վրաց.	ծերի	«ճանճ»	=	լազ.	մհաջի
»	ցա	«երկինք»	=	»	չա
»	ցխրա	«ինը»	=	»	չխո՛րո
»	ցրամլե	«արցունք»	=	»	չերամո՛լե

Արդ՝ հայերեն հին փոխառություններն էլ ներկայացնում են ճշտիվ ժ, ջ, չ և ո՛չ թե ծ, ձ, ց. ինչ. ոչխար < լազ. չխուրի, վրաց. ցխովարի, ճանճ < լազ. մճաջի, մինգր. ճանջի, վրաց. ծերի:

Այս նմանություններից ի հարկե պետք չէ հետևցնել, թե փոխառու լեզուն լազերենն է կամ մինգրելերենը. որովհետև, եթե այս և նման կետերում լազերենն ու մինգրելերենը համապատասխան են հայերենին, ուրիշ կետերում էլ չեն. այսպես, հենց վերի ձևերից հայերեն ոչխար իրապես ո՛չ մի լեզվի համապատասխան չէ. նախաձայն ո ձայնավորը պակասում է բոլորի մեջ: Նույնպես ճանճ բառի վերջածայնի դեմ մյուսների մեջ ունինք ջ և ոչ ժ: Հայկական տոմարի 2-րդ և 3-րդ

ամիսները (հոռի, սահմի), որոնք ձևացած են վրացական լեզվախմբի 2, 3 թվականներից, իրապես նման չեն ո՛չ մեկի հետ. հմմտ. վրաց. օրի, հերի, մինգր. ժիրի, ժուրի, ինգիլ. օր, օօր, սվան. օրի, հերի, յերվի, լազ. ժուր, ծուր, ջուր «երկու». — վրաց. սամի, ինգիլ. սամ, մինգր. սումի, շումի, լազ. սում, շում, ժում, սվան. սեմի «երեք»:

Թե առանձնապես վրացերենը (գոնե որոշ դեպքերում) հեռու է հայերենից՝ ցույց է տալիս ճանճ բառի վրաց. ծերի ձևը: Վրացերենի ձայնաբանության օրենքներով՝ յ համապատասխանում է խմբի մյուս լեզուների ջ, նջ ձայներին. ինչպես վրաց. ցվարի=մինգր. ցունջի «ցող», վրաց. ձիրի= մինգր. ջինջի «արմատ», վրաց. քմարի=լազ. քոմոջի, մինգր. քոմոնջի «ամուսին» և այլն: Որքան հեռու է յ ձայնը ջ, նջ ձայներից, այնքան էլ մոտիկ են լազերենն ու մինգրելերենը հայերենին:

Այս բոլորից հետևում է, որ հայերենի հնագույն փոխառությանց իբր աղբյուր ծառայող լեզուն ո՛չ միայն վրացերենը չէ, այլ և մեզ ծանոթ լեզուներից ո՛չ մեկը չէ. այլ արդի վրացական աշխարհից ավելի հարավ (Հայաստանին ավելի մոտիկ) գտնված մի ուրիշ լեզու, որ այժմ կորած է և որի մոտիկ ներկայացուցիչներն են արդի լազերենն ու մինգրելերենը: Այդ լեզուն անշուշտ խոսում էին Գուգարքի և Տայքի նախկին բնիկները:

3) Այն բառերը, որոնք գործածված են մեր գրականության մեջ ավելի ուշ ժամանակ և բացառապես նման են վրացերենին: Օրինակ՝

ծես	վրաց. ծեսի
թոկ	» թոկի
բալդինջ	» բաղլինջո և այլն:

Այս կարգի բառերը փոխ են առնված ուղղակի վրացերենից (անշուշտ հին փոխառու անծանոթ լեզուն այլ ևս ձուլված չիմնելով կամ հայերենի և կամ վրացերենի մեջ):

Այս բոլոր նախապատրաստական աշխատանքներից հետո անցնենք թվել այն փոխառությունները, որ հայերեն լեզուն կատարել է Կովկասյան լեզուներից: Այստեղ դնում ենք նախ հյուսիսային Կովկասյան փոխառությունները, հետո հարավային Կովկասյան (վրացական անծանոթ լեզվից) փոխառությունները, իսկ զուտ վրացական փոխառությունների մասին կխոսենք առանձին գլխով:

Ա. Հյուսիսային Կովկասյան փոխառություններ	
1. աթուր «ուտք»	7. ճաղատ
2. արջն «սև»	8. ճայղ «ցեխ»
3. արջասպ	9. մագիլ?

- |              |           |
|--------------|-----------|
| 4. ար «ոտք»? | 10. մոծակ |
| 5. եզ «մեկ»  | 11. ուղխ  |
| 6. խոտ       | 12. քած   |

Բ. Հարավային Կովկասյան փոխառություններ

- |                           |                                     |
|---------------------------|-------------------------------------|
| 1. Աղբ                    | լազ. թօն «կեղտ»                     |
| 2. անթեղ                  | վրաց. անթեթա «վառել»                |
| 3. բակ                    | » բակի, լազ. baki, սվամ. bog        |
| 4. բոզ                    | » բոզո, լազ. bozo                   |
| 5. գաւառ                  | » գվարի, թուշ. գոր «ցեղ, ընտանիք»?  |
| 6. գդակ                   | » գադիա, լազ. մինգր. քուդի?         |
| 7. գութայ, գութան         | » գութանի, թուշ. գութա...           |
| 8. զովող «ընկեր»          | » զավի                              |
| 9. լակոտ                  | » լեկվի, լազ. լակոտի                |
| 10. խամրիլ, խամուր        | » խմերի, գամ-խմարի                  |
| 11. խծուծ (կանեփի)        | » խվեծա                             |
| 12. խոխոմ «ծոր» տե՛ս խմել |                                     |
| 13. խոճ-կոր               | մինգր. լազ. դեջի=վր. դորի           |
| 14. խմել, խոււմ           | վր. խմեվա                           |
| 15. խոփ                   | » մինգր. խոփի, լազ. խոփե            |
| 16. խռովել                | » խրո                               |
| 17. ծանր                  | » ծոնա, լազ. ծին                    |
| 18. ծիծ                   |                                     |
| 19. ծուծ                  | » ծուծու                            |
| 20. ծիր «զիծ»             | » ծրե                               |
| 21. ծիւ «աթար»            | » ծիվա                              |
| 22. ծմել «սպանախ»         | » ծամալի, թուշ. ծոմալ               |
| 23. ծուխ                  |                                     |
| 24. կոճան «խոզ»           | » գոճի, սվ. գվեճ, մինգր. լազ. դլճի  |
| 25. հոռի (ամիսը)          | » օրի, հերի, լազ. ժուր, մինգր. ժիրի |
| 26. ճանճ                  | մինգր. ճանջի, լազ. ջաջի, վր. ծերի   |
| 27. ճիպո                  | վր. ծիրպլի                          |
| 28. ճկոյթ                 | լազ. ծո՛լու քիթի                    |
| 29. ճղպուր(տ)             | վր. ճուբուրի                        |
| 30. մակ «վրա»             | թուշ. mak                           |
| 31. մշակ                  | վր. մուշակի, լազ. մուշա ևմ.         |
| 32. շլամ «մոխիր»          | » շլամի                             |

- |                     |   |
|---------------------|---|
| 33. շղու(արարոյ)    | » շլու «խենթ»                           |
| 34. շմորիլ «նեխվիլ» | » շմորի                                 |
| 35. ոչխար           | լազ. չխուրի, մինգր. շխուրի, վր. ցխովարի |
| 36. չանջ            | վր. չենջո, լազ. չոնջի                   |
| 37. պոլոճ           | » լազ. բոբուլի                          |
| 38. ջախել, ջախջախել | » ջախեթա, լազ. jax                      |
| 39. սահմի (ամիսը)   | » սամի, մինգր. սումի, լազ. շում         |
| 40. վաղ             | » խվալ                                  |
| 41. տաղախ «ցեխ»     | » լազ. տալախի, ինգիլ. սվ. տալախ         |
| 42. ցմախ (բույս)    | » ծմախի                                 |
| 43. փարախ           | » փարեխի                                |
| 44. փշուր, փշրել    | } » փշերի ևմ.                           |
| 45. փոշի            |   |
| 46. փոշկ «թրիք»     | } » փխուրա                              |
| 47. փուխր, փխրել    |   |

Ահա այն բոլոր փոխառությունները, որ մեր կարծիքով հայերեն լեզուն կարող էր կնքված լինել հյուսիսային և հարավային Կովկասյան լեզուներից. 12 բառ առաջին խմբից և 47 բառ երկրորդ խմբից, ընդամենը 59 բառ: Գալով այն փոխառություններին, որ հայերենը կնքել է հետին շրջանում ուղղակի վրացերենից, դրանց մասին, ինչպես սասցից, կխոսենք առանձին գլխով (գլուխ ԻԲ):

Երբ մի ընդհանուր ակնարկ գցենք այս բոլոր փոխառությունների վրա, կտեսնենք, որ դրանցից շատ քչերն են ներկայացնում որևէ կուլտուրական արժեք: Չհաշվելով երկրագործական ու գյուղատնտեսական բառերը (մշակ, ոչխար, փարախ, ճղպուր, խծուծ, գութան, խոփ, կոճան, բակ), իբրև զուտ կուլտուրական արժեք ունեցող բառեր կարող ենք հիշել միայն արջասպ, գդակ, բայց հատկապես հոռի և սահմի բառերը, ընդամենը 4 բառ: Մնացյալ ամբողջ բառերը ներկայացնում են սովորական կյանքի հասարակ բաներ. ինչ. աղբ, անթեղ, լակոտ, խմել, ծանր, ճանճ և այլն, և այլն: Բայց այսպես չեն լինում ազգից ազգ և լեզվից լեզու եղած փոխառությունները: Երբ մի ազգ մի ուրիշ ազգի լեզվից բառեր է փոխ առնում, առնում է այնպիսի բառեր, որոնք իր կուլտուրական կյանքի որևէ պահանջը լրացնում են: Հայերենը բազմաթիվ փոխառություններ ունի հունարենից, բայց դրանք բոլորը կրոնական, զրական, կամ գիտական տերմիններ են: Հայերենը

բազմաթիվ փոխառություններ ունի պարսկերենից, բայց այդ բոլորը պետական կազմակերպության, վարչական աստիճանների կամ պաշտոնների, արվեստների և գիտության վերաբերյալ բառեր են: Այսօր էլ հայերենը ռուսերենից և եվրոպական լեզուներից զանազան բառեր է փոխ առնում, բայց բոլորն էլ ներկայացնում են որևէ քաղաքակրթական կողմ: Փոխ ենք առնում զապիճկան ու սուխարին, բայց ո՛չ թե հասարակ կոճակը և հացը. որովհետև առաջինները կուլտուրական նորություններ են մեր կյանքի համար, իսկ երկրորդները մեզ վաղուց հայտնի սովորական իրեր:

Երբ մի ազգ կամ ժողովուրդ մի ուրիշ ազգի լեզվից փոխ է առնում սովորական կյանքի վերաբերյալ բազմաթիվ բառեր, դա արդյունք է երկու բանի. կա՛մ այն, որ փոխառու ժողովուրդը ամբողջապես ենթարկված է փոխատուի ազդեցության (պետական, կուլտուրական և այլն), և կա՛մ այն, որ փոխառու լեզուն իր մեջ ունի մի ուրիշ ծուլված տարրի կամ ազգության լեզուն: Առաջին դեպքի համար իբր օրինակ կարող են ծառայել հայերը Պոլսում կամ Նոր Նախիջևանում: Հայերենը Պոլսում, այսինքն ռամիկ կամ ժողովրդական հայերենը, հազարավոր փոխառություններ ունի թուրքերենից, փոխառություններ, որոնք պատկանում են բոլորովին սովորական կյանքին. ինչ. սիւտ «կաթ», եողուրտ «մածոն», իզիւմ «խաղող», արմուտ «տանձ», պուլուտ «ամպ» և այլն, և այլն: Այս փոխառությունները իրավացի են, որովհետև Պոլսի հայերը, մանավանդ հին ժամանակ, ամբողջապես ենթարկված էին տաճիկ պետության, իբրև նվաճված և ստորադրյալ տարր: Նույնպես հայերենը Նոր Նախիջևանում հազարավոր փոխառություններ ունի ռուսերենից, սովորական կյանքի վերաբերյալ. ինչ. քուխնի «խոհանոց», սփոռ «վեճ», բելյո «ճերմակեղեն», փաթալոք «ծեղուն» և այլն, և այլն: Այսպիսի փոխառություններն էլ իրավացի են, որովհետև հայերը Նոր Նախիջևանում կլանված են ամբողջապես ռուսական ազդեցությամբ, քաղաքակրթությամբ ու գրականությամբ:

Երկրորդ դեպքի համար իբր օրինակ կարող է ծառայել Փոքր Ասիայի, հատկապես Կեսարիայի, Յոզղատի և Ատանայի թուրքերենը, որ ունի սովորական և հասարակ կյանքի վերաբերյալ բազմաթիվ փոխառություններ հայերենից. ինչ. avanak «ավանակ», him «հիմք», şork «շնորհք» ևլն:

Այս փոխառություններն էլ ունին իրենց պատճառը. այդ այն է, որ հայերը Փոքր Ասիայում կորցնելով հայերեն լեզուն, ընդունել են թուրքերենը իբրև մայրենի լեզու և իրենց հին լեզվից իրենց հետ են

տարել զանազան բառեր, որոնք և մտել են ընդհանուր գործածության, և նույն իսկ թուրքերի լեզվի մեջ: Այս՝ դեռ այն պարագան է, երբ ծուլված ժողովուրդը միայն լեզվով և պետականորեն է ծուլված, ու դեռ կրոնապես և ազգային տեսակետով պահում է իր անկախ գոյությունը: Իսկ երբ ծուլունը կատարյալ լինել, խտրությունն էլ բոլորովին պիտի վերանար: Այսպիսի օրինակներ տալիս են մեզ հնդկերենը, որ ծուլել է իր մեջ Հնդկաստանի զանազան բնիկներին, հունարենը, որ ծուլել է իր մեջ Հունաստանի նախաբնիկներին, լատիներենը, որ Ֆրանսիայում ծուլել է իր մեջ կելտական ժողովուրդն ու լեզուն և այլն: Այս բոլոր դեպքերումն էլ ծուլող լեզուն ծուլված լեզվից իբրև ժառանգություն է ստացել սովորական կյանքի վերաբերյալ զանազան բառեր:

Երկու դեպքերը հեշտությամբ կարելի է զանազանել իրարից նրանով, որ առաջին դեպքում փոխառությունները շատ բազմաթիվ են, և սովորական ու հասարակ փոխառությունների հետ, միաժամանակ և անպատճառ կան նաև կուլտուրական արժեք ունեցող բազմաթիվ բառեր: Իսկ երկրորդ դեպքում փոխառությունները շատ մեծ թիվ չեն կազմում և միայն պատկանում են սովորական կյանքին:

Այժմ այս դատողությանց համեմատ քննելով մեր Կովկասյան փոխառությունները, պիտի տեսնենք, որ նրանք ներկայացնում են վերոհիշյալ երկրորդ պարագան: Հայերենը փոխառություններ է կնքել Կովկասյան լեզուներից ո՛չ թե նրա համար, որ Կովկասյան ժողովուրդները կուլտուրապես ավելի բարձր էին և հայերը ենթարկված էին նրանց ազդեցության, այլ որովհետև հայերի մեջ ծուլվել էին զանազան Կովկասյան մանր ցեղեր, որոնք իրենց հետ բերին նաև իրենց հին մայրենի լեզվի հետքերը: Այդպիսի ազգություններ էին հյուսիս-արևելքից Ուտեացիք և Աղվանները, որոնք բերին մեզ հյուսիսային Կովկասյան լեզվախմբին պատկանող բառեր, և հյուսիս-արևմուտքից Գուգարացիք և Տայեցիք, որոնք բերին իրենց հետ հարավային Կովկասյան լեզվախմբին պատկանող բառեր: Պատմությունը և հնագիտությունը հաստատում են, որ այդ ժողովուրդները, ինչպես և Կովկասյան բազմաթիվ մանր ազգություններ, հին ժամանակ էլ ո՛չ միայն նշանավոր քաղաքակրթության հասած չէին, այլ և զուրկ էին հասարակ գրության արվեստից, ինչպես մինչև վերջերս էլ էին այդ ազգություններից շատերը, և միայն խորհրդային իշխանության օրով գրի ու գրականության տիրացան: Բոլորովին այլ են հալդիները, որոնք հասած լինելով մեծ կուլտուրական աստիճանի, ինչպես ցույց են տալիս իրենց թողած հոյակապ շինությունները և բնեռագրական արվեստը,

տվին հայ լեզվին ամեն կարգի փոխառություններ՝ նախ իրենց կուլտուրայի պատճառով, և երկրորդ՝ իբրև նվաճված կամ հայերի հետ ձուլված ժողովուրդ: Խաղիները պատկանում են վերևում նկարագրած մեր կրկին դեպքերից հենց երկուսին էլ: Հայերի և Խաղիների համեմատությունը այն է, ինչ որ թուրքերի և պարսիկների՝ Պարսկական Ատրպատականում. առաջինները անքաղաքակիրթ նվաճողի դերում, երկրորդները քաղաքակիրթ նվաճալի դերում. ավելի հետո երկու տարրերը ձուլված իրար հետ՝ առաջինի ազգային անվան տակ և երկրորդի կուլտուրայի ազդեցությամբ:

Այստեղ կարևոր է հիշել մի վերջին հանգամանք:

Թեև մեզ ի սպառ անծանոթ են Խաղիների և Կովկասյան ազգությունների ցեղակցական ու լեզվական հարաբերությունները, բայց անկարելի է չընդունել, որ նրանց բազմադարյան հարևանությունը ազդած լինի միմյանց լեզվի վրա: Ձանազան կողմերից անշուշտ եղել են փոխառություններ: Այսպես՝ հյուսիսային Կովկասյաններից փոխառություններ անցած կլինեն անշուշտ հարավայիններին և փոխադարձաբար. նույնպես Խաղիների լեզվից զանազան փոխառություններ անցած կլինեն թե՛ հյուսիսային և թե՛ հարավային Կովկասյաններին և փոխադարձաբար: Այսպես օրինակ՝ մենք գիտենք, որ մշակ բառը գտնվում է թե՛ հյուսիսային և թե՛ հարավային Կովկասյանների մեջ, ուստի անշուշտ մի փոխառու կողմ կա: Եթե այդպես է, ուրեմն մեր 59 Կովկասյան փոխառությունների գոնե մի մասը կարող է մեզ հասած լինել անուղղակի ճանապարհով, այսինքն՝ Կովկասյաններից անցած նախ Խաղիներին և Խաղիներից էլ հայերենի՝ իբրև խաղիական բառ. — կամ կարող է նաև ընդհակառակը՝ խաղերեն մի բառ անցած լինել Կովկասյաններին և հետո՝ նրանցից անցած հայերենի. — և կամ վերջապես խաղերեն մի բառ մի կողմից անցած լինել Կովկասյաններին և մյուս կողմից հայերին, այնպես որ այսօր հայերենն ու Կովկասյանները իրար նման են դուրս գալիս. մինչդեռ իրապես կապ չկա նրանց մեջ, և Կովկասյան փոխառություն համարված այդ բառերը իսկի Կովկասյան էլ չեն՝ այլ խաղիական: Այս վերջին ենթադրությունը երբեմն ակնբեր է դառնում. օրինակ՝ հայ. գաղատոս «որմնադիր» հազվագյուտ բառը՝ որ բնավ հայերեն բառի կերպարանք չունի, կա նաև վրացերենի մեջ գալատոզի, կալատոզի ձևով և թուշերենի մեջ կալտազ ձևով: Արդ՝ այս բառը, ինչպես հայկական չի երևում, նույնպես ընդհանուր վրացական էլ չէ և վրացական արմատներով էլ չի մեկնվում. ուստի հավանական է, որ խաղերեն լինի և շինարար Խաղիներից անցած լինի թե՛ հայերին և

թե՛ վրացոց: Նույնպես հյ. ժորել «հոսիլ, քամվիլ» բառը, որ միաժամանակ կա ուտեացոց մեջ ժորեսուն և վրաց մեջ ժուրվա ձևով, բայց չի գտնվում ոչ մի ուրիշ Կովկասյան լեզվի մեջ, հավանաբար խաղիական է: Կարելի է կարծել, որ հատկապես կուլտուրական արժեք ներկայացնող փոխառությունները, որ մենք մինչև այժմ Կովկասյան էինք համարում, իրապես խաղերեն բառեր են թե՛ հայերենի և թե՛ Կովկասյանների մեջ թափանցած:

**ԻՐԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՎՐԱ**

Հին ժամանակներից սկսած Իրանի հարթությանց վրա բնակվում էին երկու հնդեւրոպական ժողովուրդներ, որոնք լեզվով ու քաղաքակրթությամբ իրար շատ մոտիկ էին. դրանք էին մարերն ու պարսիկները: Մարերը գտնվում էին Ուրմիո լճից դեպի արևելք, իսկ պարսիկները՝ նրանցից հարավ, Պարսից ծոցի շուրջը: Ամեն անկազմակերպ ազգի պես, սրանք էլ բաժանված էին բազմաթիվ ցեղերի և դեռ մի քաղաքական ամբողջություն և ուժ չէին կազմում: Ասորեստանցիք արշավելով այս ցեղերի վրա, շատերին հպատակ էին դարձրել, բայց տեղի դժվարության պատճառով ամբողջ երկիրը իրենց իշխանության տակ չէին առել: Ն. Ք. 7-րդ դարում մար ու պարսիկ ցեղերը հավաքվեցին մեկ իշխանության շուրջը և կազմեցին մի պետություն, որի նշանավոր ներկայացուցիչը եղավ մարաց թագավոր Կիաքսարը: Կիաքսարը ոչ միայն կարողացավ թոթափել Ասորեստանցոց լուծը, այլ և արշավեց Նինուեի վրա, առավ ու կործանեց և վերջ տվավ Ասորեստանցոց պետության (608): Այսպես հիմնվեց մարական պետությունը, որի նշանավոր մայրաքաղաքը եղավ Եկբատանը (արդի Չամադանը):

Օգուտ քաղելով Արևելքի խառնակ դրությունից, որ առաջացել էր Կիմերների և Սկյութացիների արշավանքով, բոլորովին ապահով իրենց արևելյան ու հարավային սահմաններից, մարերը հառաջացան դեպի Արևմուտք:

Այս այն ժամանակն էր, երբ Արմենները մտնում էին Խալդիա: Խալդիացիք արդեն ուժասպառ՝ չկարողացան դիմադրել արևմուտքից հառաջացող հայերին և արևելքից հառաջացող մարերին: Նրանք տեղի տվին: Շուտով Վանա և Ուրմիայի լճերի միջև գտնված տեղերը անցան Մարաց իշխանության. հայերը բարեկամական դաշինք կապեցին մարերի հետ և նրանց գերիշխանության տակ հիմնեցին վասալ պետություն: Մարերը հայոց վրայով անցան դեպի Փոքր Ասիա և տիրեցին մինչև Ալիս գետը գտնված երկիրներին: Ալիսը դաշնադրությամբ դարձավ Մարաց և Լյուդիական պետության սահմանը (585):

Այս դեպքից քիչ հետո Պարսիկները՝ որ Մարաց գերիշխանության տակ մի վասալ պետություն էին հիմնել, հանկարծ ապստամբվեցին. նրանց թագավորը՝ Կյուրոս արշավեց Մարաստան և Մարաց պետությունը կործանելով հիմնեց Պարսից պետությունը, որ մեկ անգամից ժառանգեց Պարսից ծոցից մինչև Ալիս գետ գտնված բոլոր երկիրները (549): Այսքանը բավական չէր: Պարսիկները իրենց հառաջխաղացությունը սփռեցին ամեն ուղղությամբ և 40 տարվա մեջ տեր դարձան Ասորեստանցոց, Մարաց, Բաբելացոց, Լյուդիացոց և եգիպտական պետությանց նվաճած բոլոր հողերին: Նրանք հիմնեցին մի այնպիսի խոշոր պետություն, որի նմանը դեռ աշխարհը չէր տեսել: Ասիո և Աֆրիկեի բոլոր ծանոթ երկիրները, Կովկասյան լեռնաշղթայից և Սիբիրիո տափաստաններից մինչև Միջին Աֆրիկեի անապատները և Չնդկաստանի ու Չինաստանի անծանոթ դաշտավայրերից մինչև Միջերկրական ծովը և մինչև Դանուբ գետը հպատակվում էին Պարսից պետության:

Հայերը, ինչպես Մարաց, նույնպես և Պարսից պետության հպատակությունը հավատարմությամբ շարունակեցին մինչև 522 թիվը: Այս թվին՝ Կամբիսի մահից հետո, Պարսից պետության ամեն կողմը ապստամբություններ ծագեցին: Ապստամբվեց նաև Հայաստանը: Բայց Պարսից նոր զահակալը Դարեհ, ընկավ աջ ու ձախ և բոլոր ապստամբներին նվաճեց: Դժվար եղավ Հայաստանի նվաճումը, որի համար Դարեհը հինգ արշավանք կազմակերպեց և միայն վերջին անգամ կարողացավ ընկճել հայերին (519): Իբրև առանձին առանձնաշնորհություն՝ նա Հայաստանից կազմեց մի սատրապություն՝ թագավորական տիտղոսով:

Այս վիճակը տևեց երկու դար, մինչև Աղեքսանդր Մակեդոնացին, որ Պարսից պետության վերջ տալով՝ մինչև Չնդկաստան իր իշխանության տակ առավ:

Մակեդոնացոց և Սելևկյանց լուծը կրելուց հետո, Հայերը անկախություն ձեռք բերին 189 թվին և իրենց իշխանությունը մինչև Կուրի հովիտը հասցրին: Այդ ժամանակ արդեն Պարսկաստանում էլ հիմնվել էին մի քանի իրանական պետություններ, ինչպես Հայաստանի կողքին Ատրպատականը, ավելի արևելք՝ Մարաց և Պարթևաց պետությունները: Այս բոլորից ավելի նշանավոր էր Պարթևաց պետությունը:

Պարթևներն արիական մի ցեղ էին, որ սկզբում թափառում էին Միջին Ասիայում, Ոքսոս գետի վերի կողմերում: Արշակ անունով մի իշխանի առաջնորդությամբ նրանք զաղթեցին Կասպից ծովի հարավարևելյան

կողմը (Խորասան) և այնտեղ հիմնեցին Պարթևական պետությունը (250): Դետզիետե զորանալով՝ նրանք հասան Միջագետք ու Բաբելոն և իրենց մայրաքաղաքն էլ Խորասանից փոխադրեցին Տիզբոն: Շուտով հայերն ու պարթևները, իբրև երկու մրցակից պետություններ, իրար դեմ դուրս եկան. Տիզբոն Մեծը նվաճեց Ատրպատականը, Սարաստանը, Միջագետքը և Պարթևական պետության մի մասին տեր դարձավ: Հռովմայեցիներից պարտվելով՝ նա ստիպվեց թողնել այս երկիրները և ամփոփվել Հայաստանի նախկին սահմաններում (66):

Այս թվականից սկսվում է մի երկարատև պատերազմ Հռովմայեցոց և Պարթևների միջև. երկու կողմերը աշխատում են ձեռք բերել Հայաստանի գերիշխանությունը. հայերը մերթ մի կողմ և մերթ մյուս կողմ հարելով՝ պահպանում են իրենց գոյությունը. բայց ընդհանրապես ուժեղ է Պարթևասեր կուսակցությունը: Վերջապես կողմերի միջև համաձայնություն է կայանում, որ Պարթևաց թագավորի եղբայրը, Տրդատ՝ թագավոր նստի Հայաստանի վրա, բայց իր թագը ստանա Հռովմից: Այսպես սկսվում է Հայաստանում Արշակունյաց հարստությունը (66), որ խաղաղություն է բերում երկրին:

224 թվին Արտաշիր Սասանյան անուն մի իշխան, որ Պարսից ծոցի սահմաններումն էր նստում, ապստամբվում է Պարթևաց թագավորի դեմ և սպանելով նրան, տիրում է գահին: Թագավորական տոհմերի փոփոխությունը անշուշտ առանց ազդեցության պիտի մնար, եթե այդ փոփոխությունը իր հետ չբերեր նաև քաղաքականության փոփոխություն: Պարթևները առհասարակ կրոնի մեջ ազատամիտ և հելլենականության կողմնակից էին, իսկ Սասանյանները զրադաշտական կրոնի մոլեռանդ հետևորդ, հելլենական քաղաքակրթության թշնամի և հռովմայեցոց ռիսերիմ հակառակորդ: Այս պատճառով էլ սկսվում է պատերազմների ավելի բուռն մի շարք՝ պարսիկների և հռովմայեցոց միջև:

Որովհետև Հայաստանում նստած էր Արշակունի տոհմը, իսկ Սասանյանները թշնամի էին այդ տոհմին, ուստի նրանք աշխատում են ջնջել այդ տոհմը: Արշակունիներն էլ իրենց գահը պաշտպանելու համար անցնում են Հռովմայեցոց կողմը. և այսպես Հայաստանը, որ նախապես հռովմայեցոց թշնամի և պարսիկներին բարեկամ էր, բռնում է հակառակ դիրք: Շուտով թե՛ հայերը և թե՛ հռովմայեցիք քրիստոնյա են դառնում. և այս կրոնակցությունը մի ավելի ուժեղ պատճառ է լինում, որ հայերը երես դարձնեն պարսիկներից և մոտենան Արևմուտքին:

Ահա այս ժամանակից սկսվում է պատերազմների երկրորդ շարքը՝ Սասանյան պարսիկների և բյուզանդական կայսրների միջև: Հայաստանի տիրապետության համար: Փոփոխակի հաջողություններից հետո, պարսիկները համաձայնության են գալիս հույների հետ և Հայաստանը բաժանում են իրենց մեջ (384), դարձնելով երկիրը վասալական իշխանություն, իսկ ավելի հետո էլ այդ անվանական իշխանության վերջ տալով՝ Հայաստանը դարձնում են պարսկական մի նահանգ (428): Շատ անգամներ հայերը ապստամբվում են իրենց անկախությունը ձեռք բերելու համար, բայց ժամանակավոր հաջողությունից հետո նորից գլուխ են խոնարհեցնում, մինչև գալիս են Արաբները և Պարսկաստանը նվաճելով՝ Պարսից իշխանության վերջ տալիս (642): Սրանից քիչ հետո Հայաստանն էլ ընկնում է Արաբների տիրապետության տակ:

Հայ և Պարսիկ ժողովուրդները իբրև հարևան ապրում են արաբական լծի տակ, մինչև թ դար, երբ օգուտ քաղելով արաբական իշխանության թուլությունից՝ երկուսն էլ կազմում են անկախ պետություններ: Հայաստանում հիմնվում է Բագրատունյաց պետությունը հյուսիսում և Արծրունյաց պետությունը՝ վանա լճի շրջանում: Պարսկաստանում հիմնվում են Թահիրի հարստությունը Խորասանում, Սաֆարի հարստությունը Աֆղանիստանից մինչև Միջագետք, մի առանձին ոստիկանություն Ատրպատականում և հետո Սամանի թաթարական պետությունը Խորասանից մինչև Միջագետք, Բույիների պետությունը Շիրազից Բաղդադ. սրանց հաջորդում է Ղազնևիների սուլթանությունը, որ տիրում է Աֆղանիստանին, Բելուճիստանին, Հնդկաստանին և գրեթե ամբողջ Պարսկաստանին:

ԺԱ դարի հետ սկսվում է թուրքական Սելճուք ցեղի առաջխաղացությունը Միջին Ասիայից. նրանք մեծ բազմությամբ՝ Կասպից ծովի հարավային եզերքով գալիս են արևմուտք, ասպատակում մինչև Ատրպատական, Միջագետք ու Հայաստան, և նրանց առաջնորդը Տուղրիլ՝ Խորասանում թագավոր հռչակելով իրեն՝ գրավում է ամբողջ Պարսկաստանն ու Միջագետքը: Քիչ ժամանակից Սելճուքները կազմում են մի ահագին կայսրություն, որ փռվում է Չինաստանից մինչև Ափրիկե: Պետական տիրապետության հետ միաժամանակ տեղի ունեցավ նաև թուրք ազգաբնակչության տիրապետությունը Պարսկաստանի հյուսիսարևմտյան գավառներում, հատկապես Մարաստանում և Ատրպատականում: Ինչպես Ղազնևիների պետությունը, նույնպես և Պարսիկ ազգաբնակչությունը ետ քաշվեցին դեպի արևելք, երկրի

ավելի խորքերը, մնացորդները ծուլվեցին թրքական բազմության մեջ, այնպես որ այդ ժամանակից սկսած՝ վերացավ պարսկերեն լեզվի գործածությունը՝ Հայաստանի սահմաններից սկսած մինչև Ղազվին, և վերջ տրվեց հայերի հարևանությանը պարսիկների հետ:

Եթե ամփոփենք մինչև այժմ ասվածները, կտեսնենք, որ հայերը իրանական ցեղերի հետ հարևանության մեջ ապրել են ամբողջ 1600 տարի (մ. Ք. 7-րդ դարից մինչև Յ. Ք. 11-րդ դարը): Այդքանից մոտ 900 տարի հայերը կա՛մ ուղղակի հպատակ էին Պարսից և կա՛մ Պարսից գերիշխանության տակ կազմում էին վասալական իշխանություն: Մնացյալ 700 տարին թեև անկախ կամ արաբական հպատակության տակ, բայց միշտ շփման մեջ էին պարսից հետ՝ պատերազմների և այլ պատճառներով: Հպատակության ժամանակ Պարսկաստանից ուղարկված սատրապները, մարզպանները, հարկահանները և այլ պաշտոնյաններն ու զորքը անշուշտ հայերի հետ հայերեն չէին խոսում, այլ պետական պարսիկ լեզվով: Արշակունյաց հարստությունը պարթևական մի ցեղ էր. Հայաստանի գահակալները հաճախ Պարսից թագավորի եղբայրը կամ որդին էին լինում. հետևաբար նաև նույն իսկ անկախության ժամանակ՝ պալատի լեզուն պարսկերենն էր: Մեր մատենագրության մեջ շատ անգամ հիշատակված է, որ հայերեն գրերի գյուտից առաջ՝ դիվանագիտական ու նոտարական բոլոր գրությունները, դաշնադրությունները, հրովարտակները, նույն իսկ հասարակ կյանքի սովորական գրությունները պարսկերեն էին լինում: Ո՛չ միայն հեթանոսության, այլ և նույն իսկ քրիստոնեության ժամանակ, պարսիկ ու հայ թագավորներն ու ազնվականները իրար հետ փոխադարձ խնամություն էին կնքում: Հայոց հագուստը, զենքը, վարչական կազմակերպությունը, ամեն ինչ պարսկական ոճով էր: Արշակունյաց ժամանակ և ավելի առաջ՝ նույն իսկ հայոց կրոնը գրադաշտական կրոնի մի ձևն էր, ինչպես ցույց են տալիս Արամազդ, Անահիտ, Վահագն, Միհր, Տիր աստվածությունների անունները, որոնք ամբողջապես իրանական են: Պարսկերեն լեզուն նույն իսկ գյուղացիք՝ զոնե մասամբ գիտեին. երբ Քսենոփոնի հունական բանակը Հայաստանից էր անցնում, հայ գյուղացի կանայք և աղջիկներ հարցրին նրանց, թե ովքե՞ր էին, և իրենց թարգմանը պարսկերեն լեզվով պատասխանեց նրանց, թե թագավորի կողմից են գալիս և սատրապին են գնում (Անաբազիս, Դ. 5, 10): Երբ Քելթիսոփոս և Քսենոփոն ուզում էին իմանալ, թե ի՞նչ երկրում են գտնվում, պարսկախոս թարգմանի միջոցով ուղղեցին իրենց հարցումը գյուղի տանուտերին (Անաբ. Դ. 5, 34): Վերջապես անուրանալի է,

որ հայ կյանքը ամբողջապես գտնվում էր պարսկական կուլտուրայի ուժեղ ազդեցության տակ՝ նախ քան քրիստոնեությունը: Քրիստոնեությունը եկավ ուժացնելու հայերին պարսիկներից. հայերը կրոնով ու լեզվով հեռացան նրանցից, բայց շատ սովորություններ և պետական կարգ ու կանոնը դեռ մնում էին պարսկական:

Ահա այս ընդարձակ հարաբերության և կուլտուրական ազդեցության արդյունքն այն եղավ, որ հայերեն լեզուն մեծապես ազդվեց պարսկականից և վերցրեց նրանից բազմաթիվ բառեր, ոճեր ու դարձվածքներ: Այնքան, որ զարմանալի թող չլինի, եթե ասենք, որ կարելի է գրել ամբողջ էջեր, որոնք հայերեն ու պարսկերեն համարյա նույն դուրս գան:

Ահա այսպիսի երկու նմուշ, որ հատկապես կազմել են հետաքրքրության համար.

Yak bizişg ba-mardumī hazār diram pūl dād, va noh māh zamān dād. Īn mardum kafşgar būd va bā çahār šāgirdān-aš kurba-i kafşgarī bāz kard. Dah māh kašīda nakašīda, bizişg baxānū-t-i kafşgar āmad, tā zamān-i pūl dādan rasīd; çirā pūl-i man ná dādī? Kafşgar ū çahār šāgirdān –aš pāsux dādand, tā: «Ay bizişg-i hunarmand ū xiradmand, ānçi ki tū farmāyt, durust ast; zamān bi-dih; kiç kiç bi-dihim». Bizişg xānūt-rā az kafşgar bā-zōr girift ū ba-bāzīrgānī dād ū pūl –rā girift.

Մեկ բժիշկ մի մարդու հազար դրամ փող տվեց, և ինն ամիս ժամանակ տվեց: Այն մարդը կոշկակար էր և չորս աշակերտներով կրպակ կոշկակարի բաց արեց: Տասը ամիս քաշած ջքաշած, բժիշկն ի խանութն կոշկակարի եկավ, թե ժամանակը փող տալու հասավ. ինչո՞ւ փողն իմ չտվիր: Կոշկակարն ու չորս աշակերտները պատասխան տվին, թե «Ո՛վ բժիշկ հնարամիտ ու խրատամիտ, այն ինչ որ դու հրամայում ես, դրուստ է. ժամանակ տուր. քիչ քիչ կտանք»: Բժիշկը խանութը կոշկակարից զոռով գրավեց ու մի վաճառականի տվեց ու փողը գրավեց:

Farmāndār-i buzurg ū zōrāvar pālīz-ī dāšt. Dar īn pālīz yak būstān būd. Dar-i īn būstān gōharī ū zumurrudī u yāqūtī būd, ná āxīzī yā āgūrī. Bar dar-i gōharī dirafšhā-i rangārang, dar būstān vard u mīxak u nīlūfar u sūsan u rīhān u yāsamīn u manafše u sunbul u nargis u šāhisparam; hama rangārang u gōnāgōn: safīd u kabūd u lājvardī; hazār u bīvar sārakhā bar burj, u girūh-i kajalēhā bar kunbad daf u tunbak u kōs mīzanand. Žāle bar manafše nīšaste, šū'le bar vard nīšaste. Duxtar-i farmāndār dar pālīz, bar bālīs nīšaste, hamčū farīšte, gīšū-i 'anbarbū pīrāste, abranjan-i bussad ba-bāzū, tāk bar čagād, hamčū paykar u nigār mīxandīd.

Հայերենի և պարսկերենի նմանությունը այնքան մեծ է, որ լեզվաբանները մի ժամանակ կարծում էին, թե հայերենն էլ իրանական լեզու է, ասինքն զավակն է իրանական մայր լեզվի, որի մյուս դուստրերն են պարսկերենը, աֆղաներենը, բելուճերենը, քրդերենն ու օսեթերենը<sup>1</sup>: Հյուբշման գերմանացի հայագետն եղավ՝ որ առաջին անգամ ապացուցեց, թե այս կարծիքը սխալ է, թե հայերենը իրանական ընտանիքի մեկ անդամը չէ, այլ նրանից անկախ ու նրան հավասար մի

Հրամանատարն վզրուկ ու զորավոր՝ մի պարտեզ ուներ. այն պարտեզում մեկ բուրաստան կար. դուռն այն բուրաստանի գոհարն ու զմրուխտն ու յակինթե էր, ո՛չ աղյուսե կամ ազուռե: Ի վերայ դրան գոհարի՝ դրոշակներ երանգ երանգ. բուրաստանում վարդ ու մեխակ ու նուրուֆար ու շուշան ու ռեհան ու հասմիկ ու մանուշակ ու սմբուլ ու նարկիս ու շահասպարամ. համակ երանգ երանգ ու գույնզգույն, սպիտակ ու կապույտ ու լազուարթ. հազար ու բյուր սարեկներ բուրգի վրա և գրոհ կաջադակաց ի վերայ գմբեթի՝ դափ ու թմբուկ ու գոս կզարնեին: Շաղն ի վերայ մանուշակի նստած, շողն ի վերայ վարդի նստած. դուստրն հրամանատարի՝ պարտեզում բալիշի վրա նստած, ինչպես հրեշտակ, գեսն յամբարաբույր պատրաստած, ապարանջանն բուստե ի բազուկ, թագն ի ճակատ, ինչպես պատկեր ու նկար կխնդար:

<sup>1</sup> Spiegel, Gram. der Huzvāresch sprache, Wien 1856, tğ 186-192, Das Verhältniss des Armenischen zum Huzvāresch. 220

ճյուղ, այնպես՝ ինչպես հունարենը, լատիներենը, հին սլավերենը և այլն<sup>1</sup>: Այս մասին պիտի խոսինք քիչ հետո:

Հայերենի և իրանական լեզուների նման բառերը բաժանվում են 4 խմբի.

1) Այն բառերը, որոնք թե՛ հայերենը և թե՛ իրանականները հավասարապես ժառանգել են հնդեվրոպական նախամայր լեզվից. ինչ. մայր = պրս. mādar<հնդս. māter, տասն = պրս. dah, զնդ. dasa<հնդս. dék'ր կլն:

2) Այն բառերը, որոնք հայերենը փոխ է առել պարսկերենից. ինչ. սպարապետ<հայրս. spādapati, իշտրմուղ «ջայլամ»<պրս. šuturmury.

3) Այն բառերը, որ թե՛ հայերենը և թե՛ պարսկերենը փոխ են առել մի երրորդ աղբյուրից. ինչ. աճպարար<արաբ. 'ajab.

4) Այն բառերը, որոնք պարսկերենը փոխ է առել հայերենից. ինչ. բարեկենդան> պրս. baryandān, աղիւս>պրս. āxīz կլն:

Յուրաքանչյուր բառի համար անհրաժեշտ է ծշտել, թե այս չորս խմբից որին է պատկանում, որպեսզի կարելի լինի այնուհետև դուրս գցել 1, 3-րդ և 4-րդ խմբի բառերը, և առնել միայն 2-րդ խմբի բառերը, հենց սրանով էլ իմանալու համար պարսկական լեզվի ազդեցությունը հայերենի վրա: Բավական դյուրին է ճանաչել 3-րդ խմբի բառերը.— եթե մի բառ հայերենից ու պարսկերենից դուրս գտնվում է նաև մի երրորդ լեզվի մեջ, և ստուգաբանվում է հենց այդ լեզվով, ուրեմն և պատկանում է այդ լեզվին: Այսպես՝ հյ. աճպարար բառի արմատն է աճպ, որ գտնվում է թե՛ պարսկերենի և թե՛ արաբերենի մեջ՝ 'ajab «զարմանալիք» ձևով: Բայց այս բառը զուտ արաբական արմատ է, ինչպես ցույց է տալիս կոկորդական՝ հնչումը, որ միայն արաբերենին է հատուկ. ուրեմն այս բառը արաբերենից է մտել մեր մեջ և ոչ թե պարսկերենից: Նույնպես մշակ բառը, որ կա թե՛ պարսկերենի մեջ mušāq ձևով և թե՛ վրացերենի մեջ մուշակի ձևով. բայց ըստ որում բառը ստուգաբանվում է վրաց. մուշա արմատով, ուստի և բուն վրացական բառ է և ոչ թե պարսկերեն:

4-րդ խմբի բառերը ճանաչելու համար պետք է քննել, թե արդյոք այդ բառը կարելի՞ է հայերենով ստուգաբանել, և կամ հետևողական է մի այնպիսի ձայնական օրենքի՞ որ միայն հայերենով կարելի լինի մեկնել: Այսպես՝ հյ. բարեկենդան ստուգաբանվում է բարի+կենդան(ուրիւն) բառերով, մինչդեռ պրս. baryandān ո՛չ մի մեկնություն չունի. ուստի

<sup>1</sup> St'u Hübschmann, Über die Stellung des arm. im Kreise der indo-germ. Sprachen, KZ (1875), tğ 5-42, Armeniaca KZ 23, 400-7, և Arm. gram. tğ 16:



պարզ է, որ բառը հայերեն է և հետևաբար փոխառումն պարսկերենն է: Նույնպես, արդի պրս. pāzū «բազուկ, ճակնդեղ» (այսպես և թրք. pazə), որ պարսկերենով ոչ մի մեկնություն չունի, կարող է ստուգաբանվել հյ. բազուկ (թև) ձևով, ուստի և հայերենից անցել է պարսկերենի: Աղիւս բառը, որ կա նաև պրս. āxiz ձևով, անշուշտ հայերեն է, որովհետև միայն հայերեն ձայնն է, որ տալիս է դ, որից և խ (պրս. څ), իսկ պրս. x ձայնը չի կարող բնավ դառնալ: Սրանից հետևում է, թե պարսկերենն է, որ փոխ է առել մեզանից աղիւսը, ինչպես որ նույնը փոխ են առել նաև վրացիք՝ ավելի հին ժամանակ, և դարձրել ալիզի:

3-րդ տեսակի բառերը իրենց դյուրության, իսկ 4-րդ տեսակի բառերը իրենց սակավության պատճառով մի կողմ թողնելով, ուշադրության արժանանք 1-ին և 2-րդ տեսակի բառերը, որոնք թե՛ քանակությամբ շատ են և թե՛ իրենց կմոտությունները տեղիք են տվել խոշոր թյուրիմացությունների, նույն իսկ լեզվաբանների մեջ: Իրոք ի՞նչպես կարելի է իմանալ, թե օր. ատր, այրել, պատկեր, նկար, արծաթ, արջ, բեռն և այլ բառերի մեջ, որոնք այնքան մտան են պահլաւերեն ātur, patkar, nikār, զնդ. ərəzata, arəša, պրս. bār բառերին, որոնք են զուտ հայկական և որոնք են պարսկերենից փոխառյալ:

Այս կարևոր հարցը վճռելու միակ և ամենաստույգ միջոցը ծայրական օրենքներն են: Հնդեվրոպական լեզուների ծայրաբանությունը մեզ սովորեցնում է, թե՛

1) Նախալեզվյան դառնում են՝	b	d	g	g <sup>2</sup>
հայերենի մեջ	պ	տ	ծ	կ
իրանյանց մեջ	b	d	z	g(j)

Ըստ այսմ, եթե մի հայերեն բառ պարունակում է պ, տ, ծ, կ ձայները, և նրա համապատասխան իրանական ձևը ունի b, d, z, g (j), ուրեմն դա բնիկ հայերեն բառ է. իսկ եթե այդ հայերեն բառը պ, տ, ծ, կ ձայների փոխարեն ունի բ, դ, զ, գ (ջ), անպայման իրանական փոխառություն է: Այսպես՝ տասն և դահադրամ բառերի համապատասխան պրս. ձևերն են՝ dah, dahdiram, որոնք երկուսն էլ ունին d, մինչդեռ հայերենի մեջ առաջինն ունի տ, երկրորդը՝ դ. ուրեմն տասն հայերեն է, իսկ դահադրամ պարսկերեն: Արծաթ բառի իրանական ձևն է ərəzata, որի մեջ մեր ծ ձայնի համապատասխանն է գ. ուրեմն արծաթ հայերեն բառ է և եթե պարսկերեն լիներ, գոնե \*արզաթ ձևը պիտի ունենար:

2) Նախալեզվյան p բառասկզբում դառնում է հայերեն հ, ծայրավորից հետո ւ, իսկ իրանականի մեջ միշտ մնում է p: Ուստի, եթե մի հայերեն բառ ունի բառասկզբում հ, որի համապատասխանն է պրս. p, ուրեմն այդ բառը բնիկ հայկական է, իսկ եթե ունենա փ կամ պ, զուտ պարսկական փոխառություն է: Այսպես հյ. հետ, հետք, որ է պրս. pāy «ոտք», բնիկ հայերեն է, իսկ փայիկ «հետիոտն սուրհանդակ» պրս. paik՝ պարսկական փոխառություն է:

3) Նախալեզվյան օ, օ, ծայրավորները հայերենի մեջ դառնում են ե, ո, իսկ իրանականի մեջ հավասարապես լինում են a: Ուստի, երբ մի հայերեն բառ ունի ե, ո ծայրավորը, իսկ նրա համապատասխան պրս. բառի մեջ նույն ծայրերի դեմ ունինք a, այդ բառը բնիկ հայերեն է. իսկ եթե հայերենի մեջ լինի նույնպես ա, անշուշտ պարսկական փոխառություն է: Այսպես՝ բեռն, նոր, չորք, կով (պրս. bār, nav, čahār, gāv) բնիկ հայերեն են, իսկ գաւազան, նաւասարդ (պրս. gāvzan, navasarəda) պարսկական փոխառություն են:

4) Նախալեզվյան –ter դառնում է հայերեն –յր, իսկ իրանականների մեջ հնում tar, նորում՝ dar. ուստի ուր որ հայ բառի յր խմբի դեմ գտնենք պրս. tar, dar, անշուշտ բնիկ է, իսկ եթե յր խմբի փոխարեն հայերենն ունենա տր, փոխառյալ է: Այսպես հայր, մայր, այրել (պրս. padar, mādar ādar) բնիկ են, իսկ ատր «կրակ» փոխառություն է:

Դեռ կարելի էր այս կարգի օրենքների թվումը բավական երկարել. բայց այսքանն էլ բավական ենք համարում բացատրելու սկզբունքը, համաձայն Հյուբշմանի կիրառած մեթոդի:

Վերևում հիշված օրինակների մեջ մենք դիտմամբ հիշեցինք այնպիսիները, որոնք իրար հետ կրկնակ են, կամ ուրիշ խոսքով միևնույն արմատից ծագած ձևեր են, մեկը զուտ հայկական, մյուսը՝ պարսկական կերպարանքով. այսպես՝ տասն և դահադրամ, հետք և փայիկ, նոր և նաւասարդ, կով և գաւազան, այրել և ատր: Առաջինները ունենալով մի որևէ հայկական հատկանիշ (տ, հ, ո), բնիկ հայ են. իսկ երկրորդները ունենալով մի որևէ պարսկական հատկանիշ (դ, փ, ա), պարսկական փոխառություն են:

Այսպիսի կրկնակ բառերի զուգորդությունն ու համեմատությունը հենց լավ չպացույց է այն մասին, թե տրված օրենքը շատ ճիշտ է: Երբ հայ ականջը կլսեր պրս. dah «տասը» բառը, անշուշտ չէր դարձնի հյ. տասն, այլ դահ. կամ երբ կլսեր pāy, nav, gāv, չէր դարձնի հետ, նոր, կով, այլ փայ, նաւ, գաւ: Ուստի ինքնին հասկանալի է, որ վերո-

հիշյալների մեջ առաջին ձևերը բնիկ հայ են, երկրորդները՝ պարսկական փոխառություն:

Բայց այս կրկնակները մեզ սովորեցնում են և մի ուրիշ բան. այդ այն է, որ երբ մի հայերեն բառ ճիշտ տառադարձությամբ և տառ առ տառ ծածկում է մի իրանյան բառ, անշուշտ փոխառություն է. իսկ երբ ներկայացնում է մեծ ու փոքր շեղումներ և հատկապես տառադարձության տարբերություն, ուրեմն բնիկ հայկական է:

Կարող էին ունանք առարկել, թե տառադարձության տարբերությունը անպատճառ ծագման տարբերության նշան չէ (մին բնիկ, մյուսը փոխառյալ). այլ թե կարող են բառերը ենթարկված լինել տարբեր տառադարձությանց և դարձյալ լինել միևնույն ծագումից (կամ բնիկ և կամ փոխառություն): Սրա դեմ մենք պիտի հիշեցնենք զուտ պարսկական անձնական և տեղական հատուկ անունների տառադարձությունը (ինչ. Բիրասպի Աժդահակ, Յըզատվչնասպ, Յիզտրուզիտ, Պարշնազդատ, Վեհդենշապուհ, Վեհ-Անջատոք-խոսրով, Ահմատամ, Գունդիշապուհ և այլն), ուր միշտ գտնում ենք հավատարիմ տառադարձություն և ոչ բնավ տառադարձական շեղումներ:

Բացի ծայնական օրենքներից, բառի ծագումը՝ ճշտելու համար երբեմն մեզ օգնության են հասնում իմաստի տարբեր առումները: Օրինակի համար՝ հնիս. \*bheudh արմատը ներկայանում է հյ. բոյր և զնդ. baoidi ձևերով: Հարց է թե բոյր բնիկ թե փոխառյալ: Չայնական օրենքներով bheudh պիտի տար, իբրև բնիկ հայերեն, գոնե \*բոյր. մինչդեռ զնդ. baoidi պիտի տար բոյր: Ուրեմն բառը փոխառյալ է ըստ ձևի: Սակայն bheudh արմատը ցեղակից լեզուների մեջ նշանակում է «արթուն լինել, հսկել, ուշադիր լինել, դիտել, նկատել» և այլն. և միայն իրանականի մեջ ստացել է «զգալ, հոտ առնել» իմաստը, որ առաջինների մի նոր առումն է: Այսպիսով հայ և իրանյան բառերի իմաստի նույնությունը երկրորդ անգամ ապացուցանում է, որ իրոք բոյր փոխառյալ է և ոչ բնիկ:

Կան ծայնական օրենքներ, որոնք թե՛ հայերենի և թե՛ իրանյանների մեջ միևնույն արդյունքն են տալիս. օրինակ՝ m, n թե՛ հայերենի և թե՛ իրանյանց մեջ դառնում են m, n. նույնպես հնիս. k՝ երկուսի մեջ էլ տալիս u (s). հնիս. bh, dh, gh, g<sup>2</sup>h երկուսի մեջ էլ դառնում են p, q, q (g) և այլն:

Այս պարագային կարելի չէ իմանալ թե՛ այս ինչ բառը բնիկ հա՞յ է թե՛ փոխառյալ: Հարցը վճռվում է բառի մեջ գտնված ուրիշ ծայներով կամ նշանակության երանգով: Այսպես՝ հնիս. bher արմատի նախածայնը bh

դառնում է հյ. p և իրան. b. բայց որովհետև օ մնում է հյ. b, իսկ իրանյանների մեջ դառնում է a, ուստի և bher բառի ներկայացուցիչ հյ. բերեմ՝ բնիկ հայերեն է և ոչ թե փոխառյալ իրան. barāmi ձևից: Այսպես նաև bheudh=բոյր բառի մեջ թեև bh երկուսի համար էլ տալիս է p, b, բայց վերջածայնը ր և նշանակության տարբերությունը, ինչպես քիչ առաջ բացատրեցինք, ցույց են տալիս, որ բառը փոխառյալ է և ոչ բնիկ:

Լինում են դեպքեր, երբ թե՛ ծայնական օրենքները և թե՛ նշանակությունը բավական չեն լինում, որովհետև բառը թե՛ բնիկ և թե՛ փոխառյալ լինելու պարագային նույն ձևն է ստանում: Այսպես, օր. նաւ կարող է լինել թե՛ բնիկ հայերեն (որովհետև հնիս. ձևն է nāu, որ կանոնավորապես տալիս է հյ. նաւ) և թե՛ փոխառյալ (որովհետև պրս. ձևն է nāw, որ նույնպես տալիս է հյ. նաւ): Նույնպես հյ. դաւ կարող է լինել թե՛ բնիկ հայերեն (որովհետև հնիս. ձևն է \*dhabh, որ պիտի տար հյ. դաւ) և թե՛ փոխառյալ (որովհետև իրանյան ձևն է զնդ. davā, որ նույնպես պիտի տար հյ. դաւ):

Այսպիսի բառերի թիվը բարեբախտաբար շատ քիչ է:

Բառի ծագումը (բնիկ թե՛ իրանական փոխառություն) որոշելու լավագույն միջոցներից երրորդն է բառի ստուգաբանությունը. եթե մի բառ ստուգաբանվում է մի իրանական արմատով և իրանական ածանցումով, այսինքն ունի իրանական կազմություն, բնականաբար բնիկ է իրանականի մեջ և փոխառյալ է հայերենի մեջ: Սրա համար օրինակները չափազանց շատ են. կրավականանանք տալով միայն մի քանի օրինակ.

Կամք բառը գրեթե նույն ձևով կա թե՛ հայերենի և թե՛ իրանյանների մեջ. հմմտ. պիլ. kām, պրս. kām, օսս. k'om, զնդ. հպրս. kāma «կամք, փափագ» ևլն. հայերենի մեջ այս բառը արմատ է, իսկ իրանյանները ծագում են kā արմատից. հմմտ. զնդ. kā «ցանկանալ, փափագիլ». ուրեմն և հայերենը փոխառյալ է, ինչ որ պիտի հաստատվեր նաև ծայնական օրենքներով. (եթե հայերենը բնիկ լիներ, կ-ի դեմ պիտի գտնեինք պրս. g):

Ուխտ բառը գտնում ենք իրանյանների մեջ՝ զնդ. uxta, սոգդ. úxta ձևով, որ անցյալ դերբայն է vac, vak «խոսիլ, ասել» արմատի. հայերենը ոչ մի ձևով չի բացատրվում. ուստի փոխառյալ է իրանյանից:

Պատշգամբ գտնվում է նաև իրանյան զանազան լեզուների մեջ. հմմտ. պիլ. \*patškamb, պրս. paškam, սոգդ. patšikambə, հպ. \*pa-tiškamba: Այս բոլորը կազմված են pat մասնիկով՝ škamb «սյուն» բառից, որի արմատն է skamb «հենվել». ըստ այսմ պատշգամբը դառնում է

բուն «սյունազարդ երեսբաց», ինչպես կա fra մասնիկով՝ գնդ. fra-skəmba «սյունազարդ սրահ»: Կազմությունը զուտ իրանալան լինելով՝ բառն էլ իրանյան է, և հայ ձևը փոխառություն:

Պատկեր. սրա հետ նույն են պրս. paykar, պիլ. patkar, հայ. patikara միևնույն նշանակությամբ. հայ բառը արմատ է մեզ համար, որովհետև ոչ մի բացատրություն չունի. իսկ հայրս. ձևը մեկնվում է pati մասնիկով՝ kar «չինել» արմատից, որով բառը նշանակում է «ըստ նմանության շինված», գերմ. nachbildung, ինչպես է նաև սանս. prati-kṛta: Ստուգաբանությունը ապացույց է, որ բառը բուն պարսկերեն է և հայերեն ձևը փոխառություն է:

Շատ բան կապված է այն հարցի հետ, թե հայերենի իրանյան փոխառությունները երբ են կատարված: Անշուշտ այն բոլոր բառերը, որ փոխ է առել հայերենը պարսկերենից, մի անգամից և մի օրում չի փոխ առել. այլ 1600 տարվա կենակցության մեջ զանազան շրջաններում: Ամեն մի բառի ճիշտ թվականը որոշել կարելի չէ, բայց գոնե մոտավորապես կարելի է և պետք է որոշել այն շրջանը, երբ կատարված են փոխառությունները: Սրա համար որոշենք մախ պարսկերեն լեզվի շրջանները:

Ամենահին շրջանում հայոց հարաբերությունը եղել է մարերի հետ. Ստրաբոն XI, 13, 9 ասում է, թե Մարերն են եղել առաջնորդները (իշխողները) Հայոց, ինչպես նաև Պարսից: Ուստի փոխառությունները կնքված պետք է լինեն մարերենից: Բայց մարերենը անծանոթ լինելով՝ կարելի չէ քննել այս հարցը: Սակայն որովհետև մարերենը չափազանց մոտ էր պարսկերենին և հենց դրա համար էլ շուտով վերացվեց Մարաստանից ու դարձավ պարսկերեն, այսպես էլ հայերենի մարական փոխառությունները անշուշտ շուտով ձևափոխվեցին և ստացան պարսկական կերպարանք. և այսօր նրանք գտնվում են պարսկական փոխառությանց թվում: Չայնաբանական օրենքներով հաստատվում է, որ պարսկերենը մարականից մի խումբ բառեր ուներ առած (Meillet, Gram. de v. persè 1931, էջ 7-13). այդ բառերի մի մասը գտնում ենք նաև հայերենի մեջ. ինչ. վզրուկ, զուր, -գան, ասպ, բագ (աստված), Միիր, մոգ, փառք և սրանից կազմված անուններ և այլն: Բայց իրավունք չունինք ասելու թե դրանք մենք ուղղակի մարերից ենք վերցրել: Ավելի հարմար են գանձ, բրինձ և պղինձ, որոնք իրենց ձ-ով (փոխանակ ջ) մարական ծագումից են՝ ըստ Հիլբշմանի, Pers. stud. էջ 231:

Պարսկերեն լեզուն ներկայացնում է հետևյալ շրջանները.

1) Հին պարսկերեն, որ Կիրոսների և Դարեհների ժամանակի լեզուն է. այս լեզուն ավանդված է մեզ Պերսեպոլիսի և այլ մի քանի բևեռագիր արձանագրություններով, որոնք գրված են մ. թ. 560-330 թվերին:

2) Պահլավերեն կամ միջին պարսկերեն, որ ունի երկու ստորաբաժանում. ա) Արշակունյան պահլավերեն, որ կոչվում է նաև հին կամ պարթևական պահլավերեն և է Պարսիկ Արշակունյան թագավորական հարստության ժամանակի լեզուն, այն է մ. թ. 256-226: Արշակունի թագավորները դժբախտաբար իրենց արձանագրությանց մեջ բնավ չեն գործածել այս լեզուն, այլ գրել են արամերեն կամ հունարեն. միայն վերջերս գտնվեցին մանիքեական շատ գրվածքներ պարթևական լեզվով: բ) Սասանյան պահլավերեն, որ կոչվում է նաև նոր պահլավերեն և է Պարսից Սասանյան թագավորական հարստության ժամանակի լեզուն, այն է 226-642: Պահլավերենը ավանդված է մեզ մի քանի արձանագրություններով և զանազան մագդեական կրոնական գրվածքներով, ինչպես են Արտավիրաֆ, Կարնամակ, Մանոխրատ և այլն: Ավելի նոր ժամանակից կամ մանիքեական գրվածքներ:

3) Պարսկերեն կամ հատկապես նոր պարսկերեն, որի հնագույն հիշատակարանն է Ֆիրդուսիի Շահնամեն (Ժ դար) և քիչ փոփոխությամբ խոսվում է մինչև այսօր էլ Պարսկաստանում՝ զանազան բարբառներով.

Աշխարհիս մեջ ո՛չ մի գրականություն կարող չէ լեզվի մեջ գտնված բոլոր բառերը գործածած լինել. բառարաններն անգամ կատարյալ չեն լինում: Այս կողմից շատ պակասավոր է պարսկերենը՝ հետևյալ պատճառներով.

ա) Նախ ավանդված չէ մեզ Մակեդոնական շրջանի (330-256) և արաբական շրջանի (643-Ժ դար) պարսկերեն լեզուն:

բ) Ամբողջ ավանդված գրականությունն էլ մեծ արժեք չի ներկայացնում. մախ որ նյութը շատ միակողմանի է և երկրորդ, որ գրական արտադրությունները շատ փոքր թիվ են կազմում: Հին պարսկերեն արձանագրությունները տալիս են մեզ միայն 400 բառ. պահլավական գրականությունը՝ թեև համեմատաբար շատ ավելի հարուստ, բայց դարձյալ ոչինչ բան է, օրինակ՝ համեմատած հին հայ գրականության հետ:

գ) Պահլավերենը գրված է շատ անկատար այբուբենով, այնպես որ շատ անգամ բառերի ընթերցանությունը անորոշ է մնում:

Պարսկերեն լեզվի ներկայացրած այս թերույթները ի հարկե լրացվում են զանազան կողմնակի միջոցներով: Այսպես՝ 1) սանսկրիտ լեզուն կամ հին հնդկերենը, որ այնպես մման է հին պարսկերենին, շատ անգամ վստահելի առաջնորդ է մեզ և ենթադրել է տալիս թե ի՞նչ պիտի լիներ այս ինչ բառի հին պարսկերեն ձևը: 2) Իրանյան ճյուղին պատկանող տարբեր լեզուներ, ինչպես զենդերենը, աֆղաներենը, բելուճերենը, քրդերենը, օսսերենը և սոգդերենը նույնպես և ավելի կարևոր առաջնորդ են մեզ՝ որոշ հարցեր լուծելու և որոշ բառերի գոյությունն ու ձևը գուշակելու համար: 3) Վերջապես կան բազմաթիվ արդի պարսկական բարբառները, որոնցից լեզվաբանը կարող է օգտվել լայն չափերով:

Այնուամենայնիվ այս բոլորն էլ վերջնական միջոցներ չեն և շատ ու շատ բառեր կան, որոնց երբեմնի գոյությունը պարսկերենի մեջ հենց հայերենն է մատնանիշ անում, բայց կարելի չէ լինում ո՛չ մի գրական աղբյուրի, ո՛չ մի ազգական լեզվի և ո՛չ մի բարբառի մեջ գտնել ու հաստատել նրանց ենթադրյալ գոյությունը: Այսպես, օրինակ՝ ատրուշան, որ հայտնապես պարսկերեն բառ է և որի առաջին մասն է պրս. *aḍar*, այճրամենայնիվ ոչ մի իրանյան լեզվի մեջ չկա և մեզ հայտնի չէ, թե ի՞նչ բան է ուշան վերջավորությունը:

Վերոհիշյալ երեք լեզուները, հին պարսկերեն, պահլավերեն և պարսկերեն, թեև անուններով տարբեր, բայց իրապես միևնույն լեզուն են և ներկայացնում են միևնույն լեզվի միևնույն բարբառի (այն է Շիրազ) զանազան հաջորդական ժամանակները: Այս պատճառով էլ, շատ անգամ լեզվաբանության մեջ պարզապես կոչում են պարսկերեն և այս բառով հասկացվում է անխտիր բոլոր երեք շրջանների լեզուն: Այնուամենայնիվ երեք շրջանների, ինչպես և մյուս միջանկյալ շրջանների լեզուն, զգալաբար տարբերվում են իրարից՝ երբեմն ավելի, երբեմն պակաս չափով և նրանց միությունը հաստատելու համար լեզվաբանական աշխատանքի կարիք կա: Այստեղ իբր օրինակ դնում ենք մի քանի բառ՝ երեք շրջանների լեզվով.

հյ.	հպրս.	պիլ.	պրս.
աշխարհ	<i>xšadra</i>	<i>šatr</i>	<i>šahr</i>
տարի	<i>sarda</i>	<i>sard</i>	<i>sāl</i>
մեծ	<i>vazarka</i>	<i>vazarg</i>	<i>buzurg</i>
գյուղ	<i>dahyu</i>	<i>dēh</i>	<i>dih</i>
ծառայ	<i>bandaka</i>	<i>bandak</i>	<i>banda</i>

պատկեր	patikara	patkar	paikar
դուռ	duvara	dar	dar

Այժմ պետք է քննել թե հայերեն փոխառությունները ո՞ր շրջանին են պատկանում: Քննությունները ցույց են տալիս, որ ամեն շրջանից էլ փոխառություններ կան. և այդ բնական էր, քանի որ հայերը 1600 տարի մշտապես հարևան են եղել իրանյանների հետ: Այս բանը հայտնի կերպով երևում է այն բառերից, որոնք մի քանի անգամ փոխ են առնվել իրանյաններից և զանազան ձևերի տակ, որոնք իրապես նույնն են և ներկայացնում են նույն բառի զանազան շրջանների արտասանությունը: Օրինակ՝

Աշխարհ.— այս բառի հնագույն ձևն է հպրս. *xšadra*, որ հին արշակունի պահլավերենի մեջ եղավ *xšadr*, *xšatr*, հետո *xšahr*, ավելի նոր սասանյան պահլավերենի մեջ դարձավ *šatr*, *šahr*, որից էլ պրս. *šahr*, հիմա էլ արտասանվում է *šahr*: Հայերը փոխ առին բառը նախ արշակունյաց ժամանակ, երբ *xšahr* ձևն ուներ, որ ըստ հայկական ծայնական օրենքների վերածեցին *աշխարհ* ձևին. երկրորդ անգամ փոխ առին սասանյանների ժամանակ, *šahr* ձևի տակ, որից կազմեցին *շահաստան*, *շահապ* և այլն:

Պաշտպան.— հնագույն ձևն է հպրս. *\*parštipāna*, որ անշուշտ արշակունյաց ժամանակ դարձել էր *\*parštpān*, և այստեղից էլ կազմվեց *հյ. պաշտպան*: Նույն բառը սասանյանց ժամանակ եղավ *puštkpān*, *puštpān*, որից *հյ. փուշտիպան*. նորագույն ժամանակ՝ պրս. *puštibān*, որ հայերենի մեջ ներկայացուցիչ չունի:

Չրասախ.— հնագույն ձևն էր հպրս. *parasanga*, պահլավական շրջանին *\*frasax*, նպրս. *farsax*. հայերենը փոխ է առնված մի անգամ պահլավական իրասախ ձևով, ավելի ուշ՝ պարսկական փարսախ ձևով, հիմա էլ պարսկահայոց մեջ *Ֆարսախ* ձևով:

Ասպարապետ, Սպարապետ.— հպրս. *\*spādapati*, արշակունյան պիլ. *spādapat*, որից առնվեց *հյ. սպարապետ*. սասանյանց ժամանակ եղավ պիլ. *spāhpat*, որից կազմվեց *հյ. ասպահապետ*. ավելի նոր ժամանակ՝ պրս. *sipahbad*, որից էլ այսօր կազմում ենք *սիփահբադ*:

Արամազդ.— հնագույն ձևն է հպրս. *Ahuramazdā*, որ արշակունյաց ժամանակ եղավ պիլ. *Ohrmazd*, սասանյանց ժամանակ *Hormizd*, նպրս. *Hurmuzd*, որ նորագույն հնչմամբ է *hurmuz* կամ *hürmüz*: Հայերենը փոխ է առնված երեք անգամ և երեք ձևով՝ *Արամազդ*, *Որմիզդ*, *Հիւրմիզդ*: Առաջինը ընկնում է Արշակունյաց հին շրջանին, որովհետև Արամազդ

բառը ձևով ավելի հին է պահլավական արձանագրությանց Ohrmazd ձևից և ավելի մոտ հայրս. Ahuramazdā-ին: Երկրորդը ընկնում է Սասանյանց շրջանին և ավելի նոր է քան հին Սասանյան Hormazd ձևը: Վերջապես Չիլրմիզ (իբրև ազգանուն գործածված) պատկանում է շատ նորագույն շրջանին (ԺԸ դար):

**Վահագն.**— հնագույն ձևն է հայրս. \*Vrdragna. Արշակունյաց ժամանակ եղավ պիլ. \*Varhrayn, որից հառաջացավ հյ. \*Վարհագն և հետո Վահագն: Հին Սասանյանց ժամանակ բառը դարձավ Varahrān, ինչպես գտնում ենք արձանագրությանց և դրամների մակագրությանց մեջ: Նոր Սասանյանց ժամանակ կրճատվելով եղավ Vahrām, որից հյ. Վահրամ, կրճատված Վռամ: Նոր պարսկերենի մեջ եղել է Bahrām, որից էլ հայերեն տառադարձությամբ գրում ենք **Բահրամ** կամ **Բեհրամ**:

**Վրկէն.**— հնագույն ձևն է հայրս. \*Vrkaina (?), որ Սասանյանց ժամանակ եղավ Gurgēn, նպրս. Gurgīn, հիմա էլ արտասանվում է Gorgīn. հայերենի մեջ էլ ունինք Արշակունյաց ժամանակից Վրկէն, Սասանյան շրջանից **Գուրգէն**, հիմա էլ Պարսկաստանում գործածական է **Գորգին**:

**Պարթև.**— հնագույն ձևն է հայրս. Parθava, Սասանյանց ժամանակ եղավ Pahlav, որ է պրս. Pahlav, հիմա էլ pahlāvi: Հայոց մեջ բառը փոխ է առնված հին արշակունյաց ժամանակ, երբ դեռ ծ ձայնը վերածված չէր հ, ինչպես եղավ հետո: Սասանյանց ժամանակ երկրորդ անգամ փոխ առնվելով՝ դարձավ Պահլաւ, այժմ էլ գրում ենք ըստ նորագույն արտասանության՝ **Փեհլեվի**:

Կարելի էր այս կարգի օրինակների թիվը դեռ շատ երկարել, բայց այսքանն էլ բավական է ցույց տալու համար, որ փոխառությունները տեղի են ունեցած զանազան ժամանակներ, սկսած հնագույն շրջանից մինչև ԺԱ դար և դեռ այսօր էլ շարունակվում են Պարսկաստանում պարսկահայոց մեջ: Կարելի է մինչև անգամ կազմել յուրաքանչյուր բառի պատմությունը և հին պարսկերեն, զենդերեն, Արշակունի ու Սասանյան պահլավերեն, պազենդերեն ու պարսկերեն ձևերի համեմատությամբ որոշել թե ինչ ու ինչ շրջաններից է անցել ամեն մի բառ: Կարելի է նույնպես դասավորել բառերը ըստ իրենց հնության, որ երևան է հանվում ձևից ու զանազան համեմատություններից: Այսպես հյ. պայման և պայքար ավելի նոր շրջանի և իրար ժամանակակից բառեր են, իսկ պատկեր նրանցից ավելի հին է. որովհետև առաջինները ներկայացնում են պարսկերենի <y ձայնափոխությունը (պիլ. patmān, patkār, պազենդ. paimān, պրս. paymān, paykār), իսկ պատկեր բառը դեռ այդ ձայնափոխությունը չունի (պիլ. patkar, պրս. paykar):

Նույնպես նկար ավելի նոր է քան պատկեր, որովհետև վերջինս ունի ե ձայնավորը, մինչդեռ առաջինն ունի ա:

Բայց ինչ որ էլ լինի, վերի համեմատություններից արդեն պարզ երևում է, որ փոխառությանց մեծագույն մասը, հատկապես այն բառերը, որոնք մեր լեզվական զգացողությամբ ավելի հարազատ հայերեն բառեր են համարվում, փոխ է առնված հին արշակունի կամ պարթևական շրջանին, և ո՛չ Սասանյան: (Օրինակ՝ մինչդեռ Արշակունիները բառի սկզբում և մեջում գործ էին ածում չ ձայնը, սասանյաններն ու պարսկերենը դնում էին z. հայերենն էլ առաջինների նման դնում է ժ): Եվ այս նույնպես բնական է, քանի որ պարթևական շրջանին հայերը շատ ավելի սերտորեն կապված էին պարսիկների հետ՝ կրոնքով, գրականությամբ, նույն իսկ թագավորական տոհմով նույն էին, իսկ սասանյան շրջանին՝ թե՛ կրոնով, թե՛ թագավորական տոհմով օտար, շուտով էլ գրականությամբ բաժանվեցին: Ըստ այսմ փոխառությունները կարող ենք դնել քրիստոնեական թվականի սկիզբը կամ նրանից էլ մի քիչ առաջ, ինչպես ենթադրում է Չյուբշման<sup>1</sup>, այսինքն Տիգրան Մեծի ժամանակից անմիջապես հետո:

Երբ հայերեն փոխառությունները համեմատում ենք համազոր պարթևական ձևերի հետ, առհասարակ գտնում ենք, որ նրանք ձևով նման են: Բայց լինում են նաև այնպիսի տարբերություններ, որոնք կարելի չէ հայերենի ձայնական առանձնահատկություններով բացատրել: Օրինակ՝ մինչդեռ պահլավերենն ու պարսկերենը ունին dar «դուռ», darpān «դռնապան», հայերենի մեջ գտնում ենք փոխառյալ բարապան, բարապետ, բարաւոր ձևերը, որոնց բոլորի մայրն է բար «դուռ» իրանական բառը: Նույնպես մինչդեռ պահլավերենն ու պարսկերենը ունին j ձայնը, հայերենը նրանց դեմ հանում է ձ՝ մի խումբ փոխառյալ բառերի մեջ. ինչ. պղինձ, բրինձ, զանձ, անդարձ, Գանձակ: Պետք է ուրեմն ենթադրել թե այս բոլորը հատուկ էին այն բարբառին, որից որ փոխառյալ են հայերեն բառերը: Իրոք Պարսկաստանում մինչև այժմ էլ կան տեղեր, ուր j, č ձայների տեղ արտասանում են ձ, ց: Աֆղաներենն ունի pinḍa, փոխանակ պրս. panj «հինգ»: Նմանապես bar գավառական մի ձև է, որ dar «դուռ» բառի կողքին գտնում ենք այսօր էլ զանազան պարսկական բարբառներում. ինչ. գիլանի bar, սեմնանի bar, վախի bār, քրդ. bar, Քաշմիրի bar, бер, աֆղան. war, բոլորն էլ «դուռ». նշանակությամբ: Այս բարբառների մեջ իրանական dw բա-

<sup>1</sup> Armenische Gram. t. 12-13:

ռասկզբում դառնում է b, որով dwar «դուռ» դառնում է bar: Այս օրենքը հատուկ էր նաև հյուսիսային պահլավական բարբառին և ահա այս բարբառն է, որ հիմք է ծառայել հայկական փոխառությանց: Երբ հայերը փոխ էին առնում իրանական բառերը, անշուշտ չէին զնում Պարսկաստանի կենտրոնական նահանգները բառեր որսալու, այլ լսում էին իրենց մերձակա Ատրպատականի մեջ խոսված պահլավերենը և նրանից էլ ազդվում:

Թե հայերենը իր փոխառությունները կնքել է Ատրպատականի պահլավերեն բարբառից՝ գեղեցիկ կերպով հաստատվում է Թուրքանի նորագյուտ բնագիրներով: Թուրքանը Չինական Թուրքեստանի մի քաղաք է, ուր 1900 թվին տեղի ունեցած գիտական արշավանքի ժամանակ երևան հանվեցին զանազան լեզուներով բնագիրներ (թոխարերեն, քուչերեն, սոգդերեն, պահլավերեն): Պահլավերեն բնագիրները զանազան բարբառներով են. P. Tedesco իրանագետը մանրամասն քննության ենթարկելով և դասավորելով այդ բնագիրները<sup>1</sup>, գտավ, որ նրանք ներկայացնում են երկու բարբառ՝ հյուսիսային և հարավային. հյուսիսային պահլավերեն բնագիրները ներկայացնում են լեզվական մի ձև և պատկանում են Արշակունյաց շրջանին. իսկ հարավայինները ներկայացնում են լեզվական զանազան ձևեր, որովհետև պատկանում են Սասանյան շրջանի զանազան թվականներին: Օր. նախաձայն fr, որ դառնում է hj. հր, հատուկ էր հյուս.-արևմտ. պահլավական բարբառներին և ոչ հարավին:

Բարբառային տարբերությունը երևում է նաև հայերենի այն բառերից, որոնք ներկայացնում են մեզ փոքրիկ ձայնական տարբերություններ իրարից. օրինակ՝ hj. ունինք պատասխանի և պատասխան. առաջինը հնագույն հայերեն ձևն է, երկրորդը՝ ավելի նոր: Բայց այս ի վերջավորությունը ոչ թե հայկական հավելված է, այլ իրանական մի բարբառի ուղղ. հայց. վերջավորությունը. այսպես էր քրիստոնեական սոգդերենը, որ ունի ուղ.-հայց. y=ī վերջավորությունը. ինչ. p'čyoy «պատասխան» (այսպես նաև արժանի, կարի կլն). մինչդեռ բուն պահլավերենը ունի \*pātsaxuan<sup>2</sup>:

<sup>1</sup> Dialektologie der westiranischen Turfantexte, Le Monde Oriental XV (1921), էջ 184-258:

<sup>2</sup> Bailey JRAS 1980, էջ 19:

Նման երևույթ նկատելի է նաև յիշել, յիշատակ բառերի մեջ, որոնց ներքին ձայնավորն է է, մինչդեռ արմատն ունի ու՝ ուշ, յուշ բառերի մեջ (պիլ. օձ, զնդ. սձի):

Այստեղ դնում ենք մի ցուցակ, որից երևում է թե պահլավերենի հնչյունները հայերեն փոխառությանց մեջ առհասարակ ի՞նչպես են տառադարձված.

a, ā>ա	m>մ
b>բ	n>ն
č>ճ	o, օ>ո, ոյ
d>դ	p>պ, փ
ḍ>ր	r>ր, ռ
e, ē>է, ե	s>ս
f>փ, fš>ւշ. ft>խտ, ւթ,	š>շ
fr>հր	t>տ, թ
g>գ	u, ū>ու
γ>գ	v>վ, ւ, ու
h>հ	x>խ, xš>շխ
i, ī>ի	y>յ
j>ջ	z>զ
k>կ, ք	ž>ժ
l>ղ, լ	

Ինչպես տեսնվում է, պահլավական հնչյուններից մի քանիսը հայերենի մեջ մի քանի ձևով են փոխադրված: Տարբեր փոխադրությանց մի մասը պետք է վերագրել հայերենի ձայնական օրենքներին. այսպես e դառնում է բառի մեջ ե, վերջավանկում է. v դառնում է բառասկզբում վ, ձայնավորից հետո u և բաղաձայնից հետո ու. l դառնում է բաղաձայնից առաջ ղ, ուրիշ տեղեր l կամ ղ՝ առանց որոշ կանոնի: Մյուս տարբերությունները անշուշտ պետք է վերագրել հյուսիսային պահլավական բարբառին մասնահատուկ հնչյուններին. այսպես r և ք զանազանությունը, ինչպես և ո կամ ոյ ձևը: Ատամնական և կոկորդային բաղաձայններից հետո r տալիս է hj. եր, իսկ շրթնայիններից հետո ար. ինչպես՝ կերպ, կերտ (ն. ք. Ա դարում հունարեն էլ տառադարձված Tigranókerta), հանդերձ, բայց վարդ, մարգ, մարի>մահ (Meillet, Gram. du v. perse, էջ 54): Գալով կ, պ, տ կամ ք, փ, թ ձևերին, պետք է ընդունել որ առաջինները ներկայացնում են իրանյանների ավելի հին արտասանությունը, իսկ երկրորդները՝ ավելի նոր արտասանությունը: Այս

բանը ցույց է տալիս հատկապես պաշտպան բառը, որ Արշակունյաց ժամանակ փոխ առնվելով՝ ստացել է պ, մինչդեռ նույն բառի Սասանական ձևը (փուշտիպան) ունի փ: Նույն բանը կարելի է ասել նաև ճ ձայնի համար, որ հետին փոխառությանց մեջ չ ձևն ունի: Պարսկերենի ձայնաբանության ընթացքն է եղել զորացնել նախածայն բաղաձայնները և ընդհակառակը տկարացնել միջածայնները: Սրա ամենալավ օրինակն է հպրս. \*parštipāna, հյ. պաշտպան, հետո փուշտիպան, որ հիմա հնչվում է պրս. puštībān, այն է փուշտիբան:

Հայերեն և պահլավերեն բառերի համեմատության ժամանակ պետք է նկատի ունենալ նաև բուն հայկական ձայնական օրենքները, որոնց ենթարկված են նաև պարսկական հին փոխառությունները. այսպես ի, ու ձայնավորները ընկնում են նախաշեշտ վանկերում, է, ոյ դառնում են ի, ու, եա դառնում է ե, բառասկզբում ր, ռ բաղաձայնները ստանում են ե կամ ա հենարանը: Այսպես՝ օր. պիլ. nēzak դառնում է \*նեզակ, որից էլ նիզակ, mōčak>\*մոյճակ>մուճակ, spētak \*սպետակ>սպիտակ, pat-mōčān>\*պատմոյճան>պատմուճան, vinās>\*վինաս>վնաս, kunčīt>\*կունճիթ>կնճիթ, rasan>առասան, երասան, rang>երանգ և այլն:

Ինչպես վերևում ասացինք, այս բոլոր համեմատությունները պահլավերեն ձևերի համար են և արժեք չունին պարսկական ձևերի համար: Որևէ պարսկերեն բառ եթե ուզում ենք համեմատել հայերենի հետ, նախ պետք է առնենք նրա պահլավերեն ձևը և այն միայն համեմատենք հայերենի հետ, եթե այդ հայերեն բառը հին շրջանի փոխառություն է: Առանց դրան՝ բոլոր համեմատությունները կլինեն սուտ ու սխալ: Այսպես, պրս. bad կլինի հյ. վատ, որովհետև պիլ. ձևն է vat. պրս. Hamadān քաղաքի անունը կլինի Ահմատան, որովհետև պիլ. ձևն է yāvētān. պրս. gurrāz կլինի վարազ, որովհետև պիլ. ձևը եղել է անշուշտ vārāz, ինչպես ցույց է տալիս գնդ. varāza. պրս. dahlīz կլինի դահլիճ, որովհետև պիլ. ձևն է dahlīč. պրս. arzān կլինի արժան, որովհետև պիլ. ձևն է aržān. պրս. bazar կլինի հյ. վաճառ, որովհետև պիլ. ձևն է vāčār և այլն, և այլն: Հատկապես հիշելու արժանի է պարսկերեն բառերի a վերջավորությունը՝ որի համապատասխանն է միշտ -ակ. ինչ. nāma=նամակ, nīza=նիզակ, kurra=քուռակ, farrišta=հրեշտակ, dōra=դորակ, dība=դիպակ, žīva=ժիպակ, sikūra=սկաւառակ և այլն: Այս բոլորի մեջ էլ պահլավերենը երևան է հանում միշտ -ak՝ համաձայն հայերենին. ինչ. nāmak, nēzak և այլն:

Այս տեղ ցուցակագրում ենք այն բոլոր բառերը, որ հայերենը փոխ է առել իրանյաններից, սկսած հնագույն ժամանակներից մինչև ժԱ դար: Բայց հայերենի փոխառությունները այստեղ չեն դադարում, այլ շարունակվում են նաև ավելի ուշ՝ տարբեր ճանապարհով, ինչպես պիտի բացատրենք հետո՝ Գլուխ ԻԱ: Այս փոխառությունները զանազանվում են բոլորովին առաջիններից:

Ցուցակը կազմված է այբուբենական կարգով, համեմատությանը նոր պարսկերեն, պահլավերեն և զանդերեն ձևերի: Ուր որ պետք է ավելացնում ենք նաև հին պարսկերեն և սանսկրիտ ձևերը: Հին շրջանի բառերը տպված են շեղատառ, իսկ նոր շրջանի բառերը՝ բոլորովին:

	պրս.	պիլ.	գնդ.
*1. Ազուռ «աղ-յուս»	āgūr		
*2. Ազատ	āzād	āzāt	āzāta
3. Ազատդրախտ (ծառը)	āzāddiraxt		
4. Ազար «նե-դացած»	āzār		
5. Ազարիոն (ծաղիկը)	āđaryūn		
*6. Ազգ		azg	
*7. Ազդ		azd	հպրս. azdā
*8. Ազդիս?	āzux		
9. Ազտիհ «ազ-նըվականու-թյուն»	āzādī	āzātīh	
10. Աթաշ «հուր»	ātāš	ātaxš	ātarš
11. Աթաշակ «սիֆիլիս»	ātāšak		
12. Աթաշփարիստ	ātāšparast		
*13. Ալ, ալք «չար ոգի»	āl		

	պրս.	պիլ.	զնդ.
14. <i>Ախեստ</i> «պատրիհան»	āqišta		
*15. <i>Ախռ</i>	āxūr	āxvar	*āxvarəna
*16. <i>Ախրոժ</i>		*āxuarza	
*17. <i>Ախտ</i>		axt	axti
18. <i>Ախտարք</i>	āxtar	axtar	
19. <i>Ախտարմոլ</i> (- մար)		axtarmār	
20. <i>Ակահ</i> «տեղյակ»	āgāh	ākās	
*21. <i>Ակամայ</i>		akāmak	
*22. <i>Ակիշ</i>	āgiš		
23. <i>Ակիր</i> (խոտը)	agiṛ		
24. <i>Ահեկան</i> (ամիսը)		*āhrakān	
25. <i>Ահոկ</i> «համ- ցանք, վնաս»	āhō	āhök	
26. <i>Աճառ, ալ- ժառ</i> «սարք»	afzār	aičār	
*27. <i>Ամանակ</i> «ժամանակ»	amāna	*amānak	
*28. <i>Ամբար</i>	anbār	(h)anbār	
*29. <i>Ամբարիշտ</i>	տե՛ս ան+ պաշտ	(պարշտել)	
*30. <i>Ամբարտակ</i>	anbārda	*anbārtak	
*31. <i>Ամբարտա- լան</i>		*anbārtavān	
*32. <i>Ամբոխ</i>	anbōh		
33. <i>Ամիճ</i>		amič	
34. <i>Ամիր</i> սպասալար	amīr-sipāhsālār		

	պրս.	պիլ.	զնդ.
35. <i>Այեմակ</i> «օրինակ»	āyīn		
36. <i>Անազարմ</i> «վայրենի»		an-āzarm	
*37. <i>Անանուխ</i>	nānūxēh		
38. <i>Անաշահիկ</i>	«պանդուխտ»	<šahr «քաղաք»	բանից.
*39. <i>Անապակ</i>	nāb	*anāpak	anāpa
*40. <i>Անապատ</i>	nā-ābād	anāpāt	
41. <i>Անարի</i> «անճոռնի»		anēr	anairya
42. <i>Անգահ</i>	«անժամանակ»	(gāh «ժամանակ»	բանից)
*43. <i>Անգամ</i>		angām	hangām
44. <i>Անգար</i> «հաշիվ»	angār	angāra	
45. <i>Անգղ</i> «կանթ»	angul		
46. <i>Անգուժատ</i> (խեղ)	angužad		
47. <i>Անգուտան</i> (բույսը)	angudān		
48. <i>Անդաճել</i>	andāča	andāčšn	
*49. <i>Անդամ</i>	andām	andām	handāman
50. <i>Անդարմ</i> «կտակ»	andarz	andarz	
51. <i>Անդերծա- պետ</i>		andarzpat	
52. <i>Անդիշայ</i> «հոգս»	andiša		
53. <i>Անդոհ</i>	andōh	andōh	
*54. <i>Անդրա- վարտիք</i>	տե՛ս վարտիք.		



	պրս.	պիլ.	զնդ.
55. Անխուէշ- քարէ «սեփա- կանութիւն»		xwēškārī	
56. Անծրուք (խեժը)	anzarut		
57. Անծարա «յեղիծ»	anjira		
58. Անծարակ (բույսը)	anjarak		
59. Անծիրիտամ (բույսը)	anjir-i-Ādam		
60. Անծուհ (բույսը)	alanjūx		
61. Անծուք «մկնականք»	anjarak		
*62. Անոյշ	nōš	anōš	anaoša
*63. Անուշադր	nūšādir	*anōšādur	
64. Անջիման «ժողով»	anjuman	anjaman	
*65. Աշակերտ	šāgird	*ašākert	
66. Աշդահակ (ծուկը)	aždahāk		
67. Աշխարաւանդ	? + band		
*68. Աշխարհ	šahr	šatr	xšaθra հայ. xšaθra
*69. Աշխատիլ		*axšāt	
*70. Աշխտ	šēd	šēt, *xšēt	xšaēta
*71. Աշկարայ	āškāra	āškārāk	*āviškāra
72. Աշմ «հասպիս»	yašm		
73. Աշտեայ		*ašt	aršti
74. Ապալեպ	bē-lab	*apēlap	

	պրս.	պիլ.	զնդ.
75. Ապախտար «հյուսիս»	bāxtar	apāxtar	apāxtara
*76. Ապակի	ābgīna		
*77. Ապահարզամ			apaharəzana
78. Ապադարէ, ապխոր	ābxōra		
79. Ապաշաւ			apašāv
*80. Ապաշխարել		apāxš	
*81. Ապաստան		apastān	
82. Ապատ	ābād	āpāt	
83. Ապարահ	āb-rāh	āp-rāh	
*84. Ապարանք			հայ. apadāna
*85. Ապարանջան	abranjan		
86. Ապարասան «ըմբոստ»	*bē-rasan	*apērasan	
87. Ապարթանել	bartan	apartanih	
88. Ապաւանդակ	«չվան» (սանս.)	upabandha	
89. Ապենիագ	bēniyāz	apēniyāz	
90. Ապիզար	bēzār		
91. Ապիկամ	bēkām	apēkām	
*92. Ապիրատ	bēdād	apēdāt	
93. Ապշուպ		*ap-šōp	
94. Ապուզնայ	abūzna		
*95. Ապուխտ		*apuxt	
96. Ապուռ		apurtan	
*97. Ապսպարել		apaspāram	
*98. Ապստամբ		*apastamb	
99. Ապրա-յոյզ «Երևակ»	abr «ամպ»	abr, apr	

	պրս.	պիլ.	զնդ.
100. <i>Ապրդում</i> «ծիու փոկ»	pārdum	*apārdum	
*101. <i>Ապրիշում</i>	abrēšum	*aprešum	
102. <i>Ապրուր</i> «սմբուլ»	ābrūd		
*103. <i>Առասան</i>	rasan	*rasan	
*104. <i>Առատ</i>	rād	rāt	rātā
105. <i>(Չ)առատ- խանայ</i> «զհնարան»	zaradxāna		
*106. <i>Առ-ոյզ</i>			aogah
107. <i>Առսան</i> (բույսը)	rāsan		
108. <i>Ասան</i> «առավոտ»	-āsān	*āsān	
109. <i>Ասպ «ծի»</i>	asb	asp	aspa
110. <i>Ասպազեն</i> «ծիու սարք»		*aspzēn	
111. <i>Ասպահա- պետ</i> «զորապետ»	sipahbad	spāhpat	
112. <i>Ասպադոլ</i> «ջղախոտ»	aspaγōl		
113. <i>Ասպաճա- րակական</i> «հովվական»		*aspčarakakān	
*114. <i>Ասպանդակ</i>		asp+?	
115. <i>Ասպանտ</i> «սպիտակ մանանեխ»	ispand		
116. <i>Ասպաստ</i> «առվույտ»	aspast		
117. <i>Ասպաստան</i> «ախոռ»	asbistān	aspastān	

	պրս.	պիլ.	զնդ.
118. <i>Ասպաստա- նիկ «լավ ծի»</i>		*aspastānik	
*119. <i>Ասպատակ</i>		*asptak	
120. <i>Ասպար</i> «վահան»	ispar	aspar	հպ. spara
*121. <i>Ասպարեզ</i>	asprēz	asprēs	
122. <i>Ասպարիմ</i> (բույսը)	isparm (āb)		
*123. <i>Ասպետ</i>			հպ. *aspapati
*124. <i>Ասպնջա- կան</i>	sipanj	aspanj	
125. <i>Ասպուրակ</i> «ծնեբեկ»	*āspurāk < հուն.	aspáragos	
*126. <i>Աստառ</i>	āstar	āstar	
127. <i>Ատակ</i> «կարող»		*atāk	
128. <i>Ատր «կրակ»</i>	ādar	ātur	ātare
129. <i>Ատրագոյն</i>	āðargūn	*āturğōn	
*130. <i>[Ատրճանակ]</i>		*āturjanak	
*131. <i>Ատրուշան</i>	?	?	
*132. <i>Արագ</i>		*rag	*rayu սնս. raghú
133. <i>Արամազդ</i>	(թռչուն t)		
134. <i>Արայիշ</i> «հանդես»	ārāyiš		
135. <i>Արանդու- պարանդ (բույս t)</i>	arandubarand		
136. <i>Արբոն</i> կանխավճար)	arbōn		
*137. <i>Արզ, յարզ, զարզանալ</i>	arz	arj	սնս. arghá

	պրս.	պիլ.	զնդ.
138. <i>Արդու</i> ( <i>չափ է</i> )			
*139. <i>Արժան</i>	arzān	aržānj	հպ. ἀρτάβη
*140. <i>Արժան</i>	arzīdan	aržitan	
141. <i>Արկանել</i>			harek
142. <i>Արկ «արկան»</i>	ark	*ark	
*143. <i>Արձակ</i>	hištan	*harzak	harez
*144. <i>Արժիժ</i>	arzīz	*aržič	
*145. <i>Արմալ</i>	xurmā	*armav?	
*146. <i>Արշալ</i>		*aδšāv	alti+šav
*147. <i>Արոյր</i>	rōy	rōd	
148. <i>Արուճանակ</i>	arčang	?	
*149. <i>Արուսեակ</i>		arūs	auruša
*150. <i>Աւազան</i>		avazan?	
*151. <i>Աւան</i>		āvahan?	հպ. āvahana
152. <i>Աւանդ</i> <i>«մեծ քաղաք»</i>	āvand		
153. <i>Աւաչ</i>	āvāz	āvāč	
*154. <i>Աւար</i>		āvār	
*155. <i>Աւարտ</i>		*āvart	
*156. <i>Աւեր</i>	vērān	*avēr	
157. <i>Աւթմուն</i>	aftimūn	<hnū. epithymon	
158. <i>Աւսարդ</i> <i>«պարու»</i>		*afsard	հպ. *awi-sarda
*159. <i>Ափսոս</i>	afsōs		
160. <i>Աֆոկ</i> ( <i>տե՛ս Ահոկ</i> )			
161. <i>Բազ</i> <i>«բաժին»</i>		*bag	baga

	պրս.	պիլ.	զնդ.
162. <i>Բազ</i> <i>«Աստված»</i>			
*163. <i>Բադ</i>	bat	bag	bayā
164. <i>Բադիան</i> <i>«սամիթ»</i>	bādyān		
*165. <i>Բազէ</i>	bāz(a)	bāz	
166. <i>Բազմակ</i> <i>«ծրագ»</i>		*bazmak	
*167. <i>Բազմիլ</i> , <i>բազմական</i>	bazm		
*168. <i>Բազուկ</i>	bāzū	bāzūk	bāzu
*169. ( <i>Բազուկ</i> <i>«ճակնդեղ»</i> )			
*170. <i>Բազում</i>		*bazuma	
*171. <i>Բազպան</i> <i>«բննոց»</i>	*bāzūbān	*bāzupān	
172. <i>Բաժ</i> <i>«տուրք</i> , <i>մաքս»</i>	bāž	bāž	հպ. bāji
*173. <i>Բաժակ</i>		bāžak	
*174. <i>Բաժանել</i>			baž-
*175. <i>Բալ</i> <i>«կեռաս»</i>	bālū		
176. <i>Բալաթի-</i> <i>կիմ «մահակ»</i>	balātigīn		
177. <i>Բալափուշ</i> <i>«վերարկու»</i>	bālāpūš		
*178. <i>Բախտ</i>	baxt	baxt	baxta
179. <i>Բահադուր</i> <i>«կտրիժ»</i>	bahādur		
180. <i>Բահլիկ</i> <i>«ծեռքի զրահ»</i>	bahla	bahlik	
*181. <i>Բահրայ</i> <i>«տասանորդ»</i>	bahra		

	պրս.	պիլ.	զնդ.
182. <i>Բահուանդ</i> «ապարանջան»	(bāzūband)	*bāhūvand	
*183. <i>Բամբ</i> «հաստ ծայն»	bam		
*184. <i>Բամբակ</i>	panba	pambak	
*185. <i>Բամբիշն</i> «թագուհի»		bānbišn	
186. <i>Բան</i> (բույս է)	bān		
187. <i>Բանգ</i> (բույս է)	bang		banha
*188. <i>Բանդ</i> «թառի լաժ»	band		
189. <i>Բանդար</i> «բանուկ քաղաք»	bandar		
190. <i>Բանուկան</i> «իշխանուհիք»	bānūyān	bānūkān	
*191. <i>Բանտ</i>	band	*band	band
*192. <i>Բաշ, քարշ</i>	buš	*barš	barēša
193. <i>Բաշխ</i> «հարկ»	} baxš	*baxš	baxš
*194. <i>Բաշխել</i>			
195. <i>Բաշխ</i> (բույս է)	važax		
*196. <i>Բաշխիշ</i> «պարզև»	baxšiš	baxšišn	
197. <i>Բաստ</i> «ապաստարան»	bast		
198. <i>Բաստարան</i> «բանտ»	bastan	bastan	bastā
199. <i>Բատավարդ</i> (բույս է)	bādāvard		
*200. <i>Բարակ</i>	bārīk	*bārak	
*201. <i>Բարապան</i> «դռնապան»		*bar-pān	

	պրս.	պիլ.	զնդ.
202. <i>Բարբուտ</i> «նվազարան է»	barbut		
203. <i>Բարտ, բարի</i> «զոնե»	bārī		
204. <i>Բարկժատ</i> (խեժ է)	bārzad bargužad)		
*205. <i>Բարժ</i>	bālīš	*barz	barēziš
206. <i>Բարսմունք</i> «զոհի գավազան»	barsam		baresma
*207. <i>Բաւ</i>	buvī		būirī
*208. <i>Բաւանդակ</i>	buvanda	bavandak	
*209. <i>Բդեշխ</i> «մեծ իշխան»		bitaxš	
*210. <i>Բեհեզ</i> «ազնիվ կտավ»	?		
211. <i>Բեհեշտի</i> «դրախտային»	bihištī		
212. <i>Բզաք</i> «այծ»	buzak		
*213. <i>Բեխաբար</i> «անտեղյակ»	bēxabar		
214. <i>Բէշ, բիշ</i> (բույս է)	bēš, bīš		
215. <i>Բէշկ մշկոյ</i> (կենդանի ինչ)	bēš-mūš	beš-mešk	
216. <i>Բէշմար</i> «անթիվ»	bēšumār		
217. <i>Բէումէտ</i> «անհույս»	bēūmīd		
218. <i>Բէչարայ</i> «խեղճուկ»	bēčāra		
219. <i>Բէսիֆաթ</i> «աներես»	bē-sifat		
220. <i>Բէվաֆայ</i> «անհավատարիմ»	bē-vafā		

	պրս.	պիլ.	զնդ.
221. <i>Բէտար</i> «արթուն»	bēdār		
*222. <i>Բժիշկ</i>	bizišk	bizišk	
223. <i>Բիժ «ծիպը»</i>	bij	*biž	
224. <i>Բիմար</i> «հիվանդ»	bīmār		
*225. <i>Բիւր</i>	bēvar	bēvar	baevare
*226. <i>Բլբուլ</i> «սոխակ»	bulbul		
*227. <i>Բղուկ</i> «հողե աման»	bulük		
*228. <i>Բնակել</i>	buna	bunak	
229. <i>Բշխուն</i> «սփռոց»	pīš+xān, xūn		
230. <i>Բոբ «գորգ»</i>	bōb	bōp	
231. <i>Բոզպալիտ</i> «կրոնական մի գիրք»	պրս. baza +	զնդ. paititi	
232. <i>Բոլոճ</i> «ստերք, ամուլ»	pulūj		
*233. <i>Բոյժ</i>		bōž	buj
*234. <i>Բոյր</i>	bōy	bwd	haoiði
235. <i>Բոշխնել</i> «վայելել»			-baoxšna βarūkə)
*236. <i>Բոր «քոս»</i>		*bor	(unզն. βarūkə)
*237. <i>Բորակ</i> «nitrum»	bōra	*bōrak	
238. <i>Բուհճենիկ</i>	*bōy-i-cīni	*bōy-i-čēnik	
239. <i>Բուխտան</i> «գրպարտանք»	buhtān		
*240. <i>Բուն</i>	bun	bun	buna

	պրս.	պիլ.	զնդ.
*241. <i>Բուստ</i> «մարջան»	bussad		
242. <i>Բուտփա- րիտ «կոսպաշտ»</i>	butparast		
*243. <i>Բրինձ</i>	birinj		
244. <i>Բրնջաս</i> «ծաղիկ է»	baranjāsaf		
245. <i>Բրսամ (հի- վանդութ.)</i>	barsām		
246. <i>Բրսի (ան- դարու (բույս է)</i>	barsiyāndārū		
247. <i>Գազ (ծառք)</i>	gaz		
*248. <i>Գազ (արշիճ)</i>	gaz		
*249. <i>Գազար</i>	gazar		
250. <i>Գազեղրուակ</i>		?bōyāk	
*251. <i>Գազպէն</i>	gaz(angu)bin	*gazpen	
*252. <i>Գահ</i>	gāh	gāh	gātu
253. <i>Գահաւոր</i> (տիտղոս է)		gatvar>gahvar	
254. <i>Գահաւոր</i> «դեսպակ»	} gāhvāra	*gāhvārak	
*255. <i>Գահաւորակ</i>			
256. <i>Գահնամակ</i> «գուցակ գահուց»	*gāhnāma	*gāhnāmak	
*257. <i>Գաճ</i>	gaǰ, kaǰ, gač	gač	vičiča
258. <i>Գանգալ</i> «կատակ»	gangal		
*259. <i>Գանձ</i>	ganǰ	ganǰ	
*260. <i>Գանձ «երգ»</i>	ganǰ		
261. <i>Գանձակ</i> «փորր»	ganǰa	*ganǰak	

	պրս.	պիլ.	զնդ.
*262. <i>Գանձանակ</i> «դրամարկղիկ»	ganjēna	*ganjānak	
263. <i>Գանձաւոր</i> «գանձապետ»	ganjvar	ganjuvar	
*264. <i>Գաւ</i> «փարչ»	gāv		
265. <i>Գաւազ</i> «բազեյի ծառ»	*gavaz		
*266. <i>Գաւազան</i>	gāvzana	*gavāzan	gavāza
267. <i>Գաւարս</i> «կորեկ»	gāvars	gāvars	
*268. <i>Գերեզման</i>	garazmān	garōtmān	garōnmāna
*269. <i>Գզիր</i>	gizīr		
270. <i>Գզմազ</i> «բույս»	gazmāzū		
*271. <i>Գէս</i> «նազ»	gēs	gēs	gaēsa
*272. <i>Գիժ</i>	gīj		
*273. <i>Գմբժ</i>	kunbad	gumbaḅ	
*274. <i>Գոհար</i>	gōhar	gōhar	
275. <i>Գոճաշմ</i> (բույս)	gāvčašm		
276. <i>Գոմէզ</i>	gumīz	gōmēz	gaomaēza
*277. <i>Գոմէշ</i>	gāvmēš	gāvmēš	*gao-maēša
278. <i>Գոյիբուակ</i>	?-bōya	?-bōyāk	
*279. <i>Գոյն</i>	gūn	gūn	gaona
280. <i>Գոյշ</i> «զգոյշ»	gōš	gōš	gaoša
281. <i>Գոնջ</i> «հաշ- մանդամ»	gunj		
*282. <i>Գոռ</i> «զե- րեզման»	gōr		

	պրս.	պիլ.	զնդ.
283. <i>Գոս</i> «մեծ բմբուկ»	kōs		
*284. <i>Գոսակ</i> «քարձ»	kōsa	*kōsak	
*285. <i>Գովել</i>	guftan	gōw	(unq. guw)
286. <i>Գորշապա- հանգ</i> «օղ»		իրան.	*gaoša-upahanga
287. <i>Գուլբայշա- քար</i> «վարդի քաղցրաւենիք»	gulbašakar		
288. <i>Գուլիսա- քահ</i> «ծաղիկ»	gul-i-šabāh		
289. <i>Գուլվարդ</i>	gul+ վարդ		
*290. <i>Գուման</i>	gumān	gumān	*vī-manah
*291. <i>Գումար</i>	gumāram	gumārtan	
*292. <i>Գումարտակ</i>		gumārtak	
*293. <i>Գունակ</i> «պետ»	gūna	gōnak	
*294. <i>Գունդ</i> «զնդածն»	gunda	gund	gunda
*295. <i>Գունդ</i> «խումբ»	γund	gund	
*296. <i>Գուշակ</i>		gōšak	հպ. *gaušaka
*297. <i>Գուսան</i>	gōsān	*gōsān	
298. <i>Գուրգասար</i> «զալլազլուխ»	*gurgsar		
*299. <i>Գուրզ</i> «լախտ»	gurz		
300. <i>Գռիժ</i> «աղի բեկոր»	girīj		
*301. <i>Գրապան</i> , <i>գրպան</i>	girebān	grīvpān	grīva-pāna
*302. <i>Գրաւ</i>	girav	grav	

	պրս.	պիլ.	զնդ.
*303. <i>Գրիւ</i>	girīb	*grīw	
*304. <i>Գրոհ</i>	gurōh	grōh	
305. <i>Գրտակ</i> «հաց»	girḍa	*girtak	
306. <i>Դարդարայ</i> «դավի»	dabdaba		
307. <i>Դագ «խա- բուքուլն»</i>	dayā	*dag	
*308. <i>Դաժան</i>	dažan	*dažan	
309. <i>Դահ «տասը»</i>	dah	dah	
310. <i>Դահագրամ</i> «տասանոց»	dahdiram		
311. <i>Դահանակ</i> (ազնիվ քար)	dahana	*dahanak	
*312. <i>Դահեկան</i>	իբր Դարեհական		
313. <i>Դահիակ</i> «տասանորդ»	dahyak		
*314. <i>Դահիժ</i>		*dahič	
*315. <i>Դահլիժ</i>	dahliz	dahlīč	հայ. duvardi
դժկամակ, դժկերպ, դժնդակ, դժնեայ, դժուար, դարովել, դրուատ, դրժել, դրուժան, երամ, երաստ, երկ, զանազան, զենակար «վնասակար», զինահար, զուր, զօրութիւն, զգոյշ, զեան, թշնամանք, թշուառ, թոշակ, ժահ, ժանտ, ժժան, ժիր, ժոյժ, խամ, խոստանալ, խոստովանիլ, խորտակել, կարի, կերպ, կոյտ, կոտակ, կունդ «քաջ», հակիրճ, հաճիլ, համավար «հաւասար», հանգրիճել, հանգամանք, հանդարտ, հանդէս, հաւասար, հզօր, հնար, հրամայել, հրաման, հրաւեր, ճախր, ճապուկ, ճար, ճարակ, ճարպիկ, ճեմել, ճեպ, մանկ, մաստ «հաստ, մեծ», մուրալ, յիշատակ, յիշել, յուզել, նագիլ, նամ, նարմ, նաւակատիք, նիագ, նիշ, նիրիել, նկահ, նկուն, նշան, նշանակ, նշմարել, նպաստ, շամբուշ, շատ, շիփ «տարակուսանք», շնորհ, շտապ, ուխտ, չուան, պահել, պայման, պաշտպան, պատասխանի, պատգամ, պատիր, պատիւ, պատշաճ, պատուէր, պատուիրան, պատսպարել, պատրաստ, պարար, պարարտ, պարզ, պէտք, քոկ, քուխտ, ռոշնական, սատակ, սոթ, սով, սուգ, սպառել, սպուժել, ստահակ, ստամբակ, ստեճ «կռիւ», ստուար, սրսկել, վանել, վանգ, վատ, վատախտարակ, վատթար, վատմիիր, վաւերական, վեհ, վէգ «վեճ», վիճակ, վիշտ, վիրայել, վճիտ, վստահ, վտանգ, վրէպ, վտարել, տանջել, տապ, տապաստ, տարագ, տօթ, փաթերակ «փորձանք», փարթամ, փաշաման, փառք, փտիլ, քանդել, քարշել, օրինակ:

22) Մակբայ և նմաններ.—

Անգամ, բովանդակ, գունակ, դէմ (ընդդէմ), համ-, համակ, համայն, համբուն, համգունակ, հանգոյն, միշտ, յանդիման, յաւէժ, յաւէտ (յաւիտեան), յոյժ, նման, պէս, վասն, տակ, տակաւ, տար «հեռու», փարգաստ:

Եթե ընթերցողը մի ակնարկ գցե այս բոլոր փոխառությանց վրա և համեմատի բնիկ հայերեն 713 բառերի հետ տեսակ առ տեսակ, հայտնի կերպով կտեսնե թե իրապես ինչ է իրանական ազդեցությունը և հատկապես ո՞ր կողմից նա զորեղ է:— Բնության և նրա զորությանց մասին իրանական ազդեցությունը շատ տկար է: այս կետում բնիկ հայերենի 35 բառերի դեմ ունիմք միայն 11 բառ, որոնցից ապախտար, նեմռոզ, տարագուկ և ապրայոյզ հիշված են իբր գիտական տերմին կամ իբր օտար բառ. պարխրցի (քամին) այժմ գաւառական բառ է. գրեթե կրոնական բովանդակություն ունի ախտարք և միայն հինգ բառ կա (արուսեակ, երաշտ, վտակ, խաւար և մահիկ), որ հայ լեզվին սեփականություն դարձած բառեր են:

Կրոնական բառերից բնիկ հայերեն ունիմք միայն 11 բառ, իսկ իրանական փոխառությունները 31 հատ են, դեռ չհաշված այն 18

բառերը, որոնք զուտ պարսկական կրոնին են վերաբերում: Այսպեսով ուրեմն իրանական փոխառությունները հայերենի գոնե եռապատիկն են, և ցույց են տալիս թե ի՞նչքան մեծ է եղել իրանյանների ազդեցությունը մեր վրա կրոնի տեսակետով: Ավելացնենք դեռ սրա վրա այն աստվածների անունները, որոնք հեթանոսության ժամանակ պաշտվում էին մեր մեջ (Արամազդ, Անահիտ և այլն) և որոնք զուտ իրանական փոխառություն են:

Մարդու և մարմնի մասերի վերաբերյալ փոխառությունները 25 հատ են, որ բնիկ հայերեն բառերի մոտ մի երրորդը լինելով (71), ցույց են տալիս իրանական ազդեցության տկարությունը այս կետում: Նույնը պետք է ասել նաև բժշկական բառերի մասին, որոնց թիվն է 21, բնիկ հայերենը 24:

Կենդանիների վերաբերյալ բառերը բնիկ հայերենում 55 են, իսկ փոխառությանց մեջ 40. այս թիվը հայերենի համեմատությամբ թեև բավական փոքր է, բայց պետք է նկատի առնել, որ հիշված կենդանիներից գոնե 13-ը հայ երկրի բնիկ կենդանիներ չեն. այսպես աշդահակ («վիշապածուկ»), բեշկ մշկոյ, խարբուզ, կապիկ, մուշկ, յովագ, նափակ, նհանգ, շտրպաղանգ «ընծուղտ», սիրամարգ, վագր, վիշապ, փիղ: Այս բառերը հիշված են իբրև օտար երկիրների կենդանիների անուն և նրանց գոնե կեսը հայերենի մեջ սովորական գործածություն չունի: (Վագրը հնդեւրոպացոց էլ ծանոթ չէր. Ռիզվեդայի մեջ չէ հիշված դեռ. վագրը Հունաստան եկավ մ. Ք. 300 թվին և շատ ավելի ուշ Հռոմ. մ. Ք. Ա դարում հիշում է Varro և համարում է իբր հայերենից փոխառյալ բառ): Այս տեսակետով մոտենալով խնդրին, կտեսնենք, որ կենդանիներին վերաբերյալ բառերի թիվը էլ ավելի կնվազի և հազիվ բնիկ հայերեն բառերի կեսին կհասնի:

Ընտանիքի և ազգակցության վերաբերյալ բառերը բնիկ հայերենում 25 հատ են, մինչդեռ իրանական փոխառությանց մեջ միայն 2 բառ կա (պապ և դուխտ), նրանք էլ ունին հարազատ հայերեն ձևը՝ հաւ (որ անշուշտ հաւ (թռչուն) բառի հետ չփոխելու համար տեղի է տվել պապ ձևին) և դուստր:

Ընդհակառակը ընկերական կազմության վերաբերմամբ հայերենը շատ քիչ բան ունի (8), իսկ իրանյան փոխառությունները շատ հարուստ են (25):

Շատ հետաքրքրական է երկրագործական բառերի հարցը: Այստեղ ընդհանուր գումարի մեջ բնիկ հայերեն բառերի թիվը (69) գրեթե հավասար է փոխառությանց (70): Բայց երբ մտնենք մանրամաս-

նությանց մեջ, այսպես՝ տունկի մասեր, երկրագործական գործիքներ և գործողություններ, կտեսնենք որ իրանական ազդեցությունը (10 բառ) գրեթե ոչինչ է հայերենի վրա, որ ունի 48 բառ:

Ընդհակառակը Իրանը մատակարարել է մեզ բազմատեսակ բույսեր, որոնց թիվը 60 է՝ բնիկ հայկական 21-ի դեմ: Լատիներենումն էլ պտղատու ծառերի անունները մեծավ մասամբ փոխառյալ են:

Եվ զարմանալիս այն է, որ այս բնիկ հայկական 21 բուսանուններից շատը ներկայացնում է վայրի բույսեր կամ անտառային ծառեր, մինչդեռ իրանականներից շատ շատերը մշակական բույսեր են. այսպես՝ բրինձ, թուփ, կաղամբ, կանեփ, կնճիթ, մաշ, շաղգամ, պղպեղ, սոխ և վարունգ: Տարակույս չկա, որ այս բույսերից մի քանիսը Պարսկաստանից անցել է Հայաստան. այսպես են հատկապես բրինձը, որ Վրկան աշխարհից անցել է մեր երկիրը, և թուփը, որ Մարաստանի հատուկ բույս է և այնտեղից տարածվել է համայն աշխարհ: Բուսանունների մի մասն էլ ներկայացնում է այնպիսի բույսեր, որոնք տաք զոտուն հատուկ լինելով, չեն կարող աճել Հայաստանում, հետևաբար իրենց անունների հետ միասին Պարսկաստանի վրայով մտել են Հայաստան, իբրև օտար բերք: Այս կարգին են պատկանում արմաւը, դարապղպեղը, դարիճենիկը, ճանբակը, ճանդանը, մուրտը, նարգիլակը, պիստակը և քրքրումը: Կարևոր է հիշատակել և այն, որ այդ բուսանունների մի սովոր բաժինը ծաղիկ է. ինչպես՝ համասպրամ, հօրոտ, մանուշակ, մօրուտ, յասմիկ, նարգէս, շահասպրամ, շամդիտակ, շաւաշարին, շուշան, սմնակ և վարդ: Ավելի ուշ ժամանակից են մեխակը, սմբուլը և նունուֆարը: Այնպես որ հայերեն մշակական ծաղկի անուն չկա: Եղածները կամ վայրի ծաղիկների անուններ են, կամ միջին հայերենում կազմված բառեր են (ինչ. աղաւնարօտ, անթառամ, բարձուենեակ, գնդածաղիկ, խաչափայտ, հարսնամատն, ծինծաղիկ, վաղամեռուկ, վաղուենիկ, փայլասենի, մատիտեղ), կամ զավառական բառեր (ինչ. գինարբուկ, առիւծբերան), և կամ լավագույն դեպքում՝ անծանոթ ծագում ունին (ինչ. անիար, ասպուզան, հիրիկ, կոկոռ, կակաչ, պուտ, տուղտ): Չեն հաշվում նորակերտ բառերը (ինչ. թաւաշածաղիկ, անմոռուկ, գիշերազուարճ, ցայգածաղիկ, շեփորուկ): Այս հանգամանքը ցույց է տալիս, որ ծաղկամշակությունը Պարսկաստանից է մտել Հայաստան: Հին ժամանակներից սկսած և մինչև այսօր էլ Պարսիկները մեծ սիրով հետամուտ են ծաղկամշակության: Պարսկաստանում յուրաքանչյուր տուն մի պարտեզ է, միջին անխուսափելի ավազանով, որի չորս կողմը զույնզույն ծաղիկներ են ցանված: Ամեն

երեկո ջուրը փողորակներով գալիս լցվում է ավազանի մեջ, որտեղից տան մշակը կամ աշխատավորը կորիներով ոռոգում է ամբողջ ծաղկանոցը կամ պարտեզը: Նույն իսկ պարտեզ բառը գուտ իրանական է, որի հին ձևն է զնդ. *pairidaēza*, կազմված *pairi* «շուրջ» և *diz* «փորել, շինել, դիզել» բառերից և բուն նշանակում է «չորս կողմը ցանկով պատած կամ հողե թունք դիզած տեղ»: Շատ նշանավոր էին աքեմենյան պարսիկ իշխանների պարտեզները. և այն ժամանակից սկսած բառը նյութի հետ տարածվել է դեպի Արևմուտք. այսպես՝ պարսկերենից են փոխ առնված ասուր. *pardisu*, ասոր. *pardisā*, եբր. *pardēs*, արաբ. *firdaus*, հուն. *parádeisos*, լատ. *paradisus*, իտալ. *paradiso*, ֆրանս. *paradis*:

Խաշմարածության և գյուղատնտեսության վերաբերմամբ իրանական ազդեցությունը նույնպես ոչինչ է հայերենի վրա (8 բառ փոխառյալ՝ 39 բնիկների դեմ): Բայց ընդհակառակը շատ ուժեղ է ձիադարմանության վերաբերմամբ. այսպես՝ ձիու սարքի համար ունինք 10 բառ, մինչդեռ բնիկ հայերեն ո՛չ մի բառ չկա:

Առանձնապես տարօրինակ պիտի թվի անշուշտ խաշմարածության և գյուղատնտեսության մեջ զարգացած հայոց համար այնպիսի բառերի փոխառությունը, ինչպես են պանիր, կարագ, ճկան, քաշկեն, գրտակ ևլն: Այս բանը պետք է զարմացնի մեզ և հակառակ երևա մեր նախորդ եզրակացությանց: Հայերը ունեին անշուշտ իրենց զանազան տեսակի հացերը. բայց այդ բոլորը չէին խանգարում, որ պարսկական ոճով պատրաստված մի քանի նոր տեսակի հացեր մտնեին Հայաստան. այսպես նկանը, որ մոխրի մեջ թաղելով եփված հացն էր (ինչպես ցույց է տալիս ստուգաբանությունը), քաշկենը, որ գարեհացն էր, և սակայն շատ քիչ է գործածված հայոց մեջ, գրտակը, որ կլորակ ձևով մի տեսակ հաց էր և նույնպես շատ քիչ է գործածված հայոց մեջ: Այսօր էլ հայերը՝ առանց թողնելու իրենց լավաշը, փոխ են առնում երբեմն վրացական պուրին, պարսկական սանգակը, ռուսական բրջոնը կամ բուլկին ևլն, ճիշտ այնպես, ինչպես ուրիշները փոխ են առնում մեր լավաշը. օրինակ՝ թեհրանում պարսիկների (և նույն իսկ երոպացոց) մեջ բավական տարածված է մեր լավաշը, որ կոչվում է *nuni armani* «հայկական հաց»:

Հետաքրքրական է նույնպես, որ կարագ բառը պարսկերեն է. բայց ունինք և բնիկ հայերեն կոզի. այնպես որ կարագ բառի փոխառությունը կարող է ենթադրել տալ կարագի պատրաստության մի նոր ձև, որ հայերը սովորել են պարսիկներից: Այսպես պետք է բացատրել նաև

պանիրը, որ գյուղական կյանքի առօրյա սնունդն է և այնպես հասարակ, որ պետք չկար փոխ առնելու: Բայց այդպես էլ իրողությունը: Պանիրը ծանոթ էր դեռ հնդեւրոպական շրջանից. (հմմտ. հուն. *tyrós* և զնդ. *tūray* «պանիր») և նույն իսկ այնպես սովորական, որ կարագը դրանից էր ստանում իր անունը. հուն. *bútyros* «կարագ» նշանակում է բուն «կովի պանիր» և դրանից է որ փոխ են առնված գերմ. *butter*, ֆրանս. *beurre* ևլն:

Հների պանիրը թթու համ ուներ. դրա համար էլ սլավական ժողովուրդները կոչեցին *syni*, որ նույն է հբգ. *sūr*, հիսլ. *sürr*, գերմ. *sauer*, ֆր. *sûre* «թթու» և լիթ. *súras* «աղի» բառերի հետ: Հայերը պարսիկներից սովորեցին պանիրի պատրաստության մի նոր ձև և այդ ձևի հետ ստացան նաև պանիր բառը, որ անշուշտ նախապես մասնավոր մի տեսակի անունն էր, բայց հետո այդ տեսակը այնպես տարածվեց, որ դարձավ ընդհանուր անուն: Այսօր էլ պանիրի հազարավոր տեսակներ կան. և այդ տեսակները ազգից ազգ փոխ են առնվում ու տարածվում: Հոլանդական ու շվեյցարական պանիրները մի ժամանակ շաքարային էին Հայաստանում. բայց այսօր Դարալագյազի, խորած պանրի, տկի պանրի, թուշի պանրի, կած պանրի հետ և թերևս նրանցից ավելի տարածված է Հայաստանում, ուր և պատրաստվում է մեծ քանակությամբ: Այսպիսի երևույթներ ընդհանուր են ամեն տեղ: Լատիները հարավից ստացան *caseus* թթու պանիրը և *formatuus*-ը, որ կաղապարներով (*forma*) պատրաստված պանիրն էր, որ և հետո ռոմանական լեզուների մեջ եղավ ընդհանուր անուն (ֆր. *fromage*, իտալ. *formaggio*): Աստրախանում, թեև բնակչության մեծամասնությունը ռուս և թաթար է, բայց թե՛ ռուսները և թե՛ թաթարները գործ են ածում հայ. *panir* բառը, որով հասկանում են սպիտակ հայկական պանիրը, որի պատրաստությունը սովորել են հայերից, մինչդեռ ռուս. *сыр* բառը, ինչպես ռուսաց, նույնպես և թաթարների ու հայոց լեզվի մեջ նշանակում է ռուսական կամ երոպական պանիր:

Եթե ոչ արհեստների, զոնե գիտության և գեղարվեստի վերաբերմամբ իրանական ազդեցությունը շատ նկատելի է. այսպես ուսուցման համար ունինք 8 բառ, նկարչության համար 3, երաժշտության համար 13. մինչդեռ այս բոլորի համար միայն 6 բառ կա հայերեն: Շատ մեծ է նաև իրանական ազդեցությունը գույների վերաբերմամբ, որովհետև հայերեն ունինք միայն 3 բառ (դեղին, դեղբ, դեղձան), իսկ պարսկերեն 12 բառ. բոլոր գլխավոր գույները պարսկերենից են (սպիտակ, սեաւ, կապոյտ, կարմիր). նույն իսկ գոյն և երանգ բառերը

պարսկերեն են և այս գաղափարի համար ո՛չ մի հայերեն բացատրություն չկա: Այսպես է նաև լատիներենը, ուր միայն «կարմիրն» է հնդեւրոպական, մյուս գույները անծանոթ կամ փոխառյալ են:

Վաճառականության և դրամական գործարքների վերաբերմամբ մեկ բառ միայն կա հայերեն (գին, որից գնել), մինչդեռ պարսկերենից ունինք 23 բառ, որ ցույց է տալիս իրանական ազդեցության մեծությունն այս կողմից:

Շինությանց վերաբերյալ բնիկ հայերեն ունինք 19 բառ, իրանական 30 բառ, հագուստեղենի և արդուզարդի վերաբերյալ հայերեն 12 բառ, իրանական 53 բառ, ուտելեղենի վերաբերյալ հայերեն 16 բառ, իրանական 22 բառ, առտնին տնտեսության վերաբերյալ հայերեն 51 բառ, իրանական 46 բառ: Նկատել պետք է և այն, որ այս կարգի բառերի մեջ հայերեն ձևերը ներկայացնում են ընդհանուր և հասարակ գաղափարներ (տուն, կերակուր, ուտել...), իսկ պարսկերենները մասնավոր և առանձնահատուկ (ինչ. դահիճ, պատշգամբ, մոյկ, մուճակ, գրտակ, նկան, քաշկէն ևլն):

Շինությանց, հագուստեղենի, արդուզարդի, ուտելեղենի և առտնին տնտեսության վերաբերյալ այս կարգի բառերի փոխառությունը ցույց է տալիս, որ հայ տունը, անշուշտ հատկապես ազնվական հայի տունը, արտաքուստ և ներքուստ կրում էր պարսկական սարք ու կարգավորություն:

Թվերը հայերենի մեջ գնում են մեկից մինչև 99. հարյուր բառի ծագումը անծանոթ է. ավելի բարձր թվերը՝ հազար և քիւր պարսկական փոխառություն են: Չափերի և դրամների վերաբերմամբ ո՛չ մի բառ չկա հայերեն. մեր ցանկում հիշվածները ընդհանուր բացատրություններ են (ամենայն, կրկին, հեղ ևլն). իսկ պարսկական փոխառությունները (թվով 15) ցույց են տալիս, որ այս կողմից էլ հայ կյանքն ամբողջապես կրում էր իրանական ազդեցության կնիքը:

Մետաղների և հանքերի մասին արդեն գիտենք, որ նախահայերենը շատ տկար էր. բացի աղից ու արծաթից, ուրիշ ոչինչ չունեինք. իրանական քաղաքակրթությունն է, որ ծանոթացրել է մեզ 38 տեսակ հանք, մետաղ, խեժ, համեմ, թանկագին քարեր, անուշահոտություններ և նմաններ:

Ճամբի վերաբերյալ հայերենը ունի 15 բառ, իրանական բառերը 10 են միայն. բայց այստեղ ունինք 3 շատ կարևոր բառ. — կարաւանը ցույց է տալիս հին ժամանակների ճամբորդության ձևը, որ շարունակվում է մինչև այսօր էլ Արևելյան երկիրներում. — դեսպակն ու ժանուարը ցույց

են տալիս ճամբորդության միջոցները: Լեռնոտ երկիրներում և երկարատև ճամբորդությանց համար սայլերը անհարմար էին. ծի հեծնելը փոքր մանուկների և ազնվական տիկիների համար դժվար էր. ուստի հնարել էին դեսպակը և ժանուարը: Առաջինը մի տեսակ հովանավոր կառք և կամ պատգարակ էր, որ ծառաները ձեռքների վրա բարձած տանում էին: Իսկ երկրորդը (ժանուար) ներկայացնում էր ձիու կամ ջորու մեջքին բարձած մի զույգ փոքրիկ սենյակ, հատակը գորգ կամ անկողին փռած և չորս կողմերը վարագույրով պատած: Ամեն մի սենյակի մեջ նստում էր մի անձ: Ժանուարները մինչև այսօր էլ գործածական են Պարսկաստանում և արդի պարսկերենով կոչվում են քեջավա:

Ժամանակի վերաբերյալ հայերեն բառերը բավական առատ են. պարսկերենը հայթայթել է մեզ միայն տարվա յոթը ամիսների անունը: Հայտնի է, որ հին հայոց տոմարը կազմված էր հետևյալ ձևով. — տարին ուներ 12 ամիս, յուրաքանչյուրը միշտ 30 օրից բաղկացած. համազումարը լինում էր 360 օր, որի վրա ավելանում էր Աւելեաց ամիսը՝ որ բաղկացած էր 5 օրից: Հին հայերը նահանջի հաշիվը չգիտեին և իրենց տարին ամեն մի քառամյակին մի օր պակաս էր լինում: Այդ 12 ամիսների անուններն են՝ նաւասարդ, հոռի, սահմի, տրէ, քաղոց, արաց, մեհեկան, արեգ, ահեկան, մարերի, մարգաց, հրոտից: Սրանցից յոթը (նաւասարդ, տրէ, մեհեկան, ահեկան, մարերի, մարգաց և հրոտից) պարսկերեն են. հոռի և սահմի բառերը, ինչպես գիտենք, ներկայացնում են վրացերեն 2 և 3 թվականները, արեգ՝ հայերեն արեգ «արեգակ» բառն է, թարգմանաբար կազմված պարսից համապատասխան ամսանունից, քաղոց առաջանում է քաղ «մերձավորություն» բառից, իսկ մնացյալ մեկը (արաց) անծանոթ է: Տոմարը պարսիկների մեջ էլ այս միևնույն կազմությունն ուներ, որոնցից էլ փոխառությամբ անցավ հայերին. ուստի զարմանալի չէ, որ յոթը ամսանուն և մեկ ամսի էլ թարգմանությունը միասին ժառանգած լինին հայերը:

Հետաքրքիր է շաբաթվա օրերի թիվը և նրանց անունը զանազան լեզուների մեջ: Հնդեվրոպացոց շաբաթվա կազմը մեզ հայտնի չէ (տես էջ 14): Հին գերմանացոց շաբաթը 14 օր էր և նոր լուսնից սկսելով գնում էր մինչև լրումը: Հնդիկներն ու Ավեստան էլ ամիսը բաժանում էին գերմանացոց նման երկուսի: Հույների շաբաթը 10 օր ուներ, իսկ լատիներինը՝ 8 օր. իններորդ օրը նրանք ունեին իրենց nundinae կոչված մեծ շուկան (տես Feist, Kultur, Ausbreitung und Herkunft der Indogermanen, էջ 262): Գալով արդի լեզուների շաբաթվա օրերի

անունին, գիտենք, որ այստեղ սովորաբար երկու ձև կա.— մի խումբը օրերը անվանում է երկնային մարմինների անունով, մյուս խումբը պարզ թվականներով: Առաջին խմբին են պատկանում եվրոպական լեզուները, ինչպես, օրինակ՝ լատիներենը, գերմաներենը, իտալերենը, ֆրանսերենը, անգլերենը ևլն. սրանց մեջ կիրակին է «Արեգական օր» (գերմ. Sonntag, անգլ. sunday), երկուշաբթին «Լուսնի օր» (գերմ. Montag, անգլ. monday, ֆր. lundi), երեքշաբթին «Մարտի կամ Յրատի օր» (ֆր. mardi), չորեքշաբթին «Փայլածուի օր» (ֆր. mercredi), հինգշաբթին «Լուսնթագի օր» (ֆր. jeudi), ուրբաթը «Աստղական օր» (ֆր. vendredi), շաբաթը «Երևակի օր» (անգլ. saturday): Երկրորդ խմբին պատկանում են մյուս լեզուները, ինչպես հունարենը, պարսկերենը, ասորերենը, վրացերենը, ռուսերենը, ինչպես նաև հայերենը: Սրանց մեջ, ինչպես ասացինք, օրերը անվանվում են ըստ համարի, սկսելով կիրակի օրվանից: Այսպես՝ հյ. միաշաբաթի, երկուշաբաթի, երեքշաբաթի, չորեքշաբաթի, հինգշաբաթի: Այս կետում էլ հայերենը նույն է պարսկերենի հետ, ուր համապատասխան ձևով ունինք՝ yaksanbih, dūsanbih, sašanbih, čahārsanbih և panjšanbih: Բայց թվում է թե մեր օրերի անունները կազմված են ո՛չ թե պարսկերենի, այլ ասորերենի ազդեցությամբ, զոնե իրենց վերջին ձևի տակ: Այդ երևում է նրանցից, որ ուրբաթ և շաբաթ օրերը չեն կոչվում վեցշաբաթի և եօթնշաբաթի կամ մի ուրիշ ձևով, այլ ուղղակի ասորերեն են. ուրբաթ փոխառյալ է ասոր. ‘arḇēthā ձևից և շաբաթ՝ ասոր. šabbēthā ձևից: Առաջինը նշանակում է բուն «պատրաստություն», ըստ որում շաբաթ օրը սուրբ պահելու համար ուրբաթ օրվանից ամեն բան սարքում պատրաստում էին. իսկ երկրորդը՝ շաբաթ, նշանակում է բուն «հանգիստ», որովհետև այդ օրը աշխատանքը դադարեցնում էին: Ինչպես մահմեդականությունը պարսից մեջ, նմանապես քրիստոնեությունը քրիստոնյա ազգերի մեջ եկավ որոշ օրերի անունը փոխելու: Մեր մեջ էլ միաշաբաթին դարձավ կիրակե, որ հուն. kyriakē՝ «տերունական» բառն է, ինչպես լտ. dominica, ֆր. dimanche, որ նույնպես նշանակում է «տերունի» և ռուս. воскресенье, որ նշանակում է «հարություն», ի հիշատակ Քրիստոսի հարության, որ տեղի է ունեցել նույն օրը:

Պարսկական քաղաքակրթության և լեզվի ազդեցությունը իր մեծագույն աստիճանին է հասնում պետական կազմի վերաբերմամբ. այստեղ բնիկ հայ բառ զրեթե չկա (8 բառ միայն), իսկ պարսկերենից փոխառությունները 166 հատ են: Այս բառերի մի մասը իրոք որ պատկանում են զուտ պարսից պետական կյանքին (ինչ. զինդակապետ,

շարսաղար ևլն), բայց ամենամեծ մասը այնպիսի կենսական բառեր են մեր լեզվի համար, որ այսօր էլ շարունակում են իրենց գոյությունը և առանց նրանց մենք չգիտենք թե ի՞նչպես պիտի բացատրվենք (օրինակ՝ զրահ, դրօշակ, հրովարտակ, պահակ ևլն):

Այս բոլորը ցույց է տալիս, որ հին հայոց վարչական ձևը, դիվանական գործողությունները, հարկային սիստեմը, ռազմագիտությունը, զենքերը, մի խոսքով ամբողջ պետական կազմը պարսկական ձևով էր:

Երկար չենք ուզում խոսել սովորական կյանքի բառերի (198), մակբայների և նմանների (22) մասին, որոնց թիվը թեև հայերենից պակաս, բայց դարձյալ ինքնին շատ մեծ է նշանակելու համար պարսկական քաղաքակրթության և նրա հետ միասին՝ պարսկական լեզվի խոշոր ազդեցությունը մեր վրա:

Մենք մինչև այստեղ թվեցինք և ուսումնասիրեցինք հայերենի իրանական հասարակ անունները և չհիշեցինք հատուկ անունները: Հասարակ անունները գնահատելի են նրանով, որ նրանցից զրեթե յուրաքանչյուրը մի կուլտուրական կողմ է բացատրում կամ մատնանշում: Հատուկ անունները այդպես չեն. նրանք ընդհանրապես ցույց են տալիս փոխատու լեզվի ազդեցության ուժը փոխառուի վրա: Այդ պատճառով մենք էլ բավականանում ենք տալով միայն մի ընդհանուր ծանոթություն հայերենի մեջ փոխառյալ հատուկ անունների վրա:

Հատուկ անունները բաժանվում են երկու կարգի. անձնական և տեղական: Դեռ չկա մի այնպիսի աշխատություն, ուր հավաքված և մեկնված լինեին այն բոլոր անձնական ու տեղական հատուկ անունները, որոնք գործածված են հայոց մեջ՝ սկզբից մինչև այժմ: Ամենից կատարյալ հավաքածուն գտնվում է Յուրբշմանի քերականության մեջ, որից օգտվում ենք նաև մենք:

Այդ աշխատության մեջ իրանականից փոխառյալ հայկական հատուկ անունները հետևյալներն են.

Անձնանուններ  
(121 հատ)

Անահիտ	Արշաիր	Սանդուխտ	Խոսրովուհի
Անոյշ	Արտակ	Սահակդուխտ	Խոսրովիդուխտ
Արշանոյշ	Արտաշես	Վարազդուխտ	Համազասպ
Սահականոյշ	Արտաւազդ	Վարդանդուխտ	Համազասպեան



Սմբատանոյշ	Արտաւան	Քուլպիդուխտ	Համազասպուհի
Վարդանոյշ	Արտէն	Դրաստամատ	Հմայեակ
Խոսրովանոյշ	Արտաշէն	Երազմակ	Հրահատ
Անուշվոնամ	Բագարատ	Երուանդ	Մամակ
Հրանոյշ	Բամբիշն	Զանգակ	Մանաճիրի
Աշխէն	Բատ	Զարեհ	Մանաւազ
Ապրսամ	Գոտորգ	Զարմանդուխտ	Մանակ
Արամազդ	Դատ	Զափրանիկ	Մանէճ
Արշակ	Դատաբէն	Զրուանդուխտ	Մարասպանդ
Արշամ	Գորիդուխտ	Խոսրով	Մեհենդակ
Մերհանդակ	Շերոյ	Վարազ	Վարդանդուխտ
Մերուժան	Պապ	Վարազ-Գնէլ	Վեհիկ
Միիր	Զուանշէր	Վարազ-Գրիգոր	Վստամ
Միիր-Արտաշիր	Ռոստոմ	Վարազդատ	Վրկէն
Միիրդատ	Սանատրուկ	Վարազդէն	Գուրգէն
Միիրշապուհ	Սատոյ	Վարազդուխտ	Տիգրան
Յազդ	Սուրէն	Վարազման	Տիրան
Ներշապուհ	Սպանդարատ	Վարազներսեհ	Տիրիկ
Ներսեհ	Ստահրաշապուհ	Վարազշապուհ	Տիրայր
Ատրներսեհ	Վահագն	Վարազվազան	Տիրանամ
Շահանդուխտ	Վահրամ	Վարազտիրոց	Տիրուկ
Շահակ	Վռամ	Վարազտրդատ	Տրդատ
Շահէն	Վռամշապուհ	Վարդ	Փառներսեհ
Շապուհ	Վահրիճ	Վարդիկ	Փառէն
Մերշապուհ	Վաղարշ	Վարդենի	Քալթար
Շաւասպ	Վաղարշակ	Վարդուհի	
Շաւարշ	Վասակ	Վարդան	

**Տեղանուններ  
(37 հատ)**

Արշակաւան	Երուանդակերտ	Պերոզապատ	Վասպուրական
Արտամետ	Երուանդաւան	Հրաքոտպերոժ	Վարազկերտ
Արտաշատ	Զարեհաւան	Սպանդարան-պերոժ	Վարազաբլուր
Բագարան	Զարիշատ		Վարազ
Բագաւան	Խոսրովակերտ	Վաղարշապատ	Վարդաշէն
Բագայառիճ	Հրազդան	Վաղարշակերտ	Վարդանաշատ

Բագրևանդ	Մանազկերտ	Վաղարշաւան	Վարդանակերտ
Բագնայր	Ներսեհապատ	Վասակաշատ	Տիգրանակերտ
Գանձակ	Շաւարշան	Վասակաշէն	
Երուանդաշատ	Ռոմճղպերոժ	Վասակակերտ	

Այս երկու ցուցակներից երևում է որ՝

1) Այն բոլոր հատուկ անունները, որ ներկայացնում են մեր պատմության հին ու վաղնջական շրջանի նշանավոր դեմքերը և որոնք մեր արդի հայացքով՝ իբր թե այնպես բնիկ ու հարազատ ազգային հայկական են համարվում, ամբողջապես պարսկերեն են: Պարսիկները ընդունելով մահմեդականությունը, հրաժարվել են իրենց ազգային անուններից և ընդունել արաբական Ալին, Հասանը, Հուսեյնը, Մեհմեդը և Աբդուլլահը. և այսօր մենք լսելով այդ անունները պարսիկներից, ամենևին չենք կասկածում հայ անունների իրանականության վրա: Մինչդեռ իրականությունն այն է, որ այսօր պարսկական անուն չկա, հայերի անուններն են որ պարսկական են:

2) Մեր աստվածների անուններից հինգը զուտ իրանական են. այսպես Արամազդը, «մեծն և արին, հայր ամենայն աստուածոց, արարիչ երկնի և երկրի, տուող լիութեան և պարարտութեան», իրանական Ahuramazdā-ն է, գերագույն աստվածությունը, որի անունը նշանակում է «Տեր իմաստնագույն».— Մեծն Անահիտ տիկին, «ծնունդ մեծին Արամազդայ, ոսկեծին և ոսկեմայր, մայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան, որ է փառք ազգիս մերոյ և կեցուցիչ, որով կեայ և կենդանութիւն կրէ երկիրս Հայոց», իրանական Anāhita-ն է, իզական ոգի, որ բխում է Արամազդից, որից դուրս են գալիս ամբողջ աշխարհը պտղաբերող ջրերը և նորից իրեն են վերադառնում, որի անունը նշանակում է «ամենամաքուր, անարատ».— Միիր, Արամազդի որդին, իրանական Miθra-ն է, Լուսո աստվածությունը, միջնորդ մարդկության և Արամազդի միջև.— Վահագն Վիշապաքաղ, իրանական Vərəθraγna-ն է, աստվածություն հաղթության.— Տիր դիք, «երազացոյց, երազընդհան, դպիր գիտութեան, գրիչ Արամազդայ ուսման ճարտարութեան», իրանական Tištrya-ն է, Շնիկ աստղը, որ աստղերի գլխավորն է և բերում է անձրևը երկրի վրա, ավելի ուշ՝ պահլավական և պարսկական Tīr, որ է ամառնային եղանակի ներկայացուցիչը:

3) Իզական անուններից բոլոր նրանք, որոնք կազմված են դուխտ, անոյշ և ուհի վերջավորությամբ, իրանական են: Հայ մատենագրու-

թյունը արդեն շատ ժլատ է իգական անունների վերաբերմամբ, եղածներն էլ ո՛չ թե իրապես անուն են, այլ նշանակում են «այս ինչի աղջիկը կամ դուստրը»։ Տրդատի քույրը կոչվում էր Խոսրովիդուխտ, որովհետև Մեծն Խոսրովի աղջիկն էր. Սմբատ Բագրատունու երկու աղջիկները կոչվում էին Սմբատանոյշ և Սմբատուհի: Հին հայոց սովորությամբ ամոթ էր համարվում ուղղակի կնոջ կամ աղջկա անունը տալը, ճիշտ ինչպես այսօր Ղարաբաղում կամ Չանգեզուրում, ուր կանայք կամ օրիորդները կոչվում են «այս ինչի աղջիկ»: Երևույթը շատ տարբեր չէ երոպական քաղաքակիրթ երկիրների այն սովորությունից, որով ամեն մի օրիորդ իր հոր ազգանունով և ամեն մի կին իր ամուսնու ազգանունով է կոչվում, առանց իր իսկական անվան հիշատակության: Ֆրանսիացոց մեջ կնոջ բուն անունը տալ ամենամեծ անարգանքն է: Հին հայոց այս սովորությունն էլ ընդհանուր արևելյան, բայց հատկապես պարսկական է:

4) Տեղերի հատուկ անունները անձնականների համեմատությամբ մեծ թիվ չեն կազմում. որովհետև անձերի անունները հեշտությամբ փոխվում են, հները մոռացվում և նորերն են գալիս. բայց տեղերի անունները շատ երկար կյանք ունին: Ինչպես արդեն էջ 185 տեսանք, Հայաստանի տեղանունները խալդական անունների շարունակությունն են ներկայացնում և միայն նոր ժամանակ ավելացած քաղաքների և գյուղերի անուններն են, որ տարբեր են: Սրանցից նրանք, որ կրում են -շատ, -կերտ, -աւան, -ապատ վերջավորությունները, պարսկական կազմություն ունին, որովհետև այս բառերը պարսկական են:

Մի խոսքով հայոց մեջ գործածված իրանական բազմաթիվ հատուկ անունները, թե՛ անձնական և թե՛ տեղերի, անհերքելի նշան և ապացույց են պարսկական շատ խոշոր ազդեցության մեր վրա:

Պարսկերեն լեզվի ազդեցությունը մեծ է անշուշտ նաև մեր լեզվի ներքին կազմության, այն է ոճերի, ասացվածների, բառերի տարբեր առումների, շարահյուսության և համաձայնության վրա: Դժբախտաբար այս տեսակետից քննություններ կատարված չեն դեռ: Ուստի բավականանում ենք հավաքելով այստեղ այն՝ ինչ որ կարողացել ենք նկատել մեր աշխատությանց ժամանակ:

ա) Ոճեր և դարձվածներ, որոնք պարսկերեն և հայերեն նույն են.

kašīdan «քաշել», որից bāy kašīdan հոտ քաշել, ranj kašīdan նեղություն քաշել, āhī kašīdan ախ քաշել, āb kašīdan ջուր քաշել.

āmādan «գալ», որից ba-jūš āmādan եռ գալ, ba-sar āmādan գլուխ գալ, ba-dar āmādan դուրս գալ (ելանել արտաքս), furūd āmādan ցած

գալ, իջնել, bīrūn āmādan դուրս գալ, bakār āmādan ի գործ գալ, գործի գալ (հարմար լինել).

kardan «անել», որից ba-dar kardan դուրս անել (վանել, արտաքսել), zan kardan կին առնել (ամուսնանալ), namāz kardan աղօթս առնել, dirāz kardan երկարել (ծեռք կն).

xōrdan «ուտել», որից savgand xōrdan երդնուլ, երդում անել (գւռ. երդում ուտել, հմմտ. նաև թրք. and içmek երդում խմել).

andāxtan օգցել, որից qur'a andāxtan վիճակ արկանել, վիճակ ձգել.

dāštan ունել, որից čašm dāštan ակն ունել, ակնկալել, յուսալ, ստիժ dāram յոյս ունիմ (արևելյան գրականում չի ասվում «յուսում եմ», այլ միայն յոյս ունիմ).

burdan «բերել», որից ba-sar burdan գլուխ բերել (հաջողությամբ վերջացնել).

zadan «զարնել, հարկանել», որից bōrī zadan փող հարկանել (հակառակ այն բանին, որ փողը չեն խփում, այլ փչում), nahīb-zad զահի հարեալ, zanū zadan ի գունդ հարկանիմ, ba-surxī zadan կարմրի զարնել, ba-siyāhi zadan սևի զարնել (հմմտ. զրբ. երփն կարմրութեան հարկանիցի), xayma zadan խորան (վրան) հարկանել, վրան զարնել (հմմտ. նաև տաղաւարահարութիւն), ātaš zadan հուր հարկանել.

bastan «կապել», որից dar bastan դուռը փակել=գւռ. դուռը կապել (նաև արևել. թրք. qapı bağlamaq).

dādan «տալ», որից pāsux dādan պատասխանել (զրաբար էլ ասվում է պատասխանի տալ (կամ առնել), բայց կարելի չէ ասել պատասխանել, ինչպես որ պարսկերեն էլ չի կարելի ասել \*pāsuxīdan).

guzārdan «վճարել», որից nāmaz guzārdan աղօթել (բառացի «աղօթս վճարել». հմմտ. Պոլսի բարբառով վճարանք «մզկիթ»).

gardīdan դարձնել, որից rōy gardīdan երես դարձնել, դարձուցանել զերեսս (այլ ևս չսիրել).

čašm ba-rāh գւռ. «աչքը ճամբին».

marā čī? ի՛նձ ի՛նչ (նույն և թրք. bana ne).

rūzī az rōzhā օր մի յաւուրց.

kudām yak n'īr մէկը, ո՛րը.

rafta rafta հետզհետէ (ժղ. գնալով, երթալով. նույնը նաև թրք. gıtdik'je).

īnak am ահաւասիկ եմ, īnak īm ահաւասիկ եմք.

yak čand քանի մի, մի քանի (նույնպես և թրք. bir qac).

har yak «հարաքանչիւր»=աշխ. ամէն մէկ (նույնպես և թրք. her bir).

az nav «դարձեալ» (աշխ. նորէն, նորից = ի նորոյ. բայց հմմտ. նաև ֆրանս. de nouveau).

dar xāb šudan ի քուն լինել (ինչ. մինչ մեք ի քուն էաք. Մտթ. ԻԸ. 13):  
xar-ās երկան իշոյ (ջաղացք).

բ) Բառեր, որոնք պարսկերենում կրկին նշանակություն ունին՝ նման հայերենի.

āb «ջուր. 2. ամոթ, պատիվ», որից ābrū «արուռ», գւռ. երեսի ջուր:

lab «շրթունք. 2. եզերք» (հմմտ. գւռ. թոնրի շուրթը).

tang «նեղ. 2. զայրացած». նույնպես հյ. գւռ. նեղ և նեղանալ «բարկանալ», որից նեղսիրտ=պրս. tang-dil.

tiz «սուր. 2. արագ» (հմմտ. հյ. սրընթաց= tiz-rav, սրաթև = tiz-par).

xāhanda «ուզող. 2. մուրացիկ» (հմմտ. դրբ. օ՛զօղ «մուրացիկ»).

dast «ձեռք. 2. մի ամբողջություն». ինչ. yak dast jāma=մի ձեռք շոր.

jā «տեղ, վայր. 2. փոխանակ» (գրբ. ի տեղի, աշխ. տեղը, ֆրանս. au lieu de).

abrak «ամպ. 2. սպունգ». այսպես և գւռ. ամպ «սպունգ».

māhyāna «ամսական. 2. թոշակ» (հմմտ. գւռ. ամսական «թոշակ, ռոճիկ»).

justan «որոնել. 2. խնդրել» (հմմտ. գրբ. յուզել՝ նույն երկու իմաստով).

bīl «թի (նավի և փորելու».

burdan «տանել (մի բան). 2. խաղի մեջ հաղթել, տանել».

mury «հաւ. 2. թռչուն».

saxt «խիստ, ամուր. 2. յոյժ, շատ» (այսպես նաև հյ. խիստ՝ երկու իմաստով. ինչ. saxt nīg=խիստ բարի).

sapūs, sapūsa «թեփ» (երեք իմաստով, այն է՝ գլխի թեփ, ցորենի թեփ, սղոցի թեփ).

Կարելի է թերևս հիշել նաև avyar «ժողովարան մեծամեծաց. 2. տեղի ուր իցէ հողմն առատ». հմմտ. հյ. ատեան և ատեան հողմոյ:

nišastan «նստիլ. 2. բնակվել». ինչ. muddatī bā-gul nišastam «մի ժամանակ վարդի հետ նստեղի (բնակվեցի)». բարբառներով էլ ասում ենք «ո՛ւր կնստի» (այսինքն ո՛ւր է բնակվում):

գ) Բարդ բառեր, որոնք կազմությամբ և նշանակությամբ համապատասխանում են ճիշտ ու ճիշտ պարսկերենին.

1) Հին հայերեն կամ գրաբար բառեր.

ակնհար=čašm-zada

ամօթահար=šarm-zada

աշխարհակալ= jihāngīr

աստուածավախ=xudā-tars

բանաստեղծ=suxan-āfarīn

բարեկամ=nīg-xāh

բռնաբար=muštā-sang

զինեհար=may-zada

եզնալեզու=gāv-zabān

ետեղակալ=jāy-gīr «հաստատուն»

զօրազուլիս=sar-laškar

իշամեղու=xar-munj

իշկոյ վարունգ=xar-xiyār

լարախաղաց=rasan-bāz

կողակից (կին)=ham-pahlū

հովահար=bād-zan

ձեռնհաս=dast-ras

ձուազեղ=xāya-rīz

մկնդեղ=dār-mūš

նեղասիրտ=tang-dil


շաւաշարիւն=xun-i-Siyāvūš

որովայնապաշտ=šikam-parast

ուղտափուշ=uštūr-xār

սրաթև

սրաթռիչ



վերնատուն=bālā-xāna (տուն = xāna ուրիշ բարդությունների

մեջ էլ գործածական է «տեղ» իմաստով. ինչ. գերեզմանա-

տուն=gōr-xāna, աղաւնետուն=kabūtār-xāna, զինետուն=may-

xāna, կռատուն=but-xāna)

տնաւեր= xāna-xarāb

քսակահատ=kīsa-bur

2) Նոր հայերեն կամ աշխարհաբար բառեր.

ծրիակեր=muft-xōr

մանրավաճառ=xurda-firūš

պնակալէզ=kāsa-līs

օձածուկ=mar-mahī

3) Գավառական բառեր.

բարակացաւ= bīmar-barīk  
 երկարականջ (էշ)= dirāz-gūš  
 երկերեսանի= dū-rūy  
 թոնրատուն= tanūr-xāna  
 իշաճանճ= xar-magas  
 կատուախոտ= tara-i-gurba  
 կենահազի (կարիճ)= kaž-dum  
 ձկանականջ= gūš-māhī  
 հովիւխարուկ (թռչունը)= šubān-firīb  
 միջկապ (գօտի)= miyān-band  
 շերեփուկ= kafča-līz  
 սատանի քամի = dīv-bād  
 սևերես= siyāh-rū, rū-siyāh  
 սխտորթակի= sīr-kūb  
 տաշտիկոնակ (կրյա)= lāk-pušt  
 տաքցոց-դողցոց (ջերմ)= tab-ū-larz  
 տնաքանդ = xāna-kan

ա) Ածանց բառեր, որոնք կազմությամբ նույն են պարսկերենի հետ.

անճար= nāčār  
 գլխաւոր= sar-var  
 պատեղւոր (իմա՝ պտղաւոր «յրի») (միջ. հայ.)= bār-dār հղի  
 ծովակ «մեծ լիճ»= daryā-ča (daryā ծով)  
 կողքին «մոտը»= dar pahū  
 տուրք= dah-iš, dih-iš  
 գաղտ-ուկ= nihān-ča (գաղտ= nihān)  
 մօտ-իկ= nazd-īk (մօտ= nazd)  
 յղել= ba-rāhīdan (rāh= ուղի բառից).

բ) Բառերի կրկնավոր ձևերը իբրև նշան սաստկության կամ հաճախության. ինչպես՝ մեծամեծ, չարաչար, գունդագունդ, գույնզգոյն կլն. համեմատել նույն կազմությամբ, պրս. garmāgarm= ջերմաջերմ, տաք տաք, gōnāgōn= գունագոյն, գոյնզգոյն, rangārang= երանգ երանգ, gūrāgūr= երազ երազ, արագ արագ, gurūhāgurūh= գունդագունդ, hajāvar hajāvar = գունդ ի գունդ, davādav= վազեվազ, dihādih «կռիվ»= տո՛ւր հա տո՛ւր, purāpur= լիուլի կլն:

գ) Քերականություն և համաձայնություն.— ինչո՞ւ= čirā. գրաբար ձևն է ընդէ՛ր, է՛ր, վասն է՛ր, զի՛, հի՛մ. իսկ աշխարհաբարում ի՞նչ բառի սեռականից ստեղծվել է ինչի՞ կամ ինչո՞ւ, ճիշտ ինչպես պրս. čī «ի՞նչ»

բառի սեռականից čirā «ինչո՞ւ».— թրք. neye «ինչո՞ւ» ու «ի՞նչ» բառի տրականն է:

Այստեղ, այդտեղ, այնտեղ= īn-jā, ān-jā. այս գաղափարները ամեն լեզվի մեջ էլ կարող են բացատրվել ցուցականի և «տեղ» գոյականի հարադրությամբ. բայց այդ ձևերը բավական երկար լինելով՝ ամեն տեղ էլ ստեղծվել են կարճ մակբայներ. ինչպես, գրաբար աստ, անդ՝ փոխանակ ասելու յայսմ վայրի, յայսմ տեղուջ, յայդմ վայրի, յայդմ տեղուջ կլն. նույնպես՝

Ֆր.	ici	փոխանակ	dans cet endroit-ci
	là		dans cet endroit-là
ռուս.	здесь		в этом месте
գերմ.	hier		in diesem ort
	dort		in jenem ort
անգլ.	here		in this place
	there		in that place
իտալ.	qui		in questo luogo
թրք.	burada		bu yerde

արևմտահայ բարբառներն էլ ասում են հոս, հող, հոն, փոխանակ աս տեղ, ադ տեղ, ան տեղ. միայն արևելահայ բարբառներն են, որ ասում են երկարաբանությամբ էստեղ, էդտեղ, էնտեղ. պատճառը պարսկերենն է, ուր թեև կա aydar «աստ» ձևը, բայց սովորական չէ և նրա տեղ ասում են īn-jā= այս-տեղ, ān-jā= այն-տեղ:

Որ հարաբերականը գրաբարի մեջ միշտ էլ զանազանվում է զի, թէ շաղկապից. աշխարհաբարում բոլորի տեղ գործածվում է որ. ինչպես՝ «Այն մարդը՝ որ գնաց. Բարձր ասա՝ որ լսի. Ասաց որ գալու է». պատճառը պարսկերենն է, որ ամեն դեպքում դնում է ki (նույնը նաև թուրքերենը):

Ունիմ բայը գրաբարում բացատրվում է եական բայով, որի հետ դրվում է սեռական հոլով բնության խնդիր. է իմ, է նորա «ունիմ, ունի». այսպես է նաև պարսկերենը. marā ast է իմ, oṛā ast է նորա:

Ո՞ւր հարցականը երևանի բարբառում նշանակում է երբեմն «ինչո՞ւ». օրինակ՝ ո՞ւր ես ծեծում «ինչո՞ւ ես ծեծում».— այլուր անսովոր այս գործողությունը պարսկերենից է, ուր նույնպես kujā «ո՞ւր» (տեղական) հարցականը նշանակում է երբեմն «ինչո՞ւ». օրինակ՝

dūstān-rā kujā kunī mahram  
 բարեկամներիդ ինչո՞ւ ես զրկում:

Որ հարաբերականից հետո գրաբարում հաճախ դրվում է սեռական հոլովով մի դերանուն. ինչ.

այր դառն, որ կայ ի սիրտ նորա չար.  
այսպես է նաև պարսկերենում. օրինակ՝

ki dast-aš dirāz ast  
որոյ ձեռն իւր երկար է.

պարսկերենում այս ձևը անհրաժեշտ է, որովհետև հարաբերականը անհոլով է. իսկ հայերենում հարաբերականը հոլովվելով՝ սեռականը ավելորդ է, հետևաբար կազմված է պարսկերենի նմանողությամբ:

Պարսկահայ մի քանի բարբառներում բայի վրա դրվում է դիմորոշ հոդ՝ տրականի և հայցականի իմաստով. ինչպես՝ կտամո՞ղ «կտամ քեզ», կծծծենո՞ղ «կծծեն քեզ». — նույնը կա նաև պարսկերենում. ինչ. dīdam-at տեսի գքեզ, dādādam-at ետու քեզ:— Դայերենը պարսկերենի նմանությամբ է կազմված:

Պարաբաղի բարբառում կա ապամնիի մի ձև՝ -ական վերջավորությամբ. ինչ. տընըլական ըմ «տանելու են», խմըլական ըմ «խմելու են», մընըլական ըմ «մեռնելու են» ևլն: Պարսկերենում նույն ոճով կարելի է ասել՝

puxtānī am	եփելու են
pūšīdanī am	հազմելու են
kašīdanī am	քաշելու են
kardānī am	անելու են
kuštanī am	սպանելու են
raftānī am	զնալու են ևլն:

Այս ձևերը կազմված են -tan, -dan անորոշի (-ել) վերջավորության վրա ավելացնելով ī (-ական) վերաբերական ածականի մասնիկը: Նույնի օրինակով կազմված է նաև հայերենը:

կամ շաղկապը ծագում է կամիմ «ուզում են» բայից. այսպես նաև պրս. xāhad «կամենում է» և xāh «կամ»:

Վերոհիշյալ բոլոր փոխառությունները, հատուկ թե հասարակ անուն, ոճ թե ասացված, բոլորն էլ ամենամեծ մասամբ հաստատված ու ապացուցված են մեռած կամ կենդանի որևէ իրանական լեզվի ձևերով: Բայց վերևում արդեն ասացինք, որ իրանական գրականությունը շատ չնչին չափերով հասած է մեզ. կան բառեր, որոնց երբեմնի գոյությունը իրանական լեզուներում՝ հայերենն է միայն մատնանիշ անում. արդեն

իր օրինակ հիշել ենք ատրուշան բառը. այստեղ կհիշենք մի քանի ուրիշներ.

1) Կան մի խումբ բառեր, որոնք ներկայացնում են որևէ զուտ պարսկական պաշտոն, աստիճան ևլն, և հետևաբար անշուշտ պարսկերեն են. բայց հայերենից դուրս ո՛չ մի լեզվի մեջ չեն գտնվում. այսպես՝ զինդակապետ «պարսկական զորապետական աստիճան», ապարհայիկ «պարսկական զնդի անուն», մատեան «պարսից անմահների գունդը», պետո՞ղ «զրադաշտական հինգ վարդապետական ձևերից դուրս մի աղանդ, որ ըստ պարսից անսուրբ և հերձվածական էր համարվում», խորաւարան «պարսկական սպարապետական աստիճան», խոնաստան «պարսից արքայական պալատը» ևլն:

2) Կան մի խումբ բառեր, որոնց մի կեսը արդեն պարսկերեն լինելով՝ հայտնի է որ ամբողջությամբ պետք է պարսկերեն լինին, բայց ո՛չ մի իրանական լեզվի մեջ գոյություն չունին. այսպես՝ ասպանդակ (պրս. asb ձի), նաւակատիք (իրան. nava նոր), ատրուշան (պրս. adar կրակ), արուսեակ (պիլ. arūs սպիտակ, զնդ. auruša սպիտակ, լուսափայլ), արտախոյր «թագավորական թագ» (հպրս. xauda գլխարկ), աշխարաւանդ «թագավորական թագի վրայի կապը» և պախճաւանդ (կանացի մի զարդ) (պրս. band կապ), հարակաշ «բաժնեկից կամ մասնակից ընկեր» (զնդ. hađa միասին, կից), շահխոռապետ «իշխանական աստիճան արքունի» (պրս. šāh թագավոր և bad պետ):

3) Կան մի խումբ բառեր, որոնք գտնվում են միայն հայերենի և զենդերենի մեջ, որ թեև իրանական լեզու է, բայց պարսկերեն չէ և հայերենի հետ ուղղակի կապ չունի. ինչ. կախարդ=զնդ. kaxvarəda, հարազատ=զնդ. haďōzata «համարյուն, ծննդակից, համածնունդ» ևլն: Սրանք ավանդված չեն ո՛չ հին պարսկերենում, ո՛չ պահլավերենում և ո՛չ էլ նոր պարսկերենում, բայց որովհետև զենդերենում կան, ուստի իրանական են. և որովհետև հայերենում էլ կան, ուստի անշուշտ պարսկերենում էլ գտնված պիտի լինին:

4) Կան վերջապես բառեր, որոնց գոյությունը պարսկերենում ապացուցվում է ավելի հեռավոր միջոցներով. օրինակ՝ վիշտ նույն է սանսկրիտ viṣṭi «վիշտ, ցավ» բառի հետ. հայերեն վիշտ բառը եթե ցեղակցության պատճառով նման լիներ սանսկրիտի հետ, անշուշտ պիտի ունենար \*գիստ ձևը. ուստի պարսկական փոխառություն է և պետք է որ պարսկերենում երբեմն գոյություն ունեցած լինի viṣṭi «վիշտ» բառը:— 3) ապաւանդակ «վրանի չվան» նույն է սանս. upabandha «կապ չվան» բառի հետ. բայց երկուսը ո՛չ մի ձևով չեն կարող կապվել

իրար, եթե ոչ՝ ենթադրելով պիլ. \*apabandak «չվան» բառը:— Աստիճան համեմատվում է հնիւ. \*steigh «երթալ, աստիճանից կամ սանդուխից վերև բարձրանալ» արմատի հետ, որի ցեղակիցներն են՝ սանս. stigh, հուն. steichō, գերմ. steigen ևլն: Եթե բառը բնիկ հայերեն լիներ, պիտի ունենար առ առավելն \*աստիզան, աստիճան, աստիջան ձևերը, բայց ոչ բնավ ճ. ուստի պետք է ենթադրել, որ մեր բառը պարսկականից փոխառություն է և հետևաբար պահլավերենում այդ ձևով մի բառ գոյություն ունեցած պետք է որ լինի:

Այս բոլորը ցույց է տալիս, որ բացի վերոհիշյալ բառերից, կան հայերենի մեջ դեռ շատ բառեր, որոնք զուտ իրանական փոխառություն են, թեև փաստորեն կարելի չէ ապացուցել այդ, քանի որ նրանց համապատասխանը չի գտնվում որևէ իրանական լեզվի մեջ: Լեզվաբանի ականջը վարժ է զգալու այդպիսիները լոկ հնչական ձևից. այսպես, պարսկական են հնչում ակաստան, ամբաստան, աշխարհալանդիկ, աշխոյժ, աշտանակ, աշտարակ, ապարոջ, ապիզակ, հանապազ և շատ այսպիսի բառեր: Առհասարակ այն հայերեն բառերը, որոնք սկսվում են հրա-, պատ- սկզբնավորությամբ, կամ վ ձայնով և կամ վերջանում են -ակ վերջավորությամբ, պարսկական փոխառություն են: Չր(ա)- սկզբնավորությամբ մենք ունինք 37 բառ, որոնք են. հրաժարիլ, հրաժեշտ, հրահանգ, հրամայել, հրաման, հրամանատար, հրամենք, հրաշք, հրապար, հրապարակ, հրապոյր, հրասախ, հրատարակել, հրաւեր, հրքուակ, հրեշտակ, հրէշ, հրիտակ, հրճուանք, հրոսակ, հրովարտակ, հրոտից, հրուանդան, հրուշակ ևլն. սրանցից 13 շեղատառ տավածները հայտնի է՝ որ պարսկերեն են, որոնց մեջ հրա- համապատասխանում է պրս. fra- նախամասնիկին. տարակույս չկա, որ մյուսներն էլ նույնպես փոխառյալ են պարսկերենից, մանավանդ որ մի քանիսի համար (ինչպես են հրաժարիլ, հրաժեշտ, հրատարակել) ուրիշ նշաններ էլ կան: Պատ- սկզբնավորությամբ ունինք 72 բառ, որոնք են. պատահիլ, պատահար, պատաղիլ, պատանդ, պատանի, պատառ, պատասխանի, պատարել, պատարագ, պատգահիկ, պատգամ, պատգարակ, պատգարհել, պատգոս, պատգոսապան, պատեղ, պատերազմ, պատզբել, պատժախ, պատժանակ, պատիժ, պատիճ, պատիճաղ? պատիճան, պատիիր, պատիւ, պատկան, պատկանդարան, պատկանիլ, պատկառիլ, պատկեր, պատկեն, պատճառ, պատճեն, պատմուճակ, պատմուճան, պատնէշ, պատշաճ, պատշգամբ, պատշէն, պատշիր, պատուանդան, պատուաստ, պատուավոր, պատուար, պատուեր, պատուիրակ, պատուիրան, պատուհան, պատուհաս, պատմել,

պատսպարել, պատրաստ, պատրիմջ, պատրոյգ, պատրոյս, պատրուակ, պատրուճ, պատրուճակ ևլն: Սրանցից 28 շեղատառ տավածները պարսկերեն են, որոնց մեջ պատ=զնդ. paiti-, պիլ. pat-, պրս. pay- նախամասնիկին, որ այնպես հաճախադեպ է իրանյաններում. և անշուշտ մնացյալների էլ մեծ մասը պարսկերեն է:— Վ-ով սկսող հայերեն բառերը 242 հատ են, որոնցից 49 անստույգ, 5 բնածայն, 1 հաթերեն, 1 կովկասյան?, 14 հունարեն, 1 լատիներեն, 1 եբրայեցերեն, 6 արաբերեն, 1 ֆրանսերեն, 1 թուրքերեն, 3 բնիկ հայերեն (վաթսուն, վեց, ի վերայ), և 58 հատը պարսկերեն են. մնացյալ 101 հատն էլ՝ որ անծանոթ է, մեծագույն մասամբ պարսկերեն պետք է լինին: Արդարև հնդեվրոպական v՝ բառասկզբում, հայերենի մեջ դառնում է գ, sv դառնում է ք և հազվադեպ պարագաներ միայն կարելի է գտնել, ուր հնդեվրոպական մի ձև տա հայերեն վ: Այսպեսով հայերեն բոլոր բառերը, որ սկսվում են վ ձայնով, չեն կարող հայերեն լինել և ի հառաջագուն ենթադրվում է, որ փոխառյալ պիտի լինին: Իրանյան լեզուները ունին vi- նախամասնիկը, որ այնպես հաճախական գործածություն ունի նրանց մեջ և որ սղվելով՝ հայերենի մեջ դառնում է վ: Եվ ահա այստեղ է մեր վ-ով սկսվող բառերի աղբյուրը:

Գալով -ակ վերջավորության, իբրև օրենք կարելի է դնել, որ ամեն հայերեն բառ, որ վերջանում է ակ և այդ ակ-ը նվազական մասնիկ չէ, ուրիշ խոսքով այդ ակ-ը ջնջելով չի ստացվում նույնի մեծը, անշուշտ պարսկերեն է: Այսպես՝ պարսկերեն են նամակ, հրեշտակ, հրովարտակ, ամանակ, ժամանակ, նիզակ, սպիտակ, հրուշակ, զանձակ, դաստակ, դմակ, երակ, պիսակ, սմբակ, փաթերակ, փերեզակ ևլն ևլն: -ակ վերջավորությունը պահլավերենի մեջ որոշ բառակազմիչ տարր է (պարսկերենի մեջ դառնում է -a), ուստի ուր որ հայերենի մեջ նվազական չէ, հավանաբար պահլավերեն է:

Այն միտքը, թե պարսկերեն մի բառ կարող է հայերենում պահված լինել և ընդհակառակը բոլոր իրանյան լեզուների և բարբառների մեջ ջնջված լինել՝ բնավ չպիտի զարմանալի թվի. որովհետև հենց այդ իրապես տեսնում ենք հատուկ անունների մեջ, քանի որ այսօր էլ հայերը շարունակում են կրել Առստամ, Շաւարշ, Արշակ, Բագարատ և այլ նման իրանական անուններ, որոնք մահմեդական պարսիկները ի սպառ չգիտեն: Դեռ սրանից մի 20-30 տարի առաջ այդպիսի զարմանալիների շարքումն էին բորոտ, պատիւ, պատիր-, պաշար, մուրալ, կարի, պարար, պարարտ ևլն բառեր, որոնք սակայն նորագյուտ սոցիալական գրոթյանց մեջ գտնվեցան և հաստատվեցավ որ իրա-

նական փոխառություն են: Անհնարին չէ, որ դարձյալ երևան գան նման գրություններ և արձանագրություններ, և միջոց տան մեզ նորանոր բառեր բացատրելու կամ կասկածելի երևցածները հաստատելու:

Վերջին կարգին են պատկանում հետևյալ բառերը.—

մատ «բլուր». հմմտ. զնդ. mati «լեռնաշղթայի ցցված մասը» (Bartholomae 1112).

ապա «հետո, ուրեմն». հմմտ. զնդ. apə «հետո», apaya «այնուհետև, ապազա», apara «յետինը, վերջինը», apəma «վերջերը, վերջապես», apəm «այսուհետև, այնուհետև», ida apəm «յետ այսորիկ», aipi «նաև, հետո», aipitā «սրա վրա, այնուհետև».

պատահիլ «հանդիպիլ». հմմտ. զնդ. և հպրս. paiti-ah «իրար դեմ ելլել, հանդիպիլ» (Bartholomae 278):

ԺԱ դարի հետ սկսվեց թուրքական հառաջխաղացությունը արևելքից արևմուտք և այդ ժամանակից սկսած կտրվեց հայ ու պարսիկ ժողովուրդների հարևանությունը, կտրվեց նաև պարսիկ լեզվի ազդեցությունը հայերենի վրա: Այդ ժամանակից սկսվում է մի նոր շրջան հայերենի համար՝ թուրք-թաթարական ազդեցության շրջանը, որի վրա պիտի խոսինք առանձին գլխով:

Բայց պարսիկները, ինչպես հայերի, նույնպես և թուրքերի վրա առանց ազդեցության չմնացին. ընդհակառակը այդ ազդեցությունը՝ իբրև շատ ավելի անքաղաքակիրթ ժողովրդի վրա, շատ ավելի մեծ եղավ. և պարսկական լեզվի ազդեցությունը՝ այս անգամ թուրքերենի միջոցով, նոր ձևի տակ շարունակեց նաև հայերենի վրա, և շարունակում է մինչև այսօր: Սակայն այս ազդեցությունը արդեն թուրքական կերպարանքի տակ մտած լինելով, այդ մասին մեր ուսումնասիրությունը պետք է կցենք նրա հետ:

Վերջացնելու համար այս գլուխը, կարևոր ենք համարում անել երկու նկատողություն ևս:

1) Մենք մինչև այստեղ թվեցինք այն բոլոր պարսկական փոխառությունները, որոնք ավանդված են մեզ հին հայ գրականության մեջ: Բայց, ինչպես վերևում ասացինք, անկարելի է որ մի որևէ գրականություն գրի անցկացրած լինի այն բոլոր բառական ու ոճային հարստությունները, որ մի որևէ խոսուն լեզու ունի: Այսպես էլ հայերենը, որի բառագանձը ամբողջապես մեզ ավանդված չէ, և որի մեջ կային անշուշտ դեռ ուրիշ զանազան պարսկերեն բառեր, որոնք առիթ չի ունեցել հայ գրականությունը ավանդելու, հատկապես իր միակողմանի

բնավորության պատճառով: Այս ենթադրությունը կարելի է նաև փորձով հաստատել:

Չայերենի արդի բարբառներում կան մի խումբ այնպիսի բառեր, որոնք հայտնապես պարսկերենից են փոխ առնված, թեև հին գրականության մեջ գոյություն չունին: Ահա մի փոքր ցուցակ այս կարգի բառերից:

արժնիկ «արժանի, արժանավոր» < պիլ. aržānik.

աւճար (Ձեթոնի բարբառով) «ընդհանուր անուն լոբիի, բակլայի, սիսեռի և ոսպի, որոնք առնված են իբրև կերակրի համեմունք» < պրս. afzar, avzar կամ xuškabzar, xuškavzar «պիտոյք կերակրոյ, որպիսի են ունդը, խաւարտք և համեմունք» < պիլ. afčar.

բաֆրիկ (Երևան, Վան) «ծյուն քերելու թի» < պրս. barf, պիլ. vafɾ, զնդ. vafra «ծյուն».

շեշալղա (Մուժումբարի գավառականով) «լուծի շղթան արորին կապող մասը» < պրս. šaš «վեց» + halqa «օղակ».

շեպ, շեփ «խարազանի ծայրի երկճյուղ բարակ կաշին» < պրս. šəp «մտրակի փոկը», որ և արաբ. šib «խարազանի ծայրի հյուսված և ոլորված կաշին».

շիճուկ «թանից, մածնից կամ նոր պանրից վազած ջուրը» < պրս. sajsuk «կաթնախառն մածուն».

շռռալ «ջուրը շառաչելով հորդ վազել» < պրս. šurrīdan «կարկաջմամբ հոսիլն ջրոյ, անձրևի և գինւոյ».

պատիլ «ընկնել, վայր ընկնել» < հպրս. զնդ. pat «ընկնել» (Bartholomae, Altir. Wört. 819).

պուլպուլակ «ծորակով աման» < պրս. bulbula «ծորակավոր աման ջրի կամ գինու», որ և արաբ. bulbula.

ջամուկ «երկվորյակ» < զնդ. yəma «երկվորյակ», սանս. yama. պիլ. yumāk.

փաթաւա «ոտքի փաթաթան՝ որ իբր գուլպա են հագնում» < պրս. pātava «հետկի, ...կտաւեղէնն զոր գիւղականք աշխարհին պարսից փաթութեն ի սրունս մինչև ի ծունկս իւրեանց».

փայախ, փազյախ «թրիք հավաքելու տեղը» < պրս. pagah «արտաքնոց» (բուն նշանակում է «ոտաց տեղ»).

փարվար (Ախալցխա) «ջանջուլի քաղցր պյուրե» < պրս. parvarīš «վարդով, մանիշակով պատրաստված նման քաղցրավենիք».

փաք (Ձեթոն) «մաքուր» < պրս. pak «մաքուր».

փիսյար (Քանաքեռ) «շատ» < պրս. bisyar «շատ».

Այս բառերը չեն գտնվում թուրքերենի մեջ, ուստի կարելի չէ ասել, որ նրանք փոխ առնված լինին թուրքերենի միջոցով (անուղղակի փոխառություն): Չեն կարող նաև ժԱ-ԺԲ դարերից հետո փոխ առնված լինել ուղղակի պարսկերենից, որովհետև այդ ժամանակից արդեն պարսկերենը լռել էր Հայաստանի և Ատրպատականի սահմաններում: Ուստի մնում է երկու ենթադրություն. կամ այն է, որ այդ բառերը փոխ առնված են թուրքական բարբառների միջոցով, որոնք հետո կորցրել են այդ փոխառությունները, և կամ՝ փոխ առնված են ուղղակի պարսկերենից՝ ավելի առաջ քան ժԱ-ԺԲ դարերը, երբ պարսկերենը դեռ խոսվում էր Հայաստանում և նրա սահմաններում:

Երկու ենթադրություններն էլ միանգամայն ուղիղ են, կամ ավելի ճիշտ՝ կամ բառեր, որ թուրքերենի միջոցով են (հետո կորած) և կամ բառեր, որոնք հին հայերեն լեզվի անհիշատակ մնացորդներն են և իրենց գոյությունը շարունակում են դեռ հայ բարբառներում: Սրանց թվին են պատկանում վերի բառերից արժնիկ, որ դեռ պահում է պահլավական *-ik* վերջավորությունը, պատիլ՝ որ միայն գենդերենումն է պահված, և բոլորից գեղեցիկը՝ ջամուկ, որ իր նախաձայն *ջ-ով* ցույց է տալիս, որ այդ բառը գոյություն ուներ նաև պարսկերենի մեջ, ուր այժմ կորել է (հայտնի է որ հին պահլավերենի *y* դառնում է պրս. *j*. հմմտ. հպիլ. *yātūk* > պրս. *jādū* = հյ. ջատուկ):

2) Թեև պարսկերենի ուղղակի ազդեցությունը հայերենի վրա դադարում է ժԱ դարից սկսած, բայց նա շարունակվում է մինչև այսօր էլ պարսկահայ գաղութների վրա: Այստեղ մենք չենք ուզում անել պարսկահայ գաղութների պատմությունն ու վիճակագրությունը, բայց պետք է շեշտենք, որ պարսկահայ գաղութ ասելով մենք ուզում ենք հասկանալ այն հայ գաղութները, որոնք գտնվում են Ատրպատականից դուրս և ուղղակի պարսիկ (ոչ թուրք) ժողովրդի հետ շփման մեջ են: Այսպես են Ենզելիի, Ռաշտի, Ղազվինի, Համատանի, Թեհրանի, Սուլթանապատի, Սպահանի, Նոր-Ջուղայի և Շիրազի հայերը: Այս բոլորի մեջ ամենամեծ թիվը կազմում են Սուլթանապատից մինչև Նոր-Ջուղա ցրված հայերը, որոնք 30.000-ից ավելի են: Այս բոլոր գաղութներն էլ նոր ժամանակի ծնունդ են և սկսում են Շահաբասի ժամանակից: Այս թագավորն էր, որ 1603 թվին Արարատյան նահանգի ժողովրդին քչեց Պարսկաստանի այդ հեռավոր վայրերը: 300 տարվա ընթացքում հայերը մեծապես ազդվեցին պարսիկներից, ամեն տեսակետով՝ բացի կրոնից: Լեզուն էլ կրեց մեծ ազդեցություն. շատ բառեր, ոճեր ու ասացվածներ, շարադասության ձև, շեշտ ու առոգա-

նության եղանակը պարսկերենից անցան տեղական հայերեն բարբառներին: Բայց այս հարցերի քննությունը այլ ևս չի պատկանում հայերեն լեզվի պատմության, այլ մասնավոր բարբառների ուսումնասիրության, ուստի և մենք էլ հրաժարվում ենք քննության առնել այստեղ:

Իսկ այն գաղութները, որոնք հին ժամանակներում հաստատվել էին Պարսկաստանում, անշուշտ ժամանակի ընթացքում բոլորովին անհետացել ու ոչնչացել են, ծուլվելով տեղական ժողովրդի մեջ: Այսօր Պարսկաստանում ո՛չ մի տեղ չկա այնպիսի հայ գաղութ, որ հայերեն լեզուն կորցրած ու պարսկախոս դարձած լինի: Այդպիսի հայեր գտնվում են միայն Պարսկաստանից դուրս, Հյուսիսային Կովկասում՝ Ղալարի Բեքթեյ կամ Ղարաջալի գյուղում, Շամախիի մոտ՝ Մադրասա գյուղում, և Ղուբայի մոտ՝ Քիլվար և Խաչմաս գյուղերում: Այս բոլորն էլ ազդվելով շրջակա պարսկախոս թաթ ժողովրդից՝ իրենք էլ պարսկախոս են դարձել, իսկ հիմա արդեն հայախոս են դառնում:

•••

Իբրև հավելված այս գլխի՝ կարելի է հիշել քրդական փոխառությունները, որոնք կատարված են բավական ուշ ժամանակ, հետին դարերում: Վերջին ժամանակներում քրդախոս էին Խիզանի գյուղերը, Բաղեշի կուսակալության մեջ Խարզան և Շիրվան գավառակները, Տիգրանակերտի կուսակալության մեջ Սուֆարդին կամ Սիլվան, Պշերիե, Պոհտան գավառակները, Կիլիկիայում Սամսատ (հին Սամուսատ), ընդ ամենը 100 գյուղից քիչ ավելի: Բացի սրանցից Վանի, Մուշի և Բաղեշի բարբառներում գտնվում են գանազան փոխառություններ քրդերեն լեզվից: Բայց այս մասին խոսելը՝ հայոց լեզվի պատմության գործը չէ. այլ մաս է կազմում յուրաքանչյուր բարբառի քննության:

Իմ Արմատական բառարանի մեջ տեղ են գտել չորս քրդական բառ, որոնք գործածված են ուշ ժամանակի հայ մատենագրության մեջ: Այդ բառերն են՝ լամուկ «տղա, որդի», կովա «կապա», տրվան «աղոթք» և քարթու «հին հաց, ոթեկ»:

Իրանյանից փոխառյալ բառերի ընդհանուր գումարն է 1405. այսքանից 960-ը փոխառյալ են պահլավերենից և վերի այբուբենական ցանկում (եջ 235-304) տպված են շեղատառ. 445-ը փոխառյալ են ժԱ դարից հետո՝ նոր պարսկերենից և տպված են բոլորգիր տառերով. աստղանիշով նշանակված են այն բառերը, որոնք գործածական են արդի հայերենի մեջ (գրական կամ ժողովրդական լեզու). սրանց թիվն է



581 պահլավերենից և 103 նոր պարսկերենից (ընդհանրապես թուրքերենի միջոցով):

Աղբյուրներ.—

Hübschmann, Armenische Grammatik, էջ 9-17.

Meillet, Sur les mots iraniens empruntés par l'arménien, MSL 17, 242-250 (հատկապես պահլավերենի հյուսիսային և հարավային բարբառների մասին):

Gauthiot, A propos des mots parthes empruntés par l'arménien, MSL 19, 125-9.

Meillet, De l'influence parthe sur la langue arm. Rev. des ét. arm. I (1920), էջ 9-14:



ԳԼՈՒԽ ԺԱ.

### ՀՈՌՎԱՅԵԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՎՐԱ

Հռովմայեցիք առաջին անգամ Փոքր Ասիա ոտք կոխեցին ն. Ք. 190 թվին, երբ Մազնեսիո ճակատամարտում քայքայելով Սելևկյան պետությունը, ամբողջ Փոքր Ասիո մինչև Տավրոսի լեռները տիրեցին: Հայաստանի երկու կուսակալները՝ Արտաշես և Ջարեհ, ժամանակը եկած համարեցին Սելևկյանց լուծը թոթափելու և բանակցության մտնելով Հռովմի հետ՝ ստացան ժերակույտի համաձայնությունը և Հայաստանը անկախ հայտարարեցին (189): Այս է այն առաջին ակտը՝ որով հայերը հռովմայեցոց հետ հարաբերության էին մտնում:

Հարաբերությունները շատ ավելի զորացան, երբ Տիգրան և Միհրդատ հիմնելով հայ-պոնտական կայսրությունը, պատերազմ սկսան հռովմայեցոց դեմ: Միհրդատ նվաճեց Փոքր Ասիան, Թրակիան, Մակեդոնիան և Հունաստանը և այս բոլոր երկիրների մեջ գտնված Հռովմայեցիներին կամ կոտորեց և կամ վտարեց: Սիլլա և Լուկուլլոս հաղթեցին Միհրդատին, որից հետո Հռովմայեցիք մտան Հայաստան և մինչև Արտաշատ առաջացան: Տիգրան հաշտություն առաջարկեց Պոմպեոսին և իր տիրած երկիրներից հրաժարվելով, Հայաստանը դարձրեց Հռովմի դաշնակից և բարեկամ պետություն, որի թագավորները գահ պիտի բարձրանային Հռովմի հավանությամբ (66): Այնուհետև Հռովմայեցիք պատրաստվեցին նվաճել Պարթևների պետությունը. այս պատերազմի մեջ հայերը իբրև դաշնակից պիտի միանային Հռովմայեցոց, կռվելու համար պարթևների դեմ: Բայց նրանք ավելի լավ համարեցին հաշտ ապրել մոտակա թշնամու հետ, քան միանալ հեռավոր բարեկամին: Այս պատճառով երբեմն չեզոք, երբեմն էլ հայտնապես բարեկամ էին դառնում պարթևներին: Հռովմեական բանակն էլ ստիպված էր շարունակ նստել Հայաստանում՝ մերթ իբրև հսկող, մերթ իբրև թշնամի, չթողնելու համար, որ Հայաստանը մտնե պարթևների հովանավորության տակ: Հայերը միանալով պարթևների հետ՝ շատ անգամ ապստամբվում են Հռովմայեցոց դեմ, դուրս են վանում հռովմեական բանակը, բայց մի ժամանակ հետո՝ ավելի մեծ

ուժի առաջ ստիպվում են խոնարհվել: Հայ թագավորները գնում են հռոմ, կայսեր ձեռքից ընդունելու իրենց թագը, իրենց այս կամ այն ազգականը իբրև պատանդ մնում է հռոմում: Հայաստանը հռոմ-մայեցոց հովանավորության տակ մերթ վասալ թագավորություն է, մերթ դաշնակից անկախ պետություն, մերթ սոսկ հռոմեական նահանգ: Բայց այս բոլոր ձևերի տակ էլ հայ-հռոմեական հարաբերությունները շատ կենդանի են, մինչև 329 թիվը, երբ հիմնվելով Պոլիսը, վերանում է արևելքից հռոմեական կայսրությունը և նրա տեղ բարձրանում է հունական կամ Արևելյան կայսրությունը, հույն լեզվով և հունական քրիստոնեական քաղաքակրթությամբ:

Հայ-հռոմեական հարաբերությունները շարունակվել են ուրեմն ամբողջ 400 տարի:

Ի հարկե այս 400 տարվա ընթացքում հռոմեական քաղաքակրթությունը առանց ազդեցություն չէր կարող մնալ հայ կյանքի և հետևաբար հայ լեզվի վրա, մանավանդ որ Հայաստանի մեջ գրեթե շարունակ նստած էր լինում հռոմեական զորքը: Հռոմեական հիշատակը երևում է այն զանազան արձանագրություններից, որ թողել են հռոմայեցիք Հայաստանի մեջ, նույն իսկ Հայաստանի կենտրոն Վաղարշապատում, որ իրենք հիմնեցին՝ Արտաշատը հիմնահատակ կործանելուց հետո: Մինչև այսօր մնում են այդ արձանագրությունները էջմիածնում՝ Յ. Զ. 2-րդ դարից: Բանակը՝ ո՞ր երկրում էլ որ մտի, անշուշտ որևէ ազդեցություն կունենա նրա վրա: Այս կողմից նշանավոր է եղել հռոմեական բանակը, որ լատիներենի ազդեցությունը իբրև վարչական ու զինվորական լեզվի, տարածել է ուր որ գնացել է, ավելի կամ պակաս չափով: Հռոմեական բանակի պատճառով էր, որ Սպանիայում, Պորտուգալիայում, Ֆրանսիայում, Հելվեդիայում, Բելգիայում տեղի են տվել տեղական ազգային լեզուները և մտել է ամբողջապես լատիներենը, որի ժառանգներն են այսօր սպաներենը, պորտուգալերենը, ֆրանսերենը և այլն: Հունարենն անգամ, որ այնպես ըմբոստ էր օտար փոխառությանց դեմ, հռոմեական կայսրության ժամանակ վերցրեց լատիներենից մի խումբ վարչական ու զինվորական բառեր. այսպես արդեն հունարեն Ավետարանի մեջ գտնում ենք ո՛չ միայն praitō'rión կամ assárión, այլ և նույն իսկ spēkulátōr: Բայց հռոմեական լեզուն չկարողացավ վտարել հայերենը: Անշուշտ հայերին չի կարելի համեմատել արևմտյան ազգերի հետ, որովհետև, ինչպես նախորդ ասվածներից երևաց, նրանք միշտ հակված էին դեպի արևելքը և սիրող էին իրանական քաղաքակրթության. ուստի հռոմեական լեզվի ազ-

դեցությունը այնպես մեծ չէ մեր լեզվի վրա: Այնուամենայնիվ նա կա: Սակայն այդ ազդեցության հետքերը մեծ չեն մեր աչքին՝ երկու պատճառով: Նախ՝ որովհետև հռոմեական ազդեցությունը եղել է նախ քան գրերի գյուտը, երբ գրականություն չի եղել, որպեսզի նրա հիշատակը հավերժացներ: Հռոմեական ազդեցության, բանակի և վարչության վերացմամբ՝ ջնջվել են նրանց թողած լեզվական հիշատակները և այսօր ոչինչ չունինք, որ հիշեցներ այդ անցյալը: Բյուզանդական կայսրության ժամանակ հունարենը մեծապես ազդվեց լատիներենից և ինքը եղավ միջնորդ նույն լատինական բառերը տարածելու իր տիրապետությանց շրջանում, բայց այս անգամ հունական կերպարանքի տակ: Լատինական բառերի մի մասը, որ հռոմայեցիներից անցել էր հայերենի, հունական ազդեցությամբ ստացավ նոր կերպարանք և այլ ևս անճանաչելի դարձավ. և այսօր մենք երբ քննում ենք այդ բառերը, գտնում ենք ավելի հունաձև, քան լատինաձև և համարում ենք հունական փոխառություն<sup>1</sup>:

Այս բոլորից հետևում է, որ հռոմեական լեզվի ազդեցությունը հայերենի վրա մինչև մի որոշ աստիճան թեև անուրանալի է, բայց անհայտ է, որովհետև այն բառերը՝ որ հայերենը փոխ է առել հռոմայեցիներից, ապագայում ջնջված կամ ձևափոխված ու հունացած են: Այնուամենայնիվ կարելի է մատնանշել հետևյալները՝ իբրև հազվագյուտ մնացորդներ<sup>2</sup>:

1) Կայսր (հուն. *kaïsar*), որ հայերենի մեջ ունինք նաև կեսար ձևով. մինչդեռ իր անվան նվիրված քաղաքի անունն է Կեսարիա (հուն. *Kaisáreia*). հունարենի *ai* երկբարբառի դեմ հայերենը հանում է միշտ *ե* և միայն այս բառն է, որ ունի այ. հետևաբար հայերենի հնագույն փոխառությունն է արևմտյան աղբյուրից, հավանաբար ուղղակի հռոմ-մայեցիներից (*Hübschmann*, *Arm. gram.* էջ 322 և 329), ճիշտ ինչպես գերմաներենի մեջ *Kaiser* հնագույն լատինական փոխառությունն է: Հայերեն բառի եր հոլովումը մի երկրորդ ապացույց է ուղղակի լատինական փոխառության:

2) Արկղ. ժողովրդական լատիներեն *arcia* բառն է, որի գրական ձևն է *arcula*, այս էլ *arca* «սնդուկ, արկղ, դրամի զանձանակ, մեռելի դագաղ, հազուստի պահարան» բառի նվազականն է: Իր առանձին ձևի

<sup>1</sup> Հմմտ. *Hübschmann*, *Armenische gram.* էջ 325:

<sup>2</sup> *Meillet*, *Hypothèses sur quelques emprunts de l'anc. arménien au latin.* *MSL* 18, 348-350.

պատճառով՝ հռովմեական արկղը դարձավ քաղաքակրթական նշանակություն ունեցող մի առարկա և տարածվեց Եվրոպայի բոլոր կողմերը: Իր բուն կամ նվազական ձևով լատին բառը այսպիսով անցավ բազմաթիվ լեզուների, ինչ. ֆրանսերեն, իտալերեն, անգլերեն, գալլերեն, բրըտոներեն, հին իռլանդերեն, գոթերեն, հին իսլանդերեն, գերմաներեն, անգլո-սաքսոներեն, հին պրուսերեն, շվեդերեն, հին սլավերեն, չեխերեն, բոհեմերեն, լապոներեն, ֆիններեն և այլն: Լատին ժողովրդական ձևից փոխառյալ է նաև հուն. *árcia* և կարելի է մտածել՝ որ հայերեն ձևը սրա միջնորդությամբ հառաջացած լինի. բայց ըստ որում բառը շատ հին է, մանավանդ որ պատկանում է տնային իրերի կարգին, իսկ հունական փոխառությունները սովորաբար կրում են կրոնական կամ գիտական բնույթ, ուստի ավելի հավանական է դնել ուղղակի Հռովմայեցիներից անցած հայերենի: Արկղ-սեռ. արկեղ հուլովումը նույնպես ապացույց է լատինական փոխառության:

3) Սկուտղ «մետաղյա ափսե» կամ «մատուցարան», որ այս ձևով շատ քիչ է գործածված և ավելի հետո դարձած է սկուտեղ, սկտեղ, լատինական *scutella* «պնակ, ափսե» բառն է, որ լտ. *scuta* բառի նվազականն է: Նախորդին նման այս էլ տարածված է զանազան լեզուների մեջ: Այսպես՝ ֆրանսերեն, իտալերեն, հին գերմաներեն, լետտերեն, հին իսլանդերեն, սերբերեն, հունարեն, և այլն: Այստեղ էլ կարելի է կարծել, որ բառը հունարեն *skutela* ձևի միջնորդությամբ անցած լինի հայերենի, բայց ավելի հավանական է ուղղակի փոխառությունը:

4) Սիտղ «ջրի աման կամ դոյլ». լտ. *situla* «դոյլ» բառն է, որ տարածված է շատ լեզուների մեջ, ինչպես հունարեն, ասորերեն, արաբերեն, պարսկերեն, թուրքերեն, թուչերեն և այլն: Մեր բառը կարող է լինել լատիներենից ուղղակի և կամ հուն. *sitla* ձևի միջնորդությամբ: Եվ որովհետև ավանդված է ուշ ժամանակ, ուստի վերջինը ավելի հավանական է:

5) Կառք. հռովմայեցոց *carrus* բառն է, որով հասկացվում էր «մի տեսակ քառանիվ կառք»: Այս բառը գալլերենից անցել էր լատիներենի և հետո փոխառությամբ տարածվեց շատ լեզուների մեջ. ինչպես՝ ֆրանսերեն, ռումիներեն, անգլերեն, գերմաներեն, շվեդերեն, ֆիններեն, ասորերեն և այլն: Այս բառը հունարենում չկա, ուստի չենք կարող մտածել հունարենի միջնորդության մասին: Կա ասորերենում, բայց ունի բոլորովին տարբեր ձև (*qarūxa*), որ եթե հայերենի անցած լիներ, պիտի տար \*կարուխայ կամ առ առավելն \*կառուխ ձևը: Ուստի

պարզ է, որ այս բառը ուղղակի հռովմայեցի զինվորների լեզվից անցած պետք է լինի հայերենի:

6) Դեմջակ «գոգնոց, անձեռոց կամ սրբիչ». հայերենի մեջ քիչ անգամ գործածված բառ է. առաջին անգամ գտնում ենք Յհ. ժգ. 4, 5, որ հուն. բնագրում նույնպես *léntion* ձևն ունի: Հույն բառը փոխառյալ է լտ. *linteum* բառից, որ ծագում է *linum* «վուշ» բառից: Հայերենը շատ հին փոխառություն է, որի ապացույցներն են է ձայնի փոխարեն դրված ջ և բառավերջի ակ մասնիկը: Բայց այնուամենայնիվ կարող չենք հաստատապես ասել, որ հայ ձևը ուղղակի լատիներենից անմիջապես լինի. քանի որ ունինք հունարեն ձևը գործածված Ավետարանի համապատասխան հատվածում, մանավանդ որ թե՛ հայը և թե՛ հույնը ունին օ ձայնավորը, մինչդեռ լատինը ունի *i*:

7) Բաստեռն «դեսպակ, գահավորակ». փոխառյալ է լտ. *basterna* հոմանիշից: Այս բառը մտել է նաև հունարենի մեջ, բայց որովհետև հայերեն բառը ավելի հին է (գործածված է Ե դարում՝ Ոսկեբերանի թարգմանության մեջ) քան հունարենը (գործածված է առաջին անգամ Հուստինիանոսի օրինագրքում), ուստի հունարենի միջնորդությունը ավելորդ է ենթադրել:

8) Լկտիք (անեզական) «գահավորակ». փոխառյալ է լտ. *lectica* հոմանիշից, որից է նաև հուն. *laktis*, *laktikion* «գահավորակ, պատգարակ»: Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայերենի մեջ պակասում է օ ձայնավորը, որ կա թե՛ հույն և թե՛ լատին ձևերի մեջ, մինչդեռ հունական փոխառությունները հայերենում ընդհանրապես հարազատ տառադարձություններ են, կարող ենք ասել, թե լկտիք ժողովրդական փոխառություն է ուղղակի լատիներենից: Հույն բառն էլ փոխառյալ է հայերենի մեջ, բայց շատ ուշ (Սոկրատի թարգմանության մեջ՝ էջ 432) և ունի դեկտիկ ձևը, որ բոլորովին համապատասխան է հունարենին:

9) Մարգարիտ. այս բառի հնագույն վկայությունն է Գողթան երգի ծանոթ հատվածը՝

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի,

Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն:

Գտնվում է թե՛ հունարենի մեջ՝ *margarites* ձևով և թե՛ լատիներենի մեջ՝ *margarita* ձևով: Լատին բառը ծագում է հունարենից: Մեր մեջ առհասարակ ընդունված է հայ բառը փոխառություն դնել հունարենից. բայց որովհետև նա ավանդված է այնքան հին ժամանակից, երբ դեռ հունարեն փոխառություններ չէին կարող լինել հայերենում, ուստի ավելի հարմար են կարծում դնել հռովմեական փոխառություն, քանի որ

լտ. margarita ձևը դեռ Կիկերոնի և Տակիտոսի ժամանակ գործածական էր:

10) Պան «կոլոր հաց, բլիթ, նկանակ». գործածված է Ս. Գրքում՝ 15 անգամ. այժմ էլ կենդանի է Արաբկիրի, Ջեյթունի և Սվեդիայի բարբառներում՝ բան, բօն, բոն, բուն ձևերով և «մեղրահաց» նշանակությամբ: Մեր բառի դեմ ունինք հուն. pānis «հաց», որ փոխառյալ է լտ. panis «հաց» բառից: Բայց հայերեն պան՝ առնված չէ՝ հունարենից, այլ ուղղակի լատիներենից, որովհետև, նախ՝ մինչև այժմ էլ կենդանի է ժողովրդական լեզվի մեջ, երկրորդ՝ հուն. pānis (ըստ Sophocles-ի բյուզանդական մեծ բառարանի, էջ 836) քիչ գործածական մի ձև է և բնավ չի գտնվում Ս. Գրքի հույն թարգմանության մեջ: Ես ստուգեցի, որ այն բոլոր 15 դեպքերում, ուր հայերեն Ս. Գիրքը ունի պան, հունարենը դնում է միշտ ártos «հաց» սովորական ձևը:

Այսպեսով լատիներենից փոխառյալ բառերի թիվը լինում է 9:

Վերոհիշյալ բառերը կրում են այնպիսի կերպարանք, որ կարելի չէ ասել թե գիտունների միջոցով կատարված փոխառություններ են, ինչպես պիտի լինեին իսկական հունական փոխառությունները. այլ բոլորովին ժողովրդական ձևեր են, բերնե բերան անցած, իբրև արդյունք հռովմայեցի մարդոց և հայ անհատների հարաբերությանց:

Լատիներենի ազդեցությունը հայերենի վրա 329 թվին դադարելուց հետո, վերսկսվում է երկրորդ անգամ Կիլիկյան թագավորության ժամանակ՝ ԺԳ և ԺԴ դարերին, Ունիթոռական քարոզիչների ձեռքով: Երկու ազդեցությունները կրում են բոլորովին տարբեր բնույթ, ուստի մենք էլ բաժանում ենք երկուսը իրարից և վերջ տալով այստեղ այս գլխին, երկրորդ շրջանի մասին կխոսենք առանձին գլխով՝ «Եվրոպական ազդեցությունը հայերենի վրա և Լատինաբան հայերեն» վերնագրի տակ (գլուխ ԻԵ):

ԳԼՈՒԽ ԺԲ.

## ԱՍՈՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՎՐԱ

Ամիրաժեշտ է նախ զանազանել իրարից Ասորեստանցիներին ու Ասորիներին: Առաջինները բնակվում էին Ասորեստանում, Հայաստանից ու Միջագետքից հարավ գտնված այդ ընդարձակ երկրում, որ հնագույն ժամանակները դարձավ մեծ աշխարհակալ պետություն և որի մայրաքաղաքն էր Նինվե:

Նրանց լեզուն կոչում ենք ասորերեն:

Ասորերենի ազդեցությունը հայերենի վրա քննել ենք վերը՝ գլուխ Ը, էջ 191-197:

Ասորիները բնակվում էին Ասորիքում, Միջերկրականի արևելյան կողմը, Պաղեստինից հյուսիս գտնված այդ երկրում, որ տարածվում էր մինչև Եփրատ: Այս երկիրը նշանավոր եղավ Սելևկյանց ժամանակ, որոնք տիրեցին Ասորիքին և նրա շրջակա երկիրներին՝ մինչև ն. Ք. 64 թիվը, երբ Տիգրան Մեծի ձեռքով Սելևկյան պետությունը կործանվեց և Ասորիքը նախ Հայոց, հետո էլ Հռովմայեցոց իշխանության տակ մտավ: Սելևկյանց թուլության ժամանակ կազմվեց Օսրոնի թագավորությունը (ն. Ք. 136), որի մայրաքաղաքը եղավ Ուռհա կամ Եղեսիա: Այս երկրի բնակչությունը բաղկացած էր մեծավ մասամբ ասորիներից և հայերից: Հռովմայեցիք 217 թվին վերջ տվին այս թագավորությանն էլ և Ասորիքի պես իրենց իշխանության տակ առին: Հռովմայեցիներից հետո եկան հույները և ինչպես Ասորիքի, նույնպես և նախկին Օսրոնի տեր դարձան: Քրիստոնեության ժամանակ Ասորիքի ասորիները խմբովին ընդունելով նեստորականությունը, ենթարկվեցին հունաց հալածանքներին. այնպես որ ստիպվեցան փախչիլ իրենց մայր հայրենիքից և ապավինելով Պարսից տերության, նրանց պաշտպանությունը խնդրեցին: Պարսիկները լայն բացին իրենց դռները նրանց առջև ի հեճուկս հունաց: Այդ ժամանակից (435) Ասորիները սկսեցին գաղթել և տարածվել Միջագետք, Պարսկաստան, Արաբիա և մինչև Հնդկաստան ու Չինաստան հառաջացան, ուր հիմնեցին քրիստոնեական եկեղեցի: 634 թվին Արաբները նվաճեցին Ասորիքը, ուր մնացած սակավաթիվ Ասորիները արաբական լեզուն և մահմեդական կրոնն ընդունելով՝

ամբողջապես արաբացան, այնպես որ այսօր Ասորիքում ասորի ժողովուրդը չկա: ԺԴ դարում Լանկթամուր կործանեց Արևելյան Ասիոն նեստորական եկեղեցիները, ասորիների մնացորդները քաշվեցան ետ և ապաստանեցին Քուրդիստանի լեռները և Ուրմիո ու Սալմաստի շրջանները: Այս կարգին է պատկանում Ջուլամերկի նեստորական քաղասորիների մեծ գաղութը, որ վերջին համաշխարհային պատերազմի ժամանակ վտարվելով տաճիկներից, մեծամեծ զոհեր տալուց հետո, նախ Պարսկաստան, հետո Մուսուլ հաստատվեց և այնտեղից էլ ցրվեց դեպի Ասորիք: Այսպեսով, նախկին Ասորեստանը, որ ո՛չ մի կապ չուներ ասորիների հետ, ասորիների նոր հայրենիքը դարձավ:

Հայոց հարաբերությունը ասորիների հետ սկսվում է այն ժամանակից, երբ հայերը դեռ Փոքր Հայքումն էին, բայց մանավանդ՝ երբ Փոքր Հայքից հառաջացան դեպի Մեծ Հայք: Ն. Ք. 190 թվին՝ երբ Ջարիադրես հիմնեց անկախ հայկական թագավորություն, նրա գրաված նահանգների (Շոփք, Հանձիթ, Աղձնիք, Տմորիք, Սասուն) ժողովրդի ստվար մասը ասորի կամ արամայեցի էր, որ քիչ քիչ հայախոս դառնալով՝ ձուլվեց հայ տարրի հետ: Ն. Ք. 64 թվին, երբ Տիգրան Մեծը նվաճեց Ասորիքը, անշուշտ իր սովորության համաձայն՝ ասորիների զանազան խմբեր բերավ Հայաստան բնակեցրեց: Օսրոնի թագավորության մեջ հայոց և ասորիների հարաբերությունը այնպես սերտ էր, որ Աբգարները անվանում էին իրենց «թագավոր Ասորոց և Հայոց»: Այդ թագավորները ծագմամբ նույն իսկ պատկանում էին հայ-արշակունյան տոհմին: Երբ սկսեց քրիստոնեությունը, առաջին ժողովուրդը, որ ընդունեց այս կրոնը, ասորիներն եղան: Առաջին քրիստոնյա թագավորը եղավ Եղեսիո Ասորի Աբգար Թ. թագավորը, որ ընդունեց քրիստոնեությունը Գ դարի սկզբին: Ասորի քարոզիչներ Եղեսիո շրջանից, Սժբիսի վրայով՝ անցան Հայաստան և նրա հարավային կողմերում տարածեցին քրիստոնեությունը Գ դարի սկիզբը, իբրև քրիստոնեության քարոզիչ Հայաստանում հիշվում է Եղեսացի մեծ բանաստեղծ և պատմաբան Բարդաճանը: Նույն դարի կեսին արդեն Հայաստանի մեջ կար հայ եպիսկոպոս, որ անշուշտ կապ ուներ Եղեսիո ասորական թեմի հետ:

Երբ քրիստոնեությունը ամուր կերպով հաստատվեց, Եղեսիայում բացվեց ասորական մի մեծ դպրոց, որ կարող ենք արդի բառով կոչել «Աստվածաբանական համալսարան»: Չանազան երկիրներից ուսանողներ գնում էին այդ նշանավոր դպրոցում կրոնական ուսում ստանալու: Գրիգոր Լուսավորիչը Հայաստանում պաշտոնապես քրիստո-

նեությունը մտցնելուց հետո՝ նորակառույց եկեղեցիների համար, ինչպես հույն, նույնպես և շատ ասորի կրոնավորներ բերել տվավ, և հունարենի հետ ասորերենն էլ եղավ հայ եկեղեցիների պաշտամունքի լեզուն: Ներսես Մեծը նույն իսկ հույն և ասորի դպրոցներ բացավ Հայաստանում: Մի ժամանակ հունարենն ու ասորերենը մրցակից էին հայոց երկրում: Պարսիկները հույն կուլտուրայի տարածման մեջ քաղաքական վախ զգալով՝ արգիլեցին հունարենի ուսումը իրենց երկիրներում, ինչպես և Հայաստանում և ընդհակառակը քաջալերեցին ասորերենի ուսումը: Այսպեսով հայ եկեղեցու ծիսական ու պաշտոնական լեզուն ասորերենը դարձավ: Փարպեցին նկարագրում է այն անտանելի դրությունը, որ ստեղծվել էր հայ ժողովրդի համար, որ գնում էր եկեղեցի՝ իբրև արձան լսելու այն լեզուն, որից ոչինչ չէր հասկանում: Նա նկարագրում է մյուս կողմից այն անտանելի դժվարությունները, որ կրում էին հայ ուսանողները, հեռավոր ճամբորդության մեջ, Եղեսիա գնալու համար և ասորական դժվարին լեզուն սովորելիս: «Քանզի հոգացեալ յարածամ տրտմէր երանելի այրն Մաշտոց, տեսանելով զմեծ ջանն եւ զառաւելապէս ծախս՝ մանկանցն Հայաստան աշխարհիս, որք բազում թռչակօք և հեռագնաց ճանապարհօք և բազմաժամանակեայ դեզերմամբք մաշէին զաւուրս իւրեանց ի դպրոցս ասորի գիտութեան: Քանզի պաշտօն եկեղեցւոյ և կարդացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս, յորմէ ոչ ինչ էին կարող լսել և օգտել ժողովուրդքն այսպիսի մեծ աշխարհի, և լինէր պաշտօնէիցն աշխատութիւն եւ ժողովրդոցն անշահութիւն յանլրութենէ լեզուին ասորւոյ» (Փարպ. էջ 13):

Այս տխուր երևույթի առաջն առնելու համար էր, որ Մեսրոպ հնարեց հայերեն գրերը:

Մեսրոպ էլ հայերեն գրերի գյուտի համար իր փորձերը Միջագետքի ասորի գիտունների շրջանից սկսեց. պրպտեց Եղեսիո ճոխ մատենադարանը և հայերեն գիրն էլ այնտեղ հորինեց: Այնտեղ թարգմանեց առաջին հայերեն գիրքը (Գիրք Առակաց Սողոմոնի)՝ ասորական օրինակի վրայից, որին հետևեց ամբողջ Ս. Գիրքը: Ոսկեդարի առաջին գործերի մի ստվար մասը ասորերենից թարգմանվեց. այսպես են՝ բացի Ս. Գրքից՝ Եփրեմի երկերը (4 հատոր), Ս. Իգնատիոսի նամակները, Եւսեբիոսի եկեղեցական պատմությունը, Լաբուբնա Եղեսացւոյ թուղթ Աբգարու, Ափրաադ կամ Ջօօն Սժբնացի, Արևելյան Վկայք, Վարդապետություն Առաքելոց և ուրիշներ: Ինչպես հունարենից, նույնպես և ասորերենից կան այնպիսի գործեր, որոնց հայերեն թարգմանությունը

կա, բայց բնագիրը կորած է. այսպես են եվսեբիոսի պատմության 2 և է գրքերը (տե՛ս Հայկական աշխատ. Ֆեթթերի, Վիեննա, 1895, էջ 56), Եփրեմի Մեկնութ. թղ. Կորնթացոց (անդ, էջ 148): Ասորական ազդեցությունը հայոց վրա մատնանշելու համար՝ հիշենք բացի զանազան քարոզիչներից՝ մասնավորապես Դանիել քորեպիսկոպոսը, որ հայոց կաթողիկոսության աթոռը կանչվեց, և Բրքիշոյ ու Շնուել ասորիները, որոնք 429-437 թվերին վարեցին հայոց կաթողիկոսական աթոռը: Այս ժամանակից հետո ասորիների ազդեցությունը հայոց վրա վերանում է. հայ մատենագրության և հայ գրական լեզվի ծավալումը ի սպառ վտարում է ասորերենի գործածությունը և ասորերենի ուսումը: Ասորիները հետզհետե թուլանում տկարանում են նաև իրենց երկրում, որի պատճառներից մեկն էլ զանազան դավանություններն են լինում, որոնք պատառ պատառ են անում ասորի ժողովրդին: 489 թ. հունաց կայսեր հրամանով փակվում է Եդեսիո դպրոցը և այլ ևս հայ ուսանողները չեն գնում այնտեղ ուսանելու: Ընդհակառակը 551 թվին, երբ հայերը դատապարտելով քաղկեդոնական վարդապետությունը՝ կազմում են ինքնուրույն ազատ եկեղեցի, ուղղափառ ասորիները փնտռում են հայ եկեղեցու պաշտպանությունը և հովանավորությունը:

Հայ և ասորի ժողովուրդների հարաբերությունը այս վիճակի մեջ, այսինքն երկուսն էլ իրար շատ բարեկամ և նույն իսկ կրոնակից, հայերն ավելի ազդեցիկ, իսկ ասորիները նրանց հովանավորության տակ, շարունակվում է այնուհետև երկար դարեր և մինչև այսօր էլ նույն է: Տեղ տեղ հայոց ազդեցությունը այնքան մեծ է եղել, որ ասորիները նույն իսկ կորցրել են իրենց լեզուն և խոսում են հայերեն. այսպես՝ Խարբերդի մեջ գտնված 900 շունչ ասորիները հայախոս են եղել և ասորերեն լեզուն իմացող կամ խոսող ասորի հազվագյուտ էր. նրանք «կը խօսին հայերեն ինչպես հայ մը, տարբերութեամբ միայն, որ հարցականք և ձայնարկութիւններ սովորականն քիչ մը երկար ու անտեղի թափով կարտաբերեն» (Յ. Յարութիւնեան, Քարբերդի ասորիները, Արևելք 1888, յունիս 24):

Ասորական ազդեցությունը հայոց վրա կարող ենք բաժանել 4 շրջանի.

1) Նախնական շրջան, երբ Ասորիները կազմում են Հայաստանի հարավային նորանվաճ գավառների ազգաբնակչության մեծամասնությունը և կամաց կամաց ձուլվում են (ն. ք. Ա դար):

2) Քրիստոնեական քարոզչության շրջան, երբ հայ եկեղեցու պաշտոնյաներն ու ծիսական լեզուն ասորերենն է (Գ-Դ դար):

3) Մատենագրական շրջան, երբ Եդեսիո դպրոցը հյուրընկալում է հայ ուսանողներին և ասորական եկեղեցական գրականության կարևոր գործերը հայերենի են թարգմանվում (Դ-Ե դար):

4) Անկման շրջան, երբ ասորիները իրենց մեծությունն ու ազդեցությունը կորցրած, ապրում են հայոց հետ ազգային ու կրոնական մոտիկ բարեկամական հարաբերության մեջ, փնտռելով ու վայելելով մեր պաշտպանությունը:

Այս չորս շրջանները ունեցել են իրենց տարբեր ազդեցությունը հայերեն լեզվի վրա:

Առաջին շրջանում ասորիները հայանալիս՝ Հայաստանի մյուս նախաբնիկների նման իրենց հետ բերին և հայերենի մեջ մուծեցին անշուշտ զանազան բառեր, որոնք նախ Հայաստանի հարավային շրջանում իբրև գավառական բառեր գոյություն ունեին, հետո ավելի վեր տարածվելով ընդհանուր հայերեն դարձան: Այս բառերը մյուս շրջանների փոխառություններից այն տարբերությունն ունին, որ զուտ ժողովրդական բառեր են և պատկանում են ամենին ու սովորական կյանքին. ինչ. ամղան, տղայ, հրեայ, ձեթ, մախաթ, շամփուր, շղթայ և այլն:

Երկրորդ շրջանում փոխառյալ բառերը պատկանում են եկեղեցական լեզվին և ասորի կրոնավորների միջոցով մտել են լեզվի մեջ. ինչ. արեղայ, քահանայ, սատանայ, ծոմ, քուսիթայ, քուրմ, քարոզ և այլն:

Երրորդ շրջանին փոխառությունները կրում են զուտ գիտական բնույթ. վերաբերում են դպրոցական կյանքին և շատ անգամ՝ ասորագետ ուսումնականների ձեռքով կատարված հասարակ տառադարձություններ են՝ բնագիրներից թարգմանություններ անելու ժամանակ. ինչ. աթութայ, դարգ, թարգմանել, թոհ և բոհ, իլուլ, հեգ, հեգենայ, մազաղաթ, մծղենայք, մղավաշէ, յաթ, մաբաղել, սաբա (ծեր), սոփերք ևլն:

Չորրորդ շրջանին փոխառությունները կատարվել են միայն այն գավառներում, ուր հայ և ասորի ժողովուրդները կենակցում էին իրար հետ. այսպես՝ Հայաստանի հարավային գավառներում, Միջագետքի հյուսիսային կողմերում, Կիլիկիո արևելյան շրջանները, Եփրատացոց սահմաններում և ավելի ուշ՝ Ուրմիո լճի արևմտյան շրջանում (Սալմաստ և Ուրմիա), ուր հայերը և ասորիները մինչև այս րոպեիս էլ բարի հարևաններ են, շատ անգամ ազգակցական ու խնամիական կապերով կապված իրար հետ: Այս շրջանի փոխառություններն էլ բնականաբար

կրում են ժողովրդական բնույթ և պատկանում են հասարակ ու սովորական կյանքին: Նրանցից ոմանք մտել են հետին դարերի հայ գրական մնացորդների մեջ, մյուսները գործածական են միայն արդի հայ բարբառներում և գրական լեզվի մեջ չեն մտել: Այսպես են օր. մնինայ, մաշար (սղոց), առզել, մակար ևլն:

Չորս շրջանների փոխառությանց գումարն է 209 բառ, որ դնում ենք այստեղ՝ նախ այբուբենական կարգով, հետո ըստ տեսակի. (աստղանիշները գործածական են նաև արդի գրականում կամ բարբառներում և ընդ ամենը 120 հատ են).

1. Աբ (11-րդ ամիսը)	āb
*2. Աբեղայ	abīlā
*3. Ագուգայ «փողոկ»	agōgā < հուև. agōgós
4. Ադեն, ադին	ʾəðen
5. Աթութայ «տառ»	āṭūṭā
6. Աղան «իշխան»	ʾalānā
7. Աղց «կարիք»	ālšā, elaš
8. Ամարու «գառնուկ»	emrā
*9. Ամիրայ	amīrā
*10. Ամղան «վերարկու»	āmlōn
11. Անկան «սանդ»	aggānā
*12. Ապուղայ «ծեփ տիկ»	apāulā < լտ. ampulla
13. Ապրսամ «բալասան»	apūrsāmā
*14. Առնակ «չար ոգի»	harnāgā
*15. Առնէտ	arnāʾā
16. Աստրատիգայ «զորապետ»	estratīgā < հուև. stratēgōs
17. Ատեսարոն «4 Ավետարան»	ditron < հուև. diatessārōn
18. Ատշիլ «ծարավիլ»	*ʾaš = արար. ʾaš
19. Արզբեդ «բերդապետ»	aržbed < պրս. arz-bad
20. Ափիղատոս «հոգաբարձու»	afimlatūs < հուև. epimelētēs
*21. Աքսոր	aksoria < հուև. exoríā
22. Բասրել «պարսավել»	bēsīr
23. Բեթթիկա «իջևան»	bīt-tīqā
24. Բոհ տե՛ս թոհուրոհ	
25. Բուժին «պատրույզ»	būšīnā
26. Բուտ «կրոնական տեսուչ»	bud
*27. Բուրգն	būrgā

28. Գադիշ «դեզ»	gədišā
*29. Գաղուք	gālūṭā
*30. Գզաթ «բուրդ»	gezzəṭā
31. Գլոս «կապիկ»	glōs < հուև. kallías
*32. Գուբ	gubb, gubbā
*33. Գուռն «ավազան»	gūrnā
*34. Գուրպայ	gurbā?
35. Դամարիլ «շվարիլ»	dūmārā
36. Դասպինիա «դժվարաշնչութ.»	dispōnía < հուև. dy'spnoia
*37. Դար «հարյուրամյակ»	dār
38. Դարգ «շարք»	dargā
39. Դարգիճ «պատգարակ»	dargūštā?
*40. Դերի «վանք»	daira
*41. Զիրկ, զուրկ	srīqā
*42. Զոյգ	zaugā
*43. Զոպայ (բույս)	zōpā
44. Զուգայ (դրամ)	zūzā
45. Թանգար (վաճառական)	taggārā
*46. Թատր	tātrā < հուև. théatron
*47. Թարգման	targmānā
48. Թարշիշ (քարը)	taršīš
49. Թեկուղայ «համբերություն»	tequīā
50. Թշրին (ամիսը)	tšrīn
*51. Թոհ և րոհ	tōh wə wōh
52. Իբրամէն «Գիրք մնացորդաց»	dibre-yōmīn
53. Իլուլ (ամիսը)	īlūl
*54. Լումայ	lūmā < լտ. nummus
*55. Խանձարուր	ʾazrūra
*56. Խանութ	xānūṭā
57. Խարագուլ «մորեխ»	xargūl
58. Խարամանի «դև»	xarmānā
59. Խարբ «թուր»	xarbā
60. Խարբալ «մաղ»	ʾarbālā
*61. Խարտել	xraṭ
*62. Խաւիժ	xəwīšā
63. Խիլայ, խլայ «զգեստ»	xilʾā
*64. Խլուրդ	xūldā

- \*65. Խմոր, խմեալ, խում
- \*66. Խոռ «ծակ»
- 67. Խորզ «քուրծ»
- \*68. Ծարիր
- \*69. Ծնծղայ
- \*70. Ծոթոր
- \*71. Ծոմ
- \*72. Ծրար
- \*73. Կաթսայ
- 74. Կաղա «դոյլ»
- 75. Կապելայ
- \*76. Կասկարայ
- \*77. Կատու
- 78. Կարկուրայ «նավակ»
- \*79. Կացին
- \*80. Կաքալ
- \*81. Կեղև
- \*82. Կթխայ «բաժակ»
- \*83. Կողով
- \*84. Կոմս
- \*85. Կուղբ «ջրշուն»
- \*86. Կուպր
- \*87. Հազոր (պտուղ)
- 88. Հաղբ (որոգայթ)
- \*89. Հաշիւ
- \*90. Հեզ «վանկ»
- 91. Հեզենայ «այբուբեն»
- \*92. Հեթանոս
- 93. Հռիտորայ «հռետոր»
- \*94. Հրեայ
- \*95. Չանձախարիթ
- \*96. Չէթ
- \*97. Չիւթ
- \*98. Ղեկ
- \*99. Մագաղաթ
- \*100. Մախաթ
- \*101. Մակաղիլ

- xma'
- xōrā
- xurgā
- ʃədiðā
- ʃəʃʃələ
- ʃāθrā
- ʃōm, ʃōmā
- ʃərār
- qadsā
- qūlē
- qapēlā < հոււ. kapēleia
- kaskārā
- qaṭṭū
- qarqūrā
- xaʃʃīnā
- qaqqəwā
- qəlāfā
- qədxā
- ?
- qōms < հոււ. kómēs < լտ. comes
- kalbā
- kufrā
- xazūrā
- xawlā
- xəšīw
- həyā
- həgyānā
- htnos (hetanos?)
- rhītōrā < հոււ. hrē'tōr
- ihūdāyā
- zəxōrīθā
- zēθ
- ziftā
- lēqā
- magalləθā
- məxaṭṭā
- ? = երբ. mīkəlā

- \*102. Մամոնայ
  - \*103. Մանանայ
  - \*104. Մանգաղ
  - 105. Մանգանայ
  - \*106. Մանիշակ
  - \*107. Մաշար (սողո)
  - 108. Մաշարայ «թոքախտ»
  - \*109. Մաշկ
  - 110. Մաշկն «վրան»
  - \*111. Մասուս (խթան)
  - 112. Մար «տե՛ր»
  - 113. Մարանաթայ (նզովք)
  - \*114. Մարսել
  - \*115. Մաքս
  - 116. Մղրիշայ «երզ»
  - 117. Մծղնեայ (աղանդ)
  - 118. Մղավաշէ «զոդիակոս»
  - 119. Մնինայ «մլակ»
  - 120. Մուղ «էզ էշ»
  - \*121. Մտրակ
  - 122. Յաթ «տարր»
  - 123. Յամոյր «այծ վայրի»
  - 124. Յապանաս (արիամարիանք)
  - 125. Նաբաղել (անարգել)
  - 126. Նածրացի «քրիստոնյա»
  - \*127. Նաշիհ
  - \*128. Նափորտն «շուրջամ»
  - \*129. Նուկի (չափ)
  - \*130. Շաբաթ
  - \*131. Շալակ
  - \*132. Շամփուր
  - 133. Շարապայ «որթապատկեր»
  - \*134. Շաւիղ
  - \*135. Նսփիղայ
  - \*136. Շէր «դանակի երկաթը»
  - \*137. Շերսս «մետաքս»
  - \*138. Շեփոյ(այ)
- māmōnā կմ հոււ. mamōnā
  - mannā
  - maggəlā
  - ? (manganūn)
  - məniʃka < պիլ. vanavšak
  - masārā, նորդ՝ məššar
  - māšrā
  - məškā, արամ. maškā
  - maškan
  - masāsā
  - mārā
  - mār-an aṭā > հոււ. marān athā
  - məras
  - maxsā
  - madrāšā
  - məʃalləyānə
  - malvašə
  - manīnā
  - mūlā
  - maṭrəqā
  - yāθā
  - yaxmūrā
  - yapanas
  - nabbəl
  - naʃrāyā
  - nəšīfā
  - ? < հոււ. naphorā
  - nūqiā < լտ. uncia
  - šabbəθā
  - ? > արաբ. šallāq
  - šappūðā
  - šərāpā
  - šəwīlā
  - sapīlā
  - šəlpā
  - šərāyā
  - šīfōrā



*139. Շեք «քայլ»	šaqa
*140. Շիդար «խենթ»	šətar
141. Շկապել «վճռու»	šəqaf
*142. Շոթայ	šəšaltā
*143. Շուկայ	šūqā
144. Շունրայ «սամիթ»	šumrā
*145. Շուշան	*šūšan, šōšan
*146. Շուշմայ «սուսամ»	šūšmā
*147. Շուշփայ «մասունքի շոր»	šūšəppā
148. Շուփայ «աչքի դեղ»	šəyāfā
*149. Շպար	(šappīr, šəfar)
*150. Ուրբաթ	ʿərwəθā
151. Պապկայ «թութակ»	papgā
*152. Պողոտայ	plāṭiā < հոււ. plateia
153. Պրակասաւաթայք «Գործք առաքելոց»	prqsvtā < հոււ. práxeis autōn
*154. Ջայլամն	? = արաբ. zalīm, zilmān
155. Ռաբունայ «գրավական»	rahbōnā
156. Սաբա «ծեր»	sābā
157. Սակամունիա (բույս)	saqmuniā < հոււ. skammōnia
158. Սակուր «կացին»	seqūrā < լտ. securis
159. Սահրա «լուսին»	sahrā
*160. Սատանայ	sāṭānā
*161. Սարակ «բանվոր»	sārak
162. Սափիրայ (քար)	sapīlā
*163. Սափրել	sappar
*164. Սեռն (առանցք)	sarnā
165. Սիդա «բուրվառ»	saidā, sīdā
*166. Սիւնհոդոս «ժողով»	sunhodos < հոււ. sy'n odos
*167. Սիք, սիւք	ziqā
168. Սխուր «վարձ»	?
*169. Սկահ «բաժակ»	esqəfā < հոււ. skáphē
170. Սնիկ «կարիք, կարոտություն»	səneq, səniqā
*171. Սուին (անծանոթ մի լեզվից. հմտ. sūwīnā)	safsērā
*172. Սուսեր «թուր»	?
*173. Սուսր «կարմիր ներկ»	? = երբ. šāšēr
174. Սոփեր «գիրք»	sefrā

*175. Սպեղանի	esplēnyā < հոււ. splē'nion
*176. Սրովրթ	srafē
*177. Տառապիլ	ṭarep
178. Տարմալ «տոպրակ»	tarmāl
179. Տաքսատ «վաշտ»	? < հոււ. taxátos
*180. Տեղ «անձրև»	ṭallā
*181. Տերև	ṭəref
*182. Տղայ	ṭalyā
183. Տոփայ «լաստ»	ṭaupā
*184. Ցամաք	? = երբ. šmq
*185. Փարատել	pərat
*186. Փեզանայ (բույս)	pēγānā < հոււ. pē'ganon
*187. Փիլիսոփայ	filōsōfā < հոււ. philōsophos
188. Փուտկայ «պանդոկ»	pūtqā < հոււ. pandochēion
*189. Փրկել	pəraq
*190. Քահանայ	արամ. kāhanā
191. Քաղդեայ «հմայող»	xaldāyā
192. Քանուն (մահճակալի)	*kanūnā < հոււ. kanōn
*193. Քանքար	kakkərā
*194. Քարոզ	kārōzā
195. Քարտեզ (դրամ)	qartīs
196. Քաւդեայ տե՛ս Քաղդեայ	
197. Քաքար (խմորեղեն)	*kakār, kakārīṭā
198. Քեղեղին «պսակ»	kəlīlā
*199. Քերովրթ	krōwē
*200. Քնար	kinnārā
201. Քորայ «երկիր»	kōrā < հոււ. chō'ra
202. Քորեշ «իշխանավոր»	kureš
*203. Քուեայ	quwyā?
204. Քուսիթայ «գլխարկ»	kōsīṭā
*205. Քուրայ «հալոց»	kūrā
*206. Քուրմ	kūmrā
207. Քրսամն (բույս)	? < արաբ. karsana
*208. Քոշ «արու այժ»	kewšā
209. Քոշել «վրան վագել» տե՛ս քոշ:	

1) Բնության և նրա զորությաննց մասին.

Մղավաշէ «կենդանակերպ», սահրա «լուսին», սիւք, տեղ «անծրն».

2) Կրոնական բառեր.

Աբեղայ, աղեն «եղեն», առնակ, ատեսարոն, բուտ, դերի «վանք», իրրամեն, հեթանոս, խարամանի, ծոմ, մարամաթայ (անէծք), մծղնեայ, նածրացի, շարապայ «հորթ կուռք», շուշփայ, պրակսաւաթայք «Գործք Առաքելոց», սատանայ, սիդա «բուրվառ», սիւնհողոս, սերովբէ, քահանայ, քաղդեայ, քաւդեայ, քարոզ, քերովբէ, քուեայ, քուրմ:

3) Մարդ և մարմին.

Մաշկ, մարսել, շեք.

4) Հիվանդություններ և դեղ.

Դասպինիա «դժվարաշնչություն», մաշարայ «թոքախտ», սպեղանի:

5) Կենդանիներ.

Ամարու, առնէտ, գլոս «կապիկ», խարագուլ, խլուրդ, կատու, կաքաւ, կուրք, մնինայ, մուլ «եգ եշ», յամոյր, շերամ, պապկայ, ջայլամն, քօշ:

6) Ընտանիք և ընկերություն.— Տղայ.

7) Երկրագործական.

ա) Տունկեր.— ապրսամ, զոպայ, ծոթոր, հազոր, մանիշակ, շումրայ, շուշան, շուշմայ, սակամունիա, փեգանայ, քրսամն.

բ) Տունկի մասեր.— տերել, կեղել.

գ) Գործիքներ.— մանգաղ, մասուս «խթան».

դ) Երկրագործություն.— գաղիշ.

8) Խաշնարածություն և գյուղատնտեսություն.

ա) Գզաթ «բուրդ», մակաղիլ.

բ) Ձիու սարք.— մտրակ.

9) Գիտություն և արվեստ.

ա) Արհեստի վերաբերյալ.— խարտել, մաշար, քուրայ.

բ) Ուսում.— աթութայ, թարգմանել, հաշիւ, հեգել, հեգենայ, հռիտորայ, մագաղաթ, պրակսաւաթայք «Գործք Առաքելոց», սոփեր, յաթ, փիլիսոփայ.

գ) Երածշտություն և թատրոն.— թատր, ծնծղայ, մդրիշայ «երգ», շեփորայ, քնար:

10) Գույներ.— չկան:

11) Վաճառականություն և դրամական գործարք.

Թանգար «վաճառական», խանութ, հաշուել, շուկայ, ռաբունայ «գրավական».

12) Շինություն և շենքի մասեր.

Ազուգայ, բեթթիկա, բուրգն, գուր, գունն «ավազան», խանութ, կապելայ, մաշկն «վրան», փուտկայ:

13) Հագուստ և զարդ.

Ամղան, գզաթ, գուլպայ, խանձարուր, խիլայ, ծարիր, նափորտ, շուփայ, շպար, սափրել, քուսիթայ, քեղեղին «պսակ».

14) Ուտելիք և ըմպելիք.

Խաւիժ, խմոր, ձէթ, մանամայ, մաշիի, քաքար:

15) Առտնին տնտեսություն.

ա) Տնային իրեր.— բուծին, խարբալ, կասկարայ, կացին, մախաթ, շամփուր, շեղք, շղթայ, սակուր, քանուն.

բ) Ամաններ.— Անկան, ապուղայ, խորգ «քուրծ», կաթսայ, կաղայ «ղույլ», կթխայ, կողով, սկահ, տարմալ «տոպրակ».

գ) Տնտեսություն.— խմոր, խմեալ, անխում:

16) Թիվ, չափ, կշիռ և դրամ.

Ձուղայ, լումայ, մամոնայ, նուկի, քանքար, քարտեգ.

17) Մետաղներ, հանքային նյութեր և նմաններ.

Թարշիշ, կուպր, ծանձախարիթ, ծիւթ, շափիւղայ, սափիրայ, սուսր:

18) Ճամբի վերաբերյալ.

Բեթթիկա «իջևան», դարգիճ «պատգարակ», կարկուրայ, դեկ, շաւիղ, պողոտայ, սեռն, տոփայ «լաստ».

19) Ժամանակ.

Աք, դար, թշին, իլուլ, շաբաթ, ուրբաթ:

20) Երկիր և պետություն.

ա) Երկրի մասեր.— քորայ «յերկիր».

բ) Պետական կազմ և պաշտոնություն.— աղան, ամիրայ, աստրա-տիգայ, արգբեղ, ափիղատոս, կոմս, մար, քարոզ, քորշ «իշխանավոր».

գ) Վարչական գործարք.— աքսոր, գաղութ.

դ) Հարկեր.— մաքս.

ե) Պատերազմ.— տաքսատ «վաշտ».

զ) Ձենքեր.— խարթ, մանգանայ, շեղք, սակուր, սուին, սուսեր:

21) Սովորական կյանքի բառեր.— Աղցք «պետք», ատշիլ «ծարա-վիլ», բասրել, գուր, դամարիլ, դարգ, զոյգ, զուրկ, թեկուղայ «համբե-րություն», թոհ և բոհ, խոռ «ծակ», ծրար, հաղք, հրեայ, յապանաս, նաբաղել, շալակ, շիդար «խենթ», սաբա, սնիկ «պետք», շկապել «վոնտել», սարակ «բանվոր», սխուր «վարձ», տառապիլ, ցամաք, փարատել, փրկել, քուեայ «խաղալու վեգ», քօշել «վրան վազել»:

Հայերենը ասորերենից փոխ է առել նաև զանազան հատուկ անուններ, որոնցից կարող ենք հիշել հետևյալները.

Աբա	Հաբել
Աբգար	Մար
Ահարոն	Մարութա
Աղան	Մուշե
Արշամ	Յովնան
Բարշամինայ (ասորական աստվածություն, որ ընդունված էր նաև Հայոց կրոնի մեջ).	Յուխնան
Գաղիշոյ	Շաբաթ
Եզր	Շամիրամ (որից Շամիրամակերտ)
Եղիշե	Շմաւոն
Եփրեմ	Շուշան
	Շուփհաղիշոյ
	Սարգիս

Այս անունները գործածական են եղել նաև հայոց մեջ, այսինքն հայ անհատներ կրել են այդ անունները. բայց ասորական ձևով օտար անունների թիվը շատ ավելի մեծ էր. այսպես՝ անձնական հատուկ անուններից՝ Մար Աբաս Կատինա, Աղղե, Ղերութնա կամ Լաբութնա, Արղիշոյ, Բարղեծան, Բարծումայ, Բարշամ, Բրքիշոյ, Շմուէլ, իսկ տեղական անուններից՝ Դկղաթ, Խաղաթ (Հալէթ), Ծաւղէք, Ծուր (Տիրոս), Մեծրայիմ (Եգիպտոս), Մծբին, Հորդանան, Նինուէ, Շամրին (Սամարիա), Ուռհայ (Եդեսիա) ևլն: Երբ քրիստոնեությունը մտավ հայոց մեջ, որովհետև առաջին եկեղեցականները ասորի էին և Ս. Գիրքը առաջին անգամ ասորերենից թարգմանվեց (ոչ թե հունարենից), ուստի և քրիստոնեական-եբրայական անունները ասորական ձևով մտան հայոց մեջ. հետո, երբ եկան հույն քարոզիչները և Ս. Գիրքը հունարենի վրայից երկրորդ անգամ թարգմանվեց, ասորական ձևերը ջնջվեցին և հետզհետե վերացան: Այս պատճառով ահա հնագույն գրվածքներում մենք գտնում ենք միևնույն անունը երկու ձևով. այսպես՝

<b>ասորական ձևով</b>	<b>հունական ձևով</b>
Աբեշաղովմ	Աբիսողոմ
Եղիշաբեթ	Եղիսաբեթ
Ծեղեկիա	Սեղեկիա
Յիշով	Յեսու
Շեմ	Սեմ

Շմշոն  
Աւարշլիմ  
Դկղաթ  
Եղիշե  
Ծուր  
Հաբել  
Մուշե  
Շամրին  
Շաւուղ  
Շմաւոն  
Շմուէլ  
Ուռհայ

Սամփսոն  
Երուսաղէմ  
Տիգրիս  
Եղիս  
Տիրոս  
Աբել  
Մովսէս  
Սամարիա  
Սաւուղ  
Սիմոն  
Սամուէլ  
Եդեսիա

Հետագայում, ինչպես ասացինք, ասորական ձևերը տեղի տվին հունականին և այսօր շատ քչերն են միայն, որ շարունակում են իրենց գոյությունը (ինչ. Եղիշե, փխ. Եղիսէ) և այն էլ իբրև տարբեր անուն կարծվելով. ինչ. Մուշե, Շմաւոն, որոնք շատեր չգիտեն թե միևնույն են Մովսէս և Սիմոն անունների հետ:

Հայերենը անշուշտ ստացել է ասորերենից նաև ոճական ձևեր. բայց այս մասին մի առանձին ուսումնասիրություն չունինք տակավին:

Այն բոլոր բառերը, որ հիշեցինք վերևում, ասորերենից հայերեն անցնելու ժամանակ առհասարակ հետևում են հետևյալ տառադարձության.

a (բառավերջում) > այ, այլուր՝ ա	y > j k, x > ք
i > ի	l > լ
e > ե, է	m > մ
u > ու	n > ն
o > ո, ոյ, ու	s > ս
ə > ա, —, ե	' > — (ջնջվում է).
b > ք, w > ք, ւ.	p > փ, f > փ, ւ.
g, γ > գ	š > ծ
d > դ      δ > դ, ր.	q > կ
h > հ	r > ր
z > զ	š > շ
x > խ	t, θ > ք
t > տ	

Տառադարձության ժամանակ կարելի է նկատել հետևյալ պարզամասերը.

1) Ասորերենի *b, g, d, p, t* բաղաձայնները ձայնավորից հետո հնչվում են սեղմ *w, γ, δ, f, θ*. Բայց որովհետև հայերենը չունի այս կարգի ձայներ, ուստի դնում է նրանց փոխարեն պարզ պայթական *p, q, r, փ, ք*. Երբեմն էլ *w, f* սեղմերի տեղ գտնում ենք *ւ* (ինչ. կաքաւ, հաշիւ, շաւիղ, քաւշ և կեղեւ, տերեւ, սուսեր) և *ծ* ձայնի տեղ գտնում ենք *ր*, ինչպես և պարսկերենից փոխառյալ բառերի մեջ (այսպես են հրեայ, շամփուր, ծարիր):

2) Որովհետև հայերենը կրկնակ բաղաձայն չի սիրում, ուստի ուր որ ասորին ունի այդպիսին, հայերենի մեջ գտնում ենք միայն մեկը. այսպես *bb* դառնում են *p, zz>q, tt>թ* կամ *տ, ll>ղ, nn>ն, pp>փ, ss>ց, qq>ք* (ինչ. *gubbā>գուր, xaššīnā>կացին, kennāra>քնար* ևլն): Այս պարագային, ինչպես նկատելի է, շատ անգամ բաղաձայնի աստիճանը բարձրանում է թավի, որ շատ համապատասխան է կրկնակին. այսպես *qaqəwā* տալիս է կաքաւ, ուր սկզբնաձայն պարզ *q* դարձել է *կ*, բայց միջին կրկնակ *qa* դարձել է *ք*. նույնպես մինչդեռ պարզ *š* դառնում է *ծ*, կրկնակ *šš* դարձել է *ց* *xaššīnā>կացին* բառի մեջ:

3) Մի խումբ բառերի մեջ, ուր որ ասորին ունի կրկնակ բաղաձայն, հայերենի մեջ առաջինը դառնում է *ն*. այսպես են *taggārā>թանգար, maggālā>մանգաղ, kakkārā>քանքար, šeššālā>ծնծղայ, sappūdā>շամփուր, aggānā>անկան*:

4) Ասորերենի մեջ գոյականները երեք ձև ունին. բացարձակ ձև (*status absolutus*), սաստկական ձև (*status emphaticus*) և բաղադրյալ ձև (*status constructus*): Առաջինը ներկայացնում է բառի պարզ կամ նախնական ձևը. երկրորդը ավելացնում է նրա վրա *ā* վերջավորությունը, որ նախնական շրջանում ասորերենի որոշյալ հոդն էր, բայց հետո իր այս արժեքը կորցնելով՝ դարձավ բառի անբաժան մասը. այնպես որ ասորերենի ամենահին գրական լեզվի մեջ անգամ բառի գլխավոր ձևը համարվում է սաստկականը, և միայն բարբառների մեջ այդ *ā* վերջավորությունը համարվում էր հոդ: Վերջապես երրորդ ձևը ներկայացնում է այս երկուսի միջինը կամ խառնուրդը: Այսպես՝ «գաղութ» բառի ասորերեն ձևերն են՝ բացարձակ *gālū*, սաստկական *gālūā*, բաղադրյալ՝ *gālūā*: Սակայն ամեն բառ այս երեք ձևերով էլ գործածական չէ. կան բառեր, որ միայն բացարձակ ու սաստկական ձևերն ունին. ինչպես տերև = բացարձակ *təref* և սաստկական *tərpā*, իսկ շատ բառեր մի՛ միայն սաստկականի ձևով են գործածական: Հայերենի

փոխառությունները առհասարակ ասորերենի սաստկական ձևից են. միայն թե սաստկականի *ā* վերջավորությունը հայերենի մեջ երբեմն պահված է այ ձևով և երբեմն էլ բոլորովին կտրված: Առաջինի օրինակներն են՝ արեղայ, ագուգայ, աթութայ, ամիրայ, ապուղայ, ասորատիգայ, բեթթիկա, գուրպայ, դասպինիա, զոպայ, զուգայ, թեկուղայ, լումայ, խիլայ, ծնծղայ, կաթսայ, կապելայ, կասկարայ, կարկուրայ, կթխայ, հեզենայ, հռիտորայ, հրեայ, մամոնայ, մանանայ, մանգանայ, մաշարայ, մարանաթայ, մդրիշայ, մծղենայ, մնինայ, շարապայ, շափիղայ, շեփոր(այ), շղթայ, շուկայ, շուճրայ, շուշմայ, շուշփայ, շուփայ, պապկայ, պողոտայ, պրակսաւաթայք, ռաբունայ, սաբա, սակամունիա, սահրա, սատանայ, սափիրայ, սիղա, տղայ, տոփայ, փեզենայ, փիլիսոփայ, փուտկայ, քահանայ, քաղղեայ, քաղեայ, քորայ, քուեայ, քուսիթայ, քուրայ (62 բառ): Երկրորդից հիշենք խարթ<ասոր. *ḫarbā*, մաքս<*maxsā*, գաղութ<*gālūā*, խանութ<*xānūā* ևլն: Թե հայերեն փոխառությունները ասորերենի սաստկական ձևից են և ոչ բացարձակ ձևից, դրան իբրև ապացույց կարող են ծառայել այն բառերը, որոնց բացարձակը հայերենից բոլորովին տարբեր է և միայն սաստկականն է, որ նման է հայերենի. օրինակ.

հյ.	բացարձակ	սաստկական
զզաթ	<i>gezzā</i>	<i>gezzəā</i>
շաբաթ	<i>šabbā</i>	<i>šabbəā</i>
ուրբաթ	<i>'ərūwā</i>	<i>'ərūwəā</i>
մագաղաթ	<i>məyallā</i>	<i>məyalləā</i>
շղթայ	<i>šēšā</i>	<i>šēšəā</i>

Այնուամենայնիվ կան սակավաթիվ բառեր, որոնք բացարձակ ձևից են փոխառյալ. ինչպես տերեւ< բացարձակ *təref* (իսկ սաստկականը *tərpā*):

5) Տառադարձության սովորական կանոնից շեղումներ նկատում ենք հետևյալ բառերի մեջ.

Ասոր. *z*, որ սովորաբար դառնում է *զ*, միայն *ծէթ* բառի մեջ լինում է *ծ*. այս հանգամանքը պատճառ է դառնում կարծելու, որ *ծէթ* թերևս իրանական ճամբով է հասել մեզ. հմմտ. ամդարծ, հանդերծ, վարծ ևլն, որոնց մեջ իրանական *z* ձայնի դեմ ունինք հյ. *ծ*: Նույն ձայնը *zīqā>սիք* բառի մեջ դարձել է *ս*, իսկ *Zawdai>Ծաւղէք* հատուկ անվան մեջ եղել է *ծ*:

Ասոր. x, որ սովորաբար դառնում է հյ. խ, մի քանի բառի մեջ լինում է հ. այսպես են՝ հանութ (խանութ), հաշիւ, հաղթ և Շուփհաղիշոյ (հատուկ անուն, ասոր Տւwxālīšō') .— մի դեպքում դառնում է կ. այն է՝ xaşši-nā>կացին, այս երևույթը քվում է թե հայ հողի վրա հառաջացած է. — մի դեպքում էլ ի սպառ ջնջվում է. yaxmūrā>յամոյր:

Ասոր. k, որ սովորաբար տալիս է հյ. ք, բացառաբար տալիս է կ՝ մի քանի բառի մեջ. այն է՝ կասկարայ, կուպր, մանիշակ, մաշկ (վերջընթեր ձևը կարելի է բացատրել հայերեն նվազական ակ մասնիկով, իսկ մաշկ կամ իրանական ազդեցությամբ կամ շ-ի պատճառով): Նույն ձայնը maxsā>մաքս բառի մեջ թեև հնչվում է սեղմ, բայց հայերենի մեջ դարձյալ տալիս է ք:

Ասոր. p, որ սովորաբար տալիս է հյ. փ, բացառաբար լինում է պ՝ զոպայ, կուպր և շպար բառերի մեջ:

Ասոր. s, որ սովորաբար լինում է հյ. ս, միայն երկու դեպքում տալիս է շ. այն է՝ sappīlā>շափիղայ, masārā>մաշար:

Ասոր. q, որ սովորաբար դառնում է հյ. կ, մի դեպքում եղել է ք. այն է՝ zīqā>սիք (սիւք):

Ասոր. Կ՝ հնչումը, որ սովորաբար հայերենի մեջ ջնջվում է, մի անգամ դարձել է խ. այն է՝ 'arbālā>խարբալ:

Ասոր. t, որ սովորաբար տալիս է հյ. թ, մի անգամ եղել է տ. այն է՝ tarmālā>տարմալ բառի մեջ:

Ասոր. n, որ սովորաբար տալիս է հյ. ն, մի անգամ դարձել է մ. այն է՝ Nšīwīn>Մծրին քաղաքի անվան մեջ. այս փոփոխությունը առաջացել է անշուշտ հայերենում՝ p շրթնայինի ազդեցությամբ: Բայց հենց հայերենի մեջ էլ կա պահված Նծրին ձևը՝ Բուզ. էջ 140:

Ասորերենի ձայնավորները մինչդեռ սովորաբար հետևում են վերի ցուցակի մեջ նշանակված ձայնափոխությանց, բայց անկանոն ձևափոխություններ են կրում հետևյալ բառերի մեջ. sarnā>սեռն, šəyāfā>շուփայ, sefrā>սոփեր, qelāfā>կեղեւ, կլեպ (փխ. լինելու կաղաւ), šadrā>ծոթոր, xargelā>խարագուլ (փխ. լինելու խարգալ կամ խարգալայ):

Վերիվայր շրջված մի ձև է հատկապես šešaltā>շղթայ:

6) Ասորերեն բառերը հայերենի անցած ժամանակ մասամբ հետևում են սղման և ամփոփման օրենքներին և մեծ մասամբ ոչ: Այսպես Nšīwīn>Մծրին, 'ərwəðā>ուրբաթ, ayōyā>ազուգայ, ʾihūðāyā>իրեայ, heyyānā>հեղեմայ բառերի մեջ ի, ու ձայնավորների սղման և ոյ>ու, եա>ե ամփոփման օրենքները գործադրված են. մինչդեռ āðūðā>աթու-

թայ, šūqā>շուկայ, Elīša'>եղիշայ, lūmā>լումայ, šīfōrā>շիփորայ ևլն բառերի մեջ ի, ու պահված են:

Այս բոլոր մասնավոր դեպքերը կամ անկանոնությունները երևան են հանում ասորական փոխառությանց աղբյուրն ու ժամանակը: Հայերեն լեզուն, որ իր ձայնական հարստությամբ շատ անգամ ընդունակ էր ճիշտ տառադարձելու ասորական հնչումները, ինչո՞ւ տեղ տեղ պիտի թերանար: Օրինակ՝ եթե ասորերեն ābā հատուկ անունը կամ mksā բառը արտասանվեին Awā, maxsā, կարող չէ՞ր հայերենը դնել Աւա, մախս, փոխանակ դնելու Արա, մաքս, ինչպես գտնում ենք, քանի որ թե՛ ւ և թե՛ խ ձայները շատ ծանոթ և սովորական ձայներ էին հայերենի մեջ: Իսկ եթե այսպես չէ վարվել, նշանակում է թե այն աղբյուրը, որտեղից օգտվել է հայերենը, հնչում էր ո՛չ թե Awā, maxsā, այլ \*Abā, \*maksā: Արդեն այս բառերի գրությունը և նրանց ծագումն ու ստուգաբանությունը միաձայն ասում են, որ նրանց b, k հնչումը ավելի հին է. Awā, maxsā բառերի մեջ w և x հնչումները զրվում են b, k տառերով և միայն ասորերենի ընթերցանության մասնավոր օրենքների համաձայն հակառակ գրության կարդացվում են w, x: Ստուգաբանությամբ էլ Awā ծագում է ab «հայր» բառից և maxsā կցվում է արաբ. maks և ասուր. maksū բառերին: Այդ աղբյուրը այն ասորական բարբառն է, որ խոսում էին հարավային Հայաստանի հարակից գավառների ասորիները, և որոնց հետ շարունակական հարաբերության մեջ էին հայերը:

Ընդունելով որ հայերենի ասորական փոխառությունները մի որոշ ասորական բարբառից են, ո՛չ միայն բացատրվում են վերոհիշյալ բոլոր մասնավոր պարագաները (որ մենք անկանոնություն էինք կարծում) իբրև բարբառային առանձնահատկություններ, այլ և պարզվում է զանազան ասորերեն բառերի գավառական հնչումը: Մյուս սեմական լեզուների համեմատությունը և ուրիշ հանգամանքներ շատ անգամ գալիս են հաստատելու այդ հնչումը, և նրա հետ էլ մեր ենթադրության ճշտությունը: Հիշենք այստեղ դրանցից մի քանիսը.

Ասոր. taggārā, maggəlā, kakkērā, šeššəlā, sappūđā և aggānā բառերը հայերենի մեջ ունենալով թանգար, մանգաղ, քանքար, ծնծղայ, շամփուր և անկան ձևերը, ցույց են տալիս, որ ասորերենի հիշյալ անծանոթ կամ կորած բարբառի մեջ զույգ բաղաձայններից առաջինը հնչվում էր ն: Արդարև կարելի չէ ասել, որ դրանք հայերենի մեջ այդպես ձևափոխված լինեին, որովհետև նման մի երևույթ՝ որ առհասարակ տարօրինակ է, հայերենի մեջ գոյություն չունի: gg, kk, šš, pp չեն կարող հանկարծ դառնալ նգ, նք, նծ, մփ, մինչդեռ հակառակը կարելի է. այս-

պես հյ. խնձոր, որ փոխառությամբ անցել է ասորերենի, դարձել է այս լեզվի մեջ xazzūrā, նախապես անցնելով \*xanzūrā ձևից: Եմանապես վերոհիշյալ վեց բառերը նախապես ունեին ռնգային ձև. taggārā գալիս է \*tangārā ձևից, և մանդայերենի մեջ բառն ունի tangārā ձևը. — maggēlā գալիս է \*mangēlā ձևից (հմմտ. արաբ. minjal և փարսի mangāl). — aggānā գալիս է \*angānā ձևից (հմմտ. արաբ. injāna). — šeššēlā թեև ծագում է šēšēlā ձևից (հմմտ. եբր. šēšēlīm, արամ. šalšēlā, արմատը šli «հնչել»), բայց տարանմանությամբ զույգ l-երից առաջինը անշուշտ նույն անձանոթ ասորական բարբառում դարձել էր n և բառը հնչվում էր \*šēššēlā, ինչպես ունինք եթովպ. šanāšēl «ծննդայ».— kakkērā թեև կցվում է եբր. kikkār, արամ. kikkar, սաբ. karkar, եգիպտ. krkr ձևերի հետ, որոնց մեջ ռնգական չկա, բայց ահա ունինք և խպտ. ġingōr, որի մեջ n ձայնը երևում է և որից հետևում ենք, որ ասորական նույն բարբառումն էլ բառը հնչվում էր \*kankērā.— միայն šappūδā > շամփուր բառն է, որ համազոր սեմական ձևեր չունենալով, կարող չէ իր նախավոր ռնգածայնը երևան հանել, բայց որ մյուսներից հետևանքներով պետք է ընդունենք թե այս բառն էլ հիշյալ ասորական անձանոթ բարբառում հնչվում էր \*šampūδā, ամեն կասկածից դուրս է: Ռնգականի գործածությունը հիշյալ բարբառում ոչինչ չունի տարօրինակ, որովհետև շատ սեմական լեզուների մեջ սովորական երևույթ է և dd, ss, bb հնչվում են nd, ns, nb (տե՛ս Fränkēl, Aram. Frēmdw., էջ 136):

Յյ. սիք համաձայն չէ ասոր. zīqā ձևին, որի հետ նույն են արաբ. zīq, ասուր. zīqu, բայց բարբառում կար անշուշտ \*sik ձևը, որին ապացույց են արաբ. šiq և մանավանդ սոււմեր. sig:

Յյ. յամոյր համաձայն չէ ասոր. yaxmūrā ձևին, որի հետ նույն են եբր. yaxmūr, արաբ. yaḥmūr, բայց բարբառում կար անշուշտ \*yamūr ձևը, որին ապացույց է արաբ. yāmūr «արու եղջերու»:

Յյ. խարբալ նախաձայնի կողմից համաձայն չէ ասոր. 'arbālā բառին. բայց բարբառում կարող էր ՝ ձայնի տեղ լինել մի ավելի թավ հնչյուն. հմմտ. արաբ. ʿirbāl «մաղ», որից էլ փոխառյալ թրք. qalbur:

Յյ. շղթայ շատ անհամաձայն է ասոր. šēšāltā բառին. բայց հմմտ. ն. ասոր. šišilt'ē, որ կարող էր տալ շղթայ, երկու ի ձայնավորների սղմամբ և կրկնակ շ ձայնի միացմամբ:

Յյ. մաշար համաձայն չէ ասոր. masārā ձևին. բայց հմմտ. ն. ասոր. mēššar, արաբ. mišār, minšār, քրդ. mēšar:

Ասորական նույն անձանոթ բարբառի միջոցով կարելի է բացատրել նաև մի խումբ այնպիսի բառեր, որոնց մեկնությունը ասորական

գրական ձևով անբավարար պիտի համարեինք այլապես: Ահա մի քանի օրինակներ.

Խլուրդ, որ համեմատվում է ասոր. xūldā հոմանիշի հետ, բայց ձևի տարբերության պատճառով մերժվում է. բայց եթե նկատի առնենք արաբ. xulud, մանավանդ ասորի երկրորդական xaldūdā ձևը և մտածենք որ ասորի բարբառը կարող էր էլ ավելի համապատասխան մի ձև ունենալ, համեմատությունը կճշտվի:

Առնէտ կարելի է համեմատել ասոր. arnā'ā հոմանիշի հետ. բայց պիտի մերժվեր ձևի տարբերության պատճառով. սակայն երբ նկատենք, որ ասորի ՝ ձայնը համապատասխանում է հնագույն ատամնականի (հմմտ. ասոր. ar'ā = արաբ. arḍ), և մտածենք որ նույն անձանոթ բարբառում էլ ՝ ձայնը կարող էր ատամնական հնչում ունենալ, վերոհիշյալ համեմատությունը կճշտվի:

Պախրէ. կարելի է համեմատել ասոր. baqrā բառի հետ, որի հետ նույն են եբր. bāqār, արաբ. baqra, ասուր. buḵḵuru, բայց ձայնական օրենքները թույլ չեն տալիս. միայն եթե նկատի ունենանք բարբառային մի ավելի հարմար ձև, դժվարությունը կջնջվի:

Խղունջն կարելի է համեմատել ասոր. xlēzōnā, արամ. xalazōn, արաբ. ḥalazōn հոմանիշների հետ, միայն բարբառային ձևի միջնորդությամբ, առանց որի ձայնական օրենքները թույլ չեն տալիս (պախրէ բառը զգուշության համար մենք չմտցրինք ընդհանուր ցանկի մեջ):

Եթե մեր ակնարկած ասորական բարբառը ուներ այնպիսի ձևեր, որոնք հնչական տեսակետով տարբեր էին Եդեսիո գրական լեզվից, զարմանալի չի լինի եթե ենթադրենք, որ նա կարող էր ունենալ նաև այնպիսի բառեր, որոնք ամբողջապես պակասեին Եդեսիո գրական ասորերենի մեջ: Իրոք որ հայերենը ունի մի քանի այնպիսի բառեր, որոնք հայտնի կերպով սեմական են, սակայն չկան ասորերենում: Այս բառերը պետք է լինեն հիշյալ անձանոթ բարբառից, եթե սակայն չեն պատկանում այն կորած բառամթերքին, որ ասորական գրականությունը առիթ չի ունեցել ավանդելու մեզ: Այս բառերը հետևյալներն են.

1) Սոււր. հմմտ. եբր. šāšēr, ասուր. šeršeru.

2) Ջալլամն. հմմտ. արաբ. zalīm, zilmān.

3) Ցամաք. հմմտ. եբր. šmq, šomēqīm (եթե սակայն այս բառը հայերենից փոխառյալ չէ):

Երբ ասում ենք թե հայերենը փոխառություններ է կնքել իր հարևան ասորական բարբառից, պետք չէ կարծել թե մենք ի սպառ հերքում ենք գրական ասորերենի արժեքն ու ազդեցությունը: Ընդհակառակը շատ բառեր ուղղակի գրական ճամբով, նույն իսկ գրքերի վրայից են անցել հայերենի: Սրան իբրև ապացույց ծառայում է այն հանգամանքը, որ կան բառեր, որոնք նույն իսկ սխալ ընթերցանությամբ են անցել հայերենի: Այսպես՝ առեսարոն Եւս. պտմ. 311՝ սխալ կարդացված բնագրի *ditesarōn* ձևից (չորս ավետարանները). — յասպինիա «դժվարաշնչություն» Եւս. պտմ. 46. բնագրի *dispniyā* ձևի մեջ՝ առաջին տառը ասորերենի սովորական սեռականի մասնիկը կարծելով ձևացած: Ասորական բնագրից հասարակ տառադարձություններ են նաև իբրամէն «Գիրք մնացորդաց», կաղայ «դոլլ», աստրատիգայ «գորագլուխ», սաբա «ծեր», քորայ «երկիր», սահրայ «լուսին», արիոն «աղքատ» ևլն, որոնք երբեք հայ ժողովրդի լեզվի մեջ չեն մտած:

Այնուամենայնիվ այս կարգի փոխառությանց թիվը մեծ չէ. և հայերենի ասորական փոխառությունները՝ պարսկական փոխառությանց նման կրում են ժողովրդական բնույթ: Այսօր էլ այդ փոխառությունները ապրում են մեր լեզվում և նրանց կեսից ավելին գործածական է գրական լեզվի մեջ և նույն իսկ բարբառներում (ճիշտ հաշվով 120 բառ՝ 89 անգործածականների դեմ): Այդ բառերը էջ 346-351 դրված ցանկում գրված են աստղանիշ: Նույն իսկ մի քանի այնպիսի բառեր, որ մենք պիտի կարծեինք թե ասորական բնագրից հասարակ ու անկենդան տառադարձություններ են, իրապես գործածական են բարբառներում. այսպես՝ ամղան բառը, որ չորս անգամ միայն գործածված է հայ մատենագրության մեջ (Յես. է. 21, Եղիշ. յես. 174, Ոսկ. ճառք 364, 471) և որ Ս. Գրքի ասորական թարգմանության հասարակ մեկ տառադարձությունն է համարվում, այժմ էլ կենդանի է Ակնայ բարբառում՝ արղան ձևով. — մաշար «սղոց» մեկ անգամ գործածված Մագիստրոսի մոտ՝ սովորական բառ է Ղարաբաղի բարբառում. — ազուզայ՝ գործածական է Մուշ, Ակն, Խարբերդ, Բուլանըխ և մի քիչ այլափոխյալ նշանակությամբ էլ՝ Սալմաստ և Վան. — ապուղայ անստույգ բառը, մեկ անգամ գործածված հայ մատենագրության մեջ, կանոնավոր գործածություն ունի Վանի, Մոկաց և Խոյի բարբառում ևլն:

Ասորական փոխառությունների մի մասը բնիկ ասորի չէ, այլ պարսկերենից, հունարենից և լատիներենից անցած ասորերենի և հետո ասորական ձևի ու կերպարանքի տակ՝ այդ լեզվից անցած հայերենի: Բառերից մի քանիսը հայերենը փոխ է առել երկու անգամ.

մի անգամ ասորերենից և մյուս անգամ առաջին փոխատու լեզվից. այնպես որ միևնույն բառը ներկայանում է մեզ այժմ երկու տարբեր ձևերով: Ահա այս երկու կարգի փոխառություններից մի քանի օրինակ.

հյ.	ասոր.	հյ.
ազուզայ	<ayōyā	<հուն. agōgós
աքսոր	<aksoria	<հուն. exoria >եքսորի
աղեն	<'əðən	<եբր. 'əðən>հուն. Edém>եդեմ
լումայ	<lūma	<լտ. nummus
քորայ	<kōrā	<հուն. chōra
աստրատիգայ	<astratigā	<հուն. stratēgós
փիլիսոփայ	<filōsōfā	<հուն. philōsophos >փիլիսոփոս
հռիտորայ	<rhītorā	<հուն. hrētor >հռետոր
թատր	<tātrā	<հուն. théatron >թատրոն
թարշիշ	<taršīš	<եբր. taršīš>հուն. tharsis>թարսիս
ապուղայ	<apūlā	<լտ. ampulla.

Գալով այն հարցին, թե ե՞րբ են կատարված ասորական փոխառությունները հայերենի մեջ, պատասխանը հետևում է բոլոր նախորդ տվյալներից: Փոխառությունները սկսվում են ն. Ք. երկրորդ դարից և մինչև այսօր էլ շարունակվում են, ի հարկե շատ տարբեր չափերով: Քրիստոսից առաջ կատարված փոխառությունները, որոնք հայացած ասորիների միջոցով մտան հայերենի մեջ, Հայաստանի հարավային բնիկների լեզվում կարող էին շատ լինել, բայց նրանց մի փոքր մասը միայն ընդհանուր հայերենի սեփականություն դարձավ: Այս հնագույն փոխառությունները ճանաչվում են նրանով, որ կատարված են ասորերենի բացարձակ ձևից (ինչ. տերեւ, կեղեւ) և հետևում են հայերենի սղման ու ամփոփման օրենքներին (Մծրին, հրեայ, ուրբաթ): Ասորական փոխառությանց մեծագույն մասը կատարվել է քրիստոնեական քարոզության առաջին շրջանին (Յ. Ք. Բ-Ե) դար. սրանք գլխավորապես ասորերենի սաստկական ձևից են ծագում, հնագույնները հետևում են դեռ հայերենի սղման ու ամփոփման օրենքներին, ավելի նորերը՝ ոչ: Ե դարից հետո կատարված փոխառությունները սակավաթիվ են և բնավ չեն հետևում սղման ու ամփոփման օրենքներին: Այսպես՝ ուշ ժամանակի փոխառություններ են ըստ Հիւբշմանի<sup>1</sup> ծոթոր, մանիշակ,

<sup>1</sup> Սեմական փոխառյալ բառեր, թրգմ. Տաշյան, էջ 4:

շուշմայ, քուշնայ, գուրպայ, տարմալ, շուփայ, շուշփայ, շուկայ, մախաթ, որոնք առնված են Ը-ԺԴ դարերին: Այս եզրակացության հասնում է Հիւբշման՝ հետևցնելով նույն բառերի գործածության ժամանակից հայ մատենագրության մեջ: Բայց այս բանը կարող է խաբուսիկ լինել: Վերջապես նորագույն ժամանակի փոխառությունները կարելի է միայն մատների վրա հաշվել և բուլոբն էլ գտնվում են միայն Ուրմիո և Սալմաստի բարբառում. ինչպես կոշոտ «ասորի քահանայ» Ուրմիո բարբառում: Շատ ավելի ընդարձակ գործածություն ունին բարբառներում առգել «չարդախի տակ շինված սենյակ» և մակար (հարսանիքի): Առաջինն է ասոր. arzālā «գյուղական խրճիթ», իսկ երկրորդի համար հմմտ. ասոր. mēkar «խոստամալ», mēkīrā «նշանած, փեսա», mēkīrtā «հարս», mākōrā «հարսնախոս»:

Փոխառությանց համար ընդունելով այսքան երկար ժամանակ, որոշ բառեր կարող են երկու անգամ փոխ առնված լինել. այսպես, օրինակ՝ ունինք կեղև բառը հին հայերենից և նույնի երկրորդ ձևը՝ կլեպ, որ գործածական է միայն բարբառներում. երկուսն էլ փոխառյալ են միևնույն ասորական qelāfā ձևից, մեկը հնագույն շրջանում, երկրորդը ավելի հետո, թերևս երրորդ շրջանում:

Աղբյուրներ.—

*Hübschmann.* — Die semitischen Lehnwörter im Altarmenischen ZDMG 1892, էջ 226-268. — նույնը հայերեն՝

Հիւպշման.— Ուսումնասիրութիւնք հայերէնի փոխառեալ բառից. քրգմ. Տաշեան, Վիեննա, 1894, էջ 1-49 (ասորերէն փոխառեալ բառեր):

*Hübschmann.* — Armenische Grammatik, I. 1897, էջ 281-321.

Վարդանեան.— Նիւթեր հայերէն բառագրութեան, Վիեննա, 1920 (էջ 9-39՝ Ասորերէնի միջնորդութեամբ յունարէնէ փոխ առնուած բառեր):

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան.....	3
ԳԼՈՒԽ Ա. Հնդեվրոպական նախաշրջան .....	7
ԳԼՈՒԽ Բ. Հնդեվրոպական բարբառները և հայերենի դիրքը նրանց միջև .....	22
ԳԼՈՒԽ Գ. Միջերկրական կամ եգեյական քաղաքակրթության ազդեցությունը .....	100
ԳԼՈՒԽ Դ. Նախահայերեն լեզուն և նախահայերի քաղաքակրթության ուրվագիծը .....	105
ԳԼՈՒԽ Ե. Հաթերենի, թրակերենի, փոյուզերենի ու փոքրասիական լեզուների ազդեցությունը հայերենի վրա .....	125
ԳԼՈՒԽ Զ. Խալդերենի ազդեցությունը հայերենի վրա .....	148
ԳԼՈՒԽ Է. Միտաներենի ազդեցությունը հայերենի վրա .....	188
ԳԼՈՒԽ Ը. Ասուրերենի ազդեցությունը հայերենի վրա .....	191
ԳԼՈՒԽ Թ. Հայաստանի այլ բնիկների և կովկասյանների ազդեցությունը հայերենի վրա.....	198
ԳԼՈՒԽ Ժ. Իրանական ազդեցությունը հայերենի վրա.....	214
ԳԼՈՒԽ ԺԱ. Հռոմեական ազդեցությունը հայերենի վրա .....	335
ԳԼՈՒԽ ԺԲ. Ասորական ազդեցությունը հայերենի վրա .....	341



ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱԼ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ի մաս

Հրատ. խմբագիր՝ Մ. Գ. Ցավոյան  
Համ. շարվածք  
և ձևավորում Ս. Ա. Գասպարյան  
Տեխ. խմբագիր՝ Վ. Վ. Զադայան

Չափ՝ 60x84 <sup>1</sup>/<sub>16</sub>: Տպագր. 23 մամուլ:  
Պատվեր 78: Տպաքանակ 300:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Աբովյան 52